


Երեւան 2022



# ՅՈՒՐՏ

ՀԱՅՐԵՆԻՔ

1949  
ԿԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԱՔՍՈՐԻՑ

Հայերի՝ 1949 թվականի հունիսի 13-14-ի զանգվածային աքսորը Ալթայի երկրամաս՝ իր կազմակերպվածությամբ, ծավալով, իրականացման ձեռով զիջում է թերեւս միայն Երիտթուրքերի նախաձեռնած ցեղասպանությանը:

Մինչեւ 1949-ի այդ օրը Խորհրդային Միության ժամանակային տարածքում, ի թիվս այլ ժողովուրդների՝ հայերի հանդեպ եւս եղել էին բռնաճնշումներ, հալածանքի այլ դրսեւորումներ, սակայն Ալթայյան աքսորն առանձնահատուկ էր:

Այդ ծրագրով հայերի մի հատվածը տարանջատվում էր Խորհրդային Հայաստանի տարածքը զբաղեցնող հիմնական էթնոսից եւ «դաշնակ» պիտակով դասվում անբարեհույս, անվստահելի խմբերի շարքում՝ թուրքեր եւ թուրքահպատակներ, հույներ եւ հունահպատակներ, որոնց մեջ քիչ չէին այլ ազգությունների մարդիկ, այդ թվում նաեւ՝ հայերը:

Եթե Հարավային Կովկասում ու Սեւ ծովի ափամերձ գոտիներում Կրաստանից մինչեւ Ղրիմ եւ Օդեսա, թուրք-թուրքահպատակներին եւ հույն-հունահպատակներին ծրագրված տեղահանելը պայմանավորված էր ԱՄՆ նախագահ Հարրի թրումենի հռչակած դոկտրինով, ըստ որի Միացյալ Նահանգները հովանու տակ էին առնում Թուրքիան եւ Հունաստանը, եւ թելադրված Խորհրդային Միության սահմաններն անվստահելի տարրերից մաքրելու անհրաժեշտությամբ, ապա հայ «դաշնակների» դեպքում դա տրամաբանական չէր: Պատերազմական հնարավոր մի իրավիճակում սովետների կողմից ո՞վ ավելի լավ կկռվեր, եթե ոչ հայերը, որոնց արյան մեջ թուրքերի հանդեպ վրեժը հոսում էր անկանգ ընթացքով:

1949-ի հունիսին աքսորվող հայերը («դաշնակները») կազմված էին երեք խմբից՝

1. Համաշխարհային 2-րդ պատերազմում գերի ընկած եւ Դրոյի գործուն մասնակցությամբ կազմավորված հայկական լեգիոններին միացած նախկին զինվորականներ,

2. Կենսագրության մեջ դաշնակցական հետք ունեցող անձինք (առաջին հանրապետության տարիների, կոլեկտիվացման եւ այլ դիպվածներով),

3. 1946-49 թվականների Մեծ հայրենադարձության հունով ներգաղթած հայեր, որոնք մինչ այդ անդամակցել, հարել կամ առնչվել էին ՀՅԴ-ին:

Առաջին խմբին պատժելը բխում էր Համաշխարհային պատերազմի մեջ ԽՍՀՄ-ի ներքաշման սկզբնական շրջանում Ստալինի հնչեցրած «գերվելը դավաճանություն է» սկզբունքից: Երկրորդ խմբի նկատմամբ վրեժխնդրությունը կարելի է վերագրել ժողովուրդների հոր եւ նրա բռնարար շրջապատի հիվանդագին սովորույթին:

Ներգաղթողների, այդ խմբակազմում հայտնվելը դեռ պատճառաբանված չէ եւ սպասում է լուրջ հետազոտության ու եզրակացությունների:

Կարծիք կա, որ ոչ մեծաթիվ հայրենադարձների (ներգաղթողների ընդհանուր թվի մոտ 1,6 %) աքսորը կապ ուներ Հյուսիս-ատլանտյան ռազմական դաշինքի (ՆԱՏՕ) ստեղծման հետ, եւ քանի որ 1948-ին Հայ հեղափոխական դաշնակցության քաղաքական դիրքորոշումը հակվել էր դեպի Արեւմուտք, ուրեմն պետք էր չեզոքացնել նրա հետ երբեւէ որեւէ առնչություն ունեցած անձանց:

Մեծ վերապահությամբ եթե դա համարենք արդար ՀՅ դաշնակցության այն շարքայինների նկատմամբ, ովքեր կուսակցությունից հրաժարվելու հայտարարություններ էին տպագրել սփյուռքի թերթերում՝ դրանով ԽՍՀՄ համապատասխան մարմիններին «դաշնակ»-ության կանխավարկած շնորհելով, ապա ի՞նչ կարելի է ասել հարյուրավոր այն հայերի մասին, որոնք այդ խմբակազմը համալրել էին օպերատիվ (ինչպես հետո է պարզվում չստուգված) հաղորդումների ու տեղեկատվության հիման վրա,

խորհրդային անվտանգության կշռից ընկճված հարեւանների ու ծանոթների ցուցմունքներով:

Երբ ծանոթանում ես տարաբախտ այդ մարդկանց՝ ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ ղեկավարներին արդեն սիբիրյան աքսորավայրից գրած դիմումներին, բողոքներին, բացատրագրերին եւ համեմատում հետստալինյան շրջանի օպերատիվ ճշգրտումների հետ, որոնց հիմքով նրանք հետո պիտի ազատվեին, աքսորյալների մեջ տեսնում ես Մերձավոր Արեւելքի ու Եւրոպայի կոմունիստական կուսակցությունների ակտիվ անդամների, որեւէ կուսակցության հետ երբեւէ կապ չունեցած անձանց, Երեւանում շրջսովետի դեպուտատ ընտրված ներգաղթողի, 1920-30-ական թվականներին ՀՅԴ-ի հետ սկզբունքորեն կապերը խզած եւ խորհրդամետ ճամբար անցած սփյուքահայերի, հանդիպում ես մանր, կենցաղային վրեժխնդրության զոհերի եւ այլն:

Ասենք՝ մեկը (անունը հիշատակվում է Վահան Հովիվյանի հուշերում) Սիրիայի ոչ հայաշատ, փոքրիկ մի գյուղում եղել էր դաշնակցական դպրոցի հոգաբարձու: Ի՞նչ կապ կարող էր նա ունենալ ԼԱՏՕ-ի եւ ՀՅԴ-ի Արեւմտյան կողմնորոշման հետ: Հայաստան ներգաղթած դաշնակցականների շարքում կուսակցական, քաղաքական որոշում կայացնողներ չկային: Նրանք հիմնականում բանվոր-գյուղացիական դասակարգին պատկանող մարդիկ էին, որոնք շատ դեպքերում ազգային այդ կառույցի հետ կապվել էին ինքնապահպանման մի բնագոյով, որով էլ միացան հայերադարձության քարավաններին:

Հայրենիքում նոր հաստատված շուրջ 1578 հայերին (372 ընտանիք) աքսորի ցուցակներում ներառելն, ըստ էության, աշխարհաքաղաքական որեւէ պատճառ չունեին: Հիմնական պատճառ կարող էր լինել (մասնավոր եզրակացություն, որին հանգել եմ բավական ծավալուն նյութ ուսումնասիրելու արդյունքում) ներգաղթի հետ ներմուծված ազատ շնչով Հայաստանում հանրային մտածելակերպի որակական փոփոխության հեռանկարը, ինչը կտրուկ պետք էր կանխել:

Ականատեսները վկայում են, որ հայրենադարձությունը սփյուքահայ համայնքներում կազմակերպվում էր հայրենատենչ զանգվածների աներկվիտ խանդավառության եւ խորհրդային իշխանության (հատկապես՝ Հայաստանի) անծրագիր շտապողականության պայմաններում: Սփյուռքից մարդ բերելը ոչ թե ժողովրդագրական հաշվարկված գործընթաց էր, այլ հաճախ նմանվում էր ապրանքի ներկրման:

Ստալինը հպարտ էր իր եւ ԽՍՀՄ-ի հաջողված PR-ով. տեսեք, ո՞նց ենք ձգում բազմամարդ քարավաններին: Հայաստանի

ղեկավարներն ուրախ էին, որ մարդուժով համալրում են Հայաստանի՝ պատերազմի հետեւանքով խիստ նվազած, բնակչությունը:

Իրականում, սակայն, խորհրդային Հայաստանը ստանում էր մեծ հրճվանքից ակնթարթորեն հիասթափված եւ հոգեպես ընկճված մի զանգված, որն իր դժգոհությունը համալրելով կարոտախտով՝ ազատ աշխարհ, ժողովրդավարական արժեքներ, շուկայական հարաբերություններ (հիմնականում՝ Ֆրանսիա, ԱՄՆ), ազգային արժեքներ, համայնքային կենսակերպ, եկեղեցի (հիմնականում՝ Իրան, Մերձավոր Արեւելք), կարող էր ազդել տեղացի՝ սովետահայ, հասարակության տրամադրությունների վրա: Տեղաբնակ հայությունը՝ հայրենադարձների գալով, էթե ոչ մասնակիցը, ապա գոնե հանդիսատեսն էր դառնում «այլության» մի շքերթի, ինչը էր կարող չհանգեցնել մտածողության եւ կենսակերպի որակական փոփոխության:

Որոշ վկայողների հավաստմամբ՝ 1946-ին հենց նավահանգստից սկսված հետապնդումներն ու ձերբակալությունները, վկաների հարցաքննությունները, թեւեւ ճնշող ու մտահոգիչ՝ հասարակական ձեւափոխման այդ հեռանկարը խափանելու անհրաժեշտ արդյունքը չէին տալիս:

«Բան մը ըրած կըլլար», «Չեմզեկին մեկն էր», «Կըսեն՝ գացեր է Մոսկվայի Ֆրանսական դեսպանատունը». այս եւ նման ենթադրություններով ներգաղթյալ զանգվածն իրենից վանում էր վախն ու սարսափը: Պետք էր մի առավոտ, երբ բոլորը կարթնանային ու կտեսնեին, որ հարեւանները, ծանոթներն ու ազգականներն ընտանիքներով տարվել են անհայտ ուղղությամբ եւ կհասկանային, որ կանոններ սահմանողը պետական ճնշիչ մեքենան է:

Այսինքն՝ ներգաղթյալների մի մասին աքսորյալ դարձնելն աշխարհաքաղաքականության, անվտանգության, ենթադրելի պատերազմի կամ նման բաների հետ ոչ մի կապ չունեին: Ազդեցիկ ահաբեկումով ներգաղթյալ զանգվածին պետք էր դարձնել անսեռ զանգված, ինչն էլ խրոլշչովյան ձևալի շրջանում ապացուցվեց ոչ թե հարաբերական ազատությունից օգտվելու, այլ այն օգտագործելու ձգտումներով: Երբեմնի խանդավառ ներգաղթողները բաց դուռ էին տեսել, որով կարելի էր դուրս գալ՝ հիմնականում դեպի Արեւմուտք:

# ԱՔՍՈՐՅԱԼ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## «Ստալինը տեղյակ չէր, եղ մեր հայերն էին անում»

Ստալինը ոչ միայն տեղյակ էր, այլևս հենց ինքն էր նախաձեռնել հայերին, այսինքն՝ «դաշնակներին» քաղաքացիական ծրագիրը: Դա երեւում է կոմունիստական կուսակցության քաղաքացիական պարտիզ 4-ի որոշումից, որը Հայկական եւ Ադրբեջանական խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունները քաղաքականապես անբարեհույս տարրերից մաքրելու համար ԽՍՀՄ Պետական անվտանգության նախարարությանը պարտավորեցնում էր. «Հայկական եւ Ադրբեջանական ԽՍՀ տարածքում բնակվող դաշնակներին ցմահ բնակության քաղաքացիական պարտադրանքով դնելով նրանց Ներքին գործերի նախարարության հսկողության տակ»:

Այս որոշումից հետո՝ 1949-ի ապրիլի 4-ից մինչև քաղաքի օրը՝ հունիսի 13-14, ԽՍՀՄ իշխանության տարբեր մակարդակներում ընդունվել են մի շարք որոշումներ, հրամաններ, հրահանգներ եւ այլ փաստաթղթեր, որոնց տակ չկան Հայաստանի իշխանությունների ներկայացուցիչների ստորագրություններ: Որոշ հանձնարարականներում հիշատակվում է Հայաստանի Պետականվտանգության նախարար Կորխմազյանի անունը:

Սա, իհարկե, չի նշանակում, որ Հայաստանի մյուս ղեկավարները՝ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը, Նախարարների խորհրդի նախագահ Սահակ Տեր-Կարապետյանը, Ներքին Գործերի եւ տրանսպորտի նախարարությունները տեղյակ եւ մասնակից չեն եղել: Մոսկվայից առաքվող հույժ գաղտնի փաստաթղթերն, անշուշտ, դրվել են նրանց սեղաններին, բայց ապահովության համար

գործողության գլխավոր հրամանատար Է Նշանակվել Մոսկվայից ժամանած գեներալ-լեյտենանտ Յուրի Եդուևովը:  
Բարձրաստիճան մի զինվորական, որը մինչ այդ հաջողությամբ իրականացրել էր լիտվացիների աքսորը:

Այս մոլորությունը հավանաբար ձեւավորվել է այն տպավորությամբ, որ գիշերով մարդկանց տներն եկած խմբերում պարտադիր եղել են ծանոթ կամ անծանոթ տեղացի պաշտոնյաներ:  
Հայրենադարձների դեպքում հատկապես դա արվում էր ռուսախոս զինվորականների եւ ռուսերեն չիմացող հայերի միջեւ հաղորդակցությունն ապահովելու համար: Ում հետ խոսել են, ումից իմացել են չարագույժ լուրը, նրան էլ հիշում են:

### **«Հայաստանն ուզում էին դատարկել, բաժանել եւ կցել Վրաստանին ու Ադրբեջանին»**

Այս պնդումը նույնքան սխալ է, որքան հին համոզմունքը, թե Հայրենադարձությունը կազմակերպվել էր իբր այն պատճառով, որ Հայաստանի բնակչությունը պատերազմի հետեւանքով խիստ նվազել էր եւ վախ կար, որ այն՝ բաժանելով, կարող են կցել Վրաստանին եւ Ադրբեջանին: Պատմաբանների կարծիքով՝ նման վտանգ երբեւէ չի եղել եւ այդպիսի հարց երբեք չի քննարկվել:

### **«Աքսորը Սիբիրի տնտեսական խնդիրները լուծելու համար էր, ոչ թե մարդկանց պատժելու»**

Թե ցարական ժամանակներում, թե Խորհրդային տարիներին՝ ընդհուպ մինչեւ գորբաչովյան վերակառուցում, Սիբիրը եղել է անհնազանդների, այլախոհների, քաղաքականապես անբարեհույս տարրերի պատժավայր:

Եթե զանգվածային աքսորը կազմակերպված լիներ տնտեսության զարգացման նպատակով, հարկադիր վերաբնակիչները կապահովվեին աշխատանքի գործիքներով, սննդով, կանոնավոր կերպով (թեկուզ՝ ցածր) կվարձատրվեին: Դատելով վկայողներից շատերի հուշերով՝ հատկապես առաջին տարիներին աշխատանքի կազմակերպումն ավելի նման է եղել պատժի եւ բացարձակ զուրկ՝ արդյունավետությունից:

Եթե փորձենք համեմատել աքսորի գործողությունն իրականացնելու համար արված ծախսերը եւ աքսորյալների աշխատանքից պետության ստացված օգուտի պատկերը, պարզ կդառնա, որ պետության համար դա եղել է վնասաբեր «գործարք»:

Պետական պաշտոնական բոլոր փաստաթղթերից երեւում է, որ զանգվածային աքսորի նախաձեռնության ավարտական ակտը «ցմահ վերաբնակիչներին հանձնել-ընդունելն» էր, ոչ թե աշխատանքի տեղավորելը: Պատժիչ բնույթի մասին է խոսում նաեւ այն հանգամանքը, որ մարդկանց, ըստ մասնագիտությունների եւ հմտությունների՝ զբաղմունք առաջարկելու փոխարեն պարզապես քշել են անտառ ծառ կտրելու:

Եթե աքսորյալները կարելորդեին որպես աշխատուժ, Ստալինի մահից հետո նրանց հեշտ ու հանգիստ թույլ չէին տա վերադառնալ Հայաստան, կփորձեին պահել, հմայիչ առաջարկներ կանեին եւ այլն:

### **«Աքսորեցին բոլոր հայրենադարձներին կամ միայն հայրենադարձներին»**

Այս մոլորությունը գալիս է ազդեցիկ այն տպավորությունից, որն աքսորվող հայրենադարձներն ունեցել են Ուլուխանլու (Մասիս) կամ Ջաջուռ կայարաններ հասնելուն պես: Շատերը վկայում են, որ առաջին պահին իրենց թվացել է, թե պատիժը նախատեսված է հենց միայն իրենց համար, իսկ կայարանում՝ հանդիպելով հայրենադարձ ծանոթ ընտանիքների, հասկացել են, որ մենակ չեն: Ինչ տեսել են, այն էլ հիշում են, եւ դա հայրենադարձ ամբողջ զանգվածին տեղահանելու տպավորություն է թողել:

Բանավոր վկայություններում քիչ չեն նաեւ չափազանցությունները՝ 150 հազար հայ աքսորեցին, այն դեպքում, երբ 1946-49 թվականներին Հայաստան ներգաղթածների ընդհանուր թիվն ընդամենը 95 հազար էր: Կամ ասում են՝ 50-60 հազար հայ աքսորեցին, երբ աքսորված բոլոր հայերի, այդ թվում նաեւ՝ Ադրբեջանից ու Վրաստանից, ընդհանուր թիվը չի անցել 15 հազարը:

«50-60 հազար» չափազանցությունը կարող է կապված լինել Հարավային Կովկասից եւ Սեւ ծովի առափնյա գոտիներից նույն «Վոլնա» անունը կրող գործողության հետ, որի ընթացքում, այո, աքսորվել է մոտ 50-60 հազար մարդ՝ հայեր, թուրք-թուրքահպատակներ, հույն-հունահպատակներ:

**«Ազատ ապրում էինք,  
միայն Հայրենիքի  
կարոտն էր մեզ տանջում»**

Աքսորավայրն, անշուշտ, բանտ չէ, փակ տարածություն՝ երկաթե ծանր դռներով, ամուր ճաղավանդակներով, ինչը, բնականաբար՝ կարող էր նման եզրակացության հանգեցնել: Իրականում քաղբյուրոյի ապրիլի 4-ի առաջին որոշման մեջ հատուկ նշվում էր, որ ընտանիքներն Ալթայի երկրամասում պետք է լինեն Ներքին գործերի նախարարության տեղի մարմինների հսկողության տակ:


Ականատես վկայողներն, ում հետ զրուցել ենք, քսորի տարիներին հիմնականում եղել են անչափահաս եւ հաշվառման ենթակա չէին: Նրանց ծնողներն ու ընտանիքի ավագ անդամներն էին շփվում պարետների հետ, զգուշացվում ինքնակամ տեղափոխման կամ փախուստի դեպքում սպառնացող 25-ամյա ազատագրկման մասին, կանչվում հարցաքննությունների եւ այլն: Ուրեմն՝ կարելի է ասել, որ քսորավայրը ինքնատիպ բանտ էր Ալթայի գեղեցիկ բնությամբ եւ, հարավցիների համար անսովոր՝ ցրատշունչ ձմեռներով:

**«Մեզ տարան  
առանց դատի  
ու մեղադրանքի»**

1949-ի հունիսի 13-14-ին տեղահանված անձինք, իսկապես, դատական կարգով չեն պատժվել: Նրանց տեղահանել են՝ սկզբնական շրջանում ոչ մի պարզաբանում չանելով: Դատ չի եղել, բայց մեղադրանք եղել է: Այն փաստագրվել է ԽՍՀՄ պետական անվտանգության նախարարությանն առընթեր հատուկ խորհրդակցության արձանագրությունների քաղվածքներով: Աքսորյալները դրանք ստանում էին Ալթայում հայտնվելուց հետո՝ սկսած 1949-ի նոյեմբերից:



Հայրենադարձները  
տուն են կառուցում,  
1948  
Անդրանիկ  
Ամրոյանի  
արխիվից



ԱԿԱՆԱՏԵՍԻ  
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ



# ՄԻՐԱՐՓԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ներգաղթել է  
1946-ին  
Սիրիայից

Խաղալիք չունեինք, երբ որ տոնածառ էինք դնում, փոքր եղբայրս կարտոնների վրա գծում էր աքաղաղ, տարբեր բաներ, ներկում էր, տոնածառից կախում էինք:

Իհարկե ամբողջը չեմ հիշում, բայց գիտեմ, որ տանը շատ իրանացում էր, ասում էին, որ հայրս իրաժարական է տվել իր կուսակցությունից<sup>1</sup>, որ պիտի գանք Հայաստան: «Մենք որբանցում արհեստներ սովորեցինք, որ գանք հայրենիքին, Հայաստանին օգտակար լինենք»:

Մեզ մեքենայով բերին մինչև Բեյրութ, 12 օր մնացինք կարանտին, հետո բարձրացանք «Ռոսիա» նավը: Թե քանի օր ենք եկել, չեմ հիշում, հիշում եմ, որ Բաթում հասանք, մոտավորապես երկու շաբաթ մնացինք:

Հետո բեռնատար մեքենայով բերին Բամբակաշատ գյուղը: Երկու շաբաթ մնալուց հետո հայրիկս մեզ տարավ Նուբարաշեն: Մեկ տարի բարեկամի տունը մնալուց հետո մեզ կոլխոզը տուն տվեց, երկու տարի էլ եղ տանը մնացինք:

Հայրս հողագործ էր եւ կոլխոզ ընդունվեց՝ աշխատելու: Էն ժամանակ ասում էին Ստախանով<sup>2</sup>, Էդպես պարզեւատրվեց եւ այլն... Հենց էդ տնից էլ մեզ աքսորեցին:

Արդեն տասը տարեկան էի: Եղբայրս Նուբարաշենում ֆուտբոլի էր մասնակցում, իրենք խմբով եկել էին Երեւան, որ պիտի խաղային: Գիշերվա կեսին եղբայրս վերադարձավ, ասեց ֆուտբոլի դաշտը ամբողջ մեքենաներ էին լցրել, տեղ չկար խաղալու, մեզ հետ ուղարկեցին: Բավական հետո մենք հասկացանք, թե էդ ինչ մեքենաներ էին:

Մի գիշեր՝ ժամը երկուս անց կես, դուռը թակեցին, հայրիկս բացեց, տեսավ՝ զինվորականներ, հրացանները ձեռքներին: Ասեցին՝ շուտ արեք, երկու ժամ ժամանակ ենք տալիս, հավաքվեք: Երկու ժամվա մեջ ի՛նչ կարելի էր հավաքել, բայց իրենք առաջարկեցին, որ տաք բաներ վերցնենք: Ինչքան որ հնարավոր էր՝ հավաքվեցինք:

Մեզ լցրեցին մեքենան՝ բերեցին դպրոցի առջեւի մեծ հրապարակը, տեսանք, որ ուրիշ ընտանիքներ էլ կան: Հետո մեզ բերին կայարան, հիմա Մասիս է, բայց Էն ժամանակ Ուլուխանլու էր կոչվում էդ կայարանը, իջեցրեցին, վագոնները լցրեցին՝ մի վագոնի մեջ երեւի մի քանի ընտանիք, ու գնացինք: Հիշում եմ, որ հայրս ասում էր՝ տասնհինգ օր է գնում ենք, տեղ չենք հասնում:

Հասանք Նովոսիբիրսկ, Նովոսիբիրսկից վագոնները սկսեցին անջատել: Հետո էլ մեզ բերեցին Բառնաուլ: Բառնաուլից էլ էլի վագոնները անջատեցին, մենք մնացինք մինչև վերջը: Բերեցին Սառուկինսկի ռայոն, փոքր գյուղ էր՝ Տյագուն: Էդտեղ թափեցին մեզ. ոչ տուն կա, ոչ մարդ: Ասեցին՝ որ վրաններ պիտի դնեք, վրանների մեջ ապրեք: Հունիսն էր, դե կարպետներ-բաներ, ինչ որ ունեինք՝ վրաններ պատրաստեցինք: Չորս ամիս էր վրանների մեջ մնացինք: Անձրեւը գալիս էր, մենք վրանների տակ թրջվում էինք: Փոքր

եղբայրս հիվանդացավ: Հետո ռուս ղեկավարներ եկան՝ նաչալնիկ (պետ), կամենդանտ (պարետ) եւ այլն, հիմնարկություններ ստեղծեցին՝ մեկը կոչվեց строительный участок (շինարարական տեղամաս), մյուսը կոչվեց леспромхоз (անտառարդյունահանման տնտեսություն): Եվ հայրիկս գնաց строительный участок աշխատելու: Վրաններից հետո մեծ, երկար-երկար բարաքներ պատրաստեցին, մաս-մաս բաժանեցին: Էդպես մնացինք երկու տարի:

Հայրիկս մի ուրիշ Էրզրումցի ընտանիքի մեծ տղայի հետ սկսեց սղոցարանում աշխատել: Ասել էր՝ մենք փող չենք ուզում, մեզ վառարան տուր: Բարաքում էդ վառարանը փրկեց մեզ, գիշերը, ով զարթներ՝ փայտ կգցեր մեջը, որ կրակը չմարի:

Մրտում էինք, իհարկե, բայց էդ ժամանակ դեռ դպրոց չէինք գնում: Հետո, երբ սկսեցինք դպրոց գնալ, հագնում էինք շորերը իրար վրա, որ տաք լինի: Փոթորիկ էր լինում, կամ սառնամանիք, փակում էին դպրոցները, որովհետեւ ճանապարհները փակվում էր: Մինչեւ 40-45 աստիճան ցուրտ էր լինում: Զայլելուց անընդհատ մեկը մյուսի երեսին էր նայում, զգուշացնում էր՝ ձյունով պետք է մաքրեինք, սրբեինք, որ չցրտահարվեինք:

Մի չորս կիլոմետր էն կողմ փոքրիկ գյուղ կար, մուրկաններ էին ապրում: Իրենք ունեին կարտոֆիլի մեծ պարտեզներ, հավաքում



Ձախից երկրորդ Սիրարփիի հայրն է՝ Պողոս Վարժապետյանը, Լուբարաշենի կոլխոզում, 1948

էին աշնանը կարտոֆիլը, հետո կանայք, որոնց թվում եւ մայրս, գնում, հավաքում էին ինչ-որ մնացել էր:

Սկզբում մենք հացը, ամեն ինչը քարտով էինք ստանում: Սեւ հաց էր, մայիսի մեկին, Նոյեմբերի յոթին՝ սպիտակ հաց էին տալիս՝ մեկ բուխանկա (բոքոն):

Մի տասներկու կիլոմետր էն կողմ էլի մի փոքրիկ գյուղ կար: Ոչ փող, ոչ խանութ կար, բոլորը հավաքում էին ինչ որ ունեին, հագուստեղեն, տանում, փոխանակում էին կարտոֆիլի հետ, յուղի, կաթի հետ: Մայրս դուրս չէր գալիս, երբեւէ չաշխատեց, բայց հայրիկս ռուսների հետ խոսում էր ձեռքով-ոտքով, հասկացնում էր: Տեղաբնակները շատ քիչ էին, հետո շատացան: Ավելի շատ մուրկաններ էին եւ ասում էին, որ Եկատերինա թագուհու օրոք արքայազն են եղել: Էդտեղ ոսկու հանքեր են եղել եւ էդ մի քանի ընտանիքն էին:

1952-ին գնացքի գիծ անցկացրեցին մինչեւ մեզ մոտ (Տյագուն), երբ որ գնացքը սկսեց աշխատել, արդեն մթերքի հարցն ավելի դյուրացավ:

Հետո մեզ հողամաս տվեցին՝ տուն շինեցինք: Բոլորն էլ տուն կառուցեցին: Ոմանք կարողացան կով, անասուններ գնել, բայց մենք հեռու էինք էդ բաներից, մենք չկարողացանք անել:

Ես [Երեւանում] չորրորդ դասարան էի փոխադրվել, բայց Էստեղ Նորից նստեցի առաջին դասարան: Իմ տարեկիցները բոլորն էլ առաջին դասարան նստեցին, որովհետեւ ռուսական դպրոց էր, ռուս ուսուցիչներ, ռուսական միջավայր, բայց մեծ մասամբ հայեր էին դպրոցականները:

Խաղալիք չունեինք, երբ որ տոնածառ էինք դնում, փոքր եղբայրս կարտոնների վրա գծում էր արքադադ, տարբեր բաներ, ներկում էր, տոնածառից կախում էինք:

Շատ լավ էինք սովորում, եղբայրս էլ էր գերազանցիկ, ես էլ: Ռուսները զարմանում էին, որ հայերը շատ ավելի լավ են սովորում ռուսերեն, քան ռուսները: Թույլ չէին տալիս, որ միջանցքում դասամիջոցներին հայերեն խոսենք իրար հետ: Ասում էին՝ պետք է ռուսերեն խոսեք, որ շուտ տիրապետեք: Շատ լավ էին վերաբերվում մեզ: Իմ ուսուցիչը պատերազմի հաշմանդամ էր, ինձ հոր նման էր վերաբերվում, որովհետեւ միշտ գերազանցիկ եմ եղել:

Եղբայրս առաջին օրը գնաց, լացելով տուն եկավ. ես չեմ երթար դպրոց, չեմ հասկանում ոչ մի բան: Ասեցի՝ ես հետո եմ, մի վախենա: Ես արդեն անցել էի ռուսերեն տառերը, իրեն օգնեցի եւ միասին գնացինք դպրոց: Փաստորեն ես տասը տարեկան էի, նստեցի յոթ տարեկանների հետ: Հետո որ վերադարձանք, դպրոցը չառունակեցի, եղբայրս շարունակեց:

Տասնվեց տարեկանից բարձր ամեն ամիս պետք է գնային, ստորագրություն տային, որ չեն փախչում, ներկա են: Տասնվեց տարեկանս որ լրացավ, մեկ անգամ գնացի ստորագրելու, արդեն վերջացավ էլ ստորագրությունները:

Աքսորավայրում միայն հայրենադարձներ չէին. քանաքեռից, մի ժամանակ Թագա գյուղ էին ասում՝ Էդտեղից շատ-շատ մարդիկ կային, միասին աշխատում էին: Մենք որեւէ զատող բան չենք զգացել: Եղբայրս Աշտարակից արքայազն Կարոյի հետ ամուսնացավ եւ Էնտեղ էլ՝ Սիբիրում, 54-ին եղբորս զավակը ծնվեց: Բոլորս նույն հոգսը, նույն ցավը, նույն տանջանքն էինք կրում, մենք չէինք զանազանում հայրենադարձ, տեղացի, Էդպես բան չկար: Կապված էինք հարազատի նման, եթե մեկը հիվանդանար, մի բանի կարիք ունենար՝ բոլորը պիտի հասնեին: Էդպես էր:


Հայրս անընդհատ դիմումներ էր գրում, 53-ից հետո ասեցին, որ ձեր գործերը քննվում են եւ 55-ին մենք թույլատվություն ստացանք՝ արդարացված, որ կարող եք մնալ, կարող եք գնալ, արդեն ձեր ընտրությունն է: Հայրս ասեց՝ Էստեղ հո չե՞նք մնալու, պիտի վերադառնանք: Ես զավակներս բերի, որ Սիբիրի մեջ մեծանա՞ն, բերի, որ հայրենիք- Հայաստան, հայեցի կրթություն ստանան: Տունը վաճառեցինք չնչին գումարով, հագիվ Էնքան որ կարողացանք մեր ծախսերով վերադառնալ: Իրենք տեր չկանգնեցին մեզ:

Հայրս գնացել էր Նուբարաշեն ու գտել էր՝ ով էր մատնել իրեն: Մի նավով էին միասին եկել: Հայրս ասել էր՝ ինչո՞ւ արեցիր Էդպես բան, ես դաշնակցական եմ եղել, բայց չէ՞ որ հրաժարական եմ տվել, որ գամ: Ասել էր՝ ինձի շատ ծեծեցին, շատ նեղեցին, ես էլ պատմեցի:



Աջից առաջինը՝ Սիրարիկի Վարժապետյանը, սիրելի ուսուցչի եւ դասընկերների հետ: 1952, գյուղ Տյագուն

Սիրարիկին հետևում է արեւի խավարմանը: 1952, գյուղ Տյագուն



Մենք շուտ մեծացանք. բոլոր հոգսերը կիսում էինք ծնողների հետ: Նոր Արեշում վարձով ապրում էինք, հարեւանուհին հայրիկիս երկրացի էր, տարավ ինձ «Հայրենիք» կինոյի մոտ կարի գործարան, աշխատեցի, որ հորս պիտի օգնեմ: Տասնմեկ ամիս աշխատեցի, հետո արդեն նշանվեցի, 56-ին ամուսնացա:

Սկեսրայրս մի հայրենադարձի է հանդիպում, հարցնում է՝ լավ աղջիկ մը չգիտե՞ս, ասում է՝ Վարժապետյան Պողոսը վերադարձել է Սիբիրից, աղվոր աղջիկ ունի, գնա՛ ուզե: Էդպես Էկան գտան, նա արդեն ճանաչում էր հորս Հալեպից: Հալեպում իմ հայրիկը դաշնակցական էր, իսկ սկեսրայրս՝ հնչակյան: Ակումբներում, երբ որ ժողով էր լինում, պատմում էին, որ իրար կծե-

ծեին, կկոպտեին, հետո էլ հայրիկս ասում էր՝ տեսա՞ր, որ մենք վերջը խնամի դարձանք:

Սկեսրայրս շատ լավ հարսանիք արեց, բայց պսակադրությունը տանը արեց: Քահանա բերեց, եկեղեցի չկար Էս ժամանակ, եկեղեցիներում էլ ընդունված չէր: Երեխաներս էլ տանը մկրտվեցին:

Վարժապետյանները չգնացին երկրից, ոչ էլ միտք են ունեցել, չեն տրամադրվել ոչ մի անգամ գնալու, իսկ ամուսնուս քույրերը գնացին: Փոքրը 80-ին Սուխումից գնաց, մեծ քույրը 87-ին գնաց:

Ամուսինս հիսուն տարի անընդհատ ասում էր՝ գնամ ծննդավայրս տեսնեմ, հետո մեռնեմ: 1996-ին Հալեպ գնացինք, ասեցին՝ երեք շաբաթ կարող եք մնալ: Ամուսինս 15 օրից ավել չուզեց մնալ, ասեց՝ Ես իմ գիտցած Հալեպս չի, փոխվել է Հալեպը: Զուգեց մնալ, ոչ էլ ուրիշ անգամ ցանկություն հայտնեց գնալու:

# ՍԱՄՍՈՆ ՔԵՇԻՇՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Լիբանանից

Իմ հերը դաշնակցական էր, բայց հրաժարվեց հանուն հայրենիքի, որ գնա հայրենիք, որ իրա երեխեքը Չայաստանում մեծանան, հայ մնան:

Հայաստան գալը չեմ հիշում, փոքր եմ եղել: 1947 թվին չորս տարեկան էի: Ինձի հիշում եմ մեծարում, ջաղացքի մոտ. գետակ էր հոսում, ջաղացքը բարձրանում էր...

Յոթ հոգի էինք: Հայրս՝ Հակոբ Քեշիշյան, մայրս՝ Ջեմիլյա Բայրամյան, մեծ եղբայրս՝ Դմիտրի, մեծ քույրս՝ Իսկուհի, մյուս քույրս՝ Ռեբեկա, հետո ես՝ Սամսոն, փոքր քույրս՝ Վեհանուշ:

Հայրս քոլեջ ավարտած, ինտելիգենտ մարդ էր, հայերենի եւ օտար լեզուների մասնագետ, բայց իր մասնագիտությամբ գործ չտվին, գնաց կոլխոզում աշխատելու: Եղ կոլխոզի բաղերում էլ մնալու տեղ էին տվել, ասում էին՝ կոլխոզի տներ: Դա այսօրվա Երեւանի «Սեբաստիա» հյուրանոցի մոտ էր:

1949-ի հունիսի 13-ին թուրք էինք թափ տվել, կերել էինք, մնացածն էլ թողել էինք, որ առավոտը ուտենք: 14-ի գիշերը՝ լուսադեմին, դուռը ծեծեցին. մտան զինվորներ ու մեզի կես ժամ ժամանակ տվին պատրաստվելու: Մեր հայրը միշտ պատրաստ էր ըստեց առ ու փախի, որտեւ ջարդ էր տեսել:

Նստանք բեռնատար մեքենան՝ վերմակներով, վերցրել էինք էլի ինչ որ կարեցել էինք: Տարան Ուլուխանլու (Ներկայումս Մասիս) կայարանը: Լիքը հայեր էին էստեղ: Մեռնելու էլ որ գնաս, թե մենակ չես՝ թազավորություն ա:

Եղտեղ մեզի լցրին գնացքն ու չեն ասում ուր են տանում: Չուգարան չկա, տանում են: Մեկ-մեկ գնացքը կայնում ա, ժողովուրդը պիտի իջնի իր կարիքները հոգա վագոնների տակ: Մի քայլ հեռու գնաս՝ կխփեն:

Խոզի պես վագոնների մեջ լցրած՝ մեզի տարան մոտ մեկ ամիս: Ճանապարհին մահացողներ էլ եղան. թե ոնց թաղեցին, չեմ իմանում: Գնացքը անցնում էր ավերված բնակավայրերով: Լավ տպավորվել է Ստալինգրադը:

Նովոսիբիրսկ չհասած՝ մի տեղ ժողովրդին տարան բաղնիք: Աշխատողները բոլորը կանայք էին՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց մասերում: Լավն էն էր, որ կանանց առանձին բաժին կար: Տղամարդկանցից մեկից, որ սրբիչով փաթաթել էր իրա մերկությունը, սրբիչը քաշեցին, դեն նետեցին, թե՛ քեզ ձեւեր մի տա:

Գնացքի վերջնակետը կոչվում էր Չարինսկ, որից հետո ժողովրդին լցրին սամասվալ (ինքնաթափ) բեռնատարներն ու տարան Կորդոն, որտեղ ապրում էին դեպի Տյագուն գնացող երկաթգիծը կառուցողները: Այդտեղից սկսվում էր տայգան:

Գնում էինք անդադար անձրեւի տակ: Ժողովուրդը ծառեր կտրեց, շա՛տ մեծ խարույկ արեց (կարող ա փոքր էի, ինձ էր շա՛տ մեծ

թվում): Մարդիկ շարվել էին շուրջբոլորը եւ շորերն էին չորացնում: Բայց մինչեւ հետեւը չորանում էր, առաջից էր անձրեւը խփում:

Ծնողներս մի սավան էին վերցրել, չորս ծայրից փայտեր էին կապել ու մեզ վրա էին պահել: Ծնողներին քնքշանքն ու հոգատարությունը մխիթարում էին մեզ, բայց խեղճ հայրս ու մայրս իրենք էին ծանր ապրումներ ունենում տեսելով երեխաներին տառապանքների մեջ:

Երկու օր մնացինք անձրեւի տակ, սոված: Տրակտորներ եկան, որ սահնակով քաշելով տանեն: Սահնակն էլ մի մեծ պլաստֆորմ էր: Ժողովուրդը լցվում էր վրան ու այդպես քաշում էին մի 20-25 կմ տայգայի մեջ: Ճանապարհին մի մարդ, երեխային փրկել ուզելով, ընկավ տակը ու լիկվավ:

Մեզ տեղավորեցին բարաքներում, ամեն սենյակում մի քսան հոգի: Մի մուսալեռցի կար՝ Հովհաննես Շարբազյան<sup>3</sup>, հորս հետ երեք գերեզմանի չափ հող փորեցին, ծածկն ու հատակը կլեպը հանած ծառերով ամրացրին, կլեպներն էլ տանիքի վրա քաշեցին, որ մենք երկու ընտանիքով գոնե եղտեղ մնանք: Կոչվում էր գեմյանկա: Եղտեղ մնացինք մինչեւ տուն սարքելը:

Տյագունում սեպտեմբերի վերջին ձյուն է գալիս: Եղ ձմեռ շատ մարդիկ մահացան. ուտելիք չկար: Հերս ու մերս ամիսը երկու անգամ 20-22 կմ ոտքով գնում էին Բորովյանկա, Էստեղից շալակած կարտոֆիլ էին բերում: Բոլորը վախենում էին թոքախտից: Թե մի ընտանիք մտնում էր եղ հիվանդությունը, բոլորին տանում էր, հատկապես երբ անսնունդ էին:

Տյագունում բոլորս էլ դպրոց գնացինք, ես՝ երկրորդ դասարան: Երեխաներով բոլորով էինք գնում դպրոց ու գալիս, որ բուրանից



Վեցից երկրորդ Սամսոնի հայրն է՝ Դակոբ Զեչիշյանը: 1939, Բեյրութ



Զեչիշյանների ընտանիքը (առաջին շարք ծայրից աջ) հայրը՝ Դակոբը, Սամսոնը, Իվրիկոն, մայրը՝ Չամիլիան, (երկրորդ շարք) Իսկուհին, Դիմիտրոսը: 1950, գյուղ Տյագուն

(ճնամրիկ) պաշտպանվեցինք: Թե չէ գալիս, փակում էր ճամփեքը. շատ մարդիկ մոլորվում էին, սառում, մեռնում: Բուրանի օրերը շուտ էինք դուրս գալիս դպրոցից, որ շուտ տուն հասնեք:

Հորս մահը հույսը կտրելուց եղավ: Հերս դաշնակցական ա եղել, բայց հրաժարվել ա հանուն հայրենիքի, որ գնա հայրենիք, որ երեխեքը Հայաստանում մեծանան, հայ մասն: Գնացինք: Մեր հայրենիքը մեզի դավաճանեց: Սիբիրում շատ բողոքեց, որ իրա գործը վերանայեն, բայց արդյունքի չհասավ:

Հորեղբայրս երեխա ժամանակ մեկի այգու ճղներն էր կտրել, մուռ էին պահել ու եղ մուռը մեծ եղբորից՝ հորիցս հանեցին: Եղ մատնողը մեր բարեկամներից ա եղել: Նա ստացավ իր պատիժն Աստծուց. սպանվեց Ղազախստանում:

Հետո մի բան էլ, մարդ որ երեսին խոսացող ա, ճիշտ խոսացող ա, չեն սիրում: Թե մի քիչ էլ խելացի ա, գրագետ, նախանձում են: Հայրս, հույսը կտրելով, մահացավ հենց Ստալինի մահվան տարին՝ 1953 թվին: Դրանից հետո սկսեցին գործերը քրքրել, վերանայել, մենք հետ եկանք 1955 թվին:

Բայց Էստեղ արդեն լավ արդյունքի էինք հասել: Մի հողամաս ունեինք, տարեկան 400 դույլ կարտոֆիլ էինք ստանում, հսկա կաղամբներ, շաղգամ, բազուկ, գազար: Բոլորս աշխատում էինք՝ ով ինչ կարող էր. ես անասուններն էի արածացնում: Օգնում էինք կարիքավորներին: Վերջում արդեն ափսոսում էինք, որ մեր ստեղծածը թողնեք, գանք:

Հայաստան գալուց առաջ Էստեղի տունը ծախեցինք, բայց եկանք



Հակոբ Քեչիշյանի  
շիրիմը Տյագունի  
գերեզմանոցում:  
2016, գյուղ Տյագուն

ու մնացինք մեյդանում: Վերջում մի նկուղում էժան մի սենյակ վարձեցինք, պրիմուսով էինք տաքանում:

Դպրոցից փախչում էի: Պիտի գնայի ռուսական դպրոց [Երեւանում], որտեղ սովորում էին դատավորների, բարձրատիճան գինվորականների, պաշտոնյաների երեխաներ: Մենք դրանց հետ բոբիկ, կարկատած շավարով դպրոց էինք գնում: Ես հպարտ տղա էի. ծաղրում էին, բռնում-ծեծում էի: Իսկ դասատուները ինձ էին պատժում՝ քծնելով պաշտոնյա ծնողներին ու նրանց երեխեքին:

12 տարեկանից աշխատել եմ: Ընտանիքիս կարիքից ելնելով՝ ինձի աշխատանքի վերցրին, բայց օրը չորս ժամ: Հետո աշխատող մեծերը խնայում էին, չէին թողնում ծանր գործ անել:

1969-ին՝ հորս մահից ու Սիբիրում թաղ-

վելուց 13 տարի անց, այցի գնացի նրա շիրմին: Հասա Տյագուն ու հրաշքով գտա: Նոր գերեզմանոցը ուրիշ տեղ էր, հները մնացել էին տորֆի ու հողի բլուրների տակ: Դրանք քանդելով՝ հանկարծ գտա հորս գերեզմանը: Դեռ աքսորում, երբ հերս նոր էր մահացել, ես ինձ խոսք էի տվել, որ, ինչ էլ լինի, պետք ա տեղափոխեմ: Բացեցի գերեզմանը, բայց տեղափոխելու բան չէր, մարմինը, ոնց որ, դեռ պահպանվել էր: Եղ երկրում քար չկար, որ դնեի: Ցեմենտից մի քար սարքեցի, երկաթից՝ խաչ ու մի սալիկ: Վրան իմ անգրագետ հայերենով գրեցի ու դրի:

Եղ բոլոր հարցերում ինձ շատ օգնեց Արմենակ<sup>4</sup> անունով մի հոյակապ մարդ, որն, աքսորից Հայաստան վերադառնալով՝ չէր հավանել ու նորից հետ էր գնացել Տյագուն:

Հետո եղ Արմենակն իրա որդուն ասել էր, որ իրան հորս կողքը թաղեն: Տղան՝ Վասիլին, ձմեռ, բուք-բորանով կատարել էր հոր ցանկությունը՝ արհամարհելով դաժան կլիմայական պայմանները: Հետագայում մորն էլ հոր կողքն էր թաղել: Ընտանիքով ուշադրություն էին դարձնում նաեւ իմ հոր գերեզմանին:

Մենք Սովետից չէինք ուզում դուրս գալ: Հայրենիքն ի՞նչ մեղք ունի. Եղքան վատությունը վատ մարդիկ էին արել: Մինչեւ հիմա էլ պատրասատ եմ հայրենիքիս համար երթալ գոհվել: Բայց մի օր մորս հարցրի՝ հորս դավաճանած չե՞նք լինի, որ գնանք Ամերիկա: Ասեց՝ հերդ որոշել էր՝ որ աքսորից Հայաստան հասներ, գնար Էջմիածին մոմ վառեր ու ընդմիջտ հեռանար Հայաստանից: Եղքան վառված էր սիրտը. ինքը Հայաստանի սիրուն գա, ուղարկեն Սիբիր:

# ԻՍԿՈՒՇԻ ՔԵՇԻՇՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Լիբանանից

Մի հատ մարդ՝ ապարան-  
ցի, ճամփի խոտերը տե-  
սավ, ասեց՝ մի վախեցեք,  
եղի որ կա, չենք մեռնի, մի  
վախեցեք:

Մենք Լիբանանի Սուրսահոյա քաղաքում էինք ապրում: 1947-ին Ե-  
կանք Անճար, որ Էդտեղից հեշտ գևանք Հայաստան: Հայրս դաշ-  
նակցական էր՝ շատ հայրենասեր մարդ, ասում էր. «Իմ աղջիկը  
Երեւանի համալսարանը պիտի ավարտի»: Ես՝ Էնտեղ տարին եր-  
կու դասարան էի փոխում, լավ էի սովորում, ինձի պիտի ղրկեին  
Կիպրոս սովորելու՝ ձրի: Ամերիկայից միսիոներ էր եկել, դակու-  
մենտներս (փաստաթղթերս), ամեն ինչ պատրաստ էր, բայց հերս  
ասում էր. «Հայրենիք, Հայրենիք, Հայրենիք...»:

Երբ որ Հայաստանի թերթ կստանայինք, ողորմած տատս կասեր՝  
կարդա: Կնստցներ ինձի կողքը. Հայաստանի լեզուն պտի կար-  
դամ, Հայաստանի թերթը պտի կարդամ, պտի լսեն: Հայրենիքի  
համար գժվում էին, հայրենիք պիտի գևանք: Եկանք, երկրորդ գա-  
րունը չտեսած՝ ղրկեցին Սիբերիա:

Մեզ մտցրին պոեզը (գևացքը), տավառնի (բեռնատար) վագոններ  
էին: Թրիքը Եսքան (ձեռքով ցույց է տալիս բարձրությունը) մեջը,  
թրիքի մեջը պատահում ա, չէ՞, գարին-բանը ծլում են: Դրանք ծլել,  
ելել էին, մենք դրա մեջ պիտի պառկեինք: Ֆորտոչկան (օղանցքը)  
Եսքան (ձեռքով ցույց է տալիս նեղ ճեղքը), դուռ չկա, ինչ ասեմ տա-  
վառնի վագոն: Իջնելուց էլ գենքը բռնած, երկու կողմը կայնած՝  
գինվորները: Կարծես մարդասպանություն էինք արել, հայրենիքի  
դավաճան էինք, ինչ էինք՝ չգիտեմ:

Չէին թողնում իջնեինք գուգարան, ամոթ չլինի ասելը, Էն էլ որտեղ՝  
վագոնների տակը: Կարող ա վագոնը գևա, մնաս տակը: Եսենց  
դաժանություն... թուրք են ասում, թուրքից բեթար էին, այ մարդ,  
թուրքից բեթար:

Մի հատ մարդ՝ ապարանցի, ճամփի խոտերը տեսավ, ասեց՝ մի  
վախեցեք, եղի որ կա, չենք մեռնի, մի վախեցեք: Սիբե՞րիա էր տեսել,  
թե ինչ, չգիտեմ: Դե մենք արտասահմանից եկած, Էդ բաներին ծա-  
նոթ չէինք: Ճաշը վեդրոներով (դոյլերով) էին բերում, որ պտի ու-  
տենք. ոչ աման-չաման կա, ոչ անկողին: Չթողեցին էլ անկողին  
վերցնենք, ով ինչ հասցրել, վերցրել էր:

Հասանք, տուն-տեղ չունենք: Մի հատ լավ մուսալեռցի տղա կար,  
հետը տապոր էր բերել՝ կացին: Ո՞նց էր բերել՝ չգիտեմ: Էդ գործի-  
քը չլիներ, մենք կորած էինք: Անձրեւի տակ էինք, ի՞նչ պիտի ա-  
նեինք: Մեծ ծառերն Էդ կացինով ճղեց, շերտ-շերտ հանեց, շիֆերի  
նման իրար վրա դրեցին, սարքեցին, տակը մնացինք: Էդ մարդը  
մեզի փրկեց, ողորմի իրան, Հովհաննես էր անունը: Էդ տեսակ  
տներին տեղացիները գեմյանկա էին ասում, կեսից ավելը հողի  
մեջ էր: Էդ տունը մի պատով բաժանեցին երկու մասի, մի կողմում  
մենք էինք, մյուս կողմում Հովհաննեսսենց ընտանիքը: Հետո, որ  
ձյունը շատ էր իջնում, չէինք կարա հարեւանի տունը ելնեինք-

մտնեինք, փոքր անցք էինք արել պատի վրա, որ իրար հետ խոսենք, ուտելիք-բան առնենք-տանք: Դուրս գալ չկար, ձյուն ա: Ձյունը երեք մետր ա, մեր տունն էլ հենց սարի ստորոտին էր, մի քիչ ներքե արդեն ձոր էր:

Հետո կամաց-կամաց որ աշխատեցինք, կով ու ոչխար առանք, խոզ առանք, տուն սարքեցինք: Մի տան չափ հոր ունեինք, մեջը կարտոշկա էինք լցնում: Կաթը կար, մածունը կար, ամեն ինչը կար, արդեն լավ էինք: Բայց մեծերը պտի ամիսը մեկ ստորագրեին: Գնում, ստորագրում էին, որ ներկա են: Ես չափահաս չէի, չէի ստորագրում:

Մի օր էլ հերս գործի տեղը կացինով աշխատում էր, ծառ էր կտրում, իսկ ես տապորով ծառի ճյուղերն էի մաքրում, մեկ էլ ձեն տվեց, ասեց՝ գնա ինձի ջուր բեր,

բալես: Ջուրը մոտակա ձորակում էր: Հետ եկա, տեսնեմ հերս էդ ծառի քյոթուկի վրա նստած լացում ա: Ասի՝ ինձի դրկում ես ջրի, դու լացո՞ւմ ես: Ասեց. «Բալես, ես քեզ սրա համա՞ր բերի Հայաստան, քեզ ինչի՞ համար բերի Հայաստան»:

Երեւի էդ ապրումներն էին պատճառը, որ 42 տարեկանում ինֆարկտը խփեց, մահացավ: Մնացի աշխատող ձեռք ես, ախպերս ինձնից երեք տարի փոքր ա, էն էլ դեռ կարգին չէր կարում աշխատեր, մնացի ես: Մամաս՝ ոտքերը, ձեռքերը բռնվավ: Մյուս քույրս, որ ընդեղ էր ծնվել, երկու տարեկան էր, որ հերս մահացավ: Ըտենց յուր էինք գնում, մի օր ծանոթները-բանը ինձի կանչեցին, ասին՝ գնա, դիմում տուր, որ դու մեղավոր չես, հերդ չկա, թող քեզ վերադարձնեն Հայաստան: Ասի՝ ոչ, ես երբեք իմ հորս մեղավոր չեմ հանի: Ըտենց էլ՝ չգրեցի, սպասեցինք մինչեւ ընդհանուր ազատում:

Ստալինի մահվան օրը գործի տեղն էինք, անտառում: Հայտարարեցին... Բերիայի մեռնելն էլ եմ լավ հիշում, Ստալինի մեռնելն էլ: Հիմի, մենք ուրախանում ենք, ճիշտ ա թաքցնելով մեր ուրախությունը, որովհետեւ ռուսները լացում էին: Ստալինը մեռել ա, բա ի՞նչ անեինք:

Ձախից՝ Իսկուհի Քեչիշյանն ընկերուհու հետ: 1954, գյուղ Տյագուն



Հայրս Արոյան ազգանունով մի ընկեր ուներ, լավ անգլերեն գիտեր, հերս էլ՝ ֆրանսերեն: Ռադիոն գաղտնի կբացեին՝ կլսեին արտասահմանի լուրերը: Էդ Արոյանն անգլերենից էր թարգմանում, հերս՝ ֆրանսերենից: Ասում էին՝ գոնե ետի որ մեռնի, մեզի կազատեն: Եւ մեռնելուց հետո ազատեցին մեզի, բայց արդեն ի՞նչ, Էնքան մարդիկ մեռան ընդեղ, Էնքան մարդիկ գոհվեցին: Մարդիկ կային, որ հենց հասնելու էդ գիշերը... Մի մարդ կար, երեխուն բռնեց, որ չընկնի տրակտորի տակ, ինքն ընկավ-մեռավ: Աստեր մնացին փոքր երեխեքը:

Էդպես, Ստալինի մեռնելուց հետո մեզի ազատեցին, բայց ինձ չէին թողնում, ասում էին՝ դու լավ աշխատող ես, դու մնա, աշխատի: Բայց ես՝ էլ ոչ ստաժ, ոչ մի բան չնայեցի, 1956-ին ընտանիքիս հետ եկա Հայաստան: Հորս շիրիմը մնաց Տյագունի գերեզմանոցում:

Մինչեւ հիմի հայտնի չի՝ ինչի՞ էին մեզ արքայազնից: Վերադառնալուց հետո մեզի արդարացրին, ասին՝ Ես վեց տարվա բացակայությունը աշխատանքային ստաժ կհամարենք: Գնացինք էդ թղթերի հետեւից, տեսանք մեր համարի դիմաց ուրիշ անուն ա գրած: Փաստորեն մեզ ուրիշի տեղն էին արքայազնից:

Անտառակյուղի բաց պահեստ Օբ գետի վրա





## ԽԱՉԻԿ ԱՎԱԳՅԱՆ



Ներգաղթել է  
1946-ին  
Լիբանանից

Մեր աշխատանքը անտա-  
ռը կտրելն էր՝ էլեկտրա-  
կան եւ ձեռի սղոցներով:  
Էնտեղի մեծի ազգանունը  
Չվերել էր: Եվ իսկապես,  
ոնց որ զվեր (գազան) լի-  
ներ: Ստրակով էր գալիս  
մոտենում ժողովրդին:

## ԱՐԱՔՍԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ



Ներգաղթել է  
1936-ին  
Ֆրանսիայից

Երեսուն կիլոմետր ոտ-  
քով զագս գնացինք: Բա-  
ցի դրանից՝ տեր հայրով  
ենք ամուսնացել: Նա էլ  
աքսորված էր. լուր դրկե-  
ցինք՝ եկավ:

**ԽԱՉԻԿ**

1946 թվին Բեյրութից «Չուկոտկա» նավով եկանք Հայաստան: Փոքր նավ էր, մեջը բեյլանցիներ էին եւ Սուր քաղաքից մի քանի ընտանիք: Մեր ընտանիքը հինգ հոգի էր. հայրս՝ Հովհաննես, մայրս՝ Եղիսաբեթ, ես՝ Խաչիկ, միջնակ եղբայրս՝ Դանիել, փոքրը՝ Արամ:

Սուրը Բեյրութից հարավ է: Հայրս այնտեղ դեղատուն ուներ: Դպրոցից ազատ ժամերին ես նրան օգնում էի դեղատանը: Հայաստան հասանք Նոյեմբերի 7-ից մի քանի օր առաջ: Մեր բարեկամներից մեկն ինձ տարավ Երեւանի դեղատների վարչություն: Ես 16 տարեկանից սկսեցի աշխատել հեղուկների բաժնում՝ մինչեւ արտորդ:

**ԱՐԱՔՍԻ**

Իսկ մենք 1936 թվին Հայաստան էինք եկել Ֆրանսիայից: Ես փոքր եմ եղել, երեք տարեկան, շատ բան պատմելով եմ հիշում: Այն ժամանակ ընտանիքում միայն երկու երեխա էինք. ես՝ Արաքսի եւ մեծ քույրս՝ Վարդանուշ՝ ջարդի ժամանակ սպանված հորաքույրերիս անուններն են: Մեծ ընտանիքից միայն հայրս է փրկվել՝ մոր ու մի քրոջ հետ: Իսկ մայրական ընտանիքս՝ Դեմիրճյաններ, շուտ են գնացել Ֆրանսիա, Լիոն: Քանի որ Հալեպում հարեւաններ են եղել, հայրս խնդրել է մեծ հայրիկիս (իր ապագա աներոջը), որ իրեն էլ տանի Ֆրանսիա: Այնտեղ էլ ամուսնացել է մորս հետ:

Մայրս, ոտներն ընկած, աղաչել է հորս՝ չգնանք Հայաստան: Մորս ամբողջ ընտանիքն է դեմ եղել մեր Հայաստան գալուն, բացի Խաչատուրից (մորս հորեղբորորդին), որը երազում էր գնալ Հայաստան եւ ամուսնանալ կոլխոզնիկ աղջկա հետ: Բայց գալով հիասթափվում է եւ հիմա էլ հորս համոզում է, որ նա գնա Մոսկվա՝ դեսպանատուն [Ֆրանսիայի], թե հետ ենք ուզում գնալ: Հայրս մինչեւ Մոսկվա 15 օր գնացքով ճանապարհ է գնում: Դեսպանատանը վախեցնում են՝ թռչունն անգամ չի կարող հետ գնալ: Վերադառնում է, Չե-Կա-ում<sup>6</sup> պարկի մեջ են դնում, ծեծում են: Անունը սեղուցակում են գրում:

Հայրս՝ Գրիգորը, լուսանկարիչ էր, հետը լուսանկարչական ապարատներ, գործիքներ, ոսկի ժամացույցներ շատ էր բերել, նույնիսկ՝ հեծանիվ: Լավ ունեցվածքով էինք եկել: Քանաքեռում հողամաս տվեցին, ֆոտո սարքեց, սկսեց աշխատել: Հետո մեծ տուն սարքեց՝ երեքհարկանի, շատ գեղեցիկ: Չմեռը միշտ կով էինք մորթում, բաստուրմա, սուջուխ էինք սարքում: Այծեր, ոչխարներ ունեինք: Արաբկիրի ամենահարուստը մենք էինք, բայց այդ տունը երեք տարի էլ չվայելեցինք: 1941-ին, երբ պատերազմը սկսվեց, եկան, խուզարկեցին՝ զենք փնտրելու պատրվակով, ու պապայիս տարան: Երեւանի կրկեսի տակ գաղտնի տեղ կար, պապայիս հարցաքննում էին: Մի ամիս ես ու մամաս գնում էինք տեսության, մի

Դեմիրճյանների ընտանիքը արտրավայրում: (ստաճ ծախից) հայրը՝ Գրիգորը, Օվսաննա տատը, գիրկը փոքր քույրը՝ Օվսաննա, մայրը՝ Վարսենիկը (կանգնած) Արաքսիան, եղբայրը՝ Փիլիպոսը, մեծ քույրը՝ Մարգարիտը: 1950, Ալամբայակի ԱԱՏ



օր էլ ասին՝ կայարան են տարել յոթ ընկերների հետ: Բոլորը մահացան, միայն ինքը վերադարձավ ութ տարի հետո: Աքսորել էին Ղազախստան: Աշխատել էր, իր ձեռքի շնորհքով՝ ռուսական վառարաններ էր սարքել:

Երբ հայրս եկավ, ունեցանք եւս մի քույր, իսկ մինչեւ գնալը ծնվել էր եղբայրս՝ Ֆիլիպը: Հորս հետ արքայազան մի ֆրանսահայ՝ Փայլակը, որ նույնպես Արաբկիրում տուն ուներ, խնդրել էր, որ հայրս իրենց շուշաբանդը (պատշգամբ) սարքի: Սարքեց: Եկավ թաղայինը<sup>7</sup>, պահանջեց քանդել: Պապաս հրաժարվեց. «Ինչո՞ւ քանդեմ, այս ընտանիքի հայրը մահացած է»: Աղմուկ բարձրացավ, թաղայինն ասեց՝ ֆինբաժնին<sup>8</sup> չես հայտնել, սպառնաց՝ մատը թափ տալով, թե էլի արքայ կուղարկի՝ ընտանիքով:

Այդպես էլ արեց՝ 1949 թվին: Տատիկս՝ Օվսաննա խանումը, 80 տարեկան էր, մայրս՝ Վարսենիկը՝ 50 չկար, մեծ քույրս՝ 18, ես՝ 15, եղբայրս՝ 9, փոքր քույրս՝ մեկ տարեկան եւ հայրս՝ արքայվեցինք:

**ԽԱՉԻԿ**

1949-ին հազիվ սկսել էինք ոտքի կանգնել: Անցել էին այն օրերը, երբ ամբողջ ուշքդ ու միտքդ մի կտոր հացն էր, որ գիշերը անոթի չքնես: Մեր դրուժությունը սկսել էր լավանալ, մեկ էլ՝ արքոր: Աքսորն էլ 15-17 օր ճանապարհ: Եթե էդ ճանապարհը մեկը պատմեր, բոլոր լողներն ուղղակի լաց կլինեին:

Հայրս՝ Հովհաննեսը, միամիտ մարդ էր, եղբայրներով շատ անգամ ենք զգուշացրել՝ դրսում չխոսես, պատերը ականջ ունեն, բայց խոսացնողները շատ էին: Արդեն սեւ ցուցակ էին գցել: Մի օր էլ գիշերով լիազորը՝ թակեց մեր դուռը, հետը երկու ԿԳԲ-ական եւ մի ռուս զինվոր՝ սպիւնով: Սկսեցին խուզարկել՝ գենք էին փնտրում, անգամ դանակ, հետո գտան մի լուսանկար՝ հայրս Թուրքիայում փոլիս (նուսիկան) աշխատած ժամանակ: Ասացին՝ ահա՛, գաղտնի գործեր ես արել: Հայրս արդարացա՛վ՝ մի տարի եմ աշխատել՝ ընտանիքս պահելու համար: Իսկ լիազորը, թե՛ պետությունը ձեզ տեղափոխում է ուրիշ տեղ, գտնում ենք, որ եստեղ չպիտի մնաք:

Գիշերով մեզ ևստացրին գռուզավիկ (բեռնատար) մեքենան, բան էլ չունեինք հետներս վերցնելու, ու քշեցին կայարան: Կանգնած էին 60 ապրանքատար



վագոններ: Ամեն մի վագոնի մեջ բերում ցնում էին մարդկանց՝ զոռով, խաթրով, հրելով մտցնում էին: Եղբա՛յր, ու՛ր եք տանում: Գնացեք, մտեք, պետությունը եսպես ա որոշել: Մեզ հասավ 56-րդ վագոնը: Մեզ հետ մի ընտանիք էլ բերին: Մայրը եւ երկու երեխա: Մոր անունը Հռիփսիկ էր: Գոռում է՝ ո՛ւր եք տանում, մարդս գործով տեղ ա գնացել, ես մենակ՝ ո՛ւր եք տանում: Սրան թե՛ հանգիստ եղիր: Հինգ րոպե չանցած՝ տեսնենք՝ քշելով, ծեծելով, խփելով մի մարդու են բերում: Հռիփսիկի մարդն էր: Ինքն էլ ա վարորդ եղել, իր մեքենայով ընտանիք ա բերել կայարան: Մեքենայից էին իջեցրել՝ հարկադրաբար: Կնոջն ու երեխաներին տեսավ, ապշած մնաց՝ ես ուրիշի ընտանիք եմ բերել, իմ ընտանիքն էլ մի ուրի՞շն ա բերել:

Վագոնի դռները պինդ փակեցին, փոքր լուսամուտներ՝ ճաղապատ, ու ճանապարհ ընկանք: Մի օր սոված մնացինք, Բաքուն անցանք մեզ ուտելիք տվեցին: Եկան հաշվեցին ամեն վագոնում եղած ժողովրդին, քանի հոգի են՝ 10-20-30..., մի պատասխանատու դրին: Ճանապարհին տեղ-տեղ կանգնում էին, որ մարդիկ իրանց պահանջները հոգան: Տղա-աղջիկ, քույր-ախպեր, մեր-կին չկար, բոլորը իրանց պահանջները նույն տեղում հոգում էին՝ աչքները փակելով: Այդպես ա-

Դանիել, Խաչիկ, Արամ  
Ավագյան եղբայրներն  
աքսորավայրում: 1955

մեն օր մեկ-երկու անգամ կայնում էր էշելոնը: Մի օր էլ մայրս ամաչելով վագոնի տակից անցավ գնացքի մյուս կողմը, որտեղ միայն կանայք էին, գնացքը շարժվեց: Հեռախոս չկա, դրոշակով նշան պիտի անես վերջին վագոնի զինվորներին, որ կանգնեցնեն: Տասնյակ մարդիկ էին մնացել դուրսը, միայն մայրս չէր: Գնացքը մոտ հարյուր մետր գնացել էր, հազիվ կարողացանք կանգնացնել:

Մի շաբաթից, կարծեմ Չեյնաբինսկում, ժողովրդին տարան բաղնիք, որից հետո հասանք Սորոկին: Այդտեղից բաժանեցին տեղամասերի, մեզ տարան Ռազմիշկա՝ Ինգարա գետի ափին: Երկու-երեք բարաքի մեջ քսանից ավելի հայ ընտանիք տեղավորեցին՝ Եգիպտոսից, Ֆրանսիայից, Լիբանանից, տասը ընտանիք՝ ղարաբաղից:

Մեր աշխատանքը անտառը կտրելն էր՝ էլեկտրական եւ ձեռի սղոցներով: Էնտեղի մեծի ազգանունը Չվերեւ էր: Եվ իսկապես, ոնց որ գվեր (գազան) լիներ: Մտրակով էր գալիս մոտենում ժողովրդին:

Թեեւ ամառ էր, առաջին գիշերը մեծ խարույկ էինք վառել՝ վիստացող մոծակների բազմությունը քշելու համար: Ամբողջ ժողովուրդը հավաքվել էր կրակի մոտ: Երեք քույրեր կային՝ մոր հետ աքսորված, իսկ հորն առանձին էին աքսորել, լուր չունեին: Նրանցից մե-

Խաչիկի եւ  
Արաքսյայի  
հարսանիքը  
տայգայում:  
1954



կը գրի էր առել մեր աքսորի ճանապարհի սարսափելի պատմությունը, սկսեց կարդալ: Բոլորը լաց էին լինում լսելով իրենց կյանքը: Սիբիրում մնացինք վեց ու կես տարի: Ազատվելուց տարի ու կես առաջ նշանվեցինք:

#### **ԱՐԱՔՍԻ**

Սիբիրում մեր ընտանիքները միասին են եղել: Երբ էդ ռուսների տներում տեղավորեցին, սապոզները դնում էինք գլուխներին տակ, դուռը փակում, պառկում: Բայց վա՛յ էդ պառկելուն: Ռուսները մեզ թարս աչքով էին նայում, գիտեին՝ հանցագործ ենք, որ աքսորել են: Աքսորի դառը հիշողությունների մեջ առանձնանում է մեր ամուսնությունը: Երեսուն կիլոմետր ոտքով զագս գնացինք: Բացի դրանից՝ տեր հայրով ենք ամուսնացել: Նա էլ աքսորված էր. լուր դրկեցինք՝ եկավ: Մի հարյուր հոգի մարդ կար, երեք-չորս նվագող: Շա՛տ մեծ հարսանիք էր: Նման հարսանիք ոչ մեկը չի արել: Էն էլ ասեմ սկեսրայրիս սիրելի հարսն եմ եղել: Ունեցել եմ իդեալական սկեսուր: Ես առաջնեկիս էի սպասում, երբ խաչիկենց ազատական եկավ, նրանց ընտանիքը գնաց Երեւան, մնացինք երկուսով: Մեր ընտանիքի ազատականը տվեցին մի տարի անց, արդեն տղաս ծնվել էր:

#### **ԽԱՉԻԿ**

Մինչեւ Հայաստան գնալներս, քեհիս՝ Վարդանուշը, մեզ մի քանի օրով իր մոտ՝ Բառնաուլ կանչեց, որ քրոջից կարոտն առնի: Մեր երեխան դեռ չէր ծնվել, իրենք օրորոցի երեխա ունեին: Երկու քույր ինձ խնդրեցին, որ մնամ քնած երեխայի մոտ, իրենք դուրս գան խանութներ: Նոր էին դուրս եկել, մեկ էլ՝ դուռը թակեցին, բա՛՛ Դեմիրճյան Արաքսին ստե՞ղ է: Ասեցի՝ այո, քույրերով խանութ են գնացել, ուզում եք՝ ներս եկեք, մինչեւ գան: Մի տեբե վերիմ (մենք քեզ հավատում ենք)՝ ասին ու գնացին. երկու ԿԳԲ-ական ոստիկան էին: Մեզ հետ աքսորվածներից մի դարաբաղցի էր տեղյակ պահել, իբր փախել ենք Հայաստան:

Ստալինի մահվան օրը Ռազմիշկայում 53 աստիճան ցուրտ էր: Ոչ թերթ կար, ոչ ռադիո, լուրը մեզ հասցրեց մի պարտիական. ի՛նչ ցավալի բան է պատահել...: Բայց մենք տղաներով իրար աչքով էինք անում էս ի՛նչ բախտավորություն է: Գնացինք գործի մի երկու-երեք կիլոմետր, էդ նույն մարդը եկավ, թե բոլորդ էսինչ ժամին պետք է շարք կանգնեք, գլխարկներդ հանած, մի բոպե լռություն. մոտակա կայարանից գնացքի շչակը պիտի հնչի: Երբ տուն գալով՝ հորս հայտնեցինք, շատ ուրախացավ, այնքան, որ մենք զգուշացրինք՝ դրսում ցույց չտաս:

Սովետից դուրս գալու փորձեր արել էինք, բայց գալը հաջողվեց, երբ աղջիկս ամուսնացավ ԱՄՆ-ում արդեն բնակվող մի տղայի հետ, որը եկել էր Հայաստան՝ հարսնացու տանելու: 1988-ին իրենց

հյուր գնացինք: Փեսաս, իմանալով մշտական մեկնելու ցանկությունս, վիզա դրկեց:

Դուրս գալու պատճառները շատ էին: Աշխատում էի կահույքի գործարանի հավաքման արտադրամասում: Վարպետի, ղեկավարի ազգականները արեւի տակ պառկած օր էին անցկացնում, ստանում էին 300-400 ռուբլի, ես քափ ու քրտինք մտած աշխատում էի, ստանում էի 100-120 ռուբլի: Բողոքում էիր, ասում էին՝ պետութունը իրավունք չի տալիս ձեզ՝ սրանից ավել ստանաք:

Սովետը վաղ թե ուշ մի օր պիտի քանդվեր: Այն տարիներին, լսել եմ, որ Հայաստանը Ռուսաստանին տարեկան 17 մլրդ ռուբլի էր տալիս, դրա դիմաց, որպես բյուջե, ստանում էր 2,5 մլրդ: Դրա համար էլ հասարակ բանվորը ինչքան էլ չարչարվեր, 100 ռուբլի էր ստանում:

Մեզ անընդհատ հետապնդում էր վախը: Աշխատանքից ուշանալու վախը, որ գործից չհանեն: Կրկին աքսորվելու վախը: Վախ վախի վրա: 88-ի երկրաշարժը եղավ. ես մի վախ: Այդ պահին աշխատանքիս տեղում էի, երկրորդ հարկում, ցնցումից վախեցա, ես մի վախ: Էսօր կինս էլ, ես էլ, մի թխկոց ենք լսում, անմիջապես վեր ենք թռնում:

# ՌԱՆԵԼ ԴԵԼԻ-ՍԱՐԳՍՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Սիրիայից

Մամաս կարպետը փռում էր հատակին, նստում կամ պառկում էինք. ո՛չ մահճակալ կար, ո՛չ աթոռ կար: Մի փոքր սեղան տվեցին, որ վրան հաց ուտենք:

1947 թվին 5 տարեկան էի, որ Քեսաբից եկանք Հայաստան: Մեզի իջեցրին Ղափանում (Կապան), որտեղ մնացինք մեկ տարի ութ ամիս: 1949-ին արքայազնից: Գիշերվա կեսին պատուհանից հորս աչքերի վրա լույս գցեցին, որ արթնանա: Երեք հոգի մտան տուն, ասացին՝ բոլոր ընտանիքին պատրաստե՛ք, ձեզի պիտի տեղափոխենք ուրիշ տեղ:

Ելանք, հագնվեցինք: Դռան մոտը միշտ մեկը պահակ էր կանգնում, չէին թողնում դուրս ելնեինք: Չուզարան էինք գնում, մեկը գալիս էր, զուգարանի մոտ կանգնում էր:

Լույսը բացվեց, բերեցին մի գռուզավիկ (բեռնատար մեքենա), ասացին՝ վեջչերը (իրերը) բոլորը մի՛ տարեք, մի քանի բան տարեք ձեզի անհրաժեշտ: Բայց մայրս բոլորը փաթաթեց կարպետի մեջ. տեղաշորը, համարյա ամենն ինչ ունեինք: Ու էդ մի մեքենայի մեջ բոլորիս լցրեցին, տեղափոխեցին կայարան:

Իրիկունը ուշ ժամի գնացքը եկավ: Մեջը էլի ընտանիքներ կային, բայց ովքեր էին՝ չէինք ճանաչում: Մեր վագոնի մեջ չորս ընտանիք էին: Չգիտեինք՝ ո՞ւր ենք գնում: Ամեն մի կայարանում գնացքը կանգնում էր, մեզի հաց էին տալիս, ճաշ էին բերում՝ քիչ-քիչ բոլորին բաժանում էին:

Քսանուկ օր մեզի բեռնատար գնացքով տարան: Հասանք մի խուլ գյուղ: Ալտայսկի կրայի (Ալթայի երկրամաս) փոքր գյուղ էր՝ Պարասկովյեկա, կողքը կար մի հատ գյուղ՝ Դեմյան, Խերսոնկա կար, որը մեր գյուղից մի քիչ հեռու էր: Էդ մեր գյուղում քսանմեկ ընտանիք էր: Յոթ ընտանիք էլ բերեցին, եղան քսանուկ ընտանիք:

Մի հատ փոքր գրասենյակ դատարկեցին, մեզի տեղավորեցին Էդտեղ: Մի սենյակ էր՝ ութ հոգի էինք: Մամաս կարպետը փռում էր հատակին, նստում կամ պառկում էինք. ո՛չ մահճակալ կար, ո՛չ աթոռ կար: Մի փոքր սեղան տվեցին, որ վրան հաց ուտենք:

Մեկ տարի Էդտեղ ապրեցինք, մինչեւ եղբայրներս ու հայրս աշխատեցին, տուն առանք: Երկու սենյակ էր, մեկ էլ՝ գոմ: Մի սենյակը տաքացնում էինք, բոլորս էդ մի սենյակի մեջ էինք մնում: Մի երեք հոգի վառարանի կողքն էինք պառկում, մնացածներն էլ՝ փայտից երկու հատ բան սարքեցին, դրանց վրա պառկում էին:

1950-ին մենձ ախպերս պսակվեց. հևարավոր չէր, որ էդ մի սենյակում բոլորս միասին ապրեինք: Գնաց զոքանչի տունը մնաց մի քանի ամիս, մինչեւ մի սենյականոց տուն էլ ինքը առավ:

1953-ին հայրս մահացավ՝ ա՛խ, Հայաստան կանչելով, ինքը շատ ծանր տարավ, չդիմացավ: Մինչեւ մեր Հայաստան գալը մենձ ախպերս Բեյրութում էր աշխատում, սովորում էր. հայրս նրան էլ չթողեց, վերցրեց, հետը բերեց Հայաստան: Ու որ Սիբիր արքայազնից,

գլխին էր տալիս, բայց ուշ էր: Ծնողներին շատ ասեցին՝ մի՛ գնացեք Հայաստան, Էստեղ սով է, մի՛ գնացեք՝ չհավատացին:

Սիբիրում դպրոց էինք գնում՝ ո՛չ կոշիկ ունեինք, ո՛չ վերարկու: Քե-սաբից ամառային կոշիկներով էինք եկել, իսկ Էստեղ սարսափելի ցուրտ էր լինում 40-42 աստիճան: Ռուսերեն չգիտեինք, իսկ դպրոցում մեզի թույլ չէին տալիս հայերեն խոսել: Հայ երեխաներով եթե հայերեն խոսեինք իրար հետ, դասատուն մեզի պատիժ էր կանգ-նեցնում հայերեն չպիտի խոսեք: Մենք էլ թաքուն էինք խոսում ի-րար հետ. հայ երեխաներ էինք, ո՞նց իրար հետ մեր լեզվով չխո-սեինք: Հետո կամաց-կամաց սովորեցինք: Հայրս համարյա չսովո-րեց ռուսերեն, մայրս էլ՝ մի քանի բառ:

Ղափանից երեք ընտանիքներ կային Էստեղ: Բաքվից կար թուրքե-րի մի ընտանիք: Ուկրաինայից կային... Մի երեք տարի հետո ար-դեն կարողացանք ոչխար, խոզ, կով առնել: Երկու եղբայրներս տրակտորիստ էին աշխատում: Աշխատանքի դիմաց ցորեն կամ կարտոֆիլ էին տալիս: Եղ ամբողջ յոթ տարի մենք մեռանք կար-տոֆիլ ու ցորեն ուտելով: Դե մենք քեսաբցի ենք, ցորենը խաշում, ծեծում էինք, ձավար անում:

1956-ի գարնանը մեզի ազատեցին: Եղբայրներս տրակտորիստ էին, միևնույն ցանքը չարեցին, չթողեցին իրանց: Ապրանքատար գնա-ցքով էլ հետ եկանք: Մայրս հաց էր թխել՝ սուխարի (հացի կամ թխվածքի չորուկներ) էր սարքել, Էդպես Էդ քսանուկ օրը գնացքով եկանք: Իջանք Երեւան, եղբայրս գտավ մեր ազգականներին, Ե-կան, տարան իրենց տուն: Մի ամիս մնալուց հետո որոշեցինք տուն վարձել: Մեր ազգականները չէին թողնում, բայց գնացինք,



Աքորականները  
Ալթայի  
երկրամասում

Ռահելի մայրը՝ Լուսիկը,  
մեծ քույրը՝ Չարուհին:  
1955, գյուղ  
Պարասկովյենկա



երկու տարի վարձով ապրեցինք: Հետո եղբայրս եւ երկու քույրերս աշխատեցին, տուն առանք:

Ուզում էինք բնակարան ստանալ: Դիմեցինք, ասացին՝ որտեղից որ ձեզի աքսորել են, գնացե՛ք, Էստեղ դիմեք: Դե մենք չէինք ուզում Ղա-փան գնալ, մնացինք Երեւանում:

Էդպես էլ հստակ չիմացանք՝ ինչու էին մեզ աքսորել: Ասում էին, թե

հարեւաններն էին բողոքել, որ դաշնակ-ցական ենք թե հնչակյան ենք, չգիտեմ: Որ եկել էին աքսորելու, տեղաշորը, սնդու-կը, չամադանը (ճամպրուկ) լրիվ քրքրե-ցին: Չե՞նք ման եկան, ինչ ման եկան՝ չգիտեմ: Դուկումենտները (փաստաթղ-թերը) լրիվ նայում էին, ոչ մի բան չգտան: Բայց էլի աքսորեցին մեզի, որով-հետեւ՝ մատնված էինք: Աքսորից որ Ե-կանք Հայաստան, նոր իմացանք, թե ով էր մեզի մատնել:

Ամուսնուս հայրս էլ էր աքսորված եղել:

Առիթ եղավ Հայաստանից գնալու, իմ ա-մուսնինը չուզեց՝ ես չեմ գնա, իմ ծնողնե-րը ինձի Հայաստան են բերել, Հայաս-տան էլ կմնամ:

# ՎԱՐԴԱՎԱՌ ՊԱՅՏԱՐՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Լիբանանից

Թուրքերի լուծը տեսել էր, արաբների լուծն էր տեսել, ասում էր՝ գնանք Հայաստան, մեր հայրենիքն է, մեր ժողովուրդն է, նրանց հետ կապրենք ազատ ու անկախ:

Բեյրութից էինք ներգաղթել Հայաստան, չնայած ես Հալեպում եմ ծնվել: Էստեղ օտար մարդիկ ավելի ջերմ էին, քան թե Հայաստանի ժողովուրդը: Ավելի ազատ էինք մենք արաբների մեջ: Եւ խորթ էինք մենք հայրենիքի համար:

Բոլշևիկյան ընդհանուր քաղաքական դրվածքն էր, թե եկողները անհուսալի մարդիկ են, դուք նրանց հետ հարաբերություններ մի՛ արեք, զգո՛ւյշ եղեք: Մեզ չէին հավատում, մեզ չէին վստահում: Եւ եղ անվստահությունը մեզ Սիբիր՝ քարտի տարավ:

Էնպիսի գիտնականներ եկան Բեյրութից, Էնպիսի մտավոր աշխատողներ եկան... Ես ընկերներ ունեի, որ գրականագետներ էին, ճեմարանում միասին էինք սովորել, բոլորին քարտեցին:

Ինձի 1949-ին քարտեցին:

Դաշնակցական ենք եղել մենք գաղափարապես: Ով հայրենիքը սիրում էր՝ մենք էլ կողմն էինք: Դաշնակցություն ասելով՝ մենք ֆաշիստներ չէինք, մենք ազգասերներ էինք, մեր լեզուն սիրող էինք, օտար ափերում հայ մնալու կողմն էինք: Սա չէին ըմբռնում, եւ մեզի ֆաշիստի տեղ էին դնում:

Ներգաղթի ժամանակ ասում էին՝ Դաշնակցությունից որ հրաժարվես՝ կերթաս Հայաստան: Հետո մենք ըմբռնեցինք, թե ինչի համար էր եղ բոլորը: Ասում եմ՝ ինչի՞՞ եք քարտրում, ասում է՝ դու եղել ես դաշնակցական: Հա՛, ասում եմ՝ եղել եմ, հրաժարական եմ տվել: Տես, թե որտեղից են բռնացրել, կարո՞ղ էի թաքտալ: Այո՛, եղել եմ դաշնակցական, դրա շնորհիվ ես հայ եմ մնացել: Կարո՞ղ էի մի արաբուհի առնել՝ արաբ դառնալ, կարո՞ղ էի: Երիտասարդ տղա էի, սիրուն տղա էի, լավ էլ գործ ունեի, աշխատում էի, արաբերեն գիտեի, ֆրանսերեն գիտեի: Բայց չէ՛, ես հայ մնացի եւ եկա Հայաստան, ուրա՞խ չեք...

Վերջը քարտրում սիբիրյան դաստիարակություն, ռուսական կրթություն ստացա. հեռակա ինստիտուտ ավարտեցի: Եթե չաքարտեի Սիբիր, ես չէի սովորի ռուսերեն: Որ եկա, արդեն հայերեն չէի կարողանում խոսել, ռուսերեն էի խոսում:

Ռուսականացրին ինձի, բայց ոչինչ, էլի մնացի հայ: Լավ է՝ ռուս աղջկա հետ չեմ ամուսնացել, մնացել եմ հայ, հայու զավակ: Մեր երիտասարդներից շատերը ամուսնացան ու մնացին:

Ասեմ, որ ես էլ ավարտելուց հետո Բառնաուլում գարեջրի գործարանի գլխավոր ինժեներն էի: Եղ խարակտերիստիկայով (բնութագրով) եկել եմ Երեւան: Երեւանում սայում էին իրար երեսի, թե՛ ես մարդը որտե՞ղ տեղավորենք: Ասի՝ տեղ չունեք, ես հետ կգնամ Մոսկվա: Չէ՛, մնա՛:

Ինձ քյուլեցին (խաբեցին), Ջերմուկ ուղարկեցին: Չէի իմանում, որ Ջերմուկը ուր է՝ 2200 մետր բարձրության վրա: Լա՛վ, ասի, հայրենիքս է, էստեղ էլ կապացուցեմ, որ ես իսկական աշխատող եմ:

Ե՛լ «Ջերմուկի» գործարանը կառուցեցի, ե՛լ նրա ամբողջ մեխանիզմը դրեցի: Քուրդերը էստեղ ոչխարներ էին բերում, եղ հանքային ջրի մեջ լողացնում էին, եղ ջուրն էին ժողովրդին տալիս, եղ բոլորը վերացրել եմ: Ջերմուկը շժի մեջ ձագարներով էին լցնում, ձեռքով խցան խփում. չկար ավտոմեխանիզացիա: Հունգարիայից եկած ավտոմատ սարքավորումների արկղերը դրսում արելի տակ, անձրելի տակ փտում էին: Ոչ ոք չէր մոնտաժում: Ես արեցի:

Հետո նշանակեցին ինձի նաեւ «Արզնի» գործարանի դիրեկտոր, «Հանքավան» էլ իմ ղեկավարության տակ էր, «Բջնին» էլ, «Սեւանն էլ». բոլորը:

Բայց չէ՛, սպասում էին ինձանից էն, ինչ չէին ստանում: Չէի տալիս: Տուրք էին ուզում, բայց ես տուրք հավաքող չեմ, ես ազնիվ աշխատող եմ: Պլանները գերակատարում էինք, որակը՝ բարձրագույն, եւ ամեն տեղ՝ զովասանք: Եկամուտը՝ ահագին: Գործարա-



Աջից ձախ՝  
Վարդավառ  
Պայտարյան, Ժիրայր  
Ռաթեւոյան, Նոյեմ  
Բուդուրյան  
(Հունաստանից),  
Հովհաննես եւ Միհրան  
Պայտարյաններ: 1955,  
Բառնաուկ

Վարդավառ Պայտարյանի  
լուսանկարը  
աբստրի գործից:  
1949



նի քյուլեցն հասել էր մինչեւ ուր, որովհետեւ գող չէի, ավազակ չէի: Հետ մնացող բոլոր ֆաբրիկաներին օգնություն էի տալիս մեր եկամուտից: Բայց ո՞ւմ էր պետք: Ո՞ւմ էր պետք, երբ ավազակ կոմունիստներն էին նստել գահի վրա:

Ռայկոմի քարտուղարը<sup>10</sup> ինձ ասաց՝ դու ծարավ ես, ես էլ եմ ծարավ: Չէի հասկանում, ասի՝ ո՞նց թե ծարավ ես, շոֆերդ ամեն շաբաթ մի յաշիկ (արկղ) ջուր է տանում: Ա՛յ, ասում է՝ մտածի՛ր, գնա եւ մտածի՛ր: Հետո հասկացա, որ ասում է՝ գողացի՛ր, ինձի բեր գողացածիցդ: Ասի՝ ես եղպիսի մարդ չեմ, Աստծո տվածը չեմ կիսի ոչ մեկի հետ, դիմիր Աստծուն, աղոթի՛ր, թող քեզ էլ ուղարկի:

Ինձ պաշտոնանկ արեցին, տեղակալ նշանակեցին, ուրիշին բերին դիրեկտոր: Եղ մարդը սկսեց թալանել: Ես տեսնում էի՝ ոնց էր թալանում: Երեք ամիս հետո բռնեցին, բանտարկեցին: Մյուսին բերին՝ երեք ամիս հետո դրան էլ բռնեցին: Ազնվություն չկար, արդարություն չկար, աստվածավախություն չկար:

Տեսնեիք, թե հայրս ինչ էր անում ինքզինքը, որ մեզի պատճառ դար-

ձավ Հայաստան գալու: Որովհետեւ ես դեմ էի, հորս ասում էի՝ մի՛ տանի մեզ, մեր տեղը էստեղ է, մենք երթանք՝ թշնամի կ'ըլլանք հոն: Ինքն էլ՝ օ՛, մենք բոլորս մի ազգ ենք, հազիվ օտարությունից կը պրծնենք: Թուրքերի լուծը տեսել էր, արաբների լուծն էր տեսել, ասում էր՝ գնանք Հայաստան, մեր հայրենիքն է, մեր ժողովուրդն է, նրանց հետ կապրենք ազատ ու անկախ:

Եկանք՝ «ազատ ու անկախը» տեսանք: Ենքան մեզի լավ հյուրասիրեցին, որ, ասում էին՝ կարմիր խնձո՞ր ենք ուղարկել ձեզի: Որովհետեւ նրանց ուղեղները լվացված էին բուլշեւիզմով: Ազգային գաղափարականությունը չգիտեին՝ ինչ բան է: Հայաստանը ռուսական պետք է լիներ, բուլշեւի՛կ պետք է լիներ. ի՞նչ անկախ Հայաստան: Ռուսերեն չգիտեիր՝ բոբիկ էիր: Ես էր Հայաստանի վիճակը:

Դրա համար էլ դուրս եկանք Հայաստանից: Ես գիտեի, որ Ամերիկան էսպես է, եւ նախընտրեցի, որ իմ երեխաներս իմ քաշածը չքաշեն, ազատ, համարձակ ապագա ունենան: Բայց վերջիվերջո, Ամերիկան էլ մի հզոր պետություն է, եւ մեզի պես մանր-մունր ձկները պիտի կուլ տա:



# ՆՈՐԱ ՊԱՅՏԱՐՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Լիբանանից

Ուր գնացել եմ, թաքցրել եմ, որ աքսորված եմ եղել: Նույնիսկ իմ մտերիմ ընկերուհիներին չեմ ասել, որովհետեւ նրանք խորթ էին նայում:

1946 թվին հայրս արձանագրվեց ներգաղթի կոմիտեում, որպեսզի գանք Հայաստան: Բեյրութում ուներ խանութներ, սեփական տուն. բոլորը վաճառեց, բայց այնպես ստացվեց, որ իր հերթը դուրս չէկա: Մնացել էինք անորոշ վիճակի մեջ:

Մորս եւ հորս մեջ վիճաբանություններ կային, որովհետեւ այդ ընթացքում Հայաստանից լավ լուրեր չէինք ստանում: Մայրս ճարպիկ էր՝ կգնար, կնայեր, կպրպտեր: Մի մարդ էր փախել Հայաստանից, հիշում եմ դելեկրետկայով (բամբակե տաք, բանվորական բաճկոն) ցույց էր տալիս ոչիլը վրան, ասում էր՝ Հայաստանը, որ գնաք՝ եսպես է, հիմա մի՛ գնացեք, մի քիչ կբարելավվի, նոր կգնաք:

Բայց վերջապես 1947 թվին հայրս ավելի հաղթող եղավ, ներգաղթեցինք: Մեզ տեղավորեցին Լենինականում (Գյումրի): Մի որոշ ժամանակ յուրա գնացինք էլի մորս ճարակությամբ՝ ուտելիքներ էր բերել: Ես 13-14 տարեկան էի: Մեծ եղբայրս Լեւոն Շանթի մոտ դերասանական կուրսեր էր անցել, տաղանդ ուներ, թատրոնում էր խաղում:

Իմ միակ երագանքս էր՝ սովորել: Դպրոցում սովորում էի գերագանց, քննությունները հանձնում էի գերագանց: Մի անգամ էլ, մյուս օրը էլի քննության էի, նստած պարապում էի՝ գիշերվա երկուսին դուռը թակեցին: Երկու հրացանակիրներ՝ զինվորական համազգեստով, ներս մտան: Անմիջապես գնացին եղբորս մահճակալի մոտ: Նա նոր էր եկել թատրոնից, ներկայացման էր մասնակցել: Հետո հորս ասացին՝ դուք աքսորվում եք:

Էն ժամանակ Ստեփանավան ուղարկելուն էլ էին աքսոր ասում: Մենք կարծեցինք, որ մեզ էլ պիտի ուղարկեն Ստեփանավան:

Մայրը կար, որի լավությունը մինչեւ հիմա հիշում եմ. ասաց՝ ես կարի մեքենան տարե՛ք, ձեզ պետք կգա: Օգնեց մեզ՝ գրուզավիկի (բեռնատար) մեջ բեռնելու մեր իրերը, տաք շորեր՝ վերցրեք՝ ասաց:

Եղպես մեզ տարան Ջաջուռ: Ջաջուռ որ գնացինք, տեսանք լիքը մեքենաներ. Էնքան շատ, որ հրապարակը լցվել էր: Մամաս ասաց՝ փառք Աստծո, մենակ չենք: Հետո մարդկանց տեղավորեցին վագոնների մեջ: Եղբայրս՝ քարտեզը ձեռքին, անընդհատ նայում էր, թե որտեղով ենք գնում:

Հասանք Ալտայսկի կրայ: Սովխոզի նախագահը եկավ, վագոնները բաց է անում, տեսնի, թե որով՞ աշխատուժ ավելի շատ կա, որպեսզի եղ վագոնը ինքը վերցնի:

Դե ես չդիմացա, հիվանդացա եղ կեղտոտ ջրերից, որովհետեւ նոր-նոր էին վիրահատել իմ գլանները:

Ստալինի մահից հետո՝ 1954 թվին, պատճառը բռնելով կոկորդիս



Պայտարյանների ընտանիքը, Նստած՝ մայրը՝ Վարդուհին, հայրը՝ Միհրանը, կանգնած՝ Նորան (Նուրիցան), Զովհաննեսը: 1950, Չարիչսկի հացահատիկային սովխոզ

վերքը, թույլտվություն խնդրեցինք, որ սանատորիա (ամողջարան) գնամ: Եղբորս հետ սանատորիա գնացի, եղբայրս վերադարձավ Նուրից Միքի, իմ քաջությունը բավարարեց, ասի՝ չէ՛, ինչ ուզում են՝ թող անեն, ես հետ կգնամ Երեւան: Եկա Երեւան՝ պասպորտ չունեմ, ոչ մի փաստաթուղթ չունեմ: Ոնց որ ասում են՝ Աստված օգնեց:

Գնացի ներքին գործերի մինիստրություն, ներկայացա: Երախտագիտությամբ եմ հիշում՝ մայրս Այրումյանն էր: Ասի՝ ես եկել եմ Միքի-րից, Եսինչ Եսինչյանն եմ, խնդրում եմ ինձ լսե՛ք: Թուղթ տվեց, գնացի քաղմաս, Էստեղից անձնագիր հանեցի, մնացի Հայաստանում:

1956 թվին մերոնք էլ եկան: Մորաքույրիս հետ միասին Հովհաննեսը եկավ՝ եղբայրս, հետո հայրիկս եկավ՝ մամայիս հետ, ու սկսվեց սովորական կյանքը Երեւանում: Ընդունվեցի, սովորեցի, ավարտեցի քիմիայի ֆակուլտետը, հետո որպես դասախոս աշխատեցի Պոլիտեխնիկ ինստիտուտում:

Ուր գնացել եմ, թաքցրել եմ, որ աքսորված եմ եղել: Նույնիսկ իմ մտերիմ ընկերուհիներին չեմ ասել, որովհետեւ այդ բանին նրանք խորթ էին նայում: Միքիբրում մեզ հետ ապրող օտարները Բելոռուսիայից էին եկել, պայակներ<sup>11</sup> (լեհեր) էին մեծ մասամբ, իրենք վաղուց էին աքսորվել: Նրանք եղբան վատ չէին մեր հանդեպ, որքան Եստեղի շատ հայեր, երբ լսում էին, որ աքսորված ենք եղել: Թե՞ վախենում էին, որ իրենց էլ կաքսորեն, չգիտեմ: Չե՛ս մեղադրի:

Կառավարությունն էր մեղավոր: Ժողովուրդը շատ լավ ժողովուրդ էր: Հիմա բոլորին չվատաբանենք: Իրենք արտաքուստ ցույց էին տալիս, բայց ներքինով շատ բարեհամբույր, հյուրասեր ժողովուրդ էին: Լավ բաներ շատ կային: Օրինակ, ճիշտ է՝ մեր վիճակը նյութապես լավ էր Բեյրութում, բայց շատ-շատ կարողանայի միջնա-

կարգ կրթություն ստանալ, բարձրագույն՝ գուցեւ ոչ. թանկ էր: Իսկ Երեւանում ես էլ ստացա:

Բայց դե, հայրենադարձները տեսնում էին՝ ապագա չունեն, ուզում էին հեռանալ: Էնպես էր վիճակը, որ անգամ տան մեջ ծնողը երեխայի հետ վախենում էր իր մտքերը ազատ արտահայտել, նույնիսկ՝ ամուսինները:

Առիթը եղավ Հովհաննեսը՝ եղբայրս, որը տեղափոխվեց Ամերիկա, եւ 1981 թվին մենք էլ եկանք:



Նորա (Նուրիցա) Պայտարյանի անձնագրին փոխարինող տեղեկանքը: 1954

# ՆՈՎՃԱՆՆԵՍ ՊԱՅՏԱՐՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Լիբանանից

Երեւանից եկող ուրիշ էշե-  
լոնները որ կանգնում էին,  
իրար ձայն էինք տալիս:  
Չանկարծ լսեցինք մեր մո-  
րաքույրի անունը, հասկա-  
ցանք, որ մորաքույրս էլ էր  
իր ընտանիքով աքսորված:

Ես այն ժամանակ տասներկու տարեկան էի եւ Բեյրութում ապրող  
մյուս հայերի պես խանդավառ՝ հայրենի՝ ք եւս գնում: Հատկապես  
ոգեւորվել էին հայրս եւ մայրս, որոնք Եղեռնի միջով էին անցել:  
Հայրս գրեթէ բոլոր հարազատներին էր կորցրել:

Մինչեւ Բեյրութ տեղափոխվելը Հալեպում եւս ընկերների հետ լի-  
մոնադի գործարան էր դրել: Բեյրութում էլ ավելի էր հարստացել.  
երկու մթերային խանութ ուներ եւ լիմոնադի գործարան: Նրան ա-  
սում էին գազոչի Միհրան: Գազոչ՝ լիմոնադ է նշանակում արաբե-  
րեն: Մայրս էլ գորգ էր գործում, ձեռագործ էր անում, ընտանիքը  
բարգավաճում էր:

Շատ բան թողեցինք ու Հայաստան եկանք: Մեզի տարան Լենի-  
նական (Գյումրի), տեղավորեցին մի փոքր սենյակում: Մենք շատ-  
շատ ապրանք էինք բերել հետներնիս. չգիտեցինք՝ ուր դնեինք:

Հայրենիքի ժողովուրդը մեզ գրկաբաց չընդունեց. իրենք ահավոր  
վիճակում էին՝ ցեխոտ հաց էին ուտում, ու էդ հացը կիսելու պատ-  
ճառով մեզի խորթ աչքով էին նայում: Հոգեպես այդ ժողովուրդը  
պատրաստ չէր հայրենադարձներին:

Հորս վարկ տվեցին, որ տուն սարքի: Պատերը մինչեւ վերջ չէինք  
բարձրացրել՝ 1949 թվի հունիսի 13-ի գիշերով մեր դուռը թակեցին:  
Մեկ ժամ ժամանակ տվեցին մեր իրերը հավաքելու: Ասացին՝ ու-  
րիշ տեղ եւ մեզի տեղափոխում: Մեր դռան առաջն էլ կանգնած էր  
մի գռուզավիկ (բեռնատար):

Հագուստեղենը, գորգերը, մյուս ապրանքները՝ ինչքան որ հնարա-  
վոր էր, փոխադրեցինք բեռնատար մեքենայի մեջ: Մեքենան շարժ-  
վեց դեպի Ռումինիայից եկած մի ընտանիքի տուն: Նրանց էլ մեզ  
պես տեղավորեցին: Հետո երրորդ ընտանիքին էդպես վերցրին, ու  
բոլորիս տարան մինչեւ Ջաջուռի կայարանը:

Այնտեղ էշելոններով շարված էին բեռնատար գնացքները: Երեւի  
ժամանակին կիր էին տեղափոխել էդ վագոններով, ահավոր հոտ  
էր գալիս: Մոտ վաթսուն հոգի բերեցին՝ երեխաներով, հիվանդ  
մարդկանցով: Բերեցին, հա՛ բերեցին, ու գնացքը սկսեց շարժվել:  
Արդեն մութ էր, չգիտեցինք, թե ուր ենք գնում: Պատուհանները՝  
փակ, դռները՝ փակ: Վեց-յոթ օր գնալուց հետո հասանք Օմսկ քա-  
ղաք: Օմսկում իջեցրին՝ ձեզի պիտի տանենք բաղնիք, որ լողանաք:

Լողանալուց հետո մեզ տվեցին կապչոննի (ծխեցրած) ձուկ՝ չա-  
փից դուրս աղի: Ջուր չկա, ոչինչ չկա: Լավ էր, դեռ Բեյրութից բե-  
րած՝ տուփերով հավա ունեինք, էդ կերանք:

Էլի քանի օր ու գիշեր գնացինք գնացքով, հասանք մի տեղ, բայց  
չգիտեցինք՝ ուր: Թեւ եղբայրս քարտեզ ուներ, նայում էր, բան չէր  
հասկանում. այն ժամանակ մենք ռուսերեն չգիտեցինք:

Երեւանից եկող ուրիշ էշելոնները որ կանգնում էին, իրար ձայն էինք տալիս: Հանկարծ լսեցինք մեր մորաքույրի անունը, հասկացանք, որ մորաքույրս էլ էր իր ընտանիքով աքսորված:

Իջեցրին մի տեղ, որը կոչվում էր Ուսու-Կալմանսկի ռայոնի (շրջան) Չարիշսկի գեռնոսովխոզ (հացահատիկ արտադրող սովխոզ): Սովխոզի նախագահը վագոնները բացում էր, որ աշխատող ձեռքեր ընտրեր:

Լրիվ սեւ հող էր, դաշտավայր: Իջանք գյուղի ակումբի մոտ, որը մի մեծ դահլիճ էր, ասացին՝ այստեղ պետք է մնաք, մինչեւ ձեզ տեղավորենք:

Բեյրուբում մենք ապրել էինք Աշեղ Ֆեա կոչվող թաղամասում, որը Հայկաշեն էլ էր կոչվում: Այդ թաղամասը հիմնականում ստեղծել էին հայերը: Ունեինք եկեղեցի եւ եկեղեցուն կից հայկական դպրոց:



Երբ մեզ աքսորեցին, մի բառ ռուսերեն չգիտեինք: Մեր ֆրանսերենը ավելի կատարելագործված էր, քան թե՛ ռուսերենը: Նստում էի դասի, բայց բան չէի հասկանում: Մի հինգ-վեց ամիս անցնելուց հետո նոր ըմբռնեցինք ռուսերենը, նոր հասկացանք՝ ինչն ինչոց է:

Պատերազմի գերի ընտանիքներ էլ կային Սիբիրի եղ գյուղում, ու մի քանի ընտանիք էլ Ղարաբաղից կար. թե նրանց ինչու էին աքսորել՝ չգիտեմ: Մեզ աքսորելու պատճառը հետո իմացանք: Եղբայրս դաշնակցական էր Բեյրուբում, բայց հրաժարվել էր, քանի որ հայրենիք պիտի փոխադրվեր: Դաշնակցականներն իրեն ասել էին՝ ժամանակը չէ հայրենիք երթալու. բոլորս էլ պիտի երթանք, բայց դեռ հիմա ժամանակը չէ: Ինչ ասեմ՝ հորս խոսքը խոսք էր, ենթարկվեցինք էլ խոսքին:

Արդարացման ժամանակ որոշեցին, որ մենք ոչ մեկ իրավական խախտում չենք կատարել: 1956-ին մաս-մաս կարողացանք գալ, որովհետեւ վերադարձի փող չունեինք: Երեւանում մեզի հերթագրեցին որպես աքսորյալներ, որ բնակարան հատկացնեն, բայց մոտավորապես հինգ տարի տեւեց, մինչեւ որ բնակարան տվեցին:

Եղբայրս իր ուղղությամբ գնաց, քույրս սովորեց, ավարտեց համալսարանը: Բայց ես համալսարանը չկրցա ավարտել, որովհետեւ ես էի աշխատող ձեռքը:

Աջից՝ Գովհաննես Պայտադյանն ընկերոջ՝ Սարգիսի հետ «Ալթայ» հյուրանոցի դիմաց: 1955, Բառնաուլ

Նույնիսկ արգելված գործեր եմ արել՝ բիզնես:

Հետո ինձ աշխատանքի ընդունեցին մեր Էջմիածնի Դիվանատանը, եւ այնտեղ սկսեցի գրասենյակում աշխատել: Էն ժամանակվա ռեժիմի պայմաններում Դիվանատան մթնոլորտը ահավոր էր. մարդը մարդուն հետեւում էր, նախանձներ շատ կային, վատ ցանկացողներ շատ կային: Մի քայլ եթե առաջ էիր գնում, անմիջապես քեզ արգելք էին լինում, չէին ուզում, որ դու շատ երեւաս:

Խտրականություն կար պետության մեջ. մեզ երկրորդ սորթի (տեսակի) քաղաքացու տեղ էին դնում, վստահություն չկար մեր նկատմամբ: Հայաստան որ եկանք, անմիջապես մեր դեմքին շարտեցին՝ կարմիր խնձո՞ր էինք ուղարկել, որ եկաք: Դա մեզ խորը ցավ էր պատճառում: Եւ ախպար անունը մեզ վրա դրեցին: Ըստեղ՝ Ամերիկայում, դու կարո՞ղ ես սեւականին նեգր ասել, օրենք կա այս երկրում: Իսկ մենք՝ անմեղ մարդիկ, տուն, տեղ, հարստություն թողած, եկանք ի սեր հայրենիքին, եւ ինչի՞ արժանացանք:

Ես 1978-ին եկա Ամերիկա: Մորաքույրս ինձ կանչեց: Հայաստանում լավ գործ ունեի, ոչ մի բանի կարիքը չունեի, բայց հոգեպես ընկճված էի:

Մի դեպք պատմեմ. 1966-ին, երբ նոր էինք ամուսնացած, կնոջս հետ մեղրամիսի Մոսկվա գնացինք: Անշուշտ, էն ժամանակ բրոնյա (ամրագրում) չկար, հյուրանոց չկար:

Մեր բախտը բերեց, որ «Բեռլին» հյուրանոցում սենյակ տվեցին: Ինչքան ուրախացանք, քաղաքի կենտրոնում էր, «Դեսուկի միրի» (մանկական հանրախանութ) կողքը: Մի գիշեր դեռ չանցկացրած, որ ման գալուց հետո մեր սենյակը վերադարձանք, տեսանք՝ մեր վեշերը (իրերը) հանել են դուրս: Եւ ինչ է-ինչ է՝ տուրիստներ են գալիս: Ուրեմն, քո ժողովուրդը ստրո՞ւկ է դրսից եկող մարդկանց դեմ: Մենք եղբան զրկանք ենք քաշել, բայց ինչ-որ գերմանացիներ են գալիս՝ մեզ դուրս են անում: Օդակայանում ենք գիշերները անցկացրել: Դրանից հետո չես կարող չասել. «Տո քո հայրենիքդ էլ, ռեժիմդ էլ, քո սովետականդ էլ, խորհրդայինդ էլ, ամեն ինչդ էլ...»:

Հիմա, փառք Աստծո, եկանք, տեղավորվեցինք եւ մեր ծերության շրջանին վայելում ենք կյանքը: Հիմնական իմ պայքարս հիմա մեր երիտասարդներին փրկելն է ծովումից, որպեսզի հայ մնան:

Միհրան Պայտարյանի դիմումը  
ՍՍՌՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ  
ընկ. Ա. Միկոյանին

Դիմողս հայրենադարձ հայ, տարիքով 60 անց, երկար տարիներ պայքարած հանուն հայրենիքի եւ մարդասիրական վեհ գաղափարի՝ ԿՈՄՈՒՆԻՉՄ-ի համար, լինելով Լիբանանի կոմկուսի անդամ: Հազիվ թոթափած օտարության ու կապիտալիզմի լուծը, վերադառնալով Ս. Հայաստան (Լենինական քաղաք), երջանիկ, գոհ, որպես նվիրված քաղաքացի աշխատում էի չխնայելով ոչ մի ջանք հայրենիքի վերելքին:

Հանկարծ մի ակնթարթում աքսորվում եմ հեռավոր վայրեր՝ քանդելով նորակերտ բույսս, բոլորովին անգիտակից ինչ հանցանքի մեղադրանքով:

Այստեղ գուրկ մարդկային իրավունքից եւ ապրելու հնարավորությունից, անձանոթ տեղի լեզվին ու բարքին, խորտակվում եմ անմեղ գավակներիս լուսե ապագան:

Արդեն մեծ տղիս աշխատանքի ժամին աչքը վնասվեց, մնում է անբուժ տանջվելով ցավերի մեջ, իսկ կուրությունը սպառնում է երիտասարդ հասակին:

Հայտնելով Ձեր ազնվության իմ բոլորովին անմեղությունը կատարված վճռին դեմ, խնդրում եմ գեթ իմ ընտանիքից հանցապարտի հայտնագործումը եւ նրա պատժումը, իսկ մնացածների ազատագրումը, որ կարծում եմ ոչնչով պատասխանատու չեն:

Հույսով սպասելով Ձեր արդարացի որոշումին

Ձեզ հարգող քաղաքացի

31.08.49

Միհրան Պայտարյանի դիմումը  
Հայկական ՍՍՌ ներքին գործերի մինիստրություն

Խնդրում եմ Ձեզ նորից քննարկել իմ դիմումը եւ տալ արդար որոշում, որովհետեւ այսքան տարիների օրոք որպես անհավատարիմ քաղաքացի ընտանիքիս հետ, անհիմն է եւ անարդար: Ինչպես կտեսնիք իմ ինքնակենսագրության մեջ եւ որը կարող եմ հաստատել Բեյրութի կոմպարտիայի Հայկաշենի կոմիտեի ընկերները՝ Արամայիսյան Փանոսը, Արամայիսյան Չարուհին, Նալչաջյան Հակոբը, Սեֆերյան Արշակը, Դեմիրճյան Հակոբը, Դեմիրճյան Գրիգորը, Դանելյան Մկրտիչը եւ ուրիշներ (որոնց հասցեները անձանոթ եմ), որոնք այժմ աշխատում եմ եւ որպես ազատ քաղաքացիներ վայելում եմ պետության վստահությունը եւ ապրում երեւանում:

Ինչո՞ւմն է ուրեմն իմ հանցանքը եւ հիմքը պատժիս: Հուսով եմ, որ սովետ. արդարադատությունը կտա ինձ դրական վճիռ՝ շնորհելով այս ծերացած հասակումս այն երջանկությունը վերահաստատելով ազատ ու հավատարիմ քաղաքացու իրավունքները:

11.01.1955

Տեղեկանք Միհրան Պայտարյանի մասին

Պայտարյան Միհրանին իրոք ճանաչում եմ Բեյրութ քաղաքից, որ նա եղել է կոմունիստական պարտիայի անդամ եւ իր կինը նմանապես Պայտարյան Կյուլի (Վարդուհի) Նշանի, եղել է կոմունիստական պարտիայի անդամ եւ ծառայել են հասարակական աշխատանքում, իսկ որդին Վարդավառ Պայտարյանը Հայաստան գալու ժամանակ հրաժարվել է դաշնակ կուսակցությունից եւ իր հրաժարականը տպագրվել էր «Ժողովուրդի ձայն» թերթի մեջ:

Արամայիսյան Փանոս Աբրահամի

# ՄԻՐԱՆՈՒՇ ԳԵՎՕՂԼԱՆՅԱՆ



ընտանիքը  
1946-ին  
Ներգաղթել է  
Սիրիայից

Սիրիոյում իրենց գետնին  
են իջեցրել, ոնց որ՝ ոչխար-  
ների: Շուրջը ո՛չ մարդ կա,  
ո՛չ ծառ կա...

Ես ծնվել եմ Երեւանում եւ հայրենադարձության մասին պատմութ-  
յունները լսել եմ իմ տատիկից: Նա մի հազար անգամ կպատմեր  
եղ ամենը եւ կասեր՝ որ գրեմ, մի գիրք կստացվի:

1946-ին պապիկիս մաման որոշել էր, որ Հալեպի մեջ իրենց տու-  
նը, ամեն բանը ծախեն՝ Հայաստան գնան: Ծախում են եւ եղ ամեն  
փողը տանում են Հալեպի Ներգաղթի կենտրոն, ասում են՝ Եսքան  
դրամ ենք տալիս, միայն մենք խնդրում ենք, որ մեզի տանեք Հա-  
յաստան: Եւ միշտ տատիկս ասում էր՝ քառասունվեց հատ կարմիր  
ոսկի տվեցինք: Եւ իրենց անունը առաջ են դնում, որովհետեւ ի-  
րենց անունը էլ նավի մեջ գրված չի եղել:

Մեծ տատիկիս անունը՝ Իգաբել Գեւորյանյան, պապիկիս անունը՝  
Պետրոս Գեւորյանյան, իմ տատիկիս՝ պապայիս մամայի անունը  
Միլիցա Գեւորյանյան էր: Եւ Միլիցա տատիկս, որ Հայաստան ե-  
կավ, վախենում էր, որովհետեւ ասում էր՝ Եստեղ ոստիկանների ա-  
նունն է միլիցա: Դրա համար ինքը վախից իր անունը փոխեց,  
Միլյա դրեց:

Իրենք աքսորվեցին, որովհետեւ պապիկս դաշնակցական էր եղել  
Հալեպի մեջ: Եւ ինքը Էնպես մի պաշտոն էր ունեցել, որ, ասենք՝  
փողոցային աղջիկներին Հալեպի մեջից դուրս էր հանել: Ու Հա-  
յաստան գալուց հետո բարեկամները իրեն մատնել էին, որ դաշ-  
նակցական է եղել:

Պատմում էին, որ էդ օրը պապիկս բազար էր գնացել, որպեսզի ա-  
ռեւտուր անի: 1949-ի հունիսի 13-ին է եղել. օրը միշտ հիշում էինք:  
Տատիկը ասում էր, որ էդ օրը պապիկը բազարի մեջ է եղել, որ ինչ-  
որ միլիցաներ (ոստիկաններ) են եկել, ասել են, որ սաղ ժողովուր-  
դը պետք է տուն գնա: Պապիս որ տուն է գալիս, տեսնում է՝ ի՞նչ,  
իրենց երկու հարկանի տան առաջ մեծ մեքենաներ են կանգնած:  
Մեծ տատիկս հարցնում է՝ մեզի ո՞ւր պիտի տանեք, ասում են՝ պա-  
տերազմ է լինելու Հայաստանի մեջ, ձեզի պետք է տանենք ուրիշ  
գյուղերը, իջեցնենք:

Երկրորդ հարկի բալկոններ (պատշգամբներ) ունեինք, եղ վերելից  
իրենց ապրանքները սաղ լցրել են էդ մեծ գոռուկները (բեռնա-  
տար մեքենա):

Մեծ տատիկս մտածմունքի մեջ է ընկել, թե Էնքան հարստություն-  
նը, որ բերել են Հալեպից, չեն կարող տանել, եւ ո՞նց անի, որ թե-  
կուզ ոսկեղենը կարողանան տանել:

Տատիկս դերձակուհի էր եղել Հալեպի մեջը, 200 հոգիանոց աշա-  
կերտներով Մարաշի ասեղնագործի դասատու էր եղել: Ծատ հա-  
րուստ էին եղել: Ու էդ օրը, որ Երեւանում եկել էին իրենց աքսորե-  
լու, տատիկս շուտ-շուտ գոտիկներ էր կարել եւ ամեն աղջիկ երե-  
խաների վրաները էր գոտիկներով ոսկիները կապել էր:



Գեւորայանների ընտանիքը ռուս հարեանների հետ, աջից ձախ՝ Պետրոս Գեւորայան, Ալլա (հարեան), Մելիս, Չաբել (մայրը), Մարտիրոս: 2-րդ շարք՝ Կարապիտ, Չաբել, Նաոյա (հարեան), Մարի, Շաբել, Լյուբա (հարեան): 1955, գյուղ Կավանակա

Իրենց հետո պոյեզի (գնացքի) մեջ էին դրել էշերի ու գոմեշների հետ: Տասիկս պատմում էր՝ մեզի ամենավերջինը տարան, իսկ որովհետեւ տեղ չկար, մեզի գոռով մտցրեցին, դուռը հագիվ փակեցին. ո՛չ պատուհան կար բացված, ո՛չ մի բան. մի հատ օդ իրավունք չունեինք առնելիք, եւ կողքերնիս էլ ամեն պոլիսներ (ոստիկաններ) կային, որ հանկարծ մեկը չփախնի, կամ դուրս չէլնի: Իմ հայրս էդ ժամանակ 19 տարեկան է եղել, մի հորաքույրս՝ 14, մյուս հորքուրներս՝ 12 եւ 9 տարեկան: Հորեղբայրս 7 տարեկան է եղել: Հինգ երեխա, տատիկս, պապիկս եւ մեծ մամաս:

Տատիկս պատմում էր, որ Սիբիրում իրենց գետնին են իջեցրել, ոնց որ՝ ոչխարների: Ծուրջը ո՛չ մարդ կա, ո՛չ ծառ կա... Հորքուրս միշտ պատմում էր, որ էդ օրերին շատ ուժեղ անձրեւ է եկել, մի հատ մեծ խալի ունեին. Հալեպից էին տարած, պապիկս էդ խալին չորս կողմերով մի ձեւի հարմարություն է արել, մտել են տակը, որ չթրջվեն: Հետո մի հատ մարդ է եկել, մեղքացել է իրենց, տարել է իր արհեստանոցը: Ապակի սարքող արհեստավոր է եղել, մի քանի օր իրենց էնտեղ է պահել:

Ու հորքուրս միշտ կասեր, որ շատ տուներ չկար՝ հինգ հատ, վեց հատ գոմի պես տունիկներ էր: Հորքուրս պատմում էր՝ մի հատ ազատ տունը մեզի տվեցին, եւ էդ տունը շատ պզտիկ էր: Նույն տունի մեջ՝ հինգ երեխա, երեք մեծահասակ, եւ անկյունում մի հատ մեծ կով էին պահում: Մյուս կողմում պզտիկ հավիկներ էին պահում, որ ապրեին, որովհետեւ ո՛չ ուտելիք կար, ո՛չ սնունդ կար. ոչ մի բան չկար:

Իրենք կարտոշկա (կարտոֆիլ) էին տնկում, որ ուտեն, ուրիշ բան չկար ուտելու: Պապաս ու պապիկս սկսում են աշխատել. գետի ջուրը ասանկ գնում էր, եւ էդ գերանները պետք է դնեին ջուրի վրա, վրան կանգնեին, որ ուղղություն տային՝ գետը տաներ էդ ուղղությամբ:

Հորաքույրս միշտ պատմում է, որ Սայբիրիայի (Սիբիրի) մեջ ո՛չ լողանալու տեղ կար, ո՛չ ջուր կար: Երկու հատ էսպես ամաններ էին, ասում է՝ կլոր-կլոր: Մի հատի մեջ ջուր էր լցվում, էդ ջուրը պետք է նստվածք տար, կեղտը իջներ ներքեւ, որ ջուրը վրայից վերցնեին՝ խմեին: Մյուսը գոմի պես տեղի մեջ էր դրված, որ էդտեղ լողանային:

Ու հորաքույրս միշտ ասում է, որ դրանից երեւի հիվանդություններ եղան իրենց...

Եւ վեց տարի մնալուց հետո, Ստալինը մահանալուց հետո իրենց հետ գնացին Հայաստան: Գնալուց առաջ վերջին անգամ նկարվել են Սայբիրիայի մեջ, որ շատ ուրախ են, որովհետեւ տուն են գնում:

Ես տասնինը տարեկան էի եւ բժշկական ուսումնարանում էի սովորում, երբ պապիկս որոշեց, որ մենք Ամերիկա պետք է գանք: Բայց իրենց չհաջողվեց: 1981-ին միայն մեր ընտանիքով՝ ես, պապաս, քույրիկս, եղբայրս եւ մամաս եկանք Ամերիկա:

Իմ պապաս կարծում էր, թե էստեղ Հալեպ է, բայց որ եկանք, չսիրեց Ամերիկան: Հինգ տարի մնալուց հետո, նորից վերադարձավ Հայաստան:



Գեւորայանների ընտանիքը Երեւանում, վերադարձից հետո: 1955, մայիս

# ԵՎԳԵՆԻԱ ԿԱԿԱՉՅԱՆ



Ներգաղթել է  
1946-ին  
Հունաստանից

Պապաս շատ էր վախեցել, որովհետև ինքը բացի բարի գործերից, բացի լավություններից, ուրիշ բան չէր արել: Շատ էր զարմացել՝ ինչպե՞ս իրա հետ սենց բան եղավ:

Հինգ տարեկան էի, որ Հունաստանից վերջին քարավանով եկանք Հայաստան: Հայրս վեջիններից էր, որ կարողացավ հաջողացնել եւ գալ: Շատ հայրենասեր էր, անպայման ուզում էր գալ: Լավ գործի էր, Էնտեղ կոշիկի ֆաբրիկա ուներ, անուն ուներ: Իրա աշխատողներին էլ բերեց, Գերմանիայից մեքենաներ գնեց, որ միասին էլի աշխատեն: Իրան խոսք էին տվել՝ Հայաստանում թույլ կտանք աշխատես: Ոգեւորված եկավ ու անմիջապես երկհարկանի տուն սարքեց գաջի գործարանի մոտ: Նաեւ խոստացած արտելը տվին, սկսեց աշխատել, բայց երկար չտևեց:

Աքսորը հիշում եմ, որոշ բաներ էլ պատմելով եմ հիշում: Եկան զինվորականներ գուռզավիկով (բեռնատար), ասացին, որ խուճապի չմատնվենք: Հայրս կարծեց, թե միայն իրեն են տանում, իսկ մայրս ասաց. «Չվախենա՛ս, ուր էլ գնանք՝ ընտանիքով ենք գնալու»: Մի զինվորականը լավ մարդ էր, ասաց՝ իրար մի անցեք, մեկ ա պիտի աքսորվեք: Պապաս դաշնակ էր եղել, նաեւ շատ ունեւոր էր եղել. իբր դա էր պատճառը:

Հորս ասացին, որ հետը վերցնի արհեստի բոլոր գործիքները, տաք շորեր: Անկողիները բոլորը թափել էին տվել, հիշում եմ բրդերը թափված: Բայց ինձ, տաք վերմակով փաթաթված, էդ զինվորականը իր գիրկն էր նստեցրել, իսկ հայրս, մայրս ու երկու եղբայրս՝ թափքում էին:

Ոչ մեկին լուր չտվինք, նույնիսկ տատիկիս: Ասացին՝ ժամանակ չկա: Մեզ տարան Ուլուխանլու (Մասիս) կայարան, որտեղ շատ մարդիկ էին հավաքվել՝ նույն ճակատագրով: Դա մի քիչ միսթարեց հորս: Պապաս շատ էր վախեցել, որովհետև ինքը բացի լավ գործերից, բացի լավություններից, ուրիշ բան չէր արել: Շատ էր զարմացել՝ ինչո՞ւ իրա հետ սենց բան եղավ: Մեզի բոլորիս հերթով նստացրին տավառնի (ապրանքատար) վագոններ ու դուռը փակեցին:

Շաբաթից ավել ճանապարհ գնացինք: Ինչ կայարաններում որ կկայնեին, ժողովրդին անտառի մեջ էին տուալետ ուղարկում: Մի օր մեր երիտասարդ տղաները փախչում են քաղաք, ուշանում են: Մեզի պատիժ են տալիս՝ մյուս կայարանում չեն կանգնում: Երեխա կա մեջը, հիվանդ կա, մեծ մարդ, հղի կին. ո՞նց կարելի ա դուրս չելա... Պապաս ջղայնանում է, պզտիկ պատուհանից դուրս ա նայում ու ասում. «Թքեմ ձեր նամուսին»:

Հայրս խելացի մարդ էր, շարունակ հեքիաթներ էր պատմում, հաճախ ինքն էր հորինում, հանգստացնում էր մարդկանց: Տեղ հասանք: Մի գյուղ՝ ոչ տուն կա, ոչ բան, անունը Բլինովո: Մի տեղ տվին. հատակի տախտակները, որ կողմը ոտքդ դնում էիր, փոս էին ընկնում: Երկու եղբոր մի քույր էի՝ ձեռքի վրա պահած: Վատ



Էի տանում, լաց էի լինում: Եղ ժամանակ սոխը նոր ծաղկած էր, հարեւան ռուսները սոխի գլուխները տալիս էին, ցվետոկ (ծաղիկ), ցվետոկ ասելով՝ զբաղացնում էին ինձ:

Մեր բնակավայրը Սորոկինսկի ռայոնում էր, գետի ափին: Գյուղում շատ մարդ չկար: Հայերին օգնում էին: Եղբայրներս հաճախ իրենք էին տանում, ամանները գետում լվանում, մեկ-մեկ էլ գդալ կամ պատառաքաղ կորցնում ջրում:

Մեզի սկզբում ասին՝ պիտի մնաք, ձեզի հետ գնալ չկա: Շաբաթը մեկ պիտի ներկայանայիր, ստորագրեիր: Իրավունք չունեիր Եղ գյուղից ոչ մի տեղ գնալու: Պապաս մի քանի զույգ կոշիկ էր հետը տարել՝ մեջի պիտակներով: Եղ գյուղի մեծը, տեսնելով՝ հետաքրքրվում է՝ ո՞վ է կարել: Պապաս վախենում է միանգամից պատասխանել՝ հանկարծ չբռնեն: Բայց հետո հասկացնում է, որ արհեստավոր է:



Կենտրոնում՝  
Եվգենիա  
Կակաչանը:  
1949, գյուղ  
Սորոկինո

Եղտեղ գոմերի շենք կար, պապայիս տեղ է տալիս, կաշի է տալիս, ասում է՝ խումբ հավաքիր, վալենկաներ (թաղիքե ոտնաման) կարեք: Պապաս լավ վարպետների հավաքեց, մեծ եղբայրս էլ սայաջի (կոշիկի տակացու պատրաստող) էր: Սկսեցին գործ անել, լավ առաջ գնացին: Բայց պարտադիր էր նաեւ անտառի աշխատանքը: Մամաս շատ նուրբ էր, սղոց անել չկարողացավ: Եղ մեծավորը մորս էլ, հորս էլ ազատեց, թե՛ դու սապոզներդ կարի:

Մինչեւ յոթերորդ այնտեղ դպրոց գնացի: Դասի գնալուց ինչքան էլ շորերով փաթաթվես, սառցալուլաները կախվում էին զգեստներիցդ: Ուսումս էլ չչարունակեցի. Սիբիրն ինձի շատ խանգարեց: Մենք Բիլնովոյից տեղափոխվեցինք Սորոկինո՝ շրջկենտրոն: Այստեղ մեր տունը միշտ լիքն էր լինում: Ամեն ամիս, որ գյուղերից գալիս էին ստորագրելու, մեր տանն էին մնում: Էստեղ էլ մերոնք իրենց արհեստով լավ էին վաստակում: Հողամաս ունեինք՝ կարտոֆիլ, գազար, բազուկ, ձմեռը լցնում էինք նկուղը, հավերը մորթում, կախում տան կողքը՝ սառը տեղ: Մի խոսքով՝ գյուղական կյանք:

Եղ ի՞նչ ուրախություն էր Ստալինի մահվան օրը: Ժողովուրդը Նոր տարուն Եղպես չի ուրախանա: Բարձր-բարձր կգոռայինք՝ սատկավ, սատկավ, բոլորս ծանր կյանքից դուրս եկանք: Շատ դաժան կյանք էր: Ինչքան էլ կարողացանք մեզի

Եվգենիան  
1954-ին  
Սորոկինոյում:



պահել, բայց Եղ ցուրտերը, Եղ օտարուբյուրը, Եղ ունեցվածքդ լրիվ կորցնելը... շատ դժվար օրեր տեսանք: Կրնայինք լրիվ ուրիշ կյանք ունենալ:

Ստալինի մահից հետո մենք վերադարձանք Հայաստան՝ 1956 թվին: Հայաստանի համար պապաս հոգի էր տալիս, Էնքան պայքարող մարդ էր: Իր կյանքը եսպես եղավ, Երեխեքի կյանքն էլ ճիշտ չգնաց: Մեծ-մեծ երագանքներ ուներ՝ մեզի ուսումի տալ, բայց ոչ մի բան չկարողացավ անի մարդը:

Եկանք Երեւան. մեր տունը էլ մեզ չտվին: Տատիկիս խաբել էին, թե այլեւս չպիտի գան, ստորագրություն էին վերցրել, տունը ձեռքից առել: Պապաս մինչեւ Մոսկվա բողոքեց, ասին՝ ստորագրություն կա, չտվին: Մեզի երեքսենյականոց բնակարան տվին Մուրացանի փողոցում:

Հայրս բուդկա (կրպակ) բացեց եւ շարունակ աշխատում էր: Երեքս էլ ամուսնացանք:

Ճամփաները բացվան, 1978 թվին եկանք Ամերիկա: Մամաս ու պապաս մահացած էին, թե չէ պապաս թույլ չէր տա: Ամուսինս Հունաստանից էր, ինքը երկար պայքարեց, որ գանք:

Դուրս գալու պատճառները շատ էին, նախ վախը, հետո շնորհք ունես, արհեստ գիտես, բայց թույլ չէին տալիս գործադրես՝ ազատություն չկար: Եթե ներգաղթը չլիներ, կարող էինք լրիվ ուրիշ լիներ, եղանք ուրիշ մարդ: Սակայն Հայաստանի մասին նաեւ լավ հիշողություններ կան, կարոտ կա, հարազատություն, լավ մարդկանց շատ ենք հանդիպել, օգնել են:

# ԱԼԵՆ ՓԻՐՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Ֆրանսիայից

... հորս կանչեցին Նովոսի-  
բիրսկ: Գնաց, ասացին, թե  
մեծ սխալ է եղել, դուք այս-  
տեղ չպետք է լինեիք: 1952-  
ին էր, եւ Ստալինը դեռ ողջ  
էր, վերադարձանք:

Հայաստան ներգաղթելիս հայրս գիտեր, որ երկիրը պատերազմից  
նոր է դուրս եկել, եւ ամեն ինչ երկու կոնտեյներների մեջ լցրել, Հա-  
յաստան էր տարել, որ տուն կառուցեր: Եւ էդ տունն էր, որ վերջը  
մեզ դժբախտություն բերեց: Ուրեմն, Երեւանում տպարանի հետե-  
ւը հողամաս ունեցավ հայրս եւ երեք հարկանի տուն պիտի կա-  
ռուցեր:

Ես փոքր էի, ինձ ռուսական մանկապարտեզ էին դրել՝ ասելով, թե  
ավելի լավ է ռուսերեն սովորեմ, հայերենը, ոնց էլ լինի՝ կսովորեմ,  
իսկ ռուսերենով ավելի օգուտ ինձ կտեսնվի:

Աբովյան փողոցի վրա մի հիվանդանոց կար, դրանց կեսնկուղա-  
յին հարկի վերջերն էինք ապրում: 1949-ին, կարծեմ՝ հունիս ամս-  
վա կողմերն էր: Դուռը խփեցին, զարթնեցինք բոլորս, եւ՝ զարմա-  
նալի մի պատկեր. գինվորներ, մի սպա՝ զենքերով, բաց արած շտի-  
կերով (սվիններով): Ասացին, թե դրությունը սահմանի վրա շատ  
վատ է, պետք է անպայման մեզ տեղափոխեն: Ինչ որ կարող եք՝  
վերցրեք ձեզ հետ՝ ասացին:

Ուրեմն, հավաքեցին մեզ, մի գռուզավիկի (բեռնատար ավտոմե-  
քենա) մեջ դրեցին, որում ուրիշ ընտանիքներ էլ կային, ու Ամիրյա-  
նով սկսանք իջնել: Ամեն կողմից գռուզավիկները՝ լիքը մարդկան-  
ցով, ընտանիքներով, շարժվեցին կայարանի կողմը: Մեզ դրեցին  
տավառնի (բեռնատար) վագոնների մեջը, որ մեջտեղից կտրված,  
երկու հարկ էին սարքված:

Էդ շոգին ու արեւին երեք-չորս օր մնացինք մեջը՝ մինչեւ գնացքը  
ճամփա ընկավ: Դռները բաց էին, բայց երկու գինվոր զենքերով  
կանգնած էին, իսկ վագոնների մեջ երկու հարկի վրա հիսուն-վաթ-  
սուն հոգի կար՝ երեխեքով-բանով: Ուտելիք չկար, խմելու ջուր չկար:  
Եթե կայարաններում կանգնում էր գնացքը, ջուր էինք վերցնում,  
դրամ ունեցողը ուտելիք էր վերցնում, վերջը բոլորին բաժնում էր:

Ես հինգ տարեկան էի: Խաղում էի եւ չէի զգում, բայց ծնողներիս  
համար, կարելի է պատկերացնել, թե ինչ վիճակ էր: Տասնյոթ օր  
տեւեց մեր ճամփորդությունը: Հասանք մի տեղ, նորից գռուզավի-  
կի մեջ դրեցին ու տարան, իջեցրին հսկայական անտառի մեջ, որ-  
տեղ չորս-հինգ բարաք կար: Մեզ թափեցին մեջը: Բարաք եմ ա-  
սում՝ երկար շենք է Եսպես, մեջտեղը կարիդոր (միջանցք) ու սեն-  
յակներ: Ամեն ընտանիք իր սենյակը ուներ: Սենյակի մեջտեղը աղ-  
յուսից ռուսական փեշ (վառարան) կար:

Ուրեմն, հայրս ստիպված էր գնալ, ծառ կտրել: Ինը ամիս ծառ էին  
կտրում, իսկ հուլիսին, երբ որ Օբ գետը սառույցներից ազատվում  
էր, այդ բոլոր ծառերը սպլավ էին անում (գետի հոսանքով ուղար-  
կում էին): Ծնողներիս համար շատ դժվար էր: Ծա՛տ, շա՛տ դժվար  
էր, իմ կարծիքով: Երեխաներիս համար դժվարությունները շատ

չէին, որովհետեւ դպրոց գնալ չկար: Չէին կարողանում տաքացնել մեզ՝ դուրս էին դնում, մենք էլ ուրախ էինք, որովհետեւ կարող էինք խաղալ:

Ինչպե՛ս դպրոց գնացի, դա էլ պատմություն է. իմ տարիքի ոչ մի երեխա չկար, ավելի փոքրիկ էին: Ուսուցչուհին գալիս, մորս ասում էր՝ ավելի լավ է Ալենը դպրոց գա, քան թե փոքր երեխաների հետ տանը մնա: Եվ հինգ տարեկանից ես դպրոցս սկսեցի. չէ՞ որ մանկապարտեզն էլ ռուսական էի գնացել, որոշ հեշտություն ունեի: Մեկ տարի մնացինք, վերջը նորից մեզ գոլգոթավիկների մեջ լցրեցին ու տարան մի ուրիշ տեղ:

Այդտեղ հայրս հանդիպում է մի նախկին ռազմագերի սպայի, որի հետ միասին ծառ էին կտրում: Սա ասում է՝ Փիրյան, ո՞նց է պատահել, որ դու այստեղ ես: Դու քո կյանքը պատմեցիր, զավակ ես տվել Ֆրանսիային: Ֆրանսիան սովետի հետ



Ալեն Փիրյանի մայրը՝ Բերկրուհին, Չոյկա կովի հետ: 1951, գյուղ Տյագուն

Էր գերմանացիների դեմ կռվում, ինչպե՛ս է եղել, որ դու այստեղ ես, չեմ հասկանում. ես գերի եմ ընկել, դրա համար ինձ ուղարկել են Սիբիր, բայց դու՞ք: Թույլ կտա՞ս՝ ես մի նամակ գրեմ: Սպան նամակը գրում է:

Ուրեմն, երկու տարի է անցնում, եւ մի նամակ ենք ստանում, թե՛ ձեր հարցով զբաղվում ենք: Վերջը մի ուրիշ գյուղ գնացինք. ես հիմա ինտերնետի վրա գտա՝ Տյագունն է, Ալտայսկի կրայ (երկրամաս): Դահուկներով 7 կմ քշում էի դեպի դպրոց, 7 կմ՝ վերադառնում: Ձերմաստիճանը -52°C էր: Սարսափելի բան էր, բայց դիմացա. եթե ձեռքերից եւ ոտքերից զգույշ լինես, քիթը, ականջներդ լավ փակես, մնացածը ոչ մի բան չի լինի: Դե, երեխա էինք խաղում էինք, արյունը տաքանում էր, եւ չէինք զգում, էլի՛:

Հետո հորս կանչեցին Նովոսիբիրսկ: Գնաց, ասացին, թե մեծ սխալ է եղել, դուք այստեղ չպետք է լինեիք: 1952-ին էր, եւ Ստալինը դեռ ողջ էր, վերադարձանք: Երեւանի կայարանում գնացքից երբ որ իջանք, անմիջապես թուղթեր ուղեցին՝ եկեք մեզ հետ: Գնացինք կայարանի իրենց բաժինը, ու էսօրվա պես հիշում եմ, սպան, որ ձեռքն էր թուղթը, ասում է՝ նայեք այս չորս

Դպրոցական լուսանկար, առաջին շարքում ձախից առաջինը հնգամյա Ալենն է: 1949, Պետրովսկի ԱԿՏ



անձերին, Սովետական Միության ամենամաքուր մարդիկն են, նրանց ոտքերի եղունգից մինչեւ գլխի մազը ամեն ինչը ստուգել ենք:

Բայց երեւանում արդեն տուն էլ չունեցանք: Վերջը իմացանք պատմությունը: ԷնԿաՎեԴե-ի մի պաղպալկովսիկ (ներքին գործերի կոմիտեի փոխգնդապետ) մեր տունը հավանել էր ու դասավորել, որ մեզ արքորեն: Մեզ հողամաս տվեցին Ջրաշատ փողոցում, վերջը կրեդիտով (վարկով) փող էլ տվեցին, եւ հայրս նորից սկսեց տուն կառուցել:

Ռուսական դպրոց ավարտեցի: Պոլիտեխնիկի ճարտարապետականը ընդունվեցի: Երեկոյան էինք դասի գնում, իսկ օրվա մեջ աշխատում էինք:

1965-ին, թղթերը ստացանք, վիզաները ստացանք եւ եկանք Ֆրանսիա:

Ես այստեղ դժվարություն չունեցա, ճիշտն ասած, որովհետեւ երբ որ եկանք, ես քսանվեց տարեկան էի: Ֆրանսերեն չգիտեի, երկու ամիս դաս էի վերցրել, կարդում էի, հեռուստացույց էի նայում, կիսո էի գնում: Բայց պետք է սկսեի աշխատել: Մարսելում իմ դվա-յուրողնի սիստրայիս հետ (գարմուհի) գնացի գործ գտնելու: Առաջին դուռը, որ խփեցինք, ճարտարապետ էր, ասաց՝ հետաքրքիր է, ես քեզ կվերցնեմ: Այդտեղ էր, որ սկսեցի ֆրանսերեն խոսել՝ ստիպված: Հաջորդ ամիսը իմ աշխատավարձը կրկնապատիկը տվեց եւ բավական բարդ գործ հանձնարարեց:


Ես Հայաստանի դիպլոմը չունեի, քանի որ թողեցի, եկա, բայց բոլոր իմ թուղթերը, աշխատանքները ֆրանսիական հյուպատոսա-



Ալենի ավագ եղբոր՝ Եղմոնի Փիրյանի թաղումը: 1944, Մարտել, Ֆրանսիա

րանում լեզալիզացիա արեցին (օրինականացրին): Ֆրանսիայում այն ժամանակ ո՛չ գերմանական դիպլոմն էր անցնում, ո՛չ ամերիկյանը, ո՛չ բելգիականը, բայց հայկականը՝ Երեւանի պոլիտեխնիկ ինստիտուտի դիպլոմը, անցնում էր: Վերջը ներկայացրի դիպլոմային աշխատանք եւ ֆրանսիական ճարտարապետի դիպլոմ ունեցա:

Հայաստան առաջին անգամ տասներեք տարի հետո գնացի՝ 1978-ին: Բավական փոխված գտա, ընկերներիս գտա՝ ամենակարեւորը:



ՍՍՌՄ ՊԱՆ մինիստրին

հատուկ տեղահանված  
Կարապետ Մանուկի Փիրյանից

Դիմում

1949 թ. հունիսի 13-ին ինձ ընտանիքով արքայի երկրամաս՝ ցմահ բնակության: Ես բողոքում եմ իմ արքայի դեմ եւ համարում այն սխալ: Ես միշտ եղել եմ եւ կամ Սովետական Միության կողմակից եւ հանուն Սովետական Միության նկատմամբ սիրո եկել եմ ՍՍՌՄ:

Ճնվել եմ ես Թուրքիայում 1902 թ. Բանդրմա գյուղում, ծառայողի ընտանիքում: 1914-ից մինչեւ 1919-ը բոլոր հայերի հետ թուրքական կառավարության կողմից ընտանիքով արտաքսվել ենք Բոզանլի: 1921-ին գնացել ենք Ֆրանսիա, որտեղ էլ ապրել եմ մինչեւ 1947 թ.: Աշխատել եմ որպես դեղագործ: Երբեք չեմ պատկանել ոչ մի կուսակցության: Միշտ խորին հարգանքով եւ սիրով եմ վերաբերվել Սովետական Միությանը եւ եղել եմ ՍՍՌՄ օգտին քարոզողներից մեկը: Դրա ապացույցը կարող է լինել իմ որդին (17 տարեկան), պարտիզան, որը սպանվել է գերմանացի վայրագների կողմից Ֆրանսիայի ազատագրման համար մղվող մարտերում: Նրա մահվանից հետո Ֆրանսիայի կառավարությունը պարգևատրել է շքանշանով:

9ème LÉGION MILITAIRE.  
ETAT MAJOR  
CHANCELLERIE.  
N°2038 CH /FFCY

ORDRE GENERAL N° 37

Le Général de Division OLLERIS, Commandant la 9ème Ré-  
gion Militaire, cite :

A L'ORDRE DE LA PATRIE  
A TITRE POSTHUME

Monsieur PERIAN Edmond.-  
Résident : 26Boul. du Nord. BEAUMONT. MARSEILLE.

MOTIF : Pour services exceptionnels de Guerre rendus au  
cours des opérations de la Libération de la France.

MORT AU CHAMP D'HONNEUR le 23 Aout 1944.

Cette citation comporte attribution de la Croix de Guerre  
avec Etoile de Bronze

MARSEILLE, le 5 Novembre 1946  
signé : OLLERIS.

POUR EXTRAIT CERTIFIÉ CONFORME

Marseille, le 7 Novembre 1946  
Le Colonel CUSENIER Commandant la Sub-  
division Militaire de MARSEILLE :



Մեծ ուրախությամբ լսեցի եւ թափառական հայերի հայրենադար-  
ձության մասին լուրը: Այն, որ վերջապես հայ ժողովուրդը կգտնի  
իր իսկական հայրենիքը, որտեղ մեր երեխաները կարող են սովոր-  
ել եւ խոսել մայրենի լեզվով, որտեղ կտեսնեն իսկական ազա-  
տություն, իմ հոգին լցրեցին հպարտությամբ: Եւ առաջին կարա-  
վանով 1947-ին եկա հայրենիք՝ Սովետական Հայաստան: Երեւա-  
նում աշխատում էի արդյունաբերական պարֆումերիայի եւ կոսմե-  
տիկայի բաժնում: Ես շատ երջանիկ էի: Երեխաներս սովորում էին՝  
մեկը դպրոցում, մյուսը մանկա- պարտեզում: Վերջապես կատար-  
վեց իմ երազանքը, ես ապրում եմ Սովետական Միությունում, ես  
Սովետական Միության քաղաքացի եմ, երեխաներս սովորում են  
սովետական դպրոցում: Ուրիշ ինչ էր ինձ պետք: Ես աշխարհի ա-  
մենաերջանիկ մարդն էի:

Եւ այդ ամենից հետո ինձ համար բացարձակապես անհասկանա-  
լի պատճառներով, դարձա Սովետական Միության թշնամի եւ ըն-  
տանիքով արսուրվեցի Սիբիր: Ինչո՞ւ: Պարզ չէ: Ոչ ոք չի պատաս-  
խանում իմ այս հարցին: Հարց, որը բարոյապես տանջում է ինձ:  
Դա բի՞ծ է ինձ վրա եւ ամոթ:

Ես կարծում եմ, որ արդարությունը երբեք չի կորչում եւ խնդրում  
եմ Ձեզ վերանայել իմ գործը եւ թույլտվություն տալ վերադառնա-  
լու Հայաստան:

22.03.1950

Էդմոնդ Փիլյանի՝  
արիության համար  
շքանշանի  
վկայականը:  
1946, Մարսել,  
Ֆրանսիա

# ՄՏԵՓԱՆ ՎԵՐԱՆՅԱՆ



ընտանիքը  
Ներգաղթել է  
1947-ին  
Հունաստանից

Պապայի մեջքի վրա սպիներ կային՝ դանակի հետքեր, ըստ երեւոյթին, խոշտանգումների էին ենթարկում, որ ինչ-որ թղթեր ստորագրի, թե ինքը գործակալ է եղել:

Պապաս շատ էր ուզում Հայաստանում ապրել վերջապես եւ մի տեսակ նորից սկսել կյանքը, չնայած Հունաստանում արդեն մեծ հաջողությունների էր հասել. ավարտել էր Աթենքի կոնսերվատորիան, հետո կատարելագործվել Միլանի կոնսերվատորիայում: Ինքը շատ լավ ձայն ուներ, բարիտոն էր. ձայնն էր մշակում եւ սովորում էր որպես դիրիժոր՝ խմբավար: Այդքան երիտասարդ՝ երգչախումբ ուներ: Երգչախմբում էլ ծանոթացավ մորս հետ: Մամաս գնում էր էդ երգչախումբ՝ երգելու: Մամայիս հետ ամուսնացավ Աթենքում եւ երագում էր, որ իր երեխաները Հայաստանում ծնվեն եւ մեծանան:

Եկան եւ 1949-ին արքորվեցին: Պապան արքորի մասին բոլորովին չէր խոսում, բայց քանի որ ինքը շատ շուտ մահացավ, մաման արդեն ինչ-որ բաներ պատմում էր:

Մերոնք վարձով ապրում էին Երեւանում «դոմ օֆիցերով» (սպայի տուն) կոչվող սեւ շենքում: Գիշերով եկել, տարել էին, բեռնատար վագոններով հասցրել Ալտայսկի կրայ (Ալթայի երկրամաս): Պապան Էստեղ առաջին 13 օրը չի խոսել ընդհանրապես: Ես մտածում եմ, որ ինքը իրեն մեղավոր էր զգում. ի վերջո, ինքն էր պատճառը, որ եկան Հայաստան:

Մաման պատմում էր, որ երբ գնացքը կանգնում էր, գոռում էին՝ պող վագոնի՛, այսինքն, որ մտնեին վագոնների տակ՝ իրենց կարիքները հոգալու: Պատկերացնում էք, տղամարդիկ եւ կանայք՝ գենքով կանգնած զինվորների ներկայությամբ... Դա մամայի ամենասարսափելի տպավորություններից էր:

Ի վերջո, տեղավորել են ինչ-որ ավանում: Անտառում ծառ էին հատում: Երեւի մտածել էին, որ սրանց մեջ լավ մասնագետներ կլինեն, կարելի է օգտագործել, մի օր շարել են ու սկսել էսպիսի կարգադրություններ անել՝ ֆիզիկի՛, օդին շագ վպերյո՛դ (ֆիզիկոսներ, մեկ քայլ առաջ), խիմիկի՛, օդին շագ վպերյո՛դ (քիմիկոսներ, մեկ քայլ առաջ), երաժիշտներ՝, մեկ քայլ առաջ...

Որպես երաժիշտ, ուրեմն, պապային տանում են Բառնաու, բայց արդեն եղբորովս հղի մամաս մտում է տայգայում: Վեց ամիս հետո նոր պապան կարողանում է մամային բերել քաղաք, եւ մեծ եղբայրս ծնվում է Բառնաուլում: Պապային աշխատանքի են ընդունում որպես բայանիստ (բայան՝ ռուսական երաժշտական գործիք): Ինքը շատ լավ տիրապետում էր դաշնամուրին: Մեր տանը Աթենքից բերած փոքրիկ դաշնամուր կար: Իսկ բայան երբեք չէր նվագել, բայց բայանիստ է աշխատել փաստորեն:

Տայգայում իրեն տանում էին հարցաքննության, փորձում ինչ-որ խոստովանություններ կորզել: Պապայի մեջքի վրա սպիներ կային՝ դանակի հետքեր, ըստ երեւոյթին, խոշտանգումների էին են-

թարկում, որ ինչ-որ թղթեր ստորագրի, թե ինքը գործակալ է եղել:

Սիբիրում շատ նեղվում էին նաեւ լեզվի առումով, որովհետեւ ռուսերեն չգիտեին: Պապաս գիտեր 7 լեզու. բոլոր եվրոպական լեզուները՝ բացի անգլերենից: Մամաս անգլերենի մասնագետ էր, 10 լեզվից ավելի գիտեր: Բայց ռուսերեն չգիտեին: Եվ, գիտե՞ք, թե ինչու ես եւ եղբայրս գնացինք ռուսական դպրոց, որովհետեւ իրենք էդ վեց տարին տանջվեցին, տառապեցին՝ ռուսերեն չիմանալու պատճառով:

Էդքանից հետո, համ էլ համարձակ էին. որոշում են, որ եղբորս պիտի կնքեն Սիբիրում: Նորա ծյոծյա (տիկին) կար, համաձայնում է լինել կնքամայր: Հայկական եկեղեցի չկար: Ես հիմա ժպիտով եմ պատմում, բայց պատկերացում եմ, թե ինչերի մեջով են անցել: Գնում են ռուսական եկեղեցի, բատյուշկան (քահանա) ասում է՝ առանց կնքահոր չի լինի: Հայ աքսորականները վախենում են կնքահայր դառնալ, պապաս փողոցում ռուս մի մարդու կարողանում է համոզել, եւ եղբորս կնքում են:

Էստեղ կար Սիբիրսկի Նարոդնի խոռ (Սիբիրի ժողովրդական երգչախումբ), որը

աշխարհահռչակ դարձավ հետո: Պապան հիմնեց էդ Սիբիրսկի Նարոդնի խոռը: Մեկին դրել էին դեկավար, բայց ամբողջ հիմքը պապան էր:

Աքսորից վերադարձան 1955-ին, բնականաբար, կյանքը լրիվ փոխվել էր, եւ փակվել էր ամեն ինչ, պապային որեւէ առաջարկ չկար: Դպրոցում դաս էր տալիս, բայց հասավ շատ մեծ հաջողությունների՝ իր երգչախմբով: Բելինսկու անվան դպրոցի երգչախումբը, որ ոչ միայն Հայաստանում էր հայտնի, այլ նաեւ ամբողջ Սովետական Միությունում:

Բելինսկու անվան երաժշտական դպրոցի դասատուների մեծ մասը աքսորականներ էին: Իմ ֆիզիկայի դասատուն գիտնական էր, մանկավարժ չէր. տառապում էր մեզ հետ, բայց իր միտքը ուրիշ տեղ էր: Եվ էդ առումով մեր դպրոցը շատ որակով էր համարվում. պապաս, ասենք, էդ կրթությամբ երգի ուսուցիչ էր: Ճիշտ է, հետո ինքը Սայաթ-Նովա երաժշտական դպրոցի ղեկավարը եղավ:



Ստեփան  
Վերակյանի  
մայրը՝  
Բեատրիսը,  
աքսորավայրում:  
1949


Տեղական  
Հովհաննես  
Վերակյանի  
աշխատավայրից:  
1954, Բառնաուլ

Ասեմ, որ վերադարձից անմիջապես հետո պապան մտնում է ԿԳԲ՝ ազգային անվտանգության, եւ խնդրում է, որ իր գործերը ցույց տան՝ մոտավորապես իմանա, թե ինչի համար են աքսորել: Էստեղ ինչ-որ մի կոչումով մարդ է եղել, հանել է գործերը, իրեն, իհարկե, ցույց չի տվել, բայց ասել է՝ դուք 1918 թ. Կոստանդնուպոլսում հիմնադրել եք դաշնակցական թերթ: Պապան ծնվել էր Կոստանդնուպոլսում, բայց հենց 1918 թ.: Էդտեղ պապայիս ասածը հետո հայտնի խոսք դարձավ՝ ես մամայիս փորի մեջ չէի կարող թերթ հիմնել:

Ինչ-որ մեկը սուտ մատնություն էր արել. անգամ ազգանունը գիտեմ ով է գրել: Պլան էին կատարում, ծրագիր կար՝ Հայաստանը դատարկելու: Ես կարծում եմ, դա վերաբերում է տասնյակ հազարավոր մարդկանց, որոնց աքսորեցին էդ թվերին: Եվ՝ ոչ միայն արեւմտահայերի: Մամայի պատմելով եմ հիշում, որ էստեղ կային գյուղացիներ, բանվորներ՝ Ալավերդիից, Քյավառից, Գյումրիից, Կիրովականից... Իհարկե, մեծ մասն արեւմտահայեր էին, բայց կային նաեւ տեղի ժողովուրդ, մամաս ասում էր՝ տեղացիներ: Շատերը չվերադարձան. մի մասը չդիմացավ, մահացավ: Պապայի բախտը բերեց, որ ընկավ Բառնաուլ:

Երեւանի 3-րդ մասի շուկայի մոտ մեզ երկու սենյականոց բնակարան տվեցին. չեմ հիշում որ թվին: Այսինքն, Խրուշչովի (Նիկիտա Խրուշչով՝ Սովետական Միության ղեկավարներից) ժամանակ որոշում եղավ ներքին կարգով, որ էդ մարդկանց պետք է բնակարաններ տրվեն:

Մաման էդ աքսորից չարացած էր խոսում: Պապան՝ չէ, բայց աչքերի մեջ շատ մեծ տխրություն կար: Չնայած արտաքինից շատ ուրախ մարդ էր՝ ասող-խոսող, ուսող-խմող: Դպրոցում հավաքույթներ էին լինում՝ իր փայլուն ծայնով երգում էր, պարում էր.





Ձախից երկրորդ  
եւ երրորդ  
Հովհաննես եւ  
Բեատրիս  
Վերանյաններն  
են: 1955,  
Բառնաուլ

### Հովհաննես Վերանյանի դիմումը Հայկական ՍՍՌ-ի պետական անվտանգության մինիստրին

Ստորագրյալս 1946 թ. Հունաստանի Աթենք քաղաքից գաղթել  
եմ Սով. Հայաստանի Երեւան քաղաքը, որտեղ աշխատել եւ  
ապրել եմ մինչեւ 1949թ. հունիսի 13-ը, Հայֆիլիարմոնիայում  
որպէս խորմէյստեր: Վերոհիշյալ թվականին ինձ տեղափոխել  
են Աթթայան երկրամաս: Հայաստանում 3 տարվա ընթացքում  
եղել եմ Սով. Հայաստանի քաղաքացուն վայել դիրքի մեջ: Աշ-  
խատել եմ պարկեշտորեն եւ համեստորեն, որուն մասին Հայ-  
ֆիլիարմոնիայի պարտկազմակերպությունը կարող է վկայել:

վալս պարել գիտեր, տանգո պարել գիտեր... Ձայնը կորցրեց Սի-  
բիրում, որովհետեւ սկսել էր ծխել եւ խմել: Տայգաներում ո՞ւմ ձայ-  
նը կդիմանա, բայց ինչ-որ մի բան մնացել էր:

Արտաքինով գեղեցիկ մարդ էր, ներկայանալի. լավ էր հագնվում.  
Իտալական ոճ ուներ՝ շյապան գլխին: Սեղան նստելու, կենաց ա-  
սելու, պատառաքաղ բռնելու շատ հղկված վարք ուներ: Ֆիլիար-  
մոնիայում դա որոշ ինտրիգների, նախանձի պատճառ դառնում  
էր: Բայց պապան դրան շատ հումորով էր վերաբերվում, ոչ մի չա-  
րություն չուներ, մատների արանքով էր նայում:

Եվ ասեմ, որ ինչքան պապան փակել էր ատելությունը, եղբորս մեջ  
կար էր, դեպի Սովետական Միությունը կար, չընդունեց ու չընդու-  
նեց եղբայրս:

1960-ականների սկիզբն էր, մեր տանը խոսակցություն կար, որ ու-  
զում են գնալ երկրից, բայց հետո մի զարմանալի բան կատարվեց,  
եւ չստացվեց գնալը: Պապան փոխվեց, նորից եկավ իր հին մտած-  
մունքին, որ սա իր երկիրն է, իր Հայաստանն է:

Ինքը չէր հավատում, որ մի օր կփոխվի երկիրը, բայց դարձյալ հու-  
նաստանցի մի ընկեր ուներ՝ Քոքո ձյաձյան (պարոն), ինքն էլ Եվրո-  
պայում փայլուն կրթություն էր ստացել. միշտ ասում էր՝ Ես երկիրը  
քանդվելու ա, եւ մենք անկախ Հայաստանում ենք ապրելու: Ապ-  
րեց մինչեւ անկախ Հայաստանն, ի միջիայրոց, Քոքո ձյաձյան: Դրա-  
նից հետո էլ համարյա ամեն առավոտ մեր տուն էր գալիս՝ օրվա  
թերթերով: Սուրճը խմում էր, վերջին նորություններն էր ասում...

Ինչ վերաբերում է արտասահմանի կյանքիս, սույն թվի սեպ-  
տեմբերի 25-ի դիմումովս տվել եմ Հունաստանի կոմկուսի պա-  
տասխանատու անձնավորությունների մի շարք ազգանուն-  
ները, որոնք կարող են փաստել, թե ոչ մեկ կուսակցության ան-  
դամ կամ համակիր իսկ չեմ եղել, այլ ընդհակառակը եղել եմ  
Սով. Հայաստանի համակիր եւ դրա բարգավաճումով խանդա-  
վառվող մի երիտասարդ: Մի անգամ էլ եմ խնդրում, որ հե-  
տաքրքվեք իմ մասին [անունների ցանկ]-ից, որոնք ապրում են  
Երեւանում եւ եղել են Հունաստանի պատասխանատու անձ-  
նավորություններ:

Սույն դիմումովս խնդրում եմ, որ իմ գործերս քննեք եւ թույլ  
տաք վերադառնալու իմ Հայրենիքը:

23.08.1950  
Բառնաուլ



# ՆՐԱՉ ՖՐՈՒՆԾՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Եգիպտոսից

Ամբողջ ընտանիքով տա-  
րան: Դեպի Արարատ էին  
տանում, մտածում էինք՝  
որպես իրենց վրա ավելորդ  
բեռ, մեզ տանում են՝ սահ-  
մանից դուրս գցեն:

Իմ գերդաստանը հիմնականում դաշնակցական էր. պապայիս հո-  
րեղբորը կախաղան են հանել Տիգրանակերտում: Մեծ հայրս եւ  
մեծ մայրս Սուրբ Աստվածածին եկեղեցում լուսարար էին: Մոմ էին  
պատրաստում, երբ նրանց վրա հարձակվում են, դաշունահարում  
ու գցում եռացրած մոմի կաթսայի մեջ:

Մամաս տասը-տասներկու տարեկան աղջիկ էր. քուրդերը իրենց  
տարազներով նրան ու մյուս հայ երեխեքին Տիգրանակերտից փա-  
խցնում են Պոլիս: Չավեն Պատրիարքը մամայիս քեռին էր. նա մա-  
մայիս կարգում է գինվորական հոսպիտալում աշխատանքի:

Հետո, երբ որ մամաս իմանում է, որ իր հորեղբայրը Եգիպտոսում  
է, տեղափոխվում է Եգիպտոս: Չի հավանում էր երկիրը, ուզում է  
հետ վերադառնալ, իր հորեղբայրը դանակով սպառնում է՝ դու  
թուրքերի մոտ հետ չես գնա... Եւ պապայիս հետ ամուսնացնում  
է: Պապաս մամայիցս տասներեք տարիով մեծ էր:

Չորս եղբայր էինք, մեկ քույր եւ մամաս: Պապաս Եգիպտոսում մա-  
հացավ, առանց հոր ենք եկել մենք: Մամաս չէր ուզում Հայաստան  
գալ: Մեծ եղբայրս սովետական խելքի տեր էր: Փոքր եղբայրս, որ  
հետո Թելեգրաֆում էր աշխատում, մամայիս ասում էր՝ դագաղդ  
պիտի տանենք, բայց պիտի գաս Հայաստան:

Հայրենիքի սերը գիտե՞ք ինչ է: Հայրենիքի սերը չի ճանաչում ոչ մի  
դաշնակցություն: Ես հիմա դաշնակցականներին հակառակ եմ, ո-  
րովհետեւ դաշնակցականները մեր գլուխը շատ են կերել. Վահան  
Թեքեյանի աչքը հանեցին:

47-ի սեպտեմբերին եկանք Հայաստան: Երեւանում պաղվալի  
(նկուղ) մեջ էինք ապրում Պրոսպեկտ-Ղուկասյան անկյունում: Եր-  
կու ընտանիքի համար կիսել էին ֆաներայով (փայտե միջնորմ),  
ապրում էինք:

1949-ի հունիս 13-14-ի գիշերը եկան մեր եղ պաղվալը: Ուզեցի զու-  
գարան գնամ, ավտոմատով հետոս եկան մինչեւ զուգարան: Չու-  
գարանս էլ՝ ի՞նչ. փոս էր, վրան՝ բուդկա (փայտե տնակ): Դուրս  
եկա, տարան: Ամբողջ ընտանիքով տարան: Դեպի Արարատ էին  
տանում, մտածում էինք՝ որպես իրենց վրա ավելորդ բեռ, մեզ տա-  
նում են՝ սահմանից դուրս գցեն:


Վերջը հասանք Բառնաուլի մոտ մի գյուղ: Մեզ ընդունող նաչալի-  
կը (ղեկավար) էր ամբողջ լեսպրոմխոզի (անտառային տնտեսու-  
թյուն), ասում է՝ դուք ի՞նչ է, կարծում եք ապրելու՞ համար եք եկել,  
ծեզ բերել են, որ վերացնեն: Մամաս էլ ասում է՝ չէ՛, մենք չենք մեռ-  
նելու, մենք ծառերը պիտի կտրենք՝ կախաղան սարքենք, քեզի կա-  
խենք:

Մայրս շատ ակտիվ կին էր, ինքը բժշկի օգնական է աշխատել: Եղ

Նեղ պահին բոլոր հայրությանը ամեն տեսակ բուժումներով օգնում էր: Առաջին տարին երկու եղբայրներիս անտառի խորքն էին տարել 55 աստիճան ցուրտին: Ցուրտը տարել էր ձեռքները: Վազելով տուն եկան: Մեծ եղբորս ձեռքերը ամբողջ փտան, հազիվ մամաս բուժումներ արեց: Հլը դատի տվեցին, մի քանի ամիս նստեցրին՝ սաբոտաժ եք արել:

Ամբողջ գյուղին ու մամայիս ասել էին, թե եղբորս սանատորիա (առողջարան) են տարել: Մամաս գնում է տեսակցության, եղբորս ասում է՝ տո էշու՛ գլուխ, որ ձեռքերդ ցուրտը տանում էր, չէի՞ր կարա շուտ ասելիր: Խաբար չի, որ ախպերս բանտում է, որտեղ որ սոխ ու սխտորը կացինով են մաքրում:

Ամբողջ անտառի խորքը մեծ տափաստաններ էին: Գերանները բերում էին, իրար վրա շարում գետի եզերքին, ես մետաղյա մի բանով վրաները փորագրում էի չափսերը եւ այլն, որպեսզի ջուրից որ հանում են՝ անմիջապես սորտիրովկա (տեսակավորում) կարողանային անել: Ցուրտը մինչեւ 40 աստիճան էր. իրավունք չունեիր լքելու աշխատանքը: Եղ ցուրտին որ աշխատում ես, չէ՞, քրտնում է մարմինդ: Ասում ես՝ շունչ քաշեմ մի երկու թուփ, ամբողջ մարմինդ դառնում է սառը երկաթ: Ես մի օր մորս ասի՝ մամա, մենք



Հատված Ֆրունջյանների աբսորի գործից: 1949

ի՞նչ մեղք ունենք, որ դուք ձեր հինգ թուփ համար մեզի բերեցիք՝ ամբողջ կյանքը տանջվելու:

Ստալինը որ մահացավ, մենք խաբար եղանք արդեն գյուղում: Մամաս ասաց՝ օձի ծնված Բերիա՛, մեկ ամիս չես քաշելու. դու էլ պիտի վարի գնաս: Եղպես էլ եղավ:

Բայց երկար ժամանակ՝ մինչեւ 1957-ը, դեռ Էնդեղ էինք: Սոլժենիցինը<sup>12</sup> ցուցակ էր կազմել ազատվելիք աքսորականների, հերթով ազատում էին. մենք Ֆրունջյան էինք՝ ցուցակի վերջն էինք:

Ինձ թույլ էին տվել դպրոցը Բառնաուլ քաղաքում սովորել: Որ Երեւան եկանք, Սիլաչիի բանկի կողքը մեջ մտած դպրոց կար, Էնդեղ ավարտեցի տասամյակը, կինստուդիայում աշխատեցի, հետո Թատերական ինստիտուտ ընդունվեցի:

Ավարտելուց հետո Սոչի էի գնացել, մտա տելեստուդիա, ծանոթացա դիրեկտորի հետ, ասացի՝ Եսպես-Եսպես, ավարտել եմ, կուզե՞նայի արակտիկայի գալ: Եղպես հինգ-վեց տարի Սոչիի տելեստուդիայում աշխատեցի: Ու դրանից հետո թատերագետ Ռուբեն Չարյանը<sup>13</sup>, որը մորս, քրոջս հետ շատ մոտ էր, ինձ հետ բերեց Հայաստան՝ դոկումենտալ (վավերագրական) ֆիլմերի ստուդիա:



Գերանների տեղափոխումը գետով

Մամաս շատ սուր լեզու ուներ: Տուն էինք ստացել Երեւանի Բաղրամյան-Կիւսյան փողոցների հենց անկյունը: Ընկերս, որը Սիբիր մեզ հետ էր, եկավ, ասաց՝ ես տունը մեծ է, եղբան լույս պիտի վառե՞ք: Հաշվիչը էնպես արեց, որ շատ ցույց չտա: Կինստողիայից մի օր տուն եմ եկել, մի մարդ կանգնած է մեր դռան առաջ: Մեկ էլ մամաս դուռը բացեց՝ տո դուն դեռ հո՞ս կայնել ես, քեզի չըսի՞նք՝ գնա՛ եստեղէն... Լույսի մարդն էր: Մամայիս դիմեցի՝ գնա նե՛րս, մեկ էլ ասում է՝ լսի՛, մենք այս պետությունն են այնքան վնաս քաշել ենք, որ ադ գողանալը քիչ է:


1970-ականների վերջերին ԱՄՆ-ի պետքարտուղար Հենրի Զիսինջրի<sup>14</sup> ստորագրությամբ հատուկ հրավեր եկավ ինձ՝ վիզայով, պեչատով (կնիք): Հորեղբորս տղան էստեղ էր՝ Ֆիլադելֆիայում, Դաշնակցության ատենապետն էր: Ինքն էր հրավիրողը: Սովետում ասացին՝ հորեղբոր տղան հարազատ չէ: Ես էլ ասի՝ հորեղբորս տղան որ հարազատ չէ, բա որ հորաքրոջս տղան Դաշնակցության ատենապետ էր եզրապտու, էդ ինպե՞ս եղավ, որ նրա անունով մեզ աքսորեցիք:

Հայաստանից վերջապես դուրս եկա 1988 թվին:

Բայց ասեմ, որ հայրենադարձությունը խաբեբայություն էր: Մի քանի ծախված կոմունիստների կերած, ներողություն՝ քաքերն էին...

ՍՍՏՄ Պետական-վտանգության միևնույն անունը Հատուկ խորհրդակցության որոշումը Ֆրունջյանների արտերի մասին: 1950

Աբրոյանների գործերի վերանայման հանձնաժողովի որոշումը Ֆրունջյաններին ազատելու մասին: 1956



# ԷԼԻՉԱԲԵԹ ԲԵԼԻՆՉՅԱՆ



ընտանիքը  
Ներգաղթել է  
1946-ին  
Լիբանանից

Չիշում եմ՝ սկզբից Սիբիրից եկանք, թաղի երեխաները մեզ հետ չէին խաղում, մենք հայերեն չգիտեինք, ասում էին՝ սրանք ռուս են:

«Ամոթ է նույնիսկ ասելը, բայց հայրս մինչեւ մահը հայիոյում էր Սիբիրում գտնվող իր հոր ու եղբոր գերեզմանը,- ասում է Էլիզաբեթ Բելինջյանը:- Ասում էի՝ պապ, ի՞նչ ես ուզում, մարդիկ մեռել, գնացել են, ասում էր՝ չէ, իրենք պատճառ դարձան, որ տեղահան լինենք, ելնենք-գնանք, հետո էլ տեղահան լինենք՝ այստեղ գանք»:

Այստեղը Այնճարն է: Սիբիրում մուսալեռացու ընտանիքում ծնված եւ Հայաստանում քսանհինգ տարի ապրած Էլիզ Բելինջյանը Այնճարում ինձ դիմավորում է նախկին հայաստանցու հյուրասիրությանամբ: Այսօր ինքն է տիրություն անում հոր՝ Կարապետ պապուկի (Այնճարում այդպես էին դիմում նրան) տանն ու այգուն: Հայրը մեկ տարի առաջ հեռացել է կյանքից: Այնճարում Կարապետ պապուկի մասին լեգենդներ են պատմում՝ հուժկու եւ հսկա էր, դռնից հագիվ էր մտնում, նույնիսկ Սիբիրն ու դաժան կյանքը չէին ընկճել նրան, մինչեւ վերջ աշխատում էր իր այգում, կյանքով լեցուն էր եւ այլն: «Հայ Յեղափոխական դաշնակցությունը պաշտելով՝ մահացավ,- ասում է Էլիզը: - Երբ նրան հողի մեջ էին դնում, տեր հայրը տղաներին ասաց՝ հեղափոխական երգ երգեք, տղաները երգեցին»:

## Ճանապարհ դեպի Հայաստան

1919 թվականին Մուսա լեռ ծնված Կարապետ Բելինջյանը, որ 1937-ին բազմաթիվ մուսալեռացիների պես Լիբանան էր եկել, 1946-ին հոր, մոր, եղբոր եւ կնոջ՝ Նվարդ Դուդաքյանի հետ դժկամությամբ միանում է Այնճարից Հայաստան ներգաղթող քարավանին:

«Ընտանիքում վիճաբանություն է լինում, իրենք դաշնակցական էին, դեմ են լինում ներգաղթին, չուզելով հրաժարվում են կուսակցությունից, կռվով, վիճելով գնում: Բոլորը գիտեն, որ հայրս գնացել, փակել է կազմակերպիչների ճանապարհը, որ չգան գյուղ եւ չգրանցեն գյուղացիներին: Բայց գյուղի պատգամավորը ասել է՝ Կարապետ, մենք իրավունք չունենք այդպիսի բան անելու, եւ հայրս մի կերպ ենթարկվել է»:

Կարապետ եւ Պետրոս Բելինջյաններին, իրենց ծնողների ու կանանց հետ, տարել են Լենինական, Փանիկ գյուղ, մեկ տարի հետո այնտեղ ծնվել է Կարապետի առաջին դուստրը՝ Մարիան: «Մի օր էլ ոստիկանները եկել են մեր տուն, ասել են՝ հավաքվեք, ձեզ կողքի գյուղն ենք տանում: Ստիպել են հավաքել իրերը, մինչեւ մամաս ներս է գնացել, որ հավաքվի, տեսել է երեխան օրորոցով չկա, նայել է, որ ոստիկանները երեխային օրորոցով դրել են մեքենայում, իրենք էլ արագ-արագ հավաքվել, նստել են մեքենան՝ իբր թե կողքի գյուղ են գնում: Մերոնց տարել-լցրել են անասուն տեղափոխող մի գնացք, որի մեջ Այնճարից ուրիշ մարդիկ էլ են եղել: Ութ օր սոված-ծարավ ճանապարհ են գնացել՝ առանց իմանալու՝ իրենց ո՞ր երես են տանում: Հաջորդ առավոտն այնճարցի մի կին գնացքում մեր


ընտանիքին մի բուխանկա (բոքոն) հաց է տվել, վեց հոգով կերել են: Ճանապարհին մարդկանց կամաց-կամաց իջեցրել են, ամենավերջում մերոնց: Հայրս ասում էր՝ մեր ընտանիքն ամենադիմացկունն էր, բոլորն էլ հուժկու, թափով մարդիկ են եղել»։ պատմում է 57-ամյա Էլիզ Բելինջյանը:

### Ալտայսկի կրայ, Ալեյսկի սովխոզ

Տարել են Սիբիր, Ալտայսկի կրայ, Ալեյսկի սովխոզ, որտեղ տախտակով եւ թրիքով շինված տներ են եղել, մերոնց մի պստիկ սենյակ են տվել: Առավոտը գյուղի նախագահը եկել-ասել է, վեր կացեք, գործի պիտի գնաք: Տարել են դաշտերում աշխատելու: Մամաս պատմում է, որ մեկ տարի շատ են չարչարվել, քնել են տախտակե անկողնու վրա, առանց ներքնակի: Հայրս աշխատատեղ մարդ էր, սկսել է աշխատել, այդ գյուղում հավանել են պապայիս աշխատանքը, 100 ձի են տվել նրան, որ գործից հետո խնամի: Հետո կով, հավ, խոտ էլ են տվել: Մամաս պատմում էր, որ այդ 100 ձիուն ամեն օր տանում էին ջուր խմեցնելու, ծմեռը հատկապես շատ դժվար էր լինում, մուրճ էին տանում իրենց հետ, որ սառույցը կտրեին՝ ձիերը ջուր խմեին: Հաճախ մամաս է մենակ տարել ձիերին, մի ձիու վրա նստել է, մյուսները հետեւից գնացել են: Այդպես՝ առավոտ, իրիկուն: Մի օր էլ ձիերից մեկը քացի է տվել մամայիս կրծքին, մինչեւ կյանքի վերջին օրը նա այդ ցավը զգում էր, ասում էր՝ կուրծքս ցավում է: Այդպես, գյուղատնտեսական աշխատանքներով սկսել են լավ ապրել: Իսկ պապայիս ամեն տարի մի հատ մեդալ են տվել, իբրեւ լավ աշխատողի, Երեւանում եղբորս տանն են այդ մեդալները: Ուրեմն, Սիբիրում ծնվել ենք ես, մյուս քույրս՝ Ալիսը, եւ եղբայրս՝ Պետիկը: Իսկ քույրս՝ Մարիան, ինչպես ասացի՝ Լենինականում է ծնվել:

Ծնողներս կարողացել են այնտեղ ապրած ու աշխատած ժամանակ դրամ էլ հավաքել, բայց անձնագրերը իրենց ձեռքից վերցրել են, չէին կարող որեւէ տեղ գնալ, այսինքն՝ ազատ աքսոր էր: Երբ Ստալինը մահացել է, եկել իրենց ասել են՝ վե՛րջ, դուք արդարացված եք, կարող եք Հայաստան գնալ: Ասել են՝ ուզում եք մնացեք, ուզում եք գնացեք: Մինչ այդ հորեղբայրս ու պապիկս արդեն մահացած են եղել, այնտեղ էլ թաղված են: Հորեղբայրս Սիբիրում չորս երեխա է ունեցել, չորսն էլ իրար ետեւից մահացել են: Երբ մահացել է, կինը հղի է եղել, աղջիկ է ունեցել, անունը Մնացական են դրել, որ իբր ապրի, մնա, բայց այդ երեխան էլ է մահացել: Առաջինը հորեղբորս կինն է Սիբիրից Երեւան գնացել (իր եղբայրը՝ Այսճարից, Հայաստանում էր, գնացել է նրա մոտ): Ճիշտն ասած, մերոնք չեն ուզել գնալ Հայաստան, արդեն իրենց վիճակը լավ է եղել, սովորել են այդ գյուղի կյանքին, բայց հորեղբորս կինը Հայաստանից անընդհատ հեռագիր է ուղարկել՝ եկեք, եկեք: 1950-ականների վերջերս է եղել:

Աքսորյալների  
շարժակազմերի  
ցուցակների  
շապիկ



## Ճանապարհ դեպի Հայաստան

Ասում են այդ ժամանակ հիվանդություններ շատ էին լինում, Սոչիում բժիշկները մտնում են գնացք՝ ստուգելու մարդկանց: Եղբայրս, որ մեկ տարեկան է լինում, բարձր ջերմություն է ունենում: Բժիշկներն ասում են՝ եթե ճամբան շարունակեք, այս երեխան միևնույն էրեւան կմեռնի: Մամայիս երեխայի հետ գնացքից իջեցնում են Սոչիում, տանում հիվանդանոց, մենք ճամբան շարունակում ենք դեպի Հայաստան: Մամաս պատմում էր, որ հիվանդանոցում մի շատ հոգատար բուժքույր կար, մեկ ամիս մինչև վերջին օրը հետեւում է եղբորս առողջությանը, մինչև չի լավանում, չի ուղարկում: Մենք մնում էինք հորեղբորս կնոջ հետ՝ իր այնճարցի հայրենադարձված եղբոր տանը՝ Մալաթիա, հիվանդանոցի թաղն էր, լավ հիշում եմ: Շատ լավ մարդիկ էին, հորեղբորս կնոջ եղբայրն իր կնոջն ասել էր՝ հանկարծ չիմանամ, որ այս մարդկանցից ուտելիքի փող ես վերցրել: Երկու-երեք ամիս իրենց տանը մնալուց հետո նույն թաղի վրա տուն ենք վարձել, մի քանի տարի էլ էնտեղ ենք ապրել, հետո պապաս Ախաբարաշենում հող է գնել, տուն ենք սարքել (դժվարությամբ գնեցինք այդ հողը, չէին ծախում ասում էին, դուք որտեղից եկել եք, էնտեղ գնացեք): Պապաս գործի է ընդունվում Ներքին Չարբախում վաղապրովորչիկ (ջրմուղի փականագործ), մենք դպրոց ենք գնում: Հիշում եմ սկզբից Սիբիրից եկանք, թաղի երեխաները մեզ հետ չէին խաղում, մենք հայերեն չգիտեինք, ասում էին՝ սրանք ռուս են: Հետո դպրոց գնացինք, դպրոցում եւ թաղում մեզ ասում էին ախաբարներ, իսկ հայրենադարձված հայերի շրջանակում էլ մեզ ասում էին այնճարցիներ: Մենք էլ, չգիտեմ ինչու, նեղվում էինք, մեր անունն էլ չէին տալիս, ասում էին այնճարցու աղջիկը, այնճարցու տղան: Հետո որ Լիբանան եկանք, էստեղ էլ մեզ ասում էին հայաստանցիներ, դրանից էլ էինք մի քիչ նեղանում: Հիմա ի՞նչ ենք, ես էլ չգիտեմ:

Ուրեմն երեւանում պապաս աշխատում էր: Շատ խիստ եւ գործին նվիրված մարդ էր: Իր ձեռքի տակ աշխատողները բոլորն այնճարցիներ էին: Հիշում եմ, որ մեր տուն էին գալիս, գանգատվում, ասում էին՝ ինքը մի րոպե չի նստում, մեզ էլ չի թողնում, որ նստենք:

Ուրեմն, մենք արդեն մեծ էինք, դպրոցն ավարտեցինք, աշխատում էինք, լավ էինք վիճակով, բայց մեր կյանքում երկու հատ դեպք եղավ, որ մեզ ստիպեց ամեն ինչը թողնել եւ հիասթափված ետ գալ Լիբանան: Եղբայրս պիտի ամուսնանար, հարսանիքին Այնճարից շատ բարեկամություն եկավ, մամայիս կողմը շատ մեծ էր, գրեթե բոլորն էլ իրենց տղաներով, աղջիկներով եկան հարսանիքին: Պատրաստվում էինք հարսանիքին, ուրեմն հարսանիքի բոլոր ապրանքները մամաս ամիսներով «տակից» առել, պահել էր մեր նկուղում, ոչ մի բան պակաս չէր, ուտելիքից մինչև շոկոլադի տեսա-

կները պահված էին մեր մառանում: Մի օր էլ հարսանիքից առաջ, հյուրերը վերը քնած էին, մեկ էլ ես վար իջա, տեսա մառանի կողպեքը բաց, զարմացա, մամայիս կանչեցի, ներս մտանք, տեսնենք ամեն ինչ գողացել-տարել են: Հարեւանները հավաքվեցին նրանց ձայների վրա, հյուրերը իջան, մենք հյուրերին չէինք ուզում ասել, բայց ամեն ինչ հասկացան: Մեկ էլ մորաքրոջս տղան ասաց. «Ասանկ բա՞ն կըլլայ, կուզան տունեն ասանկ կգողնան կտանե՞ն»: Չարմացել էր, որովհետեւ Այնճարում մինչև հիմա մարդիկ դռները բաց են քնում, մեկը մյուսի տնից գողություն չի անում: Ասաց. «Ասիկա ասանկ չըլլար, դուք հոս անտեր, մեն-մենակ մնացել եք, մենք հոն ուրախ կապրինք, վեր կացեք եկեք մեր քովը: Ես ձեր թուղթերը պատրաստեմ, եկեք»:

Դրանից հետո մի ուրիշ դեպք էլ եղավ, որ մեզ ստիպեց վերջնականապես հավաքվել ու գալ: Մեր թաղում մեկը բեռնատար մեքենա ուներ: Ամեն օր որ թաղից դուրս էր գալիս, մեքենայով մեր տան անկյունի պատին քսվելով գնում էր, մենք ձայն չէինք հանում, մի օր էլ պապաս վարորդին ասաց՝ Վալո՛ր, մի քիչ զգույշ, էի, էնքան ես ավտոյով դպել, ես պատի քարն արդեն ընկնում է: Եղ մարդու դուրը չի գալիս պապայիս ասածը: Մի օր էլ հայրս առավոտ շուտ այցելում է իր ծանոթներին, ասում է՝ ժամը տասներկուսին կգամ: Սպասում ենք, տասներկուսին չի գալիս, իր բոլոր ծանոթների տներով մեկ փնտրում ենք՝ պապաս չկա: Ոստիկանությանն ենք լուր տալիս, մեկ էլ գիշերվա ժամը երեքին ներս է մտնում: Ուրախացած վազում ենք, դիմավորում, պապաս պատմում է, որ մեր այդ հարեւանի հանճարարությամբ հինգ հոգով իրեն փողոցից բռնել, տարել են Փարոսի անտառը, որ սպանեն: Ուրեմն, այդ հինգ հոգու մեջ մի մարդ պապայիս ճանաչել է՝ ասել է՝ ես խելոք մարդու՞ն պիտի սպանենք, անկարելի է, սա շատ բարի մարդ է, ու չի թողել պապայիս դիպչեն, թե չէ պապաս սպանած կլինեին: Այդպես, այս դեպքից հետո մենք դիմեցինք ՕՎԻՐ<sup>15</sup>, թղթերն էլ մեր բախտից չորս ամսից եկան ու մենք լքեցինք Հայաստանը:

## Վերադարձ դեպի Լիբանան

1980 թվականին ետ եկանք Լիբանան՝ Այնճար: Տատիկս երեւանում արդեն մահացել էր, այնտեղ թաղեցինք: Մեծ քույրս ամուսնացել էր Երեւանում, ինքը մնաց, մենք բոլորով եկանք, եղբայրս չէր ուզում գար, նոր էր ամուսնացել, ինքնաթիռում կնոջն ասաց՝ Մանուշ, մի՛ մտածիր, գնանք, շուտ հետ կգանք: Այդպես էլ եղավ, եկավ, շատ չդիմացավ Այնճարում, հետ գնաց Երեւան, մեր տունը այնտեղ մնացել էր, մինչև հիմա եղբայրս երեւանում է: Մի հետաքրքիր բան էլ ասեմ, եղբայրս չսիրեց Լիբանանը, բայց իր աղջիկը՝ Նվարդը (մամայիս անունն են դրել) մի քանի տարի առաջ մեզ այցի եկավ, այնքան սիրեց, որ այստեղ էլ ամուսնացավ, այս-

տեղ էլ ապրում է: Այն ժամանակ, որ եկանք Այնճար, ամենաուրախը ես էի, քսանհինգ տարեկան էի, նոր միջավայր, նոր երկիր էր ինձ համար:

Եկանք մամայիս պապայի տունը, երկար ապրեցինք այդտեղ, մեր հարազատները մեզ շատ լավ ընդունեցին, տուն գնեցինք, սարքեցինք, նորից աշխատեցինք, հարմարվեցինք Էստոնի կյանքին... Գալուց հետո հայրս ու մայրս երկու անգամ գնացել են Հայաստան, մեծ քույրս մեր գալու ժամանակ ամուսնացած էր, ընտանիք ուներ, այնտեղ էր մնացել, իր ու եղբորս մոտ էին գնում, հիմա քույրս Հայաստանում չէ, Ամերիկա է գնացել: Հայաստանում միայն եղբորս ընտանիքն է հորեղբորս կինն էլ, որ արդեն ծեր է, էլի Ամերիկայում է: Ես էլ մամայիս ու պապայիս էի պահում, իմ կյանքն էլ չդասավորվեց, չամուսնացա, շատ նվիրվեցի մամայիս ու պապայիս, ասում էի՝ իրենք մեզ համար այսքան չարչարվել են, ես իրենց պիտի պահեմ:

### **Էլիզի մանկական հիշողությունները՝ Սիբիրից**

«Չնայած Սիբիրում ես շատ փոքր էի, բայց մի քանի բան հիշում եմ այնտեղից: Հիշում եմ, որ քրոջս՝ Ալիսի հետ մի օր թեյնիկը վերցրել, անտառ էինք գնացել՝ սմարոդինա հավաքելու, թեյնիկի կափարիչը կորել էր անտառում, ես ու քույրս նստել լացում էինք, վախենում էինք, որ տուն գնանք, մաման պիտի ծեծի, այդպես շատ վախեցած տուն գնացինք, բայց մայրս չբարկացավ:

Ուրիշ մի բան էլ եմ հիշում, ես ու եղբայրս՝ Պետոն, Սիբիրում ենք կնքվել: Մեր կնքահայրը մի ռուս մարդ էր, ամբողջ օրը քնում էր իրենց բակում, չէր աշխատում, մենք գնում էինք իր կոշիկները հանում, պահում էինք, կինը գալիս իրեն ճիպտոով ծեծում էր, ասում էր՝ ինչո՞ւ ես քնել, որ կոշիկներդ կորցնես:

Սիբիրից հիշում եմ, որ մի օր մեր այնտեղի տունը հրդեհվեց, ես պապաս մտավ կրակների մեջ, սկսեց տան ապրանքները դուրս նետել: Մարդիկ գոռում էին՝ Կարապետ, դուրս արի, պիտի այրվես, ասում էր, չէ՛ մեր Մուսա Լեռան գյուղի հողերի եւ այգիների թղթերը ներսն են, պիտի ազատեմ: Իրենք, որ Մուսա լեռից Լիբանան էին եկել, այնտեղ մեծ հողեր եւ այգիներ են ունեցել, դրանց սեփականության թղթերը հայրս իր հետ Լիբանան էր բերել, հետո էլ Սիբիր էր տարել, հույսով, որ մի օր կվերադառնան եւ այդ թղթերով կտիրանան իրենց հողերին: Այդպես էլ այդ թղթերը չկարողացավ փրկել, այրվեցին, գնացին: Պապայիս մազերը այդ հրդեհից այրվեցին, հետո էլ նորմալ մազեր չաճեցին:

Հիշում եմ, որ տատիկս պապիկիս հետ Սիբիրում չէր խոսում, խռով էր: Նույնիսկ պապիկս հիվանդացավ, անկողին ընկավ, տատիկս հետը չխոսեց, այդպես էլ մինչեւ մահ խռով մնաց: Ծատ նեղ-

ված ու վիրավորված էր, որ պապիկս համաձայնել է ներգաղթել, ընտանիքին բերել է: Մամաս էր պապիկիս պահում հիվանդ ժամանակ, տատիկս այդպես էլ մինչեւ վերջ չխոսեց պապիկիս հետ:

Մի օր էլ մեծ քույրս հարեւան գյուղում կորել էր: Ինքը մեծ էր, դպրոց էր գնում, մենք դեռ փոքր էինք: Մեր գյուղում դպրոց չկար, իրեն մեր հարեւան գյուղի դպրոց էին ուղարկում, հետո մամաս գնում, բերում էր: Մամաս իրեն հանձնարարել էր, որ ինչքան էլ ուշանամ, դու ոչ մի տեղ չպետք է գնաս, դպրոցի մոտ ինձ կսպասես: Մի օր էլ գնում է, որ բերի, տեսնում է քույրս չկա: Ձին քշելով ետ տուն է գալիս, քույրս չկա, լաց ու կոծ են, դնում, սկսում են փնտրել, եղ երկու գյուղի ժողովուրդը, ծիերը առած ընկնում են դաշտերը, որ քրոջս փնտրեն, ոստիկանությանն էլ են լուր տալիս: Դու մի ասա, քույրս էլ տեսնում է, որ մայրս ուշացել է, գլուխն առնում է, որ իբր մենակ տուն գա եւ այդ գյուղերի կարտոֆիլի ցանքերի մեջ մոլորվում է: Վերջապես ռուս գյուղացիները գտնում են իրեն, եւ հիշում եմ, որ պապաս մի շաբաթ ամեն օր սեղան էր դնում եւ այդ ռուս մարդկանց հետ օղի էր խմում: Այդ գյուղում (ուր քույրս դպրոց էր գնում) էլի այնճարցի մի ընտանիք է լինում, դրանից հետո մամայիս ասում է, երեխային թող մեր տանը, միայն տեղաշորը բեր, մենք ավելորդ տեղաշոր չունենք, մեր տանը կմնա, Էստոնից էլ դպրոց կգնա: Եղպես քույրս Էնտեղ մնում, Էնտեղից էլ դպրոց էր գնում, միայն կիրակի էին բերում մեր տուն... Այս էլ քույրիկիս պատմությունը: Մեծ քույրիկիս շատ եմ սիրում, որ երեւանում էր, ամեն տարի գնում էի իր մոտ, երբ որ Ամերիկա գնաց, էլ դրանից հետո երեւան չեմ գնացել:

# ՊԵՐՃՈՒՆԻ ՔՐԱԼՅԱՆ



Ներգաղթել է  
1946-ին  
Լիբանանից

Մեր հարեւանուհուն ասեցի՝  
Գյուլիզար տատիկ, Ստալի-  
նը մահացել է: Ասեց՝ սուս  
արա, բալա ջան, սուս ա-  
րա, Էստեղից ավելի վատ  
տեղեր կան...

«Ճակատագիրը չթողեց, որ ես սովորեմ: Բեյրութից Դիլիջան, Սի-  
բիր... չկարողացա սովորել: Եթե ես ուրիշ կյանք ունենայի, շատ  
բան կկարողանայի ասել»։ Պերճուհի Քրայանն այսպես է սկսում  
իր կյանքի պատմությունը, որը նրան բերել-հասցրել է եւս մի օտար  
երկիր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ ճակատագրով արդեն  
չորրորդ բնակավայրը:

Պերճուհու մայրն Ադանայից է: Ծնվել է Ցեղասպանության օրերին:  
Մեծացել է Կիպրոսում, ավարտել «Մելքոնյան» վարժարանը: Հոր  
ընտանիքը Թուրքիայի Էվերեք գյուղից է: Նույն պատճառով հայրը  
հայտնվել է Բեյրութում, այնտեղ ստեղծել իր ընտանիքը: Պերճու-  
հու մանկությունը լեցուն է մոր՝ վարժարանում սովորած դաշնա-  
մուրի հնչյուններով եւ հոր ֆրանսիական բանակում անցկացրած  
ծառայության մասին հուշերով:

Նրա հուշերի նոր շրջանը սկսվում է 1946-ից, երբ ընտանիքը հայ-  
րենադարձվում է Հայաստան: «Մեծ մամաս, որ մեզ մեծացրել էր,  
եւ մորս եղբայրները մնացին այնտեղ: Շատ դժվարությամբ բա-  
ժանվեցինք: Մայրս ընդհանրապես չէր ուզում գալ, բայց հայրս եր-  
կու ոտքը դրեց մեկ կոշիկի մեջ, որովհետեւ հայրենասեր էր, ասաց՝  
պետք է տանեմ իմ երեխաները, որ Հայաստանում կրթություն  
ստանան»։ հիշում է Պերճուհին:

Պերճուհու ընտանիքին հայրենադարձվելուց հետո պահողը նրա  
քեռու քրիստոնյա արաբ կինն էր: «Նա պապայիս ասաց՝ եթե իմա-  
նամ չհավանեմ կարող եմ հետ գալ, ես էլ երեխաներիս կհավաքեմ  
ձեզ հետ կգամ: Տե՛ս, թե ինչ խելացի խոսք ասաց այդ կինը»։ ավի-  
տսանքով հիշում է Պերճուհին:

Հայրենադարձ ընտանիքին տուն են տրամադրում Դիլիջանում:  
Երկու տարի անց նրանք տեղափոխվում են Երեւան: «Հայաստան  
գալուց առաջ մեծ մամաս բոլորիս համար տաք հագուստներ կա-  
րեց եւ դրեց սնդուկներում: Հայրս կոշիկի երեսպատող էր: Նրա մե-  
քենան փաթաթեցինք խալիի մեջ, որ հայրենիքում դրանով  
աշխատի»:

Երեւանի Արաբկիր թաղամասում, պետությունը վարկով հողամաս  
է տրամադրում: Պերճուհին սկսում է դպրոց հաճախել: Հայրն ա-  
մեն տեղ հպարտությամբ խոսում է ֆրանսիական բանակի ծառա-  
յության մասին: Մի օր էլ բակում նստած ասում է՝ տեր հայր լիներ,  
այս երեխաներին կնքեր: «Ես 6-րդ դասարանի աշակերտ էի, հու-  
նիսի 13-ի գիշերը, 1949 թվականի եկան, մեզ Սիբիր քստրեցին»:

Սիբիրում նրանց տանում են Ալթայի երկրամասի Սարոկինսկի  
շրջանի Չալեսիխա գյուղը: «Այստեղ յոթ հայ ընտանիք էր՝ երկու-



սը հայրենադարձ, հինգն՝ Արցախից՝ պատերազմում գերի ընկած զինվորների ընտանիքներ: Իջանք, մեզ փայտե մի տուն տվեցին: Օգնեցին ռուս դրացիները: Մեկը եկավ մի դույլ կաթ բերեց, մյուսը՝ կարտոֆիլ: Ասում էին, որ իրենց նախնիներն էլ ասքորյալներ են եղել»: հիշում է Պերճուհին:

Փոքր եղբայրն սկսում է հաճախել գյուղի դպրոցը: Բոլորն՝ անկախ տարիքից, մի դպրոց էին գնում, միասին նստում ու ռուսերեն սովորում: «Չրոյից վար մինչեւ 25 աստիճան ցուրտ տեսել ենք: Երբ դպրոց էինք գնում, մեր շնչից թարթիչների վրա սառույց էր կապում: Մենք Բեյրութում ե՞րբ էինք տեսել նման ցուրտ»:

Աշխատանքը կոլտնտեսության համար աշխօրով<sup>16</sup> նախատեսված հունձքն ու ցանքն էր, որի դիմաց ընտանիքը սնունդ էր ստանում, բայց պետք է աշխատեին նաեւ պաշար հավաքելու համար. «Մի օր խոտը հնձելիս գերանդիով ոտքս կտրեցի: Այնքան ցուրտ էր, որ չգագի: Մի քանի րոպե անց արյան տաքությունը զգալ տվեց, նոր տեսա, որ ոտքս կտրել եմ: Հայրս ուզեց տեսնել վերքս, ամաչում էի»: հիշում է Պերճուհին:

Մի օր հայրը Պերճուհուն խնդրում է Ստալինին նամակ գրել: «Ասեցի՝ ո՞նց գրեմ, մարդ միայն նրա անունը լսելիս վախենում է»: Այնուամենայնիվ գյուղապետից վերցնում է Կրեմլի հասցեն ու հոր անունից շարադրում նամակը՝ ներկայացնելով պատմությունն ու աքսորը: Հայրն ընկեր Ստալինից նախ ուզում է իմանալ իրենց մեղքը, հետո խնդրում տուն վերադարձնել: Նամակը մնում է անպատասխան:

Մեկ տարի անց հայրը կրկին խնդրում է գրել: «Փոստը հասնելու համար պետք է ոտքով չորս կիլոմետր գնայի, որ դրոշմանիշները



Այթայի երկրամասի Չարինսկի շրջանի (Նախկին Սորոկինսկի) Չայեսիխա գյուղը: 2016

կացնեի եւ ուղարկեի: Հիմա, որ աղջիկս այստեղ նամակներ է ուղարկում, հիշում եմ այդ բոլորը»: ասում է Պերճուհին:

1953-ին Ստալինը մահանում է: «Վախենում էինք իրար ասել այդ լուրը: Կովը կթելու համար գնացի գոմ, որը մեր դրացու ախոռի կողքին էր: Հարեանուհուն ասեցի՝ գիտե՞ս Գյուլիզար տատիկ, Ստալինը մահացել է: Ասեց՝ սուս արա, բալա ջան, սուս արա, էստեղից ավելի վատ տեղեր կան»: Երկյուղով մատը շրթունքներին է դնում Պերճուհին:

Վեց ամիս անց նա գրում է երրորդ նամակը: Ստացվում է պատասխան, թե ընտանիքի հարցն ուղարկված է Երեւանի ՆԳ նախարարություն. «Եւ գրված էր, որ դուք այնտեղից կստանաք Ձեր դրական պատասխանը: Այս մեկ բառը ինչքա՞ն հույս տվեց մեզ»: հրճվանքով հիշում է Պերճուհին: Երեք ամիս անց գալիս է ներման թուղթը, որը թույլ էր տալիս ցանկացած ժամանակ կոմենդատուրայից ստանալ փաստաթղթերն ու վերադառնալ Հայաստան: Սկզբում վերադառնում է մեծ եղբայրը, հետո՝ ամբողջ ընտանիքը:

Արաբկիրում կիսատ մնացած տունը աքսորի յոթ տարիների ընթացքում տրվել էր ուրիշի: Սկզբում ապրում են մի բարեկամի տանը, մինչեւ պետությունը նրանց նոր տուն է հատկացնում «3-րդ մաս» թաղամասում: Երեւանում աշխատում է որպես բուժքույր: Հանդիպում է մի այլ հայրենադարձի, որի հետ էլ ամուսնանում եւ ընտանիք է կազմում: 1974-ին Պերճուհու նոր ընտանիքն արտագաղթում է ԱՄՆ:

Հայրենիքի հանդեպ Պերճուհին ոչ գայրույթ, ոչ էլ վիրավորանք չունի: Իր կյանքի պատմությունը ճակատագիր է համարում. «Հայաստանն ինձ ամուսին տվեց եւ երկու երեխա: Որ ասեմ, ավելի լավ բան է տվել՝ չէ»:



# ՕՆԻԿ ԿՈՒՅՈՒՄՉԱՆ



Ներգաղթել է  
1962-ին  
Եգիպտոսից

Նամակ ստացանք, գրել էր,  
որ ամեն ինչ լավ է, թոշակը  
ստանում է: Խնդրում էր, որ  
փաստաթղթեր պատրաս-  
տենք՝ վերադառնա ընտա-  
նիքի մոտ՝ Եգիպտոս:

Եգիպտոսում թագավորի ժամանակ շատ լավ էր: Ժողովուրդները՝  
հայ, հույն, հրեա, ֆրանսացի, անգլիացի, համերաշխ ապրում էին:  
Արտասահմանյան բիզնեսներ կային, աշխատանքը լավ էր, վար-  
ձատրությունը նույնպես: Հեղափոխությունից հետո նեղություն  
տեսանք: Եգիպտահպատակներին պետական աշխատանք տա-  
լիս էին, բայց ռոճիկը՝ 10 ոսկի, չէր բավարարում անգամ ամենա-  
անհրաժեշտ կարիքները հոգալուն:

Ես դեղագործ էի, ստիպված գրաշարություն էլ սովորեցի: Կահի-  
րեում «Սավառնակ»<sup>17</sup> անունով հայկական շաբաթաթերթ կար:  
Գործից հետո այնտեղ էլ էի աշխատում: Շատ շուտ սովորեցի շար-  
վածքը, նաեւ խմբագրական որոշ գործեր էի անում: Հայաստանից  
ստանում էինք «Սովետական Հայաստան»<sup>18</sup>, «Երեկոյան Երե-  
ւան»<sup>19</sup> թերթերը եւ դրանցից արտատպումներ էինք անում: Ու-  
րեմն՝ պետք էր որոշ բառեր՝ հատկապես ռուսերենից փոխառ-  
նված, թարգմանել, որ տեղի մարդկանց համար հասկանալի լիներ:

Նյութական նեղությունը մի կողմից, մյուս կողմից նոր էի ամուս-  
նացել եւ կնոջս հետ մտածում էինք՝ ոնց անենք մեր երեխաները  
հայկական կրթություն ստանան, ուսումը շարունակելու հնար ու-  
նենան:


Երբ իմացանք, որ ներգաղթ է սկսվում, մենք էլ գնացինք սովետա-  
կան դեսպանատուն: Հա, ասեմ, որ Կահիրեում Ռուսական կենտ-  
րոն կար, կինս էդ կենտրոնն էր հաճախում, ռուսերեն էր սովորում:  
Դեսպանատանը մեզ շատ լավ վերաբերմունք ցույց տվին: Հակո-  
բով ազգանունով հայ աշխատող կար, հայերեն չգիտեր, բայց շատ  
օգնեց, որ մեր ունեցվածքն ապահով տեղափոխենք: Ձրի տեղա-  
փոխեցինք:

Ավելի վաղ Հայաստան հասած մեր ընկերները գրում էին, որ ար-  
դեն տուն են ստացել, ամեն ինչ լավ է, են 47-48-ի դժվարություննե-  
րը Ստալինի մահվանից հետո վերացել են: Դե, մենք էլ, ասեցի՝ հայ-  
րենասիրությունը մեզ մոտ մի քիչ բարձր էր, այսինքն, ավելի հոգ  
կտանեինք հայրենիքին, քան թե՝ ուրիշները: Ամերիկա գնալու  
հնար էլ կար, եղբայրս, օրինակ՝ թղթերը ստացավ ու գնաց, բայց  
մենք Հայաստան էինք ուզում:

Ես գնալու ուրիշ պատճառ էլ ունեի: 47-ին, երբ սկսվել էր Մեծ Հայ-  
րենադարձությունը, մայրս հորս ասել էր՝ գնա Հայաստան, տունն  
ու տեղը կարգադրի, մյուս քարավանով մենք էլ գանք: Հայրս միայ-  
նակ գնացել էր, բայց մինչեւ լուր կստանայինք հայրենադարձու-  
թյունը դադարեցվեց<sup>20</sup>, էլ քարավան չեղավ: Հետո իմացանք, որ  
հորս Սիբիր են աքսորել: Մի օր էլ լուր եկավ, թե իբր Սիբիրում մա-  
հացել է: Իրականում չէր մահացել: Ստալինից հետո ազատվել, ե-  
կել էր Երեւան: Ոչ տուն ուներ, ոչ ընտանիք, ոչ հարազատներ,

ասել էր՝ ես այստեղ չեմ կարող մնալ, վեր էր կացել, գնացել Ֆերգանա (Ուզբեկստանի ԽՍՀ):

Մի օր Ֆերգանայից նամակ եմ ստանում, թե այստեղ եմ եւ, որպեսզի ինձ թոշակ տան, փաստաթղթեր են պետք, որ ես նախկինում (թեկուզ օտար երկրում) աշխատել եմ: Կահիրեում ինքը լավ վարպետ էր, սառնարաններ էր շինում, նորոգում, բայց իր աշխատատեղն արդեն չկար: Գնացի ընկերոջ մոտ, որ կահույքի արտադրամաս ունեն, ասեցի՝ էսպես-էսպես հորս աշխատանքի մասին թուղթ է հարկավոր: Սիրով համաձայնեց: Գրեց թուղթը արաբերենով ու հայերենով 20 տարվա համար, նոտարով հաստատեցինք, առա-գնացի սովետական դեսպա-նատուն: Դեսպանատունն ուղարկեց:



Նամակ ստացանք, որ ամեն ինչ լավ է, թոշակը ստանում է: Խնդրում էր, որ փաստաթղթեր պատրաստենք՝ վերադառնա ընտանիքի մոտ՝ Եգիպտոս: Փաստաթղթերը պատրաստեցինք, բայց այս անգամ վախեցա դեսպանատան միջոցով ուղարկել, դիրեքթ (ուղղակի) դրկեցի: Թղթերը ստացել էր, դիմել էր, բայց մերժել էին, ասելով՝ դու Եգիպտոսից եկել ես, հիմա ինչո՞ւ պիտի հետ գնաս:

Ինքը քույր ուներ, որը եղեռնի ժամանակ փախել էր Բուլղարիա, իսկ հայրս եւ փոքր եղբայրը եկել էին Եգիպտոս: Մեծ հորս սպանել էին թուրքերը: Քանի որ Եգիպտոս չկարողացավ գալ, հայրս քրոջը նամակ է գրում, թե թղթեր ուղարկեք, գամ Բուլղարիա: Այդպես, թույլ են տալիս, գնում է քրոջ մոտ:

Երբ մենք արդեն Հայաստանում էինք, անընդհատ փորձում էինք Բուլղարիա գնալու արտոնություն ստանալ: Երկու տարի հետո հրաման տվին՝ կարաք գնաք, բայց մինչեւ հրամանը ստացանք՝ հայրս մահացել էր եւ թաղել էին արդեն: Գնացինք, տեսանք բոլորին, գերեզմանն էլ գնացինք: Տասնինը տարեկան էի, որ հայրս գնաց, քսան տարի էր անցել արդեն:

Հարություն  
Կույումջյանը  
որդիների հետ  
Հայաստան  
գալուց առաջ:  
1947, Կահիրե

Հայաստանի Ս.Ս.Ռ. ներքին գործոց Մինիստրություն  
Հատուկ բաժնի պետ ընկեր Աբազյանին

Գույումճիյան Հարություն Օսնիկովիչից

Դիմում

Ծնվել եմ Թուրքիո Պոլիս քաղաքում 1891 թվին, որտեղից գաղթել եմ Եգիպտոս 1911 աշխատելով որպես արհեստավոր:

1948 թ. Եգիպտոսի Կահիրե քաղաքից եկել եմ Հայաստան եւ բնակություն հաստատելով Երեւան քաղաքում, աշխատել եմ քաղսովետին կից մետաղյա իրերի (կերասինկայի ճյուղի) կոմբինատում որպես թիթեղագործ:

1949 թ. Հունիսի 14-ին Երեւանից փոխադրել են ինձ Ալթայան երկրամաս բոլորովին անհայտ պատճառով:

Ալթայի երկրամասի Չալեսովո գյուղում աշխատել եմ շրջանային կոմբինատում, որպես դեղագործ 1949 թվից մինչեւ 1955 թ.

Հիվանդությանս պատճառով դիմեցի տեղի օրգաններին խնդրելով ինձ տեղափոխելու տաք երկիր, սիրով ընդունեցին իմ խնդիրս եւ ինձ թույլ տվին տաք երկիր գալու:

Այժմ գտնվում եմ Ուզբեկստանի Ս.Ս.Ռ. Ֆերգանա քաղաքում:


Խնդրում եմ չմերժեք դիմումս եւ ազատեք ինձ Երեւան հարազատներիս մոտ գալու:

Դիմող Գույումճիյան Հարություն Օսնիկովիչ

11.07.1955թ.

Адрес мой  
Уз. С.С.Р. город Фергана  
маслазаводская  
Одилькид пошта  
дава Стреловани  
Туюмеджид Артюн  
Онникович

# ՆԱՍԲԱՐՁՈՒՄ ՆԱՍԲԱՐՁՈՒՄՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Հունաստանից

Ոչ մի բնակիչ, ոչ մի բան,  
մաս-մաքուր տայգա, մեկ էլ  
մենք: Վերել ես նայում՝ եր-  
կինք, չորս կողմը որ նայում  
ես՝ ծառեր, մարդու մեկու-  
կես բոյին խոտ:

Ինչի համար աքսորեցի՞ն: Աքսորեցին, որովհետեւ շատ էինք խո-  
սում: Հետո, փախնողներ շատ եղան: Սահմանը անցնում էին՝  
փախնում կամ բռնվում: Պատերազմի գերիներին տանում էին, մե-  
զի չպիտի տանեի՞ն:

Մենք հակասովետական մարդ էինք իրանց համար: Նստում էինք  
տղերքի հետը դուրսը, երգում էինք՝ մնդրանիկը քաջ, վարտիքը  
կանաչ... Մեկ էլ՝ չլափ... բռնում էին: Իրավունք չունես երգելու, տա-  
նում ենք քաղմաս: Հարցուփորձ էին անում, թողնում, ի՞նչ պիտի  
անեին:

Հայրս կոմունիստ էր Հունաստանում: Որ եկանք ստեղ [Հայաս-  
տան] իրան ասին՝ արի դիմում գրի մեր Սովետական Հայաստա-  
նի կոմունիստականի շարքերը մտի: Ասեց՝ չէ, մի հատ են կոմու-  
նիստներից հանգստանամ, նոր կմտածեմ: Երեք ամիս հետո տա-  
րան: Հրաման էր, որ գերիները պիտի աքսորվեն, գերիների հետը  
մեզ էլ խառնին՝ յալլա:

Եդ ամեն ինչը մինչեւ հիմա աչքիս դեմն ա: Ժամը՝ 2 անց 45 րոպե  
էր, մեկ էլ՝ դուռը խփեցին, հունիսի 13-14-ի գիշերը: Դուռը խփե-  
ցին, հայրս վեր կեցավ՝ ո՞վ է: Գործկոմի նախագահի տեղակալը  
(էն ժամանակ գործկոմ էր, Բերիայի շրջանի գործկոմ) հայերեն ա-  
սեց. «Հովհաննես, բաց ըրե, մոտս զինվորներ են՝ ռուսական, դու-  
ռը կջարդեն, կմտնեն, դու խելոք բաց ըրե, ես ստեղ եմ»: Պապան  
բաց արեց, երեք հոգի զինվոր ավտոմատներով ներս մտան: Ռու-  
սերեն էին խոսում. Ե, ախպարն ո՞ւր, ռուսերենը ուրտե՞ր, սկի մի  
հատ ջուրն՝ ինչ ասել ա, չէինք իմանում:

Եդ հայ աշխատողը թարգմանեց, ասեց՝ տղամարդիկ թող պատի  
տակը կայնեն: Եդ ժամանակ ես 15 տարեկան էի: Ես ու հայրս պա-  
տին կայնանք, իսկ եղբայրս էդ ժամանակ 2.5 տարեկան էր: Մեկ  
էլ, մորս ասին՝ 15 րոպե քեզ ժամանակ, երեք հոգի եք՝ փոքրին չենք  
հաշվում, երեք հատ բոխչա հավաքի: Մայրս ի՞նչ արեց, առաջի  
հերթին հագնելիք-մաքնելիք, մեկ էլ տեղաշորը հավաքեց, էլ ուրիշ  
ի՞նչ պիտի աներ:

Ուղիղ ժամը երեքին մեզ դուրս հանեցին տանից: Դուրս հանեցին,  
էն ГАЗ-моторка (սովետական բեռնատարի տեսակ) մեքենանե-  
րը կային, բարձին մեջը, բերին Ուլուխանլու (Ներկայիս Մասիս)  
կայարանը: Վագոնին դեմ արեցին, կապոցները զցեցին, մեզ էլ  
ներս տարան: Վագոնի մեջ արդեն ժողովուրդ կար: Էլի բերեցին.  
сеledка-ի (պահածոյացվող ձկան տեսակ) նման էդ վագոնի մեջը  
ժողովուրդին որեք (մամլում, խտացում) արին: Մի հատ էլ՝ ведро  
(դոյլ) բերեցին հատուկ, ասին՝ սա ձեր գուգարանն ա: Դրին վա-  
գոնի մեջտեղը, նայի՛, ի՞նչ անշնորհքություն: Հայուհի նամուս ու-  
նեցող կանայք, одеяло-ով (բրոյա կամ բամբակե ծածկոց) չորս

կողմը բռնում էին, որ մեկն իրա կարիքը հոգա: Ի՞նչ անեին խեղճերը:

Դուռը եսքան էր բաց [ծեռով նեղ ճեղք է ցույց տալիս], ավել չէին բացում: Ամեն մի վագոնի վրան ոռощадка (հարթակ) կար, պլաշտադեկի վրեն երկու հատ զինվոր էին՝ ավտոմատներով:

Գնում էինք, հա՛, գնում էինք: Հունիսի 14, շոգ, խեղդոց, դուռը փակ, լիքը ժողովուրդ: Ծերերը չէին դիմանում, մարդկանց աչքի դեմը խեղդվում, մեռնում էին: Որտեղ որ կայնում էինք՝ солдат-ը (զինվոր) գալիս էր ասում էր՝ труп есть? (դիակ կա՞): Դուռը բացում էին, մոտեցնում էինք դիակը, իրանք վերցնում էին, երկաթգծի երկարությամբ դնում էին: Մերս ասում էր՝ թուրքը որ արքայություն էր, Դեր Չորում մեռելներին հողին կուտայինք, ստեղ հող էլ չկա:

Վերջը, որ հասանք Ալթայ, սկսեցին վագոններն անջատել: Երևեկ նրանց, ում կոլխոգ-մոլխոգ տարան: Մեզ՝ 60 ընտանիք (հիմնականում ներգաղթողներ), ամայի մի տեղ իջեցրին: Միլիցեք (ոստիկաններ) եկան, արդեն սալոթաթ չկար, միլիցեքը մեզ պահակություն կրնեին, որ չփախնենք: Մի հատ солдатская кухня (զինվորական դաշտային խոհանոց), մեկ էլ ջուր բերին: Մի շաբաթ էդպես մնացինք: Դրանից հետո, մեզ ավտոները բարձին, 80 կմ տարան, մինչեւ Կորդոն: Երկու շաբաթ էլ էնտեղ պահեցին:

Արդեն անտառի բերանն ենք, տայգա, ոչ թե անտառ: Երկու շաբաթից հետո տրանսպորտ բերեցին, 1.5 մետր լայնության թրթուրներն էին, որ ճահիճների մեջով անցնում էր: Սահնակների նման բաներ կային դրանից կապած, ժողովրդին բարձեցին՝ իրանց վե-



Համբարձումը  
աջից առաջինը  
տրակտորիստների  
բրիգադում:  
1954, Սորոկինո



Համբարձումը  
աջորից հետո  
Նովոսիբիրսկում:  
1957

չերով-բաներով, 12.5 կմ էդ ճահիճի մեջով տարան: Էդ տրակտորները գիտեին ոնց պիտի էթային, գնացին: Ճահիճը պրծավ, արդեն բարձունք էր, մի քիչ բաց տեղ էր, մեզ էնտեղ իջացրին: Ոչ մի բնակիչ, ոչ մի բան, մաքուր տայգա, մեկ էլ մենք: Վերեւ ես նայում երկինք, չորս կողմը նայում ես՝ ծառեր, մարդու 1.5 բոյին խոտ: Тайга и лес (տայգա եւ անտառ)... ո՞րն ա դրանց տարբերությունը: Տայգան հենց էդ խոտն ա: Հերիք ա մի 100 մետր խորանաս՝ վերջ, կորար, հետ գալ չկա:

Մի շաբաթից, մեկ էլ տենանք, էդ ճահճազ տրակտորն էլի եկավ: Այլուր էր բերել, ժողովրդին երկու-երկու կիլո՝ ալյուր բաժանեցին, սեւ, տարեկանի ալյուր: Բայց ի՞նչ, ժողովուրդն աղ չունի, այլուրը, կարտուլ-մարտուլը բերում են, բայց աղ չկա, դե՛ ապրի: Առանց աղի կիսատ-պռատ մնունը. ժողովրդի ոտները սկսավ ուռել, մարմինը սկսավ ուռել:

Շաբաթը մեկ գալիս էին ստորագրություն առնում, էթում էին: Չգուշացնում էին, մի շաբաթ չստորագրեիր, պիտի ման գան քեզ՝ розыск (հետախուզում): Ոչ մի տեղ չպիտի գնաս, որ բռնեցին՝ 25 տարի [կատանաս]:

Մի երեք շաբաթ անցավ, մի հատ вагончик (ժամանակավոր տնակ) բերեցին-դրեցին: Մեջը մի հատ հաշվապահ, մի հատ էլ леспромхоз-ի (անտառ արդյունահանման տնտեսություն) դիրեկտոր: Մի քանի հատ топор (կացին) բերեցին, մի հոգուն մի հատ տապոր տվեցին, երկու հոգուն՝ մի հատ սղոց: Բա, էս ծառերը շուռ տվեք, сучки (ճյուղերը) կտրեք, կեղեւը մաքրեք: Համարյա մի ամիս աշխատում էին, բալանդա-մալանդայով ժողովրդին խաբում էին՝ փող-մող չկա, բան չկա: Տեղացիները վարժված էին, սովոր էին տապորին, մենք տապորը չգիտեինք՝ ինչ ա, չէինք կարում բանացնել: Հայրս երկու շաբաթից տվավ ծունկը բացեց: Մի շաբաթից տարան բժշկի, բայց գանգրենան իրա գործն արել էր արդեն, ոտը փտում էր:

Հետո մի հատ մեծ բարաք շինեցին: Մի հատ бочка (տակառ) էս ծերում դրին, մի հատ՝ էն ծերը: Արդեն աշուն ա, ասին՝ вот вам лес (ահա, անտառը), տապորն առեք, կտրեք, տաքացեք: Казарма-ի (գորանոց) նման տեղ էր, մի կողմի նառերին (տախտակամած) կանայք ու երեխեքն էին քնում, մյուս կողմում տղամարդիկ: Այդպես ծմեռը հանեցինք: Գարունը եկավ՝ ֆինսկի դոմիկներ (ֆիննական տնակներ) բերեցին, մարդկանց դրանց մեջը տեղավորեցին, արդեն եղավ մաքուր լեսարոմիտո: Երկաթգիծն էլ մոտեցավ, եղավ գյուղ, անունը դրին Տյագուն: Մեր կտրած գերաններն արդեն վագոններով էին տանում: Սկսե-



Աշխատանք անտառում: 1950-ականներ, Ալթայի երկրամաս




Համարձումը շարքերի առջեւում, կենտրոնում, տրակտորիստների դասընթաց: 1954, Չալենովկի շրջան

ցին աշխատավարձ տալ, խանութ, ճաշարան սարքեցին, կամաց-կամաց ժողովուրդը սկսեց յուր գնալ:

Դպրոց էլ բացեցին, ռուսական դպրոց: Ես էլ գնացի, բայց ռուսերեն մի բառ չգիտեի: Երեկոյան դպրոց էր, для молодежи (երիտասարդների համար): Դե էս արդեն մեծ էի, բայց մտա սովորելու: Բացի պատմությունից ու լեզվից ամբողջ աշխարհում մնացած առարկաները նույնն են, չէ՞: Ֆիզիկան, մաթեմատիկան, երկրաչափությունը դեռ Հունաստանից լավ գիտեի, բայց ռուսերենը չէր ստացվում: Մի անգամ контрольный (ստուգողական) գրեցինք, դասատուն երբ թերթիկս վերադարձրեց, չկարողացա տեսնել՝ որտեղ եմ ես գրել, որտեղ ինքն ա կարմիրով նշել: Թելադրություն... ոնց լսում, ըստեց էլ գրում էի: Ասում էր՝ вода (ջուր), գրում էի՝ վադա, բայց պիտի վոդա գրեի, չէ՞: Ասում էր՝ солнце (արեւ), գրում էի՝ սոնցե, բայց պիտի լիներ սոլնցե, չէ՞: Եղպես, տասն ավարտեցի, գնացի ինստիտուտ:

Ու մեկ էլ Ստալինի մեռնելն եմ հիշում: Մարտի 5-ն էր, միտինգ բան արեցին, բոլորը հավաքվեցին, մենք՝ չէ: Գլխարկներն էին հանում, մենք չէինք հանում, հայերից ոչ մեկը չհանեց: Դրանից հետո սկսեցին ազատել, մարդկանց թողնել, որ Հայաստան գնան: Ես արդեն լավ գործի էի, Հայաստան չգնացի, մնացի մինչեւ 1971 թիվը, մինչեւ երեխեքս մի օր լացելով դպրոցից տուն եկան ու հարցրին՝ պապ, ինչի՞ եմ մեզ ասում черножопый (Ռուսաստանում կովկասցիների տրվող նվաստացուցիչ բնորոշում, որը բառացիորեն նշանակում է սեւ հետույք ունեցող):



ՍՍՌՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ ընկ. Վորոշիլովին

հատուկ տեղահանված  
Համբարձումյան Հովհաննես Համբարձովիչից  
բնակվող Տյագուն կայարանում,  
Սորոկինի շրջանի անտառարդտնոտ, Ալթայի երկրամաս

Դիմում

Զգիտեմ ինչ պատճառով 1949-ին ինձ ընտանիքով արքայից ելն Ալթայի երկրամաս: Ինձ համար նույնպես զարմանալի է, որ առանց դատի եւ քննության է տեղի ունեցել այդ ամենը, առավել եւս, որ ես 1932-ից եղել եմ կոմունիստ: Երբ դեռ ապրում էի արտասահմանում, որպես բոլշևիկ 2 անգամ ձերբակալվել եմ (1937-39 եւ 1942-43), 1941-45 պատերազմի ժամանակ Հունաստանում եղել եմ պարտիզան, վիրավորվել եմ, ստացել եմ կանտոնապահ, կորցրել առողջությունս եւ վերջապես եկել Սովետական Հայաստան 1947-ին, իսկ մեզ արքայից: Կարելի է ասել դեռ չի չորացել գերմանացիների արյունը իմ ձեռքերի վրա: Իսկ այստեղ իմ առողջությամբ չեմ կարողանում ապրել եւ ամենակարեւորը աշխատել:

Սույն դիմումով խնդրում եմ ձեզ բացատրել ինձ՝ ինչո՞ւ եմ ինձ ընտանիքով արքայից ելն Ալթայի երկրամաս:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ  
Գերագույն դատարանի  
քրեական գործերի դատական կոլեգիայի  
որոշումից

[հատված]

Համբարձումյանը եւ նրա ընտանիքի վերոհիշյալ անդամները 1949-ի հունիսի 14-ին արտաքսվել են Ալթայի երկրամաս այն պատճառով, որ Հովհաննես Համբարձումյանը Հունաստանում գտնված ժամանակ մինչեւ 1944 թ. հանդիսացել է կոմունիստական կուսակցության անդամ, որից հետո անցել է դաշնակների կողմը եւ դաշնակցական թերթերը նրա մասին հոդվածներ են գրել որպես դաշնակցական կուսակցության նվիրված անդամի:

Համբարձումյանի ընտանիքի արտաքսումը հետագայում 1949-ի նոյեմբերի 30-ին ձեւակերպվել է ՍՍՀՄ ՊԱՆ-ը կից ՀԽ (Հատուկ խորհրդակցության) որոշմամբ: Լսելով զեկուցումը, դատախազի եզրակացությունը՝ բողոքը պաշտպանելու մասին, ծանոթանալով գործի նյութերին, դատական կոլեգիան գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետեւյալ պատճառաբանությամբ:

Գործում դաշնակների կուսակցությանը Համբարձումյանի պատկանելու մասին բացի օպերատիվ տվյալներից, այլ տվյալներ չկա: Բացի այդ, եղած զեկուցագրերից չի երեւում, որ Համբարձումյանը եղել է դաշնակցության կուսակցության անդամ, իսկ Սովետական Հայաստան վերադառնալուց հետո Համբարձումյանի դաշնակցական գործունեության մասին այլեւս տվյալներ չեն ստացվել:

Այսպիսով Հովհաննես Համբարձումյանը եւ նրա ընտանիքի անդամները Ալթայի երկրամաս են արտաքսվել անհիմն կերպով:

Ելնելով վերոգրյալներից եւ ղեկավարվելով ՀՍՍՀ քրդատօր 375 հոդվածով, ՀՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

Որոշեց

Բեկանել ՍՍՀՄ ՊԱՆ-ը կից ՀԽ 1949թ. նոյեմբերի 30-ի որոշումը՝ Հովհաննես Համբարձումի Համբարձումյանին, Տիրուհի Մելքոնի Համբարձումյանին, Համբարձում Հովհաննեսի Համբարձումյանին, Մելքոն Հովհաննեսի Համբարձումյանին Ալթայի երկրամաս արտաքսելու մասին եւ գործը հանցակազմի բացակայության պատճառով մերժել:

09.09.1968թ

# ՍԱՐԳԻՍ ՄԱՉՄԱՆՅԱՆ



Ներգաղթել է  
1946-ին  
Ռուսիայից

Մեզ տեղավորեցին բարաքներում, որտեղ երկաթյա երկու տակառ կար՝ վառարանի տեղ: Ժողովուրդը հավաքվում էր, վրան կարտոֆիլ էին խորովում, խոսում, երգում, անեկդոտներ պատմում...: Բայ՛ որ սաղ մի հալի են ըլնում, երջանիկ են ըլնում:

1946 թվին յոթ տարեկան էի, որ «Ռոսիա» նավով Ռուսիայից եկանք Բաթումի: Նավ նստելու պահին մեզ հասկացրին, որ արդեն սովետական քաղաքացի ենք, իջնել չի կարելի: Տեղ հասնելուն պես մեր մոտի սնունդը զցեցինք ծովը: Իրանց տվածը լավը չէր, պանրից այնպիսի հոտ էր գալիս, որ ուտել չէր լինում, ես լացում, հավի բուդ էի ուզում:

Նավահանգստից դուրս գալու իրավունք չունեինք՝ ցանկապատված էր: Հայրս հաջողում է անցնել պատր: Ու տեսնում է՝ կանայք կանալ (ջրանցք) են փորում՝ քլունգներով, բահերով՝ տաժանակիր աշխատանք: Ինքն ուրիշ ձեւ էր պատկերացնում, բայց ինչ որ տեսավ, հակառակ պատկերն էր: Հայրս գնաց, իր ոսկե ժամացույցը ծախեց, շուկայից ուտելիք բերեց մեզ համար:

Հայրս կոմունիստ էր: Հորեղբայրս Նույնպես կոմունիստ էր՝ Ռուսիայում համալսարան ավարտած, Վազգեն վեհափառի ընկերն էր եղել: 1945 թվին Ռուսիայի կանանց միությունը օգնում էր պատերազմում հաշմանդամ դարձած հայերին, որոնք բուժվում էին Կոստանցայի հիվանդանոցներում: Մայրս էլ մի սպայի էր խնամում: Պատմում էր՝ երբ իմացավ, որ պիտի գնանք Հայաստան, համազգեստի գրպանից մի կտոր սել հաց հանեց ու ասեց՝ սրա համար ութ ժամ պիտի աշխատեք, ո՞ր էք գնում: Մայրս ինքն էլ դեմ էր գնալուն, քանի որ բոլոր հարազատները մնում էին Ռուսիայում: Երբ հորս հետ պահելու համար՝ պատմեց սպայի ասածը, հայրս ատրճանակը հանեց, թե՛ պտի էդ սպայի անունը տաս, դաշնակ է, հակապրոպագանդ է անում:

Երեւանում մեզ մի տեղ բնակեցրին, Պռոշյան փողոցի մոտերքը: Եդ տեղ այգիներ կային, գերեզմանոց: Ջիան ախոռներ էին եղել՝ տափակ, հողե կտուրով. անձրեւի ժամանակ կաթում էր: Եդ ընթացքում մեզ համար տուն էր սարքվում:

Հայրս իր հետ բերել էր 120 խմ տախտակ (կեսը՝ պետությանը նվեր), 30 տոննա արմատուրա՝ բետոնի համար, քանի որ լսել էինք՝ Հայաստանում երկաթ չի ճարվում (դրա կեսն էլ պետությանը նվեր): Հայրս առանձին տուն էր ուզում կառուցել, բայց մայրս ուզեց կոլեկտիվ շենք կառուցենք, որ մարդիկ լինեն, հարեւաններ լինեն, չէ՞ որ ինքը մենակ էր:

Շենքի կառուցումը սկսվեց: Լիազոր նշանակեցին Ստեփան Հաջյանին: Ո՞վ չգիտեր՝ լիազոր, թաղային՝ աչքն ու ականջն են կառավարության, իսկ Հաջյանը լավ աչք ու ականջ էր: Շինարարության մեջ խարդախություն եղավ, շինանյութ պակասեց, իսկ հայրս նկատել էր, թե որտեղ է ծախսվել:

Արդեն նոր տանն ենք ապրում, գալիս են իբր ստուգելու (դրանցից մեկը Հաջյանի քույրն էր), ուզում են ինչ-որ կվիտանցիա (անդոր-



րագիր), ասում են՝ լիմիտը լրացված չի: Տանը ես ու մայրս էինք, մենք էլ՝ միամիտ. ի՞նչ գիտենք՝ լիմիտն ինչ է: Ասում են՝ դուք պիտի լրացնեք: Այս ասելիս Հաջյանի քույրը աչքով արեց մյուսին: Դանկատեցինք թե՛ ես, թե՛ մայրս: Կասկած չստեղծելու համար մեր տնից դուրս եկան, դիմացի դուռը թակեցին:

Ութ-տասը օր հետո, գիշերը զարթնում ենք աղմուկից: Դուռը թակում են: Մայրս հորս է արթնացնում, դուռը բացում են: Երկու գինվորական են՝ համագգեստով, մեկն էլ՝ զենքով: Իբրեւ հակասովետական գրականություն ունենք, սկսեցին արկղերը քրքրել, գրքերը հանել, բոլորը՝ Ստալին, Լենին, Մարքս: Ո՞վ ա ասել, որ ես մարդը դաշնակ ա...: Վերջը՝ հավաքվե՛ք, գնալու եք ուրիշ տեղ ապրեք:

Մայրս իրան կորցրեց, հայրս մանթրաշ ընկավ: Մենակ 11 տարեկան քույրս մեր



Չայրը՝ Անդրանիկ Մազմանյանը (կենտրոնում), ռուս հարեանների հետ: 1954, գյուղ Ռասիպնայա

եղած-չեղածը հավաքեց մի սավա-նի մեջ: Եթե քույրս չլիներ, երեւի բոբիկ գնայինք: Անաստվածները գոնե մի ձեւ հասկացնեին, թե ուր են տանում: Երբ գռուգավիկ (բեռնատար) մեքենան սստեցինք, նայեցինք վերեւ, Հաջյանները նայում էին: Մենք իրանց տեսանք, իրանք՝ մեզ:

Տանում են բեռնատար գնացքով, հաճախ կանգառներով ու երկա՛ր ճանապարհ: Մարդիկ զուգարան են ուզում: Դաշտում, վագոնների տակ. մի վագոնի տակ տղամարդիկ, մի քանի վագոն այն կողմ կա-նայք:

Աքսորի ժամանակ շատերս փող չունեինք, ու՛քեր ունեին, իջնում էին, երեխաների համար կարկանդակ էին առնում: Մենք սոված էինք: Գնացքում մի մարդ կար, Ահարոն անունով, ինքը հաշմանդամ էր, ու-ներ չորս երեխա: Երբ իմանում է, որ հայրս մեր վերջին շորերն է ծախում, որ ուտելիք առնի, զայրա-նում է. «Դու երեխա սպանո՞ղ ես, ինչու ձայն չես հանում»: Ու եղ մարդը օգնում է մեզ, գնացքի մյուս ըն-տանիքներին: Հորս 300 ռուբլի փող




Սարգիսը՝ երկրորդ շարքում ձախից առաջինը, ընկերների հետ: 1952, գյուղ Ռասիպնայա

է տալիս: Կյանքում չեմ տեսել Էդպիսի մի անձնավորություն, որ չորս երեխա ունի, ինքն էլ ինվալիդ (հաշմանդամ), քսորովելու ճամփին մոտը փող ունի, կիսվում է ուրիշների հետ: Ասում էր՝ սաղս էլ մի օրի ենք, մի օր ավել, մի օր պակաս, իրար օգնենք: Հերս նրան պաշտում էր: Սիբիրից որ հետ եկանք, տեսց էլ ընկերներ մնացին:

Հասանք մի տեղ: Մեջներս էլի քսոր տեսած մարդիկ կային, ասում էին՝ թե գնացքը կամուրջի վրայով անցնի, լավ է, կգնանք Ղազախստան, տակով անցնի՝ Ալթայ: Այդ մասում մի դաշտում գնացքը կանգնեց: Վա՛յ, Աստված իմ, մինչեւ հիմա եղ պատկերը իմ աչքի առաջ է: Ռազմադաշտ, ծակած գանգեր, գինվորական գլխարկներ, տանկեր, օդանավեր՝ խրված գետնի մեջ, գնացքներ՝ իրար վրա եկած, կմախքները՝ ծռված ռումբերից: Մի ահավոր պատկեր, ասին՝ Ստալինգրադն է:

Երբ վագոններից իջանք, ամեն ընտանիքի մի սայլ տվին, իրերը լցրինք, ու մեզ տարան: Ուժեղ անձրեւ էր գալիս, ցեխ, սայլերն ու ձիերը խրվել էին, պիտի հրեինք, մուլթն ընկնելիս տեսնենք՝ քույրս չկա. բարեբախտաբար գտանք:

Մեզ տեղավորեցին բարաքներում, որտեղ երկաթյա երկու տակառ կար՝ վառարանի տեղ: Ժողովուրդը հավաքվում էր, վրան կարտոֆիլ էին խորովում, խոսում, երգում, անեկդոտներ պատմում...: Բա՛ որ սաղ մի հալի են ըլնում, երջանիկ են ըլնում:



Տեղեկանք  
Անդրանիկ  
Մազմանյանի  
աշխատավայրից:  
1951

Սիբիրում ամեն ամիս ստորագրում ես, որ տեղում ես: Հորս ստիպում էին, որ ստորագրի լատեր դաշնակցական լինելը հաստատող թուղթը: Հետո հայրս ահագին դիմումներ գրեց, մինչեւ հասկացրեց, որ ընդհակառակը, ինքը կոմունիստ է եղել: Ես իմանալուց հետո հորս կանչում եմ շրջկենտրոն, որ ոտքով 41 կմ ճանապարհ էր: Հյուրասիրում եմ վողկա, կապուստա, սեյտդկա (օղի, կաղամբ, աղ դրած ձուկ), ընկերավարի խմում եմ, վերջում թե՛ գյուղում ինչ լինի, պիտի գաս մեզ ասես: Հայրս հրաժարվում ա՛ ես արքայական մարդ եմ, նրանց հետ հավասար: Ատրճանակ եմ դնում սեղանին, վախեցնում, բայց պատասխանում է՝ ախպե՛ր, բերել եք ստեղ, հիմա էլ տարեք տունդրա: Գիշերը փակում եմ եդտեղ, առանց ջուրի, ասում էր՝ սեյտդկայից ու օղուց հետո ծարավից մեռնում էի: Առավոտը բաց եմ թողնում զգուշացումով՝ եղածի մասին՝ ոչ մի խոսք: Այս ամենը մեզ պատմեց երեւանում, շատ տարիներ հետո:

Հայրս կոշկակար էր, եւ դա լավ էր: Մեր ապրած տեղը Կեդրովկան էր, հասցեն մինչեւ հիմա հիշում եմ Ալտայսկի կրայ, Սառոկինսկի ռայոն, Ալամբայսկի լեսպրոմխոզ, ուղաստոկ Ռասիպսայա, պողոտա՝ Կեդրովկա: Հիմնական զբաղմունքը անտառանյութ կտրելն էր, իսկ գարնանը գետը ուռչելու ժամանակ (սպլավ են ասում), գերանները գետի հոսանքով տեղափոխելն էր. հրում էին, որ ջրի ընթացքով գնան: Եղ գործողության ժամանակ հայրս ընկել էր գերանի տակ, կողերը ջարդել: Մի քանի շաբաթ հիվանդանոցում բուժվելուց հետո եկավ ու սկսեց կոշկակարություն անել: Մի փոքր գյուղական խանութ կար, այդտեղ էլ պահակ էր աշխատում:

Եղ աշխատանքը լավ էր, բայց մեր հիմնական ապրուստը հողից էր: Մեզ առանձին տուն էին տվել՝ մեկ սենյակ (էն ժամանակ աչքիս մեծ էր երեւում), առաջը հողամաս, որից առատ բերք էինք ստանում: Ախոռ կար, հորթ ունեինք, խոզ կարող էինք պահել, հավեր: Բայց այդ ամենը ահավոր աշխատանք էր պահանջում: Վեց-յոթ ամիս սառնամանիքին պիտի տունը տաքացնես, փայտ պիտի կտրես. ինքը կտրում էիր, բերելը՝ օգնում էին: Կովի կերը բերում էինք տայգայից, դաշտ չկար, որ հնձեինք: Յոթ ամսվա կեր, մի քան ցենտներ պիտի կտրես, սահնակներով բերես, չորացնես: Բա ինչա՛մքը... ձմեռը պիտի մաքրես տակը, խոտ փռես, որ չսառչի, նույնը՝ գիշերը: Ինչքա՛ն բան կար անելու: Ես մինչեւ տասնհինգ տարեկանը այնտեղ աշխատել եմ, հեշտ չէր, բայց ունեինք՝ կարագ, պանիր, կաթ, թարմ բանջարեղեն՝ գազար, կարտոֆիլ, լոբի, բակլա, գարոխ (ոլոռ), կանաչ պոմիդոր (չէր հասցնում կարմրել), կանաչեղեն, ձմեռը միսը բավարար էր. նոյեմբերին հորթ էինք մորթում, խոզ, հավեր:

Մի նկար ունեմ. էն ժամանակվա թղթի որակը էնքան լավը չի, բայց պարզ երեւում է՝ ձմեռ է, հայրս, մայրս, ես, քույրս, մի յոթ-ութ հավ, շունը, կատուն, հորթը (որ մարտին ծնվում էր, բերում էինք ներս). բոլորս՝ սենյակում: Եղ նկարն ունեմ ես:

Մենք լատեր օգնություն էինք ստանում Երեւանից, հորեղբորիցս, առանց դրա շատ դժվար կլիներ: Կեդրովկայում ես ու քույրս գնացինք դպրոց: Երեւանում ես արդեն երրորդ դասարան էի, բայց այստեղ չորրորդի փոխարեն գնացի երկրորդ, ռուսերեն չգիտեի: Դպրոցը 8 կմ հեռու էր, շաբաթվա մեծ մասը մնում էինք այնտեղի գյուղացիներից մեկի տանը, իհարկե վճարում էինք:

Ես Սիբիրում խտրականություն չեմ տեսել, երեւի նրանից էր, որ



Վերջին  
լուսանկարը  
վերադարձից  
առաջ: 29 հուլիս  
1954, գյուղ  
Ռասիպսայա

մեծ մասը աքսորականներ էին: Այնտեղի մտերիմ ռուսներից մի քանիսը հետո էլ կապ ունեին մեզ հետ: 1967-ին Լոժոսիբիրսկից մեր տուն եկավ մեր գյուղի կոմենդանտի (պարետի) կինը: Չարմացավ Երեւանի խանութներում մթերքի առատությունից, ահագին բան առավ, տարավ հետը:

Ստալինի մահվան օրը լինելյա (շարք) կանգնացրին ու հայտնեցին, որ մահացել է: Կողքից ընկերս՝ Փիլիպոսը, ալկանջիս ասում էր՝ լավ եղավ, չէ՞, որ մահացավ մեզ աքսորեց: Ես էլ ասում եմ՝ Ստալինը մեզ որտեղից էր իմանում, որ աքսորեր: Կամաց էինք խոսում: Նրա ասածը տասներկու տարեկան երեխայի կարծիք չէր. երեւի տանն էին խոսել: Իսկ հերս ասում էր՝ դա ներքին գործ ա. վերելից հրաման ա եկել, փոխանակ սրիկային, ավագակին, գողին ուղարկեն, իրանց մեջ հաշիվ են արել՝ ում հետ չունեն, դրանց են ուղարկել: Ես էլ եմ տենց մտածում, բայց ժամանակները շատ վատն էին, դաժան էին: Ստալին չլիներ, ով ուզում ա լիներ: Ամեն ինչ թելադրված էր ժամանակով՝ կամ մենք, կամ դուք:

Մի օր էլ շրջկենտրոնից հայրս վերադարձավ, գյուղի հրապարակում վոլեյբոլ էինք խաղում, ինձ կանչեց, ասաց՝ Սաքո, գնա մամային ասա, որ մեզ ազատել են: Բոլորս ուրախացանք: Ուրախացանք, որ ազատվել ենք, բայց տանջանքից մենք չէինք դժգոհում: Աշխատել, չարչարվել էինք մեզ համար: Մարդիկ կային, որ անընդհատ բողոքում էին, բայց օրն անց էին կացնում պատերի տակ սեմուշկա (արեւածաղկի սերմ) չրթելով: Որ հարցնեիր, կասեին՝ կով առնելու փող չունենք: Ե, հորթ առ, եկող տարի կով կդառնա: Բայց պիտի չարչարվես, տենց հեշտ չի: Ինձ որ տեսնում էին կովի համար խոտ բերելիս, ասում էին՝ Սաքո՛, ինչքա՞ն ես առնում շալակդ, խոտի տակ մենակ ոտքերդ են երեւում: Իսկ ես՝ քրտնած, փշրված, խոտը մարմինս էր ծակում, մոծակներն էին հարձակվում, ծարավը խեղդում էր՝ ջուր չկար: Եղել է, որ թաշկինակը բերանիս եմ դրել ու ճանապարհի գյուղերի (ջրափոս) ցեխոտ ջուրն եմ խմել, օրվա վերջին էլ՝ գետում մաքրվել:

Հայրս դիմեց, որ պետության հաշվին Հայաստան գայինք, բան դուրս չեկավ: Հորթ, կով, հավ, ինչ ունեինք մեր տնտեսությունում, ծախեց, արեց ճանապարհածախս:

Երեւանում մեր տանն արդեն հորեղբայրս էր ապրում: Որպես կենվոր ներքնահարկում մնացինք, մինչեւ հինգ տարի հետո տուն տվեցին Կանազում (թաղամաս Երեւանի

Միջգերատեսչական  
գրագրություն  
հատուկ  
բնակավայրից  
Մագմայանների  
ընտանիքի  
ազատման մասին:  
1954

На № \_\_\_\_\_ от \_\_\_\_\_ 195 г.  
При ответах ссылаться на наш № и дату

Секретно  
Экз. № 2

СССР  
МИНИСТЕРСТВО  
ВНУТРЕННИХ ДЕЛ  
УПРАВЛЕНИЕ МВД  
по Алтайскому краю

ПРЕДСЕДАТЕЛЮ СУДЕБНОЙ КОЛЛЕГИИ ПО УГОЛОВНЫМ  
ДЕЛАМ ВЕРХОВНОГО СУДА СССР

тов. МОРОЗОВУ

Отдел "П" на № 02/1700-с-54/ 2398-сд от 17/У-54г.

25 ИЮНЯ 1954 г. Барнаул 6020

Копия: НАЧАЛЬНИКУ УЧЕТНО-АРХИВНОГО ОТДЕЛА К Г Б при Совете Министров.

НАЧАЛЬНИКУ ОТДЕЛА "П" МВД СССР  
Полковнику - тов. НОВИКОВУ  
гор. Москва

Сообщаем, что МАЗМАНЯН Андроник Мкртычевич, 1910 г.р., МАЗМАНЯН Сильва Ервандовна, 1913 г. р., МАЗМАНЯН Саркис Андроникович, 1939г.р. и МАЗМАНЯН Анаит Андрониковна, 1938г.рождения 17 июня 1954 года из спецпоселения освобождены.

27 ИЮЛ 1954 97535

И.о. НАЧАЛЬНИКА ОТД. "П" УМВД АЛТАЙСКОГО КРАЯ  
Подполковник - (КЛИМОВ)

И.о. НАЧАЛЬНИКА 2 ОТДЕЛЕНИЯ  
Капитан - (ГОРДИЕНКО)

17-32490

С учета 1 Спецотдела МВД СССР снят  
Учетная карточка прилагается  
11 июля 1954 г. Исполнитель

327419 234

ներկայիս Արաբկիր համայնքում): Ես գնացի յոթերորդ դասարան՝ Կամոյի դպրոցում: Հետո ընդունվեցի Պոլիտեխնիկ: Ավարտելուց հետո ընդունվել եմ Ռելեի գործարան՝ ինժեներ: Ռելեի գյուտարարություն եմ արել: Վերջում աշխատում էի ավտոգործարանում:

ԱՄՆ գալու համար սկսել ենք դիմել 1974 թվից: 75-ին ամուսնացել եմ Լինայի հետ, 76-ին ծնվել է տղաս, 80-ին եկանք: Գալու համար շատ եմ չարչարվել. էլ Հայաստանի ՕՎԻՐ, էլ Մոսկվայի ՕՎԻՐ, էլ Ցե-Կա Կա-Պա-Ես-Ես (ԽՄԿԿ Կենտկոմ): Քանի՞ անգամ եմ գնացել ու եկել: Երեւանի ՕՎԻՐ-ից Մոսկվա էին հայտնել, թե գնում եմ, որ Նոյեմբերյան տոները խանգարեմ: Մեծ դժվարությամբ համոզեցի, որ այդպես չէ, եւ կարճ ընդունելություն խնդրեցի ՕՎԻՐ-ի պետից: Շատ հարգալի ընդունեց, լավ լսում էր: Մի բան նկատեցի՝ ընդմիջման ժամին ճաշում էր այն ճաշարանում, որտեղ մենք էինք, ինքն էր մատուցարանով բերում իր ուտելիքը: Թեկուզ մերժեին, խոսում էին հումորով, կատակով: Այստեղից (Երեւանից) Մոսկվային խաբում էին, գիտեին՝ Մոսկվան գլխացավանք պիտի ստեղծեր Երեւանի համար: Մի օր Մոսկվայում ասացի՝ եթե մեր Էն-Վէ-Դէ-Ն (Ներքին գործերի նախարարությունը) ինձ ներկայացնի ուղտ, ինչպե՞ս կարող եմ ապացուցել, որ ես ուղտ չեմ, կա այդպիսի ռուսական ասացվածք, էդ ռուս պաշտոնյան սկսեց ծիծաղել:

Գնալուս պատճառներն էին հարցնում, պատմում էի: 1946-ին եկանք Հայաստան, մեր Նոր տանը հինգ ամիս չէինք ապրել, աքսորեցիք: Հինգ տարի աքսոր, հինգ տարի բնակարանի հերթ, հինգ տարի դիմել ենք Ամերիկա գնալու համար: Այս ծախսորդ հնգամյակներին վերջ կա՞:

Այսպիսի շատ նամակներ եմ գրել: Վերջապես մի օր կանչեցին: Էդ ժամանակ արդեն կար Հելսինկյան պայմանագիրը<sup>21</sup>: Ասացի, որ մորս ողջ հարազատությունն է այնտեղ: Աշխատանքի մեջ չեմ կարողանում մի քայլ առաջ գնալ, ասում են՝ արտասահմանում բարեկամներ ունես, թղթակցում ես հետները: Ես իմ ողջ կարողությունն եմ նվիրել իմ հայրենիքին, հիմա էլ ուզում եմ գնամ, բախտ որոնեմ, ինձ ստեղ առաջընթաց չկա: Նույնիսկ առաջարկ եղավ, որ գնամ ու իրենց Էնտեղից օգնեմ: Հրաժարվեցի:

Ամերիկան իմ իդեալ երկիրը չի, իդեալ երկիր որտե՞ղ գտնեմ: Բայց ոչ մեկը չի եկել դուռս թակել ու ինձ առանց իրավունքի հարցեր տվել: Միլիցիան գալիս է, թե բան ունի հայտնելու, դռան հետեւից ասում ու գնում է: Զուգե՛ս՝ չես բացի, եթե խուզարկելու իրավունքով չի եկել:

Իսկ [Սովետական] Հայաստանում... Մոսկվայից գազի կալոնկա (կաթսա) էի բերել, որ տան Նորոգումից հետո տեղադրեմք: Թաղայինը տեսել էր ու որոշել թույլ չտալ: Ուզում էր՝ իրեն փող տամ: Մյուս

օրը գործի եմ, գալիս է, ֆարսունկեն (այրիչը) տանում է: Ես խելոք տղա չեմ, ես կռվարար տղա եմ, խուժան չեմ, բայց թասիբի համար միշտ կկայնեմ: Սկսեցի բողոքել՝ Է՛լ շրջանային, Է՛լ քաղաքային գազի գրասենյակներ, արդյունք չտվեց: Մերգեյան ինստիտուտի մոտ պատահաբար տեսա գրած ա՝ ԳԼԱՎԳԱԶ (գազի սպասարկման գլխավոր գրասենյակ), մտա, ասացին, որ իրանք մագիստրալով են զբաղվում, բայց իմացա, որ մյուս գրասենյակները ենթարկվում են սրանց: Պետի տեղակալը ինձ լսեց.

- Ես ինժեներ տղա եմ, ամիսը մի հատ ավանս եմ առնում, մի հատ էլ՝ ռոճիկ: Ոչ բուժետչիկ եմ, ոչ աֆիցիանտ եմ, ոչ պահեստապետ: Իմ ծախսերով կալոնկեն դնելու համար հիսուն ռուբլի կաշառք որտեղի՞ց տամ: Ես հո կաշառք չեմ առնում, որ իրենց տամ: Խնդրեցի, զանգ տվեց Ես մարդը: Մինչեւ մեր տուն մի կանգառ էր. տեղ չհասած՝ արդեն բերել, դրել էին: Մի ամիս հետո պատմությունը կրկնվեց: Գնացի, պետն էր տեղում, խնդրեցի, զանգեց, բերեցին: Բայց Ես խուժանները շարունակում էին: Մի օր էլ մի ջահել եկավ՝ իբր ստուգելու, սրան արդեն քացով, ծեծելով տանից հանեցի:

Մեծ սիրով եւ մեծ ակնկալությամբ եկանք հայրենիք, եւ իսկապես ես հայրենիքիս կպարտիմ իմ ամբողջ կրթությունս: Ինչ որ եմ, Հայաստանին կպարտիմ, որովհետեւ տասնն մինչեւ քառասունհինգ տարեկանս Հայաստանում եմ եղել:

# ԷԼՍՈՆ ԱՎԱԳՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Հունաստանից

... հեռագիր էին տվել, որ մեզի անմեղ են հանել, ազատել են: Գրել էին՝ պիտի վերջացնես դպրոցդ, պիտի գաս, որ գնանք Հայաստան:

Առաջին դասարան գնացի, փոխվեցի երկրորդ, եղ ամառն աքսորեցին մեզի: Ութ տարեկան էի, հիշում եմ, գիշերով եկան դուռը խփեցին: Եղբայրս էն ժամանակ աշխատում էր մահուղի գործարանում՝ երկրորդ սմեն (հերթափոխ) էր: Եկավ, ճաշեց, պիտի պառկեր՝ դռները խփեցին. «Այսինչ մարդիկ ենք, պատրաստվեք, երկու ժամից պիտի գնաք»: Մայրս վատացավ, հայրս կարծեց՝ իրեն կամ եղբորս առանձին պիտի տանեն, բայց ասացին. «Չէ, ընտանյոք պիտի գնաք»:

Պատրաստվեցինք, ինչ որ ունեինք հագնելու վերցրեցինք: Կեսգիշերով մեքենաներ եկան ու մեզ տարան Ուլուխանլու (Մասիս): Տեսանք товарный (բեռնատար) վագոնները շարված են: Երեք-չորս ընտանիք էին մի վագոնի մեջ: Փիրյանների<sup>22</sup> ընտանիքն էլ մեզ հետ էր: Նրանք Ֆրանսիայից էին, մենք՝ Հունաստանից: Տասնհինգ օր մինչև վերջ միասին էինք:

Վերջը հասանք Ալթայ, Սորոկինսկի ռայոն: Ընտանիքներին սկսեցին բաժանել գյուղերով: Կար մի поселок (ավան) Ռասիպայա: Փիրյանենց հետ մեզ գցեցին Էդտեղ: Ռասիպայոյ ասելով՝ հաշված տներ էին՝ փայտից սարքված: Մեզ տարին մի բարաք, որ էդ բարաքում ձիեր էին պահում: Էդ ձիերը հանեցին, բարաքը մաս-մաս բաժանեցին առանձին սենյակների ու մեզ՝ մի 5-6 ընտանիք, տեղավորեցին: Տարբեր տեղերից էին ընտանիքները՝ Ֆրանսիայից Փիրյաններն էին, մենք՝ Հունաստանից, Ռումինաիայից կային, Եգիպտոսից:

Սկիզբը շատ դժվար էր, մեզ հետ բերած ապրանքով էինք ապրում: Էնտեղ մի ուրիշ ազգ կար՝ մեզանից առաջ աքսորված, կալմիկներ էին ասում: Մեր բերած հագուստը-բանը տալիս էինք նրանց, դիմացը կարտոշկա էինք վերցնում, մինչև որ մենք էլ մի քիչ բանի եկանք:

Ռասիպայոյում դպրոց չկար, Տյագուն էինք գնում, որը փոքրիկ գյուղաքաղաք էր: Դպրոցը ռուսական էր: Նստեցի երկրորդ դասարան, բայց ռուսերեն չգիտեի: Փիրյանների տղաները՝ Անդրեն ու Ալենն էլ մեզ հետ էին: Մի օր նրանց մայրը՝ տիկին Փեգին եկավ, դասատուին հարցրեց՝ ո՞նց են սովորում, ասեց՝ օտարերկրացիներն ավելի լավ են սովորում, քան տեղացի երեխեքը:

Ամեն շաբաթ օր, դասերից հետո մի հատ տոպրակ ուներնիս դրած ոտքով գալիս էինք գյուղ: 15 կմ ոտքով գալիս էինք: Ուտելիք էինք վերցնում, խոզի սալ (ճարպ), այլ բաներ: Մի գիշեր մնում էինք, կիրակի վերադառնում Տյագուն: Մի ռուս տատիկ կար, նրա տանն էինք ապրում:

Ամառը ընկերուհիներով գնում էինք ягода (հատապտուղ) հավաքելու: Смородина (հաղարջ), малина (մորի)... անտառում լիքն էր:

Հավաքում էինք վեդրոներով եւ ամառը, որ արձակուրդ էինք, տավառնի վագոններն էինք նստում գաղտնի, որովհետեւ չէին թողնում, երեք-չորս հոգով գնում էինք՝ Պրակոպեւսկ կամ Նովոկուզնեցկ՝ ապտերների (հանքափորների) տեղերն ու վաճառում էինք, որ դրամ ունենայինք: Հետո ինչ-որ բան ամուսնում-բերում էինք գյուղ:

Հետաքրքիր բան հիշեցի: Դեռ Հայաստանում Մահուդի գործարանում աշխատելիս՝ եղբայրս лотарей (վիճակախաղի տոմսեր) էր առել: Դրանք մնացել էին մեր շորերի մեջ: Մի անգամ Տյագունում ընկերուհուս հետ քայլում էինք, ասինք՝ մտնենք почета (փոստատուն), նայենք ի՞նչ ձեւի ա: Մեկ էլ ինչ տեսանք՝ պատին



Գոհար եւ Էլմոն (աջից) Ավագյան թույրերը: 1955, գյուղ Ռասիպնայա

կպցրած ա տոմսերի շահած համարները: Մամայիցս առա դրանք, բերեցի, ստուգեցի, պարզվեց երեք տոմսից երկուսը շահել ա: Ես էլ ինչ անեմ՝ գնացի գյուղի խանութներում ինչ կար՝ գիշերանոց էր, վերարկուի կտոր էր, հագուստներ էր... առա, մեշոկի մեջը դրի եւ շաբաթ օրը, որ գնում էի գյուղ՝ շալակս դրած տարա: Մայրս ասեց՝ Ես ի՞նչ ես բերել շալակով, պատմեցի, որ լատարեան շահել ա, շատ ուրախացան եւ զարմացան, որ եղպեսի բան եղավ:

Ես Տյագունի դպրոցում էի՝ ութերորդ կամ տասներորդ դասարան, չեմ հիշում: Եկան, ասեցին՝ Ստալինը մեռել ա: Ճիշտն ասած՝ ուրախացանք շատ: Ներողություն, իհարկե, մենք՝ հայ աղջիկներով, տուալետը գնացինք, դասատուները լաց էին լինում, մենք էլ ասեցինք՝ մահացավ-մահացավ, կերելի բան մը դուրս կուգա: Հա, տուալետում իրար հետ խոսում էինք՝ տեսնես ի՞նչ պիտի լինի վերջը, իսկ դասարաններում լաց ու կոծ էր:

Գոհար եւ Էլմոն (նստած) Ավագյան թույրերը: 1955, գյուղ Ռասիպնայա



Դրանից հետո մեր կյանքը փոխվեց: Կով առանք, խոզ առանք, հավ-բան. տնտեսություն եղավ: Մամաս ուզած-չուզած սովորեց, պահեց, քուրիկս էլ օգնում էր: Քույրս սկիզբը չէր աշխատում: Ռայոնից եկան ասեցին՝ դատի ենք տալու, որ չես աշխատում: Հետո դատարան կանչեցին, բայց քույրս հիվանդացավ, չներկայացավ, եղպես անցավ-գնաց: Հետո ստիպված քույրս գնաց անտառ, ծառերի մանր ճյուղերն էր կտրում: Ես չեմ աշխատել, մենակ ամառը եղ խոտ հնձելն էր, մեկ էլ յագոդան, որ տանում, ծախում էինք:

Հայրս ու եղբայրս էլ անտառն էին, գերանն ընկավ հորս վրա, մեջքը վնասեց: Լավանալուց հետո էլ գյուղի մեջ կոշկակար էր: Հա, ուտելիքից լավ էինք, բայց բացի անտառից ու երկնքից ուրիշ բան չկար: Քաղաքը Տյագունն էր: Որ շաբաթ օրը գալիս էի, մերոնք հարցնում էին՝ ի՞նչ նորություն, ի՞նչ բան...: Դե Տյագունում ահագին հայեր էին ապրում, ես էլ պատմում էի՝ այսինչ հայը շուտ ազատվեց, այսինչը տեղափոխվեց Բառնաուկ: Եղ ժամանակ շատերն էին տեղափոխվում, իրենց մասնագիտություններով գործեր էին գտնում:

Տյագունում էդ ռուս տատիի մոտ որ ապրում էի, մի օր էլ բաբուշկան եկավ, ասեց՝ հեռագիր ունես: Ի՞նչ հեռագիր, տեսնե՛մ, տեսնե՛մ ասացի: Հայրս ու եղբայրս հեռագիր էին տվել, որ մեզի անմեղ են հանել, ազատել են: Գրել էին՝ պիտի վերջացնես դպրոցդ, պիտի գաս, որ գևանք Հայաստան:

- Հայաստան, լա՛վ,- ասացի, բայց ես Հայաստանը մոռացել էի բոլորովին, որովհետեւ արդեն ռուսների հետ էի կապված:

Դպրոցս երեւանում ավարտեցի, գնացի քաղսովետ, որ աշխատանք տան: Ասեցի՝ Եսե՛նց-Եսե՛նց աքսորված եմ եղել եւ այլն, ասեցին՝ կդասավորենք: Սկիզբը դասավորեցին տելեֆոնի վրա: Տելեֆոնիստկա (հեռախոսավար) աշխատեցի, բավականին աշխատեցի, մոտ տասը տարի: Հետո էն ժամանակ ռուսերեն լավ խոսող քիչ

կար Հայաստանում, ռուսերենս որ ուժեղ էր, ինձ ուղարկեցին կապի մինիստրությունում աշխատելու, մինիստրի ենթակայության տակ բաժին էր, կոչվում էր специальная производственная техническая лаборатория (հատուկ արտադրական տեխնիկական լաբորատորիա): Որպես ինժեներ էստեղ էի աշխատում: Բավականին աշխատեցի, բայց երբ որ թղթերս եկավ Ամերիկայից, որ գևամ, ինձ ասեցին՝ պետք է ազատես մինիստրության ապարատը, որովհետև գաղտնի բաժիններ բաներ կային:



Գոհար Ավագյանը եւ իր աշխատանքային գրքուկը: Ալանբայսկի ԱՍՏ, գյուղ Ռասիպնայա

**Трудовая книжка**

Фамилия Авакян  
 Имя Гаяр  
 Отчество Арутюновича  
 Год рождения 1931  
 Образование: начальное, среднее, высшее  
 (подчеркнуть)  
 Профессия Учитель  
 Подпись владельца Трудовой книжки  
К. Авакян  
 Дата заполнения Трудовой книжки  
12 сент 1950 г.

**СВЕДЕНИЯ О РАБОТЕ**

№ записи	Дата			Сведения о приеме на работе и увольнении	работу, перемещениях по (с указанием причин)	На основании чего внесена запись (документ, его дата и номер)
	Год	Месяц	Число			
1						
	1949	VI	3	Принят на работу в качестве переводя	письменное отвед. работодателя	
	1950	IX	15	Принят в Авангардской АЭС директу М. С. Б. в качестве переводя	Приказ № 8 с	
	1950	X	1	Авангардской АЭС "Авангард" - принят в качестве переводя работ на МЗУ	Приказ № 285 от 12/10/50г.	

# ՆԱՐՈՒԹ ԱՎԱԳՅԱՆ



ընտանիքը  
Ներգաղթել է  
1947-ին  
Հունաստանից

Աթորից առաջ եղած տու-  
նը իրենց ձեռքից առել էին.  
ոնց որ թե ուրիշին էին տվել:  
Դե, ի՞նչ անես, ոչ մի բան չես  
կարող անել:

Պապիկս եւ տատիկս՝ Հարություն Գրիգորի Ավագյան եւ Թագուհի Սիմոնի Ավագյան, շարդից փախել, իրար հետ ծանոթացել են Ամե-  
րիկյան որբանոցում, եղպես հասել են Հունաստան:

Պատերազմի ժամանակ պապիկս եւ պապաս, որը 13-14 տարե-  
կան էր, շատ մեծ օգնություն են ցույց տվել Հունաստանի պարտի-  
զաններին: Պապաս միշտ ուտելիք է տարել եւ մի անգամ բռնվել,  
Գեստապոյում<sup>23</sup> լավ ծեծ է կերել: Տատիկս իրենց սեմեյնի (ընտա-  
նեկան) թանկարժեք մատանին տվել է Գեստապոյի շեֆին, նոր  
պապայիս բաց են թողել:

Հայրենադարձությունը որ սկսվում է, որոշում են գալ Հայաստան:  
Պապիկս, ճիշտ է, դեմ էր, քանի որ ինքը դաշնակցական էր. դաշ-  
նակները միշտ էլ սովետական կարգերը չեն ընդունել: Բայց մեկ էլ  
պապիկիս ասում են՝ տղադ արդեն նավի մեջ է: Պապաս իրենց  
միակ որդին էր: Պապիկս ընտանիքը մի քանի ժամում հավաքում  
է ափալ-թափալ, հետեւից վագում, մտնում են նավ, գալիս են Հա-  
յաստան:

Սարի թաղում (թաղամաս Երեւանում) բաղնիք կար, եղ բաղնիքի  
կողքի փողոցում տուն են ունեցել: Հետո ...յան ազգանունով մի  
դավաճան հայ ԷնԿաՎեԴե-ին (Ներքին գործերի ժողկոմիսարիատ)  
նամակ է գրում, որ՝ ստեղ բնակվում է դաշնակցական ընտանիք:  
Գիշերով գալիս են, ամբողջ ընտանիքը տավարնի (բեռնատար)  
վագոններով քշում Սիբիր՝ Ալտայսկի կրայ, Բառնաուլ, պոսյոլոկ  
Ռասիպնայա, որտեղ որ պապաս, պապիկս եւ մեծ հորաքույրս աշ-  
խատում են անտառում ծառ են կտրում: Մեծ հորաքույրս էլ, քանի  
որ փոքր էր, տապոռը (կացին) տալիս են, որ բարակ ճյուղերը  
կտրի: Տատիկս էլ է ճյուղ կտրող եղ բրիգադում եղել:

Ունեցել են կով, հորթ: Պապիկս, բացի այդ աշխատանքից, Էստե-  
ղի կոշկակարն է եղել, եւ իրենք նեղություն չեն քաշել, մեր ընտա-  
նիքում բոլորը լավ կոշիկ են ունեցել: Իսկ Էն ժամանակ, գիտեք, լավ  
կոշիկը էսօրվա «Մերսեդես» ավտոյին հավասար բան էր, հատկա-  
պես՝ Սիբիրում: Եղպե՛ս...

Ես դեռ փոքր տղա էի՝ պապայիս ոտքերը տեսա. ամբողջ կոճերը  
սեւ էին: Ասաց, որ Սիբիրում ծառերը կտրելուց հետո գերանները  
գետով քշում էին, սպլավ է կոչվում, ու երբ որ գերանները հրում  
էին, դրանք խփվում էին ոտքերի եղ մասերին: 49 թվից մինչեւ 57  
թիվը ամեն օր քույրիկներս, մամաս գեյոնկա (հանգստացնող դեղ)  
են քսել պապայիս կոճերին: Ու պապաս իր կյանքի վերջին ոտքե-  
րից թոյլ էր: Քաղցր կյանքից չէր, Էսպես ասած:

Սիբիրում, պապաս ասում էր՝ տները օդի մեջ էին, գետնից մինչեւ  
հատակը մեծ տարածություն կար, քանի որ ձմեռները շատ սառն  
էին: Իսկ ամառները, ասում էր՝ սենց մեծ-մեծ ամռետներ են եղել,



եւ եղ առնետների հետ իրենք ապրել են եղ վեց-յոթ տարիները:

Իմ պապիկս ընդհանրապես ոչ մի բան չէր պատմում: Գործից գալիս էր, խմում էր ու շատ շուտ՝ ծամը ութին, քնում էր: Մի հատ ռադիո ուներ, Արեւմտյան Հայաստանի եղ երաժշտությունները մի քիչ լսում էր ու քնում: Ատամներն էր մենակ կրթկրթացնում. Է՛ր էր, ուրիշ ոչ մի բան չէնք լսել իրենից: Ավելի շատ հորաքույրներս էին պատմում Սիբիրից:

Մի հետաքրքիր բան էլ. երբ քսորից առաջ պապաս մահուղի գործարանում էր աշխատում, եղտեղ լատարիա (վիճակախաղի տոմս) են տալիս: Դրանք լինում են պապայիս ծոցագրպանում: Սիբիրում մի որոշ ժամանակ հետո տանում է ստուգելու, տեսնում է՝ շահել է: Էղ փողով բոլորին նվերներ է առնում լիքը-լիքը տաք բաներ:

Պապաս աշխատելու հետ սովորել է Էստոնի: Սկզբից դպրոցն է ավարտել ու շատ

լավ ռուսերեն գիտեր. Էստոնի էր սովորել: Հետո ավարտել է առեւտրի տեխնիկումը: Ու համարյա անհնար բան էր, բայց քսորից հետո իրեն դավերիա արեցին (վստահեցին), որ խանութի վարիչ լինի, չնայած հայրենադարձ էր ու պարտիական չէր: Հետագայում Էնքան լավ խանութ սարքեց, որ դա դարձավ Լոմենկլատուրայի համար. քաղսովետի խանութն էր, մեր հարուստ կոմունիստներն էին օգտվում:

Պապաս պապիկիս չափ լուռ չէր, բայց քչախոս էր, մեկ էլ՝ ներող: Լույսիսկ եղ դավաճանի տղան պապայիցս բան է խնդրել, ինքը օգնել է: Ուրիշը լինելը, կասեր՝ դավաճանի՛ որդի, դու եկել ես, ինձանից բա՛ն ես խնդրում: Բայց պապաս, ինձ թվում է, չէր չարանում, որովհետեւ իրեն մեղավոր էր զգում, որ եկել են Հայաստան, հետո էլ եղպես Սիբիր հասել:

Երբ որ վերադարձան, Նորից Սարի թաղ գնացին, արդեն վարձով էին ապրում: Աքսորից առաջ եղած տուևը իրենց ձեռքից առել էին. ոնց որ թե ուրիշին էին սովել: Դե, ի՞նչ անես, ոչ մի բան չես կարող անել:

Բռնադատվածները Սարի թաղում շատ-շատ էին: Վերադարձի առիթով լավ քեֆ են կազմակերպել, նկարները կան. լավ փիքնիք են ա-

Գրիգոր Ավագյանի կրթության վկայականը: 1956, գյուղ Տյազուն

Ջարուբե Ավագյանի հայրը՝ Գրիգորը, Տյազունի ԱՍՏ-ում աշխատանքի պահին



СССР  
 МИНИСТЕРСТВО ЛЕСНОЙ И БУМАЖНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ  
 УПРАВЛЕНИЕ УЧЕБНЫМИ ЗАВЕДЕНИЯМИ

## СВИДЕТЕЛЬСТВО

№ 46

Выдано тов. Авокяну Григорию Арумян.  
 в том, что он с „\_\_\_“ \_\_\_ 194 г. по „\_\_\_“ \_\_\_  
 194 г. обучал \_\_\_ на курсах \_\_\_  
(наименование курсов)  
прошли обучение без отрыва от производства  
 при Тбилиском целлюлозно-бумажном  
(наименование предприятия) и сдал выпускные  
 экзамены с оценкой: \_\_\_\_\_  
 по теоретическому обучению: \_\_\_\_\_  
 по производственному обучению \_\_\_\_\_

Постановлением квалификационной комиссии  
 тов. Авокяну Гр. Ар. присвоена  
 квалификация десятишито II класс

ОСНОВАНИЕ: Протокол заседания квалификационной ко-  
 миссии № 3 от „6“ февраля 1956г.

Директор В. Ассеев

МН 01603



Հարեան  
աբսորվածների  
հետ պիկնիկ  
աբսորից  
վերադարձալուց  
հետո, Երեւան  
1956

րել, ոչխար-բան են մորթել, մատաղ են արել: Իսկ ...յանին երեք ընկերով տարել են Սարի թաղի անտառ, ծեծել են:

Պապիկիս տասնհինգ սուսկա (15 օրվա վարչական կալանք) են սովել դրա համար: Ինքը շատ ուժեղ մարդ էր: Պապաս ուրիշ տեսակ ուժեղ էր. Կոնֆիցիոսն է ասել, չէ՞, թույլ մարդը վրեժ է լուծում, ուժեղ մարդը ներում է, իսկ հզոր մարդը մոռանում է: Դե, հիմա պապայիս չեմ ասի՝ հզոր, բայց որ ներում էր, մոռանում էր՝ հաստատա:

Ու երեւի Աստված եղպես էր նախատեսել նրանց ընտանիքի համար, որ պիտի գային, ու սենց լիներ:

Հետո եկան Բրեժնեւի ժամանակները: Էլ չէին հետապնդում, բայց աշխատում էինք որոշ թեմաների մասին ընդհանրապես չգրուցել: Իսկ պապիկս իր չարությունը վողկայի մեջ էր գտնում, խմում էր ու քնում էր շուտ, որ կռիվ չանի: Բայց բարձի տակ միշտ Սենկեւիչի «Յո երթասն» էր ու Անդրանիկի գիրքը: Պապայիս կաբինետում էլ ապակու տակ Անդրանիկի նկարն էր: Են ժամանակ, ասում եմ քաղսովետի խանութ էր, բարձրաստիճան կոմունիստներ էին մտնում-դուրս գալիս, բայց ոչ ոք չէր ասում՝ հանի՛:

Մինչեւ մերոնց աքսորը նույն էն մահուղի գործարանում մեկը պատին մեխելիս պատահաբար ձեռքից գցում է Ստալինի նկարը: Մի բան, որ ձեռքից ընկնի, ի՞նչ կասես՝ վայ ես քո, չէ՞: Ինքը ասել է՝ վայ ես քո: Հաջորդ օրվանից էլ մարդուն ոչ ոք չի տեսել:

Հետո պապաս Երրորդ մասի (թաղամաս Երեւանում) մի մեծ գաստրոնոմ խանութում վաճառող էր աշխատում, պապիկս էլ Էդտեղ որպես գռուզիկ (բեռնակիր) էր աշխատում: Հետո պապիկս փողոցներում ծառ ջրողի գործ վերցրեց:

Արտասահման շատ ենք գնացել: Պապաս Հայաստանից առաջին անգամ 1969-ին տուրիստ է գնացել Փարիզ. իր հորաքույրը կանչեց: 1971-ին գնացել է Բեյրութ, որտեղ իր հարազատ հորեղբայրն էր ապրում: 1980-ականներին երկու անգամ գնացել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ: 1991-ին, երբ ինքս գնացի Ամերիկա, ասաց՝ եթե մնաս էլ, ես չեմ գալու, ու թե ես քեզ համար թանկ եմ, հետ արի, եւ ես հետ եկա:

Այսինքն, մենք մեծ ընտրություն ունեինք արտագաղթելու՝ Կանադա, ԱՄՆ, լիքը ուրիշ տեղեր. ամեն տեղ մոտ ազգականներ ունեինք: Մինչեւ հիմա էլ մեր ծանոթները, հարեւանները ասում են՝ բոլորը գնացին, բայց դուք մինչեւ հիմա ստեղ եք: Եղպես է լինելու. ես քաղաքում վերջը մի մարդ պե՞տք է մնա: Մի հատ երեւանցի պե՞տք է մնա, թե չէ: Մենք էլ որոշել ենք մնալ:

Ես հպարտ եմ, որ երեւանցի եմ, ի դեպ: Ես սիրում եմ իմ քաղաքը: Ճիշտ է, ես ախպարի տղա եմ, այսպես ասած: Եղ պիտակն էլ մեզի կպցրին, չէ՞: Եղ էլ երեւի մեր ճակատին է գրած, որ մենք պիտի լինենք ախպարի զավակներ՝ ես, իմ քույրս, եղբայրս, որ Էսօր Երեւանի համար մենք պայքարենք:

# ՎԵՐԳԻՆԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ



Ներգաղթել է  
1947-ին  
Սիրիայից

...պետք ա ամեն ամիս ստորագրեինք: Մի հատ մատյան էր դրած, պետք ա ստորագրեինք ու գրեինք, որ դաշնակցական ենք:

Հալեպից 1947-ին եկանք Հայաստան: Հայրս վարկ վերցրեց, Չեյթունում տուն կառուցեց: Նոր էինք տեղափոխվել, քառասուն օր էլ չէր անցել, մեզ աքսորեցին: Մամայիս պատմելով՝ գիշերով երկու տղա եկել, ասել են՝ տաք շորերը հավաքեք, ցուրտ տեղ եք գնալու, էնտեղ պիտի մնաք:

Մամաս շատ ճօշոյն (մարտական, խիզախ) կին էր, ուրիշները վախենում էին, ինքը չէր վախենում, ասել ա. «Յա, մենք եկել ենք Սիրիայից, որ Հայաստան ապրենք, ոչ թե գնանք սիբիրները ապրենք»: Դրանք ասել են. «Ոչինչ մորքուր ջան, էնտեղ էլ լավ կլինեք»: Էդպես մեր ունեցած-չունեցածը՝ վերմակ, անկողին-բան հավաքել ենք ու գնացել կայարան:

Տասնութ օր գնացքի մեջ էինք, տասնութ օր: Շոգ, կրակ, անտանելի շոգ: Վերջը հասանք Կռասնիթեչկա անունով մի տեղ. մի քանի տուն կար, ոչ գյուղ էր, ոչ ավան: Մամայիս պատմելով՝ մի քանի ռուս ընտանիք, մի քանի հայի տուն: Էդտեղ շատ քիչ ենք մնացել: Մեզ տարել են Ռասսիայնոյ: Ես արդեն վեց տարեկան էի, դպրոց պիտի գնայի, դպրոց չկար Էդտեղ, պետք է ուրիշ տեղ գնայինք:

Դաժան էր, բարաքի մեջ էինք ապրում, լույս չկար: Բռչկաներ (տակառներ) էին դրած, մեջը բերյոզի (կեչի) կեղեկները լցնում էինք, լուցկին տալիս վառում էինք, որ լույս լիներ, բայց երկար չէր վառվում, շուտ քնում էինք: Էդ բարաքը, ոնց որ բանակում, պոլկաներով (հարկերով), երկու պոլկա մի ընտանիքի, երեխեքը հինգ-հինգ իրար կողքի, մեծերն առանձին: Հետո տուն ստացանք, ֆիննական տուն բերեցին:

Էնտեղ մի հատ տղամարդ կար, շատ լավ մարդ էր՝ աքսորվածներից: Եկավ հայրիկիս ասեց. «Ուստա Վարդան, դու խելացի մարդ ես, ես ջահել-ջուհուկների խելքին չես, իմացի, ձեզ որ բերել են, երբեք հետ չեն դարձնի: Դուք ցանեք կարտոշկա, Էդ կարտոշկան մշակեք, մի հատ էլ կով առեք»: Մյուս կողմից էլ տեղի ռուսներն էին ասում. «Ой, не думайте, что обратно пойдете, такие вещи не будет здесь» (Օ, չմտածեք, որ հետ եք գնալու, Էդպիսի բան չի լինի այստեղ): Մամաս, ամեն անգամ որ լսում էր, աղի արցունք էր թափում. «Երեխեքիս ես բերեմ-հասցնեմ Սիբիր, մենք Հալեպից ինչի՞ եկանք»: Հետն էլ բացատրում էր, թե ինչի են եկել, ասում էր. «Թուրքը մեզի քշեց, մի օր էլ արաբը մեզի կքշի, ինչի համար մենք մնաք ստեղ [Սիրիայում], երեխեքը հավաքենք գնանք, մենք մեր Հայաստանը կապրենք, լավ ա մեր հայրենի հողում մեռնեմ, քան թե արաբ աշխարհում մեռնեմ»:

Վերջը, ահագին ապրանք ունեինք Հալեպից բերած, ծախեցինք, մի հատ կով առանք: Արդեն կովը որ ունես, կարտոշկան կա, էլ սոված չես մնա: Կաթ ա, պանիր ա, կաթը խնոցիով հարում էինք, յու-

ըր կար, եղ ձեռով ապրում էինք: Հետո ավելի լավացանք, իմ հայրիկս շատ աշխատասեր մարդ աս, այսինքն, մենք բոլոր ընտանիքով ենք եղ ձեռի: Կով ենք պահել, խոզ ենք պահել, հորթ ենք պահել, հավ ենք պահել, կարտոշկա ենք ցանել, կաղամբ ենք ցանել, ստեպղին ենք ցանել, կանաչի...: Չէ, կանաչի ընդեղ գոյություն չունեիր: Քոկոս, որ Հայաստանում էր մնացել, մեզ պասիլկա (ծանրոց) էր ուղարկում՝ չորացրած բադրիջան, բիբար, եղ բիբարի սերմը հայրիկս, շատ ուրիշ մարդ էր, ծաղկաման սարքեց, սերմերը գցեց մեջը, հետո տնկեցինք, հողն էնքան լավն էր, որ ամեն բիբարը 30 սանտիմետր էր լինում:

Ապրել ենք, բայց շոր չենք հագել: Տելեգրեյկա ենք հագել, ռետուզներ ենք հագել, ի՞նչ շոր, ինչ բան՝ телогрейка (բամբակե մզդակած հագուստ), валенки (թաղիքե ոտնաման): Եղբայրս, որ անտառում աշխատում էր, մամայիս գործած գուլպաներն էր հագնում, վրայից քո-

тырка (ոտքի փաթաթան) էր փաթաթում, նոր վալիսկան հագնում էր, որ գևար: Դե 40 աստիճան ցուրտ, պատկերացրեք, գրագետ-անգրագետ չկար, բոլորը անտառում պետք աս աշխատեն:

Ես չգիտեմ մամաս, եղբայրս, հայրիկս են պատմել, որ, ուրեմն, պետք աս ամեն ամիս ստորագրեինք: Մի հատ մատյան էր դրած, պետք աս ստորագրեինք ու գրեինք, որ դաշնակցական ենք: Ռուսերեն գիտեիր, պիտի ռուսերեն գրեիր, չգիտեիր, հայերեն էիր գրում: Իմ քույրիկս՝ հանգուցյալ, հայերեն գրում էր, որ մենք դաշնակցական ՉԵՆԹ: Երեխեքը չէին ստորագրում, չափափաս պիտի լինեիր, բայց քույրիկս հայրիկիս հետ գնում էր, հայրս ասում էր. «Լուսին ջան, գրի, որ մենք դաշնակցական ՉԵՆԹ»: Բա, պետք աս անպայման գրեինք:



Վերգինե  
Տերտերյանի մայրը՝  
Աննան, իրենց կովի  
հետ: 1952,  
գյուղ Ռասիպսայա



Աջից ծախ՝ Լուսինե  
եւ Վերգինե  
Տերտերյան  
թույրերն իրենց  
ընկերուհու՝  
Սաթենիկի հետ:  
1953,  
Ռասիպսայա

Ստալինը որ մեռավ, ես դպրոցական երեխա էի, լավ հիշում եմ: Մենք ծիծաղում էինք, հայ երեխեքով՝ իհարկե: Համ էլ ուրախ էինք, որ դպրոց չի լինելու. почему не будет сегодня школа? А сегодня наш вожак Сталин умер. (Ինչո՞ւ դպրոց չի լինելու: Որովիետեւ մեր առաջնորդ Ստալինն է մահացել): Մամաս որ լսեց, ասեց՝ էնպես «умер» (մեռներ) լինեիր, որ մենք էլ ստեղ չգայինք հասնեինք: Դրանից հետո դիմում գրեցինք: Կամաց-կամաց բոլորին ազատում էին, մեզ էլ ազատեցին:

# ՎԱՐԴԳԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Ներգաղթել է  
1946-ին  
Իրանից

Ովքեր գյուղացի էին, ուրախացան, որտեւ հող կար, ամեն ինչ կար: Մենք սովոր չէինք հողի, չէինք իմանում լապատկեն (բահը) ի՞նչ ա, սղոցն ի՞նչ ա, տապորն (կացինը) ի՞նչ ա:

Հայաստան մենք եկանք 1946 թվին: Մայրիկս չէր ուզում գար, տատս չէր ուզում, ոչ մեկը չէին ուզում, մենակ հայրս էր ոգեւորված: Բեիբութովին<sup>24</sup> էին ուղարկել, եկել, երգում էր. «Айастан мой милый, всех зовет сюда» (Հայաստանն իմ սիրելի, բոլորին կանչում է):

Սովետական սալոթաթերն (գինվորները) արդեն թավրիզում էին: Հերս շոֆեր (վարորդ) մարդ էր, բայց մի քանի լեզու գիտեր, ռուսերեն էլ լավ գիտեր, դրանց [գինվորներին] բերում էր մեր տուն, ուտացնում-խմցնում էր մեր հայաթում: Դրանք էլ ասում էին՝ Անդրանիկ, արի Հայաստան, Երեւանում տներ են սարքել ձեզ համար, սպասում են: Խեղճ Անդրանիկս էլ լսեց, գնաց-գրվեց՝ թե էթում եմ Հայաստան:

Տատիկս աղաչում էր՝ մի՛ գնացեք: Հերս ասում էր՝ ուզո՞ւմ ես քո աղջկան վերցրու, ես իմ երեխեքին կտանեմ, որ ուսում ստանան: Ըտենց բերեցին մեզի Հայաստան ու սկսվեց մեր, ոնց որ ասում են՝ хождения по мукам (դեգերումը տառապանքի ուղիներով):

Մենք ցամաքի ճանապարհով եկանք, անցանք Ջուլֆայով: Հայրս գռուզավիկ (բեռնատար) մեքենաներ էր հետը բերում՝ մեքենաներն էլ բեռով-բարձով: Մեզ ընդունեցին եւ միանգամից ուղարկեցին Էջմիածնի Սամաղար գյուղը: Մի հատ զոմ տվեցին, թե ստեղ պտի ապրեք: Հերս ահագին փող էլ էր բերել հետը, ստեղ-ընդեղ կաշառք տվեց, տեղափոխվեցինք Երեւան: Մի հատ մորքուր (ոչ հարազատ) ունեինք, ապրում էր պրոսպեկտի ամենավերելը՝ հիմիկվա Մատենադարանի մոտ: Տեղավորվեցինք նրա տանը, բայց նեղվածք էր, անհարմար: Մի որոշ ժամանակ անցավ, մերս ասեց հորս՝ Անդրանիկ, թեկուզ հավաքուն լինի, բայց մի հատ վարձով տուն գտի, գնանք ապրենք:

Էդ ընթացքում ձեւավորվեց «Ռուլեւիկ» արտելը: Ներգաղթողներից կոպեկներով իրանց բերած գռուզավիկներն առան, հավաքին մի տեղ, ասին՝ դե, դուք էլ եկեք, աշխատեք: [Իրանից ներգաղթած] Կորուխյան Բաբկեն կար, պապայիս ընկերն էր, նրան էլ դրին նաչալիկ (պետ, ղեկավար):

Պապան վարձով տուն ճարեց Ամիրյանի-պրոսպեկտի անկյունում, մենք գնացինք ընդեղ ապրելու: Մեր հարեւան Երմոնյան, չտեսնված սիրուն կնիկ, ֆիլիարմոնիայում էր երգում, բայց ոնց որ հայրիկս էր ասում՝ ղախպա (լիրք) էր: Դրա մոտ գալիս էին ԿԳԲ-ի պոլկովիկներ, պողպուլկովիկներ (գնդապետեր, փոխգնդապետեր), մի խոսքով՝ ազատ վարք ունեցող կնիկ էր: Սա մի տղա ուներ, անունը Աբո, գող էր: Էդ Ամիրյանի վրա ինչքան տուն կար, բոլորը կտրել (թալանել) էր ու ոչ մեկը ոչ մի բան չէին կարում անեին:

Ես բոլորը ինչի՞ եմ պատմում, գուցե կարեւոր չի, բայց ուղիղ կապված ա մեր հետագա ճակատագրի հետ:

Օրերից մի օր ախպորս համար դպրոցից կանչեցին ծնող: Էդ Աբուն մամայիցս 2000 մանեթ (ռուբլի) պարտքով փող էր ուզել: Ինքը կարտոյժնիկ էր (խաղամուլ), գառ էր գցում-բան էր անում, կրվում էր, մնում թավանի (պարտքի) տակ: Մեր տնից հորս կոստյումս էր գողացել-տարել: Մերս ասել էր՝ ամոթ չես անում: Էդ օրը, որ ծնող էին կանչել, սա նորից գալիս ա ու պարտքով փող ա ուզում: Մաման ասում ա՝ լավ, ես ժամանակ չունեմ, ես էթում եմ դպրոց: Մաման իջավ, ես էլ՝ հետեւից:

Հետ եկանք, տեսնեք, տունը սրբել-տարել էր՝ զարդեր, ոսկեղեն-բան, ամեն ինչ:

Մամայի հետ գնացինք ֆիլիարմոնիա, մորը գտանք, ասեց՝ վա՛յ, Քնար ջան, սուս մնացեք, ես ամեն ինչը կբերեմ: Դե, պարզ ա՝ չբերեց: Հետո հարեւաններն ասեցին՝ գնացեք միլիցիա: Միլիցիայում ասին՝ դուք գնացեք տուն, մենք իրան կգտնենք, կասենք հետ բերի: Մի քանի օր հետո ես ու պապան գնացինք միլիցիա, ասին՝ չենք կարում գտնենք: Չգտան ու ըտեսց էլ չգտան:

Որոշ ժամանակ հետո «Ռուվելիկ» արտելի դիրեկտոր Կորուխյան Բաբկենը՝ հորս ընկերը, ասում ա՝ Անդրանիկ, ոնց ես, հերս՝ լավ եմ, ի՞նչ ա եղել: Ասում ա՝ մաշինեն գապրավկա արա (լիցքավորիր), կայնացրու, թող մնա: Հերս ասում ա՝ Բաբկեն, եթե պետք ա, ես կաշխատեմ: Չէ, գնա, հանգստացի քեզ համար՝ ասում ա:

Ու հենց էդ գիշերը գալիս են երկու հատ աֆիցեր (սպա) ռուսական, երկու հատ հայ ու մի իրեք հատ սալոաթ՝ ավտոմատներով: - Հավաքեք ինչ կարաք, էթում ենք,- ասում են,- ստեղ հեռու չի, մի շաբաթ, մի քանի օրից հետո էլի հետ կգաք:

Ըտեսց լցրեցին մեզի մաշինեն, բերին էդ ստանցիան (կայարանը), լցրին տեյպաչի (անասուն տեղափոխելու) վագոնը, լիքը ժողովուրդ



Իրանից  
Ներգաղթողների  
բարավան, որի մեջ էր  
Նաեւ Անդրանիկ  
Մարգարյանի  
ընտանիքը: 1946



Վարդգես  
Մարգարյանի  
դպրոցական  
լուսանկարներից:  
1950, գյուղ  
Տյազուն

բերին-լցրեցին, դռները փակեցին, վերեւը ավտոմատով զինվորներ դրեցին, օդանցքներն էլ՝ ռեշտուկեքով (ճաղավանդակով): Ու մի ամիս բերին մեզի մինչեւ Ալթայ, մի ամիս:

Ես կարծում եմ մեր աքսորվելն էդ գողության հետ էր կապված: Երմոնյայի պաշտոնով սիրեկանները, որ գործը փակվի, մեզ աքսորել տվեցին:

Էդ Նաչալնիկ պոեզոր (գնացքի պետ կամ հրամանատար) շատ կեղտոտ մարդ էր: Հայ էր, պողպուկովնիկ, չտեսնված աննամուս մարդ: Մեզ սեյոդկա (պահածոյացված աղի ձուկ) էր ուտացնում, ուխա (ծկնապուր), աղոտ, հոտած: Չէր ըլնում ուտել, բայց ուզես-չուզես պտի ուտես:

Ու ըտեսց բերեցին մեզի մի ամիս մինչեւ Բառնաուկ, մինչեւ Չարինսկ: Բերին Չարինսկ, թափեցին, Չարինսկից մեզի ավտոյով տարան մինչեւ Անատոլե, Անատոլեից էլ պիտի տանեին վերջին տողկեն (կետը) Տյազուն լեսպրոմխոզը:

Տրակտորն Էկավ, հետեւից սանկա (սահնակ) էր կապած: Սենց երկու հատ գերան ա, վրեն՝ սունդուկի պես մի բան: Ընտանիքներին լցնում էին մեջը, տանում էին Տյազուն: Ոչ ֆառ (լուսարձակ) ունի, ոչ մի բան չունի, կոմենդանտը (պարետը) խմած, տրակտորիստը խմած, պամոչչնիկը (օգնականը) խմած, սաղ խմած են:

Պապան տեսնում ա, որ ես տրակտորը սաղ ցեխի մեջ ա ու արդեն մուլթն ընկնում ա, ուզում ա մի բան անի, որ գիշերով չգնանք: Ախպերս՝ օղորմած Արտաշս, մի տարի կես էր: Մորս ասում ա՝ Քնար, դրանց ասա, որ երեխեն հիվանդ ա, Էսօր չգնանք, վաղը գնանք: Մերս բերանը դեռ չէր բացել, կոմենդանտն Էկավ՝ թե գրուզիտայա

(բեռնվեք): Դոշակը գետնին զցած, ախպերս վրեն պառկած էր: Երկրորդ անգամ եկավ, քացով տվեց երեխին, ասում ա՛վաշու մատ, յա վամ չոս սկազալ, գրուզիտայա (Ձեր մերը, չասեցի՞ բեռնվեք):

Հերս լսում ա, բայց ի՞նչ անի, հո չի կարա կռիվ անի:

Նասեցինք եղ սանկի մեջ, տասներկու կիլոմետր մինչեւ Տյագուն պիտի գնայինք: Մի հարյուր մետր էր մնացել, որ հասնեինք, անցնում էինք ցեխաջրի միջով: Հերս բարձրանում ա եղ գերաններից մեկի վրա, որ նայի՝ ի՞նչ ա եղել, ծառի ճյուղը տալիս ա գլխին, մյուս ճյուղն էլ պալտոյի (վերարկուի) փեշն ա բռնում ու քաշում սանկի տակ:

Մուժ, ոչ մի բան չէր երեւում, ֆակել-մակել (ջահ) վառեցին, քաշեցին-հանեցին տակից, ցեխերի մեջ մի հատ դոշակ զցեցին, պառկացրին վրեն: Հերս, հըըր սաղ էր, կանչեց մեծ ախպորս՝ Բարսեղին, ինքը տասնվեց տարեկան էր, ասեց՝ Բարսեղ ջան, դու համ հեր ես, համ մեր ես, համ քուր ես, ամեն ինչ դու ես: Վայր (վերջ): Ու ըտենց էլ գնաց: Տարանք, ոնց որ շանը զցում են, եղ ձեւի չորս հատ տախտակ խփինք, տարանք, զցինք փոսը: Ի վայր, մնացինք ըտենց մենք անտեր-անտիրական:

Դրանից հետո սկսինք աշխատել: 300 գրամ հաց էին տալիս աշխատողին, ռժանոյ (տարեկանի) հաց, որ հուպ էիր տալիս, ջուրը թափում էր: Ովքեր գյուղացի էին, նրանք ուրախացան, որտեւ հող կար, ամեն ինչ կար: Մենք սովոր չէինք հողի, չէինք իմանում լապատկեն (բահը) ի՞նչ ա, սղոցն ի՞նչ ա, տապորն (կացինը) ի՞նչ ա: Իսկ նրանք միանգամից սկսեցին ցանել-բան անել՝ կարտուլ-մարտուլ: Երեւանում ինչ ունեինք-չունեինք մեր բարեկամները ծախեցին, փողն ուղարկեցին, մի հատ տուն առանք, փետից մի տուն, նեղլիկ մի սենյակ էր, բայց մեզ պալատ էր թվում: Մենք գնացինք տրակտորի վրա աշխատեցինք՝ ես ու ախպերս: Ես ախպորս մոտ պրիցեպի (կցորդ) վրա էի աշխատում, 11 տարեկան հասակից արդեն սկսեցի աշխատել, ծառերն էինք տանում, տեղափոխում:

Տյագունում մնացինք յոթ տարի, մինչեւ 56 թիվը: Արդեն բոլորն ազատվում, Հայաստան էին գնում: Մենք Բառնաուլ տեղափոխվեցինք, գործ-բան, վատ չէր, եղտեղ էլ մնացինք: Երեք ախպերներս մահացան, հիմա ես մենակ եմ:



Բարսեղ եւ Վարդան Մարգարյան եղբայրները Բառնաուլի «Ալթայ» հյուրանոցի դիմաց, 1955

# ԵՐԻԿԱ ՓՈՔՐԱՉՅԱՆ



հայրը  
Ներգաղթել է  
1947-ին  
Պաղեստինից

Հայրս միշտ պնդում էր, որ ինքը քաղաքականությունից շատ հեռու է եղել, բայց քաղաքականությունն ինքն էր գտել նրան ու աքսորել էին որպես դաշնակի:

Հայրս պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ էր: Ապրում էր Պաղեստինում: 1946-ին Լոնդոնում մասնակցել է բռնցքամարտի Եւրոպայի առաջնությանը եւ ծանր քաշայինների մեջ զբաղեցրել ամենաբարձր տեղը:

Բռնցքամարտը նրան մեծ հաջողությունների կհասցներ, բայց ընտանիքում այդ զբաղմունքը չէին խրախուսում: Պապս շատ խիստ մարդ էր, եւ հավանաբար, ուզում էր, որ որդին ավելի կարեւոր գործերով զբաղվի: Իսկ նրա համար բռնցքամարտը տարերք էր:

Արդեն 60-ականներին Բառնաուլում, երբ մարզիչ էր քաղաքային մարզադպրոցում, մի-երկու անգամ առիթ եմ ունեցել տեսնելու նրան այդ տարերքի մեջ: Նույն դպրոցում գիմնաստիկա (մարմնակրթություն) էի պարապում ես: Դասից հետո գալիս էի իր մոտ, որ միասին տուն գնայինք ու տեսնում էի, թե ինչպես էր ռինգի մոտ նստած հրահանգներ տալիս իր սաներին, ոնց էր ցույց տալիս դիրքերն ու շարժումները: Դասերը նստած էր անցկացնում, որովհետեւ ոտքերի հետ կապված խնդիր ուներ, ոտքերն ուռչում էին:

1947-ին Պաղեստինից տեղափոխվել է Հայաստան: Այդ ժամանակ հազարավոր մարդիկ տարբեր երկրներից Ստալինի կանչով գալիս էին: Ինքն էլ՝ կամ խիստ հորից առանձնանալու կամ էլ մարզական առաջխաղացման հույսեր ունենալով, եկել էր Հայաստան: Թեեւ այդ տարիների մասին շատ չէր սիրում խոսել, կարծեմ երեւանում էլ է զբաղվել բռնցքամարտով, բայց սիրողական: Խորհրդային Միությունում սպորտը պրոֆեսիոնալ չէր: Ասում էր՝ մարզչական աշխատանքով էլ է զբաղվել, որ իր սաների մեջ է եղել նաեւ հանրահայտ Վլադիմիր Ենգիբարյանը<sup>25</sup>, բայց նրա պաշտոնական կենսագրության մեջ նման հիշատակում չկա, չգիտեմ:

Հայրս միշտ պնդում էր, որ ինքը քաղաքականությունից շատ հեռու է եղել, բայց քաղաքականությունն ինքն էր գտել նրան ու աքսորել էին որպես դաշնակի: Իրականում, որքան ես եմ հիշում նրա կցկտուր պատմություններից, պատճառը եղել է կենցաղային մի միջադեպ: Նա լողացել է ընդհանուր բաղնիքում եւ ջրի թասի պատճառով վիճել է մի մարդու հետ: Դե, գիտեք, բաղնիքում բոլորը հավասար են ու միանման: Վեճը բորբոքվել է, եւ երբ այդ մարդը հանդերձարանում հագել է գեներալի իր համագգեստը, հայրս հասկացել է, որ այնտեղ այլեւս կյանք չի ունենա:

Այո, ինքը բռնկուն բնավորություն ուներ: Սիրում էր ասել միայն ճշմարտությունն ու ասել առանց վախենալու՝ մարդկանց աչքերի մեջ նայելով: Դե, դրա համար էլ երեւի 1949-ին աքսորվեց այստեղ՝ Ալթայի երկրամաս: Ես հետո նայեցի նրա փաստաթղթերում, գրված էր «որպես դաշնակ», բայց վստահ կարող եմ ասել, որ որեւէ կուսակցության կամ քաղաքականության հետ կապ չուներ: Նրա ուշքն ու միտքը միայն բռնցքամարտն էր:




Այստեղ գալուց հետո ինչո՞վ է զբաղվել, անկեղծ ասած չգիտեմ: Դուք (դիմում է հարցազրուցավարին) քիչ առաջ ասացիք, որ որոշ աքսորյալներ հիշել են նրան՝ որպես մարզի: Ես չգիտեմ, այդ բաները չէի կարող իմանալ, որովհետեւ ծնվել եմ 1951-ին: Դրանից հետո հիշում եմ, որ նա երկար ժամանակ բանտում էր: Երկու անգամ դատապարտվել է, կարծում եմ չնչին զանցանքների համար: Ասում էին՝ իբր գողություն է արել, ես չեմ հավատում: Չեմ հավատում, որովհետեւ իմ տեսած Մարդոն բարի, առատաձեռն մարդ էր, վերջին շապիկը կտար ուրիշին, ով դրա կարիքն ուներ, ո՞նց կարող էր գողություն անել:

1961-ին նա վերջապես ազատվեց բանտից: Ես 10 տարեկան էի եւ ապրում էի տատիկիս մոտ, քանի որ մայրս (գերմանուհի էր, 1941-ի աքսորվածներից) արդեն մահացել էր: Հիշում եմ բոյով, գեղեցիկ տղամարդ, եկավ քաղցրավենիքի կուլյոնները (ուլորված թղթից բրգաձեւ

տոպրակներ) ձեռքին ու ես անասելի երջանիկ էի, որ հայրս ինձ հետ է:

Հետո ամուսնացավ ազգությամբ հրեա մի կնոջ հետ, որի նախորդ ամուսինը նույնպես հայ էր՝ Ծամշադինի Դրոյի գյուղից, եւ զոհվել էր 1941-ին: Ուրեմն ամուսնացավ ու մենք գնացինք այդ կնոջ տուն ապրելու: Նա իր նախկին ամուսնուց, երկու տղա ուներ, եւ մենք հինգով ապրում էինք նրա մեկսենյակալոց բնակարանում: Մինչեւ հիմա որ հիշում եմ, զարմանում եմ, թե ի՞նչ մեծ հոգու տեր կին էր: Նա անչափ էր սիրում հորս, հավանաբար դրա համար էլ չէր զգում կյանքի ու կենցաղի դժվարությունները:

Հայրս աշխատում էր մարզադպրոցում, բայց ասեմ, որ կյանքն այնքան էլ հեշտ չէր: Գործընկերները նախանձում էին նրան վարպետության համար եւ բողոքում էին, որ



Մարդո Փոքրայանը Հայաստան ներգաղթելուց առաջ




Երիկա Փոքրայանը հոր հետ: 1961, Բառնաու


նստած էր պարապմունքներն անցկացնում, որ չէր կարողանում պատշաճ կերպով լրացնել մագչական իր օրագրերը: Դե, ռուսերենը շատ լավ չէր, երբեմն ինձ էր խնդրում, որ գրեմ:

Հորս ընտանիքը Պաղեստինից ցրվել էր աշխարհով մեկ: Երկու քույրերը Հայաստան էին եկել: Երբ 1969-ին Հայաստան գնացինք, մի քրոջը տեսանք, մյուսն արդեն մահացել էր: Եղբայրն ու մայրը, կարծեմ, տեղափոխվել էին Միացյալ Նահանգներ: Որքան հիշում եմ, եղբայրը նամակ էր գրել, անգամ հրավեր էր ուղարկել, բայց ո՞վ թույլ կտար նախկին աքսորյալին, երկու անգամ դատապարտված մարդուն Ամերիկա գնալ:

Այդպես ապրեց մինչեւ 1976 թվականը, մահացավ այստեղ, այստեղ էլ թաղված է՝ Բառնաուլի գերեզմանատանը:



Մարդո  
Փոքրայանը  
մարզական  
աշխատանքի  
պահին: 70-  
ականների  
սկիզբ,  
Բառնաուլ



08.08.1961

Տեղեկանք

Քաղաքացի Մարտիրոս-Մարդո Լեւոնի Փոքրայանը՝ ծնված 1922թ., 1949թ. հունիսի 14-ին արքայազն է Ալթայի երկրամաս:

Հատուկ բնակավայրից ազատվել է 1956 թ. մարտի 11-ին՝ արքայազնի համար հիմք հանդիսացող նյութերի չհիմնավորված լինելու պատճառով: Մինչև արքայազն Մ.Լ. Փոքրայանը աշխատել է Հայկական ՍՍՀ ֆիզկուլտուրայի կոմիտեում:



Մարդո  
Փոքրայանի  
հանդիպումը  
Հայաստանում  
Ամերիկայում  
բնակվող քրոջ՝  
Ազատուհու,  
երբոր՝ Միհրանի  
եւ քրոջ ամուսնու՝  
Լշանի հետ:  
1968,  
Սարդարապատ

## ՓԵՐՈՒՉ ԲՈՅԱՉՅԱՆ



Ներգաղթել է  
1946-ին  
Լիբանանից

Տուն չիկա, տեղ չիկա, ի՞նչ  
կըրնանք ըսել: Բայց մեր  
հայ ժողովուրդը քաջ ժողո-  
վուրդ է: Կոփմանանք, ամեն  
հարմարությունն էլ ստեղ-  
ծեցինք:

148

## ԺԻՐԱՅՐ ՌԱԹԵՒՈՍՅԱՆ



Ներգաղթել է  
1946-ին  
Լիբանանից

Վագոնի մեջ խոսում են.  
«Դաշնակ ի՞նչ ըսել է, ի՞նչ ը-  
սել է»: Գաղափար ալ չու-  
նեին. որպես դաշնակցա-  
կան աքսորվում ա, գաղա-  
փար ալ չունի:

149



Հովհաննես Պայտարյանը եւ ժիրայր Ռաթեւոյանը արքայազնութեամբ

ցաբար գիտեի, որ ինչի համար ա: Չնայած աշխատել ենք, լավ պլաններ ենք կատարել Հայաստանում, պլան կըսեին այդ ժամանակ, բայց արքայազնութեան, արքայազնութեան:

**ՓԵՐՈՒՉ**

Աքսորված մարդը լավ կըլլա՞, յավրում (զավակս): Մեծ բարաքներ կար, ժողովուրդին տեղավորեցին ադ բարաքներուն մեջը, մեզի ալ բեմը ինկավ, բեմը, իրենց բեմը, հա: Այդքան ուրախացանք, որ գոնե գետինից մի քանի աստիճան բարձր ենք, որովհետեւ հարմարություն չտվին ժողովուրդը, անհարմար է ըսել՝ աղբի պես նետեցին ժողովուրդը:

**ԺԻՐԱՅՐ**

Սիբիր, Սիբիր, արքայազնայրը, ցուրտ երկիրը, 40 աստիճան ցրտություն ունի: Կներես, անհարմար է, թքես, արդեն թուրքը օդի մեջ կսառի: Իսկ մենք էդ պայմաններում աշխատում էինք դրսում, երեք սմեն (հերթափոխ): Վալիկաներ կըսեն, ես պես բոլոր կոշիկներ են, հետո շուբեր (մորթուց մուշտակներ) կար, էդ տաք շուբերը պտի հագնեցինք: Ավտոն մի հատ որ կանգներ, կսառչեր: Ավտոները բոլոր չոր փայտիկներով կաշխատեին, նավթ էլ չկար, պետք է միշտ էդ փայտերը լցնեին, վառվեր, որ չսառեր: Մեր գործը էդ մեքենաների մեջ գերան բեռնելն

եր, գերան: Գերանները անտառից կուզային գետի մեջով: Մեքենաներով կհանեին, կշարեին իրար վրա, ճամբը կսառեր: Ու մեկը վերեւ կելեր, սառուցը կքանդեր, կթափեր, որ մենք բեռնեցինք, քանի որ ավտոները կայարան պիտի երթային: Շատ հայեր կային մեզ հետ միասին, հայկական բրիգադ ունեինք:

**ՓԵՐՈՒՉ**


Աքսորի ժողովուրդին բերին, դաշտը նետեցին, քեզի համար գնա, ստեղծե: Շատ դժվար էր, շատ: Տուն չիկա, տեղ չիկա, ի՞նչ կըրնանք ընել: Բայց մեր հայ ժողովուրդը քաջ ժողովուրդ է: Կոնստանտնուպոլիսում, ամեն հարմարությունն էլ ստեղծեցինք:

**ԺԻՐԱՅՐ**


Բլինովոն մեր գյուղն էր, իսկ կայարանը չեմ հիշում ի՞նչ կկոչվեր, տեղի կայարանը: Էնտեղ էլ բավականին վարժվեցինք, սովորեցինք, Աստված ուժ տվեց, երիտասարդ էինք: Մեծ տղաս կար արդեն, Լիբանան էր ծնված, հետո մյուս տղաս Սիբիր ծնվեց, անունը Ազատ դրինք: Իսկ հետո Նշանն ու Արմիկը ծնվեցին: Սկզբից հույս չունեինք ոչ մի, արքայազն են, արքայազնայրից ո՞ւմ հետ ես խոսելու, ո՞ւմ ես խնդրելու: Հույս չունեինք: Հետո որ Ստալինը սատկեցավ, մեզի կամաց-կամաց թողեցին: Մեր ամբողջ հայ ժողովրդի կյանքը կերած էր էդ մարդը: Յոթ տարի մնացինք, Սիբիրից վերադարձանք 56-ին: Հետո որ եկանք Երեւան, մեզի երկու բնակարան տվեցին: Սալոն (սրահ) ունեինք, հարեւանները կուզային, հարսանիքներ կընեին: Լավ էր, բայց էի չմնացինք: Ասինք՝ երթանք Ամերիկա, վախեցանք նորից կաքսորվենք:

**ՓԵՐՈՒՉ**

Վերջը, իշտե, հասանք Ամերիկա: Է՛, բրավո Ամերիկա, բրավո, դուռերը բացավ եւ բերավ հայությունը, բրավո:



Սգո հանրահավաք Ստալինի թաղման առիթով Բառնաուկում: Մարտ, 1953



ԱԼԹԱՅՈՒՄ  
ՀԻՇՈՒՄ ԵՆ



Չանգվածային աքսորի հետազոտությունը թերի կլիներ, եթե 2016-ին, պատեհ առիթից օգտվելով՝ չգնայինք ՌԴ Ալթայի երկրամասի որոշ բնակավայրեր, որտեղ ապրել էին աքսորյալ հայերը:



Նադեժդա Ստարցեան եւ Նատալյա Աբլաժեյը (աջից): 2016, Սորոկինո

Առիթը ստեղծել էին Նովոսիբիրսկի համալսարանի դասախոս, պատմության դոկտոր Նատալյա Աբլաժեյը եւ Չարինսկում ապրող ուսուցչուհի Նադեժդա Ստարցեան, որը թոշակի անցնելուց հետո նվիրվել է երկրամասի անցյալի ուսումնասիրության գործին:

Սորոկինո, Տյագուն, Խմեյովկա, Կորդոն... Այս գյուղերը, որոնք ամենից հաճախ են հիշատակվում նախկին քսորյալների հիշողություններում, ներառվեցին մեր երթուղում, իսկ ոչ պակաս հաճախ հիշատակվող Ռասիպոյ, Ինգարա եւ մյուս բնակավայրերը դուրս մնացին՝ այլեւ գոյություն չունենալու պատճառով:

Սուղ ժամանակամիջոցում ընդամենը հինգ օրում, կարողացանք հանդիպել եւ զրուցել հիմնականում 70-ն անց մեկ տասնյակից ավելի մարդկանց հետ, որոնց բանավոր հուշերը ոչ միայն հնարավորություն տվեցին ճշգրտելու հայ քսորյալների կյանքի մասին մեր ունեցած տեղեկությունները, այլեւ հենց իրենց՝ տեղաբնակների, անձնական պատմություններով հարստացրեցին խորհրդային անցյալի մասին մեր պատկերացումները:

## ԱՆԱՍՏԱՍԻԱ ԱՊԱՐԻՆԱ



Տասնվեց տարեկան էի, ինձ՝ ուղարկեցին դաշտ խոհարարի մոտ աշխատելու: Այնտեղ հայեր կային, աշխատում էին: Երկու եղբայր էին: Ավագը՝ Ռշտունը, տրակտորի դեկին էր, կրտսեր եղբայրը՝ Ռաֆիկը, գուլթանի վրա: Այ, դա եմ հիշում: 1950 թվականին էր: Մեկ էլ հիշում եմ, որ մի հայ աղջիկ մրսեց, հիվանդացավ... թաղեցին այստեղ: Այն ժամանակ կլիման ուրիշ էր, շատ ցուրտ էր: Նոյեմբերի 7-ին՝ հեղափոխության օրը, արդեն ահագին ձյուն կար: Նոյեմբեր, դեկտեմբեր,

Սորոկինո  
Սորոկինսկի  
շրջան

հունվար, փետրվար. մի չորս ամիս ձյուն էր, մարտ-ապրիլին նոր սկսում էր հալել: Ձմեռները ցրտաշունչ էին, իսկ հայերը կարգին տաք հագուստ չունեին: Ամենատաք բանը բրդյա շալն էր, իսկ մեզ մոտ՝ Սիբիրում, որ չմրսես, պետք է մուշտակ ու ֆուֆայկա (տաք ներքնագգեստ) ունենայիր: Սա է, ոչինչ չեմ հիշում էլ, ինձանից ավելի իմացողներն էլ այլևս կենդանի չեն:



Շաբարի  
ճակղեղի  
բերահավաք,  
1950-ականներ,  
Ալեյսկի շրջան

## ՅՈՒՐԻ ՆԵԿՐԱՍՈՎ



Բերում էին նրանց [հայերին] ձիերով: Հիշում եմ, սայլերը պատված էին գորգերով, իրենք էլ՝ գորգերի վրա նստած: Այն ժամանակ մենք նման գեղեցկություն չէինք տեսել: Գորգերն վառ կարմիր էին: Նրանք գնում էին լուռ, շուրջբոլորը գնեցիկով, շվարած ու մոլոր: Մենք էլ՝ երեխա էինք, ճամփեգրին կանգնած նայում էինք. տանում են ու տանում: Տայգայում նրանց ծանր, դժոխային աշխատանք էր սպասվում: Մեխանիզմ, որպես այդպիսին, չկար: Ծառերը սղոցում էին ձեռքով, ձեռքի սղոցներով: Ամեն ինչ ձեռքով էր, ձեռքով: Իսկ գարնանը, երբ ջրերը վարարում էին, գերաններն էին գետով տեղափոխում փայտամշակման կոմբինատ:



Անտառհատման  
աշխատանք, 1955,  
տեղամաս  
Ռասիպկայա:



## ՆԱԴԵԺԴԱ ՆԵԿՐԱՍՈՎԱ



Աքսորյալների մեջ բժիշկների, դերձակների, լուսանկարիչների, կոշկակարների ընտանիքներ կային: Մարդիկ, որ Ստալինի հրամանով քշվել էին այստեղ՝ Սիբիր, Ալթայ: Հետպատերազմյան ծանր պայմաններում պահանջված մարդիկ էին, բայց գրեթե բոլորին ուղարկում էին ծառ կտրելու: 1953-ին ես երրորդ դասարանում էի սովորում: Առաջին հայ երեխաներն այդ ժամանակ եկան մեզ մոտ: Իմ համադասարանցիներն էին Ժենեգևան (Եւգենիա Կակաչյան), Լյովկա Մնացականյանը, նրանք էին մեզ հետ սովորում:

Ահա, ինդրեմ, մեր սիրելին՝ Ժենեգևան: Երրորդ դասարանում պիոներ ընդունվեցինք եւ այսպիսի մի լուսանկար կա, տառասխալով էլ գրված է «быть готов» (եղիր պատրաստ): Ի դեպ, հայերից բացարձակ գրագիտություն էր պահանջվում, իսկ այստեղ գրված է տառասխալով: Պիոներական ողջույն ենք տալիս, եւ մեր քնքույշ Ժենեգևան ու ես բոլորից բարձր ենք պահել ձեռքերը: Մենք պատրաստ էինք բոլոր փորձություններին:

Երեխեքի համար ամենամեծ դժվարությունը հավանաբար ոչ թե կլի-

Սորոկին  
Սորոկինսկի  
շրջան

մայական պայմաններն էին, այլ՝ լեզուն: Դպրոցի թանգարանի նյութերը հավաքելիս՝ գտա այդ տարիների մանկխորհուրդների նիստերի արձանագրություններ: Նայում եմ, հայ երեխեքի մեծ մասի ազգանունների դիմաց ռուսաց լեզվի գնահատականը երկուս է. վերաքննություն պետք է հանձնելիս կամ մնում էին նույն դասարանում: Եւ դա ռուսաց լեզվին լավ չտիրապետելու պատճառով:



Սորոկինոյի դպրոցի 3 բ դասարանի պիոներական ջոկատը: Առաջին շարքում ձախից երկրորդը՝ Եվգենյա Կակաչյանն է, երկրորդ շարքում աջից չորրորդը՝ Նադեժդա Նեկրասովան: 1953

## ԱՆԴՐԵՅ ՎՈՒԿԿԵՐՏ



Ես ծնվել եմ Սարատովի մարզում, Կրասնոարմեյսկ քաղաքում: Մորս ուղարկել էին ճամբար՝ հարկադիր աշխատանքի, իսկ հորս տարել էին 58-րդ հոդվածով: Դա քաղաքական հոդված է՝ 10 տարի կամ առավելազույն պատիժ: Այստեղ եկանք 1941-ի հոկտեմբերի 3-ին: Կամավոր-պարտադիր... Աքսորեցին: Ո՞նց ասեմ չեին վստահում: Կռիվ էր սկսվել, վախենում էին, որ գերմանացիները գլուխ կբարձրացնեն, եւ մենք հայտնվեցինք Սիբիրում<sup>26</sup>:

Հայերից առաջինն, ում ճանաչել եմ, ազգանունը չեմ հիշում, Լյովա էր անունը, ինժեներ-էլեկտրիկ էր: Խաչատուրյանը կար, Մեսիսյանը, Տաբակյանը<sup>27</sup>: Նրանց ազգանունները հիշում եմ: Որմնադիր էին, բայց նաեւ անտառ էին հատում, ես էլ նրանց հետ եղել եմ տայգայում: Աշխատող ձեռքեր շատ էր

Սորոկին  
Սորոկինսկի  
շրջան

պետք: Գործից գալիս էիր, կացինս ուսիդ ու գնա նորից աշխատելու:

Է՛հ, ինչ իրենք քաշեցին, նույնն էլ՝ մենք. Ստալինյան օրենքներ էին:

Ես բիզն էլ խաչատուրյանի նվերն է: Հայաստան վերադառնալուց առաջ, շուկայում կանգնած մանր-մունր բաներ էր վաճառում, որ հետը չտաներ: Ու քանի որ ընկերներ էինք, միասին էինք աշխատում, ինձ հիշատակ թողեց: Իսկը վալենկա կարելու համար է: Ճիշտ է, ես էլի ունեմ, բայց սա ինձ համար շատ թանկ է, որովհետեւ հիշատակ է:

Ատաղձագործների  
բրիգադ: Աջից  
առաջինը՝ Անդրեյ  
Վուկկերտ,  
հինգերորդը՝  
Քրիստափոր  
Միսիսյան: 1954, գյուղ  
Սորոկինո (Սորոկինոյի  
երկրագիտական  
թանգարանի ֆոնդից)



## ԳԱԼԻՆԱ ՄԱՔՍԻՄՈՎԱ



Ոչ ոք ինձ երբեք չի հարցրել հայերի մասին, երբեք ոչ ոք: Դուք առաջինն եք: Նույնիսկ զարմացա ու մի տեսակ շփոթվեցի: Գրիգորյանների<sup>28</sup> ընտանիքի մասին մի փոքր կպատմեմ՝ քեռի Գրիշան էր, կինը՝ մորաքույր Վայան, աղջիկ ունեին՝ Մարիետան: Մարիետայի հետ ընկերներ էինք: Մեզ մոտ էին ապրում: Ե՞րբ էին նրանք եկել՝ չեմ հիշում, բայց ապրում էին հենց մեր բակում: Հետո Բոլնիչևի նրբանցքում քեռի Գրիշան փայտե տնակ կառուցեց:

Քեռի Գրիշան շատ համեղ էր պատրաստում: Նրա բաստուրման երբեք չեմ մոռանա: Կտուրի տակ բաստուրմա էր չորացնում, ես ու Մարիետան թաքուն բարձրանում, ուտում էինք: Մարիետան այստեղ առաջին դասարանն ավարտեց եւ 56 թվականի, կարծեմ աշնանը,

նրանք գնացին: Նրանք գնացին, մենք մնացինք: Ճիշտ է, ես այստեղ եմ ծնվել, բայց պապս ու տատս բելառուս են, այսինքն՝ պապս կիսով չափ լեհ է: Իրենք էլ ոչ առանց պատճառի են այս կողմերում հայտնվել, բայց տանը երբեք ոչինչ չէին խոսում:

Զ  
գրգռ ~~Trusya~~  
mema Bana  
Maksimova  
u  
Hosca.



Գալինա Մաքսիմովան  
(ձախից աջինը)  
Գրիգորյանների  
ընտանիքի հետ:  
1949, Սորոկին

# ՏԱԻՍԻԱ ԿՐԱՍԻԿՈՎԱ

Սորոկին  
Սորոկինսկի  
շրջան



Նրանց տանում էին մեր փողոցով Կեմերովոյի մարզի կողմը: Մենք տեսնում էինք: Հիշում եմ իրենց լեզվով երգեր էին երգում: Շատ հայեր բերեցին, հայկական ընտանիքներ: Սկսեցին տեղավորել: Ով կարող էր, ընդունում էր: Մի ընտանիք էլ մեր տանը տեղավորեցին, երեք տարի մնացին: Մայրս շատ հյուրընկալ էր, բոլորին կկերակրեր: Մի տղամարդ էր՝ Հարությունը<sup>29</sup>, տատիկը՝ Վարսենիկ, եւ երկու որդի՝ Միխայիլն ու Ալեքսանդրը: Տղերքը Ռասսիական տեղամասում էին աշխատում, մեզանից 30 կիլոմետր էր հեռու: Գնում, աշխատում էին, շաբաթ-կիրակի գալիս էին տուն:

Շատ հյուրասեր էր մայրս: Աշխատասեր էր: Ինքն էլ քիչ բան չէր տեսել: Հորը կուլակաթափ էին արել, կուլակ էին եղել իբր: Երկու անգամ

կուլակաթափ էին արել: Տատիս ու պապիս աքսորել էին Նարիմ: Երկու տղա ունեին՝ 12 եւ 7 տարեկան: Վեց տարի Նարիմում մնացին, հետո վերադարձան, այստեղ Լուզովիկում ապրեցին: 37-ին ՆԿԿԴ-ից եկան պապիս տարան ու վերջ, եկան ու տարան: Իբր թե ժողովրդի թշնամի էր: Ի՞նչ էր արել, մեղվի պես աշխատում էր: Հետո հիշում եմ, մայրս պատմում էր, բանտից նամակ էին ստանում. «Տաք գուլպաներ եւ մի քիչ սիստոր ուղարկեք»: Թույլ չէին տվել ուղարկել, այդպես էլ բանտում մեռավ:

Ե՛հհի, ինչե՛ր ենք քաշել:

Ձախից աջ՝  
Տաիսիա  
Կրասիկովա,  
Հարություն եւ  
Վարսենիկ  
Հարությունյաններ,  
ուս հարեաններ:  
1950,  
գյուղ Խմելյովկա



## ԳԵՆԱԴԻ ՌԵՇԵՏՈՎ



Օրապահիկ հաց էին տալիս: Աշխատող ձեռքին այսքան կիլո, ընտանիքի անդամներին 200-ական գրամ: Վահրամ կար, գալիս էր խալուֆ, գոռգոռում էր, հայիոյում, տեղամասի պետին ուշուց էր տալիս: Ասում էր. «А, Ваграм килограм, а начальнику булка?» (Աաա՛, Վահրամը [ստանա] մի կիլոգրամ, իսկ պետը բոքո՞ն ուտի): Պետն՝ ուրեմն, կարող է բոքոն վերցնել, իսկ Վահրամն ընդամենը՝ մի կիլոգրամ: Այնպես էր ճշում խանութով մեկ: Այ, դա լավ եմ հիշում: Վահրամ էր անունը, Վահրամ: Վայ, Աստված բուրից հեռու պահի, դա կյանք չէր, այլ՝ տաժանք: Նրանց ուղարկել էին տաժանակրության, իսկ մենք սեփական կամքով էինք այստեղ: Գիտե՞ս, ոնց էր: Ոչխար էիր պահում, պետք է մեկուկես մորթի հանձնեիր: Կեսը որտեղի՞ց վերցնեմ,

ի՞մը տամ: Հարկերը... Հարկեր չէին, այլ կեղեքում: Կարտոֆիլը դեռ չհասած՝ գալիս էին, պլանը պետք է կատարել: Կարտոֆիլը որ քանդում էինք, գալիս ու տանում էին, վերջ, ցտեսություն: Հավ էիր պահում, 100 ձու պետք է հանձնեիր: Ածում է 100 ձու, թե՛ ոչ, պետք է հանձնեիր: Զհանձնեցիր, պարտքդ կանցնի եկող տարվան: Օ՛, երջանկության մեջ ծփում էինք, բայց Աստված հեռու պահի նման երջանկությունից, չեմ ցանկանում, ոչ մեկին չեմ ցանկանում: Իսկ հայերին լավ եմ հիշում, նրանց մասին ոչ մի վատ բան չեմ կարող ասել: Լավ ընկերներ էինք: Դա երեւի էլ երբեք չի կրկնվի՝ հանգիստ, շատ խաղաղ, չարություն չկար՝ հայր ռուսի հանդեպ, ռուսը հայի դեմ, չկար չարություն, բարեկամություն էր:

Տյագուն  
Սորոկինսկի  
շրջան

Գենադի Ռեշետովը  
հարցազրույցի  
Նկարահանման  
պահին: 2016,  
գյուղ Տյագուն



## ՎԱՐՎԱՌԱ ՄԱԼՅԵՎԱ



Մայրս էր պատմում, բայց ինչ-որ բան ես էլ եմ հիշում: Տասնամեկ տարեկան էի, երբ նրանց բերեցին: Ապրելու տեղ չկար: Ամբարներում, որտեղ տեղավորված էին, ցուրտ էր: Պակասություն էր, սղություն: Ոչ ոք չէր բողոքում: Կարտոֆիլ էին ցանում, ամեն ընտանիքը մի 600-700 դոյլ կարտոֆիլ էին քանդում, իհարկե՝ ով ծույլ չէր, եւ բահերով էին քանդում: Կարտոֆիլը կա, արդեն հարուստ ես, վե՛րջ, եւ կուշտ ես:

Տյագուն  
Սորոկինսկի  
շրջան




Տյագունի  
գյուղատվետը,  
1951

# ԱՆՆԱ ԿՈՒՋՄԻՆԱ



Ես նրանցից մեկին եմ լավ հիշում, Ռազմիկ էր անունը: Ճարպիկ տղա էր: Վարորդ էր աշխատում, մեզ վստահում էր դեկը, քշում էինք: Այ, իրեն շատ լավ եմ հիշում: Եւ մի աղջիկ կար հետը, ո՞նց էր անունը՝ չեմ հիշում: Երիտասարդները շատ էին: Նրանց ընտանիքներում շատ երեխաներ կային: Ասում էի՝ ո՞նց են ձեզ երեխեքի հետ աքսորել, այդպիսի բան կլիսի՞, իրենք էլ չգիտեին: Ասել էին՝ իրերը վերցրեք ու գնացեք: Ամեն ինչ թողել, եկել էին:

# ԱԼԵՔՍԵՅ ՏԻՄՈՖԵԵՎ



Հիշելը չեմ հիշում, միայն հիշում եմ, որ այն ժամանակ Ռասիպնոյում տեղամասային տեսուչ կար: Նրանք ընդհանրապես ազատ էին, բայց՝ միլիցիայի հսկողության տակ, պետք է ստորագրեին, որ տեղում են:

# ԱԳԱՖԻԱ ԲՈՒԼԱՏՈՎԱ



Հիշում եմ, եկել էին ու ճամփի կեսին մոլորվել: Հայրս գնաց, ուղեկցեց, այդպես ծանոթացան: Անունը Բալա էր, երկու դուստր ուներ՝ Սեդան եւ Լյուսիան, եւ մի տղա՝ Բագրատը: Ծանոթացանք: Մի անգամ մեզ հրավիրեցին, իրենց մոտ մնացինք: Մայրը միշտ լուռ էր, չէր խոսում, հավանաբար ռուսերեն չգիտեր: Իսկ Սեդան, որ երեխեքից ավագն էր, ռուսերեն լավ էր խոսում: Մենք մտերիմ էինք, խաղում էինք բացատում: Այնտեղ ուրիշ հայ երեխաներ էլ կային, բայց նրանց չգիտեմ, չեմ ծանոթացել: Դե, ես փոքր էի այդ ժամանակ, մի տեսակ վախենում էի, մտածում էի՝ ոչռուսներ են եկել, հայեր, այդպես վախենում էի:

# ՎԱԼԵՆՏԻՆԱ ԲԵՐԴԻՉԵՎՍԿԱՅԱ

Նովոկոպիլովի  
Զարինսկի  
շրջան



Հայտնվեցին նրանք Բլինովոյում, որտեղ մայրս ուսուցիչ էր աշխատում, հազիվ 17 տարեկան լինելը: Ծնողներին ուղարկում էին աշխատելու, երեխեքն անտեր էին մնում: Նրանց ոչ մի տեղ չէին վերցնում: Եւ ամեն մեկը գաղտնի գալիս էր. «Լիդիա Վասիլենա, իմ երեխային էլ վերցրու, թող քեզ մոտ մի անկյունում նստի»: Մայրս պատմում էր. «Վտանգավոր էր, բայց վերցնում էի երեխաներին՝ ե՛ւ դպրոցականներին, ե՛ւ փոքրերին, ինչ-որ կերպ տաքացնում, պահում էի: Գյուղովետի նախագահն ինձ ասում էր՝ տես, Վասիլենա, գլխիդ փորձանք կբերես, որ իմացան դրանց տաքտաք պահում ես, վերջդ կգա»: Ինքն էլ ասել էր՝ թող վերջս գա, բայց հո գիտեմ, որ երեխեքն այստեղ ապահով են: 1987-ին կամ 88-ին էր, ճիշտ չեմ հիշում, Գեւորգյան Էդուարդը Երեւանից եկել, գտել էր

մորս: Նա շինարար է, կամրջաշինարար: Մորս գրկել, պտտում էր, ասում էր՝ գտա, ձեզ գտա: Պայուսակներ էր բերել, ինչեր ասես չկար՝ էլ ձմերուկ, էլ խնձորներ... ինչեր ասես: Երկար չէին խոսում: Մայրս նրան էր շոյում, ինքն էլ մորս էր համբուրում: Ի՛նչ տեսարան էր: Ինքը հատուկ փնտրել էր: Էդիկին մայրն էր ասել. «Գնա, գտիր Լիդիա Վասիլենային, ծնկի իջիր ու կասես՝ շնորհակալություն»:



Վալենտինա  
Բերդիչենակայայի  
մայրը՝ Լիդիա  
Վասիլենա  
Պերմինովան,  
19 տարեկանում



Լիդիա Պերմինովան  
իր հայ եւ տեղացի  
աշակերտների հետ:  
Գյուղ Բլինովո



# ՕԼԳԱ ՊԵՐԵՎԱԼՈՎԱ

Խմբավանդակ  
Սորոկինսկի  
շրջան



Հայրս մի հայ ծանոթ ուներ, կոշկակար էր, անունը Աշոտ: Մի անգամ հորս հետ գնացինք նրա մոտ: Հայրս ինձ նստեցրեց իշոտնուկի վրա, խոսում էր այդ մարդու հետ: Շատ համակրելի, թավ մորուքով, ալեխառն մազերով գեղեցիկ տղամարդ էր: Հետո նրանք թեյ խմեցին, ինչ-որ խոտից պատրաստված թուրմ էր: Հայրս տվեց իր բաժակից խմեցի: Ես փոքր էի, խելոք նստած էի: Աշոտ քեռին, մատիս մատանի դրեց, ասաց՝ լավ աղջիկ ես, քեզ լավ պահեցիր, դրա համար մատանի եմ նվիրում: Պլաստմասից էր, թե ինչից՝ չեմ հիշում, շատ գեղեցիկ, արևագույն-կարմիր մատանի էր: Ի՛նչ երջանիկ էի ես... Ի՛նչ երջանկություն էր. գյուղացի աղջկան մատանի են նվիրում: Հետո, չգիտեմ ոնց եղավ, գողացան այդ մատանին:

Սենուկ, Նրբիկ, գանգրահեր, գեղեցիկ աղջիկ էր (միջին շարքում աջից երրորդը):



# ԻՎԱՆ ՎԼԱԴԻՄԻՐՈՎ



Սա պատմության համար է, չէ՞ (դիմում է հարցազրուցավարին): Դե, պատմեմ, ինչ որ հիշում եմ: Անտառտնտեսությունում էին աշխատում: Նրանց մեջ նույնիսկ բռնցքամարտի աշխարհի չեմպիոն<sup>30</sup> կար: Գետնատների (землянка) մեջ էին ապրում: Գետնատունը գիտեք ի՞նչ է: Հողը փորված է մետրուկես, վերելից չորս շարք գերաններ ու կտուր: Նկուղի պես մի բան, իջնում ես, իսկ վերելում փոքրիկ պատուհաններ են: Բանջարանոց ունեին, կարտոֆիլ էին ցանում, մի խոսքով՝ աշխատասեր, լավ մարդիկ էին: Պապս նրանցից մի ընտանիքի էր լավ ճանաչում, որ Իրանից Հայաստան էին եկել ու աքսորվել: Պատմում էր՝ ո՞նց էին գոյում, որ Իրանը թողել-եկել են: Հարազատ հողն էր ձգել երեկ, իսկ նրանց հայրենիքի փոխարեն ո՞ր բերեցին: Նրանց


Խմելովկա  
Սորոկինսկի  
շրջան

այստեղ բերեցին, մերոնց էլ Նարիմ էին ուղարկում: Դա Տոմսկի մարզի հյուսիսն է: Պապիս եղբայր Իվանին, որ եկեղեցում դպիր էր, աքսորել էին Նարիմ: Փախել-եկել էր, այս կողմերի ճահիճներում էր թաքնվել: Հետո թոքախտ ընկավ, հանձնվեց, գնդակահարեցին:



Իվան Վլադիմիրովը  
իր տանը:  
2016,  
գյուղ Խմելովկա

## ՎԻՎՏՈՐ ՄԵԼԲՈՒՍՈՎ



Նրանց աշխատանքն էին բերել, վրանների տակ էին ապրում: Վրանային ավանի մոտ արհեստանոցներ կային՝ խառատանոց էր, շարժիչներ էին նորոգում: Հայ փականագործներ էին աշխատում, լավ վարպետներ էին, մեր ջահելներն էլ սովորում էին գործը: Ժողովուրդը շատ էր, շատ: Շատ հայեր կային՝ եւ աղջիկներ, եւ տղաներ: Յոթերորդ դասարանում, հիշում եմ, մեզ մոտ Պարզեւ կար, Բաղդասարյանը կար... Աղայան ազգանունով, հիշում եմ, մի աղջիկ կար մեր դասարանում: Սկզբում դպրոցում երեք հերթափոխով էինք սովորում, փոքր դպրոց էր, հետո նորը կառուցեցին:

Ներքեւում էլ գետն էր: Հիմա ի՛նչ է դարձել, գարնանը, վարար ժամանակ գերաններն էին քշում: Հիմա մի քայլով կանցնես, առվակ է:

- *Նրանց ինչո՞ւ էին աքսորել:*

- Չգիտեմ, Իոսիֆ Ստալինն էր: Ասում էին, թե Ստալինն է նրանց աքսորել, կարգին չգիտեմ: Ինչ-որ բաներ խոսում էին, հիմա չեմ հիշում:

- *Իսկ Ստալինի մահվան օրը հիշո՞ւմ եք:*

- Հիշում եմ, մարտին էր: Հիշում եմ: Ես կամ 3-րդ դասարանում էի, կամ 4-րդ, չեմ հիշում: Հիշում եմ լալիս էին բոլորը՝ մեր հարազատ հայրն է մահացել:

- *Իսկ դրանից հետո կյանքը լավացա՞ւ:*

- Ինչի՞ց հետո:

- *Ստալինի մահվանից:*

- Ի՛նչ պիտի լավանար: Ոնց ասում են՝ գյուղացու կյանքը միշտ էլ սուղ է:

Կորդոն  
Զարինակի  
շրջան

Դպրոցական լուսանկար  
Վիկտոր Մելբուսովի  
անձնական արխիվից:  
1950-ականներ,  
գյուղ Կորդոն



## ԳԱԼԻՆԱ ԳՈՒԶԱԿՈՎՍԿԱՅԱ



Հայրս՝ Արմենակ Վասիլի Ներսիսյանը, արքայազն էր Հայաստանից: Սկզբում ապրում էր Ռասսիայում: Որքան գիտեմ ծանր աշխատանք չէր կատարում, անտառտնտեսությունում հաշվետար էր աշխատում: Գրագետ մարդ էր, հայրենիքում ուսուցիչ էր եղել՝ աշխարհագրության եւ պատմության:

1953-ին երբ Ստալինը մեռավ, հայերին ետ՝ հայրենիք վերադառնալու հնարավորություն տրվեց, եւ բոլորը գնում էին: Իսկ հայրս այստեղ ամուսնացել էր մորս՝ Ալեքսանդրա Իվանովնա Աքսյոնովայի հետ, երկու երեխա ունեին: Մայրս հղի էր երրորդով, երբ նրանք Հայաստան գնացին: Ինքն ուզում էր կնոջը ծանոթացնել իր հարազատների հետ: Այնտեղ էին մնացել նրա առաջին կինն ու որդին: Այդպես գնացին, չգիտեմ որքան մնացին: 1954-ին

Հայաստանում իմ եղբայրը ծնվեց, իսկ 55-ին նրանք արդեն Տյագունում էին: Դե, հեռավոր Ռասսիայում չուզեցին մնալ, տեղափոխվեցին Տյագուն կայարան: Հայրս մնաց, բայց չեմ հիշում, որ այլ հայեր էլ մնացած լինեին: Այդպես ամբողջ կյանքն ապրեց Տյագունում: Հիսունհինգ տարեկանում թոշակի անցավ: Տեղի բնակիչները շատ հարգանքով էին՝ անուն-հայրանունով Արմենակ Վասիլեւիչ էին կանչում: Շուտ մահացավ, վաթսունինը տարեկան էր:

Մինչեւ արքայը նրա կյանքի մասին ոչինչ չգիտեմ: Հագիվ քսան էի, երբ նա մահացավ ու մտքովս էլ չէր անցնում հարցնել իր կյանքի, իր ապրած տեղերի մասին: Եղ հետո, երբ մեծանում ես, երբ ինքդ էլ ես երեխաներ ունենում, սկսում ես մտածել նախնիներիդ ով կամ ինչ լինելու մասին, բայց տեսնում ես, որ ամեն ինչ կորած է:

Մի անգամ, լավ չեմ հիշում երբ էր, Հայաստանից մի երիտասարդ եկավ, անունը Սամսոն<sup>31</sup> էր: Նա արքայազների ընտանիքից էր եւ Տյագունից դուրս էր եկել ութ տարեկանում: Հայրը մահացել ու մնացել էր այստեղ՝ թաղված: Ուզում էր գերեզմանը գտնել: Եկել էր, վարչությունում ասել էին, որ արքայ-



Արմենակ Ներսիսյանի ընտանիքը:



Արմենակ Ներսիսյանի շիրմաքարը Տյագունի գերեզմանատանը

յալներից մի հայ է մնացել՝ Արմենակ Վասիլեւիչը, նա կարող է իմանալ: Այդպես եկավ հորս մոտ, միասին գնացին գերեզմանատուն՝ շիրիմը փնտրելու: Ինքը մոտավորապես էր հիշում գերեզմանի տեղը, ասում էր՝ կողքը պետք է մի բրգածեւ սոճի (нохта) լինի: Այդ ծառով փնտրել, գտել էին: Վարչությունից քանդելու թույլտվություն վերցրին: Սամսոնն ուզում էր հոր շիրիմը տանել Հայաստան, որ հայրն ու մայրն իրար կողք լինեին, բայց երբ քանդեցին, հասկացան, որ անհնար է տեղափոխել, փակեցին ու մի խաչ դրեցին վրան:

Հետո, երբ արդեն մեր հայրը մահացավ, մենք ցանկացանք նրան այդ հայի կողքը թաղել, որպեսզի միշտ՝ գնալ-գալով, երկուսի շիրիմներն էլ իննամենք:


## ՊՈԼԻՆԱ ԿՈՒԿՈՎՅԱԿԻՆԱ




Այստեղ հայերը հարսանիք արեցին: Ես նայում էի, գիշերը ջահերով գնում էին: Այդպես, այո, եղել է... Հիշում եմ, մի հայ կար, կինը հիվանդացավ, մեռավ, երկու տղաները մնացին: Մեկը երեւի չորս տարեկան էր, մյուսը՝ վեց: Բարաքում էին ապրում: Ձմռանը լրիվ տկլոր դուրս էին գալիս, վազվզում ու հետ՝ տուն: Միայն հայրն էր աշխատում: Շատ աղքատ էին, շատ: Անտանելի կյանք էր:

Կորդոն  
Զարինսկի  
շրջան

2016,  
գյուղ Կորդոն,  
Զարինսկի  
շրջան





ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ  
ԴԻՄՈՒՄՆԵՐ

ՍՍՌՍ Մինիստրների էտրիդի նախագահ  
ընկ. Գ.Ս. Մալենկովին

Երեւան քաղաքի նախկին բնակչուհի  
հայրենադարձ Նինա Բայանից  
գ. Կալմանկա, Կալմանսկի շրջ., Ալթայի երկրամաս

Դիմում

1946 թ. մեր ընտանքիը հայրենադարձվել է Սովետական Հա-  
յաստան Սալոնիկի քաղաքից (Հունաստան): Իմ ամուսինը Բալ-  
յան Հակոբ Հակոբովիչը՝ մասնագիտությամբ բժիշկ, աշխա-  
տում էր Երեւանի լավագույն պոլիկլինիկաներից մեկում, իսկ  
1948 թ. ընտրվել էր Մոլոտովյան շրջսովետի դեպուտատ: Սա-  
կայն 13.06.49թ. մեզ անսպասելի արտրեցին այստեղ՝ մեզ հա-  
մար անհայտ պատճառներով: Այստեղ էլ պատահեց դժբախ-  
տություն եւ 17.04.51թ. մահացավ ամուսինս՝ բախտի քմահա-  
ճույքին թողնելով ինձ եւ դստերս:

Խնդրում եմ հաշվի առնել մեր անմեղությունը եւ թույլ տալ մեզ  
վերադառնալ Սիբիրից Սովետական Հայաստան:


07.04.54թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ  
Գերագույն դատարանի քրեական գործերի  
դատական կոլեգիայի որոշումից

[հատված]

... հատուկ խորհրդակցության որոշմամբ արտաքսվել են հա-  
տուկ բնակեցման Ալթայի երկրամաս այն բանի համար, որ Հա-  
կոբ Բայանը (ընտանիքի գլուխը) Հունաստանում եղած  
ժամանակ տարել է հակասովետական աշխատանք եւ եղել է  
դաշնակցության խմբում եւ մինչեւ հայրենադարձվելը ԽՍՌՍ  
պայքարել է պրոգրեսիվ անձանց դեմ:

Լսելով գեկուցումը, դատախազի եզրակացությունը բողոքը  
պաշտպանելու մասին, ծանոթանալով գործին ու բողոքում  
բերված փաստարկումներին, Դատական կոլեգիան գտավ, որ



պետք է համաձայնվել բերված բողոքի հետ, իսկ Հատուկ  
խորհրդակցության որոշումը վերեւ նշված բոլոր անձանց  
նկատմամբ բեկանել եւ գործը վարույթում կարճել հետեւյալ  
պատճառաբանությամբ:

Գործից երեւում է, Բայաններին արտաքսելու համար հիմք են  
հանդիսացել օպերատիվ հաղորդումները եւ ...յանի ցուցմուն-  
քը, որը կրել է ընդհանուր բնույթ:

Գործից երեւում է, որ Բայանը ընտանիքով արտասահմանից  
Հայաստան վերադառնալուց հետո չի զբաղվել հակասովետա-  
կան աշխատանքով:

Գործից երեւում է, որ Հակոբ Բայանը արտաքսման վայրում  
մահացել է:

[հատված նամակից]

ՍՍՌՄ Գերախոյն Խորհրդի Նախագահության նախագահ  
ընկ. Ի.Վ. Ստալինին

աքսոված Հայկ Ղազարյանից

1949թ. հունիսի 13-ին գիշերվա ժամը 2-ին եկան իմ բնակարան  
եւ հայտնեցին, որ ես պետք է ընտանիքով դուրս գամ Սովետա-  
կան Հայաստանի տարածքից եւ տրվում էր 2 ժամ պատրաստ-  
վելու համար:

Ես հարցրեցի՝ ինչո՞ւ, ինձ պատասխանեցին՝ շատ մի խոսեք,  
պատրաստվեք, սա կուսակցության եւ կառավարության որո-  
շումն է:

Եւ նույն գիշերը մեզ տարան կայարան եւ 17 օր մենք գնացինք  
մինչեւ հասանք Սլավգորոդ կայարան: Սլավգորոդ կայարանից  
մեզ բաշխեցին ըստ շրջանների եւ ես հիմա գտնվում եմ Ալթայի  
երկրամասի Սոււետսկի շրջանի Սոււետսկի սովխոզում:

Սիրելի Ի.Վ. Ստալին, Ձեզ ուղղված իմ (08.08.49) առաջին նամա-  
կին, որով խնդրում էի թույլ տալ վերադառնալ Սովետական Հա-  
յաստան, Սոււետսկի շրջանի ՊԱՆ (Պետական անվտանգության  
Նախարարության) օրգանը 03.12.1949-ին հայտնեց, որ ես մերժ-  
վում եմ:

Ելնելով այդ պատասխանից, ես գրում եմ Ձեզ երկրորդ նամակը:

Սիրելի Ի.Վ. Ստալին, ես չեմ եղել դատապարտված, չեմ եղել  
վատնող եւ չեմ ունեցել ոչ մի նկատողություն:

Իմ աշխատանքի ամբողջ ընթացքում սկսած 1930-ից մինչ այ-  
սօր, ազնվորեն եւ խնամքով կատարել եմ ինձ հանձնարարված  
բոլոր աշխատանքները եւ պարտականությունները եւ լավ աշ-  
խատանքի համար միշտ պարգևատրվել եմ, ստացել պատվոգ-  
րեր եւ բազմիցս շնորհակալագրեր:

Սիրելի Ի.Վ. Ստալին, ես ընտանիքով արտասահմանից որպես  
արտասահմանյան հայ վերադարձել էի Հայրենիք՝ Սովետական  
Հայաստան իմ երեխաների՝ որդուս եւ դստերս կրթության հա-  
մար: Աղջկաս թաղեցի, իսկ որդիս՝ փոխարենը դպրոց գնալու,  
այժմ գտնվում է Սիբիրում:

Սիրելի Ի.Վ. Ստալին, եթե ես մեղավոր եմ, ես պատրաստ եմ լինել  
օրենքով դատապարտված եւ կրել պատժի բարձրագույն չափը  
եւ վերջապես, ի՞նչ եմ արել, որ ինձ հետ այսպես են վարվում: Ես  
դիմում եմ Ձեզ, ինչպես որդին հորը, խնդրանքով:

Սիրելի Առաջնորդ եւ Ուսուցիչ Ի.Վ. Ստալին, կարգադրեք ստուգել եւս մեկ  
անգամ եւ եթե ես ունենամ որեւէ մեղադրանք, պատրաստ եմ կրելու պատ-  
ժի առավելագույն չափը:

Սիրելի Ի.Վ. Ստալին, իմ որդին ծնվել է 1942-ին եւ հիմա 7-ամյա տարիքում  
ինձ հարցնում է. «Հայրիկ, դու մեզ բերեցիր Հայրենիք՝ Սովետական Հա-  
յաստան, թե՞ մեզ բերեցիր Հայրենիք, որպեսզի մեզ աքսորեն Սիբիր: Եւ ա-  
սա հայրիկ, ի՞նչ ես արել, որ մեզ արտաքսել են Սիբիր»:

Եւ իմ 7-ամյա տղայի այս հարցին ես պատասխան չունեմ: Ես ինձ դժբախտ  
հայր եմ համարում, քանի որ չեմ կարող պատասխանել որդուս հարցերին  
եւ չեմ կարողանում ուղիղ նայել որդուս աչքերի մեջ:



На письмо  
Ворогомы Ведущки  
Сейсмична.  
От зарубежного  
армянина <sup>Ум</sup> Шейкего  
Саркиса Тейковича  
Казарбяна  
8<sup>ое</sup> августа 1949г.  
Сибирь.  
Алейский-край.



Հ.Կ.Բ.Պ. ընկ. Հարուստության 32  
կարգալ մինչեւ վերջ

Դիմում Մալախանյան Վարդանից 12 տարեկան

Ես ինքս ստորագրայալ ներգաղթված արտասահմանից Լիբանանի Բեյրութ քաղաքից, խնդրում եմ իմ փոքրիկ գրությունովս հայտնեմ Ձեզ անցյալ կյանքերնս եւ հիմիկվա մեր կյանքը: Մենք գտնվում էինք Բեյրութ քաղաքում, երբ իմ հայրս եւ մայրս, երբ Հայաստան գնալու լուրը ստացան, անպատմելի ուրախություն եղավ իրենց մեջ: Եւ մեզ ասում էին՝ սիրելի զավակներս ուրախ եղեք, վաղը կգնանք Հայրենիք, այնտեղ ուզածնիդ պես ուսումը առաջ կտանք եւ մենք երագում էինք, որ երբ պիտի Հայաստան գայինք: Եւ օրի մեկը եկավ Տրանսիլվանիա շոգենավը եւ մեծ ուրախությամբ եկանք հայրենիք երեւան քաղաք: Եւ անմիջապես մեր պետությունը մեզ վարկ վճարեց եւ հայրս-մայրս քրտինք թափելով տուն շինեցին՝ մեծ ուրախությամբ եւ նաեւ փոքրիկ պարտեզ: Եւ ես ալ գնում էի Վորոշիովի անվ. դպրոցում էի 4-րդ դասարանում:

Հուսով եմ, որ մեր Սովետական բարձր օրգանները կմտածեն մեր մասին, քանի որ սովոր էինք տաք երկրի, իսկ ցուրտ Սիբիրում ապրել չենք կարող: Ու մի օր իրիկվան պարտեզի մեջ քույրերիս հետ պարապում էինք ուրախ ու երջանիկ եւ ելանք պառկելու: Հանկարծ գիշերվա ժամը 1-ին դուռը ծեծեցին, մենք բացեցինք եւ տեսանք մեկ կապիտան եւ բանակայիններ: Մեզ տանջելով ասեցին՝ վեջերսիդ հավաքեք, ձեզ տանում ենք Դիլիջանի կողմը: Մենք 4 երեխեքով սկսանք լալ, աղաղակել եւ մեզի թռչունի մը պես իջեցրին այս ցուրտ սառնամանիք տեղը՝ Սիբիր: Ինչ որ ունեինք ծախեցինք կերանք եւ հիմա ռուսերի խոզերի առջեւից ավելացած կարտոֆիլի կեղեւներն ենք ուտում եւ ան ալ վերջացավ, ոչ մի տեղից հույս չունենք:


Խնդրում եմ դուք մի օգնություն արեք, մենք սոված ծարավ մահանում ենք: Խնդրում եմ դուք մեր դատավորը եղեք, մենք ոչ մի մեղք չունենք: Դուք մեզի խղճացեք, վերադարձուցեք մեր շինած բնակարանը:

Ձեր երեխան ինչպես որ հաց է ուզում, այնպես ալ ինձի ձեր երեխայի տեղը դրեք, մի մերժեք այս փոքրիկ խնդրանքը եւ մի որոշ օգնություն հասցրեք մեզ: Կրկին ու կրկին խնդրում եմ, հասեք մեզ, ես ալ ձեր զավակն եմ:

Հայրս աշխատում էր Լեչկամիսիայի հիվանդանոցը՝ ընկ. Մռավյանի մոտ, կարող եք նրանից հասկնալ, ինչ մարդ էր իմ հայրս:

Անհամբեր պատասխանը սպասող

ձեր զավակը 12-տարեկան  
Մալախանյան Վարդան



Նկարի տակ ստորագրությունը չի երեւում, ամենայն հավանականությամբ գրել է ընտանիքի հայրը՝ Առաքել Մալախանյանը:

07.02.50 թ.  
Մոսկվա Կրեմլ, ընկ. Շվերնիկին<sup>33</sup>

Սույն ցավակցությունս հայտնում եմ լալով ահավասիկ 4 երեխաներովս մնացած եմ անտառի խորքում, որտեղ ոչ դպրոց կա եւ ոչ կենդանություն եւ մենք զավակներով մեկ տեղ սովամահ ենք լինում՝ չիմանալով մենք մեր հանցանքը: Արտասահմանն ներգաղթած ենք մեր սրբազան Հայրենիքը եւ ահավասիկ այժմ տառապում եմ այս խղճահարված զավակներով միասին: Այս աթոռին կանգնած երեխայիս ոտքերը ցրտահարված են, ինչպես դիմադրեմ այս անմարելի կրակին: Դրա համար ուղարկում եմ պատկերները:

Մինիստրների խորհուրդ, ընկ. Աստվածատրյանին<sup>34</sup>

հատուկ տեղահանված Անդրանիկ Ավետիսովիչ Սասունյանից  
Չալետովո, Ալթայի երկրամաս, Կոմունիստիչեսկի Նրբ. 20ա

Դիմում

Ես ստիպված եմ դիմելու Ձեզ խնդրանքով, որ լսեք իմ բողոքը կապված այն բանի հետ, որ 1950 թ. սեպտեմբեր ամսին ՄԱՆ պարետատանը ինձ հայտնեցին ՄԱՆ ՀԽ որոշումը, որում նշված է, որ իբր ես պատկանել եմ դաշնակցական կուսակցությանը, ինչի համար էլ մեր ընտանիքը՝ 7 հոգանոց կազմով, աքսորել են Ալթայի երկրամաս, ինչը եւ իմ մեջ առաջացրեց մեծ վրդովմունք, քանի որ ես ոչ միայն չեմ պատկանել [դաշնակցությանը], այլ հակառակը՝ կոմունիստական կուսակցության կողմից պայքարել եմ նրանց դեմ:

Համառոտ շարադրեմ իմ ինքնակենսագրությունը: Ծնվել եմ 1922 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում հացթուփի ընտանիքում: Ստացել եմ 7-ամյա կրթություն, որից հետո սկսել եմ աշխատել ատաղձագործական արհեստանոցում, որպեսզի թեթեւացնեմ մեր ընտանիքի նյութական պայմանները: Միաժամանակ խաղացել եմ նախ արաբական, հետո հայկական ֆուտբոլային թիմերում մինչեւ 1944 թ.: 1944-ին տեղական կոմկուսը կազմավորել էր բանակի գեներալ Բաղդամյանի անվան ֆուտբոլային թիմ, որին ես ունեցել եմ ակտիվ մասնակցություն: Միաժամանակ ձեռք բերելով տեղական կոմկուսի վստահությունը՝ ինձ նշանակել են Լիբանանի եւ Սիրիա-

յի հայերի հայրենադարձության կենտրոնական կոմիտեի նախագահ ընկ. Դեւեջյանի, որին հետապնդում էին դաշնակները եւ խոչընդոտում հայերի վերադարձին Հայրենիք, վարորդ եւ թիկնապահ: Ես եղել եմ հայրենադարձության կոմիտեի ակտիվ մասնակիցներից: 1946 թ. առաջին քարավանով եկել է մեր ընտանիքը, այսինքն՝ մայրս, հայրս, քույրերս՝ Ելիզավետան 13 տարեկան, Վերժինեն 10 տարեկան, Սոնյան 5 տարեկան: Կազմակերպությունն ինձ պահել էր այնտեղ որպես ակտիվ մասնակցի, որպեսզի ուղարկեինք վերջին քարավանները:

1947-ին հայրս մահացավ: Իմանալով հորս մահվան մասին՝ ես ստացա մեկնելու թույլտվություն, քանի որ պետք էր օգնել մորս: Հայրենիքում աշխատել եմ ատաղձագործական արհեստանոցներում եւ միաժամանակ մաս կազմել Երեւանի ֆուտբոլային թիմի:

1948-ին ամուսնացել եմ քաղաքացուհի Մարգարիտա Քեմենեջյանի հետ, որը ծագումով Բաթումիից է եւ ամուսնությունից 4 ամիս անց, այսինքն՝ 1949-ի հունիսի 14-ին մեզ աքսորել են: Այսպիսով 7 մարդ տուժել են (7-րդը որդիս է, որ ծնվել է Չալետովոյում) ինձ դաշնակցական կազմակերպությանը անարդար ձեռով վերագրելու պատճառով:

Հայցում եմ Ձեր միջնորդությունը համապատասխան օրգանների առջեւ, որպեսզի վերանայեն մեր գործը եւ հնարավորություն տան վերադառնալու Հայրենիք:

06.01.1951



Անդրանիկ Սասունյանը  
Յայաստանից  
ժամանած ներգաղթի  
պատվիրակների  
հյուրասիրության  
ժամանակ: 1946,  
Բեյրութ



Անդրանիկ  
Սասունյանը՝ ձախից  
7-րդը կանգնած  
Գեներալ Յովհաննես  
Բաղդամյանի անվան  
ֆուտբոլային թիմում:  
1945, Բեյրութ

Մոսկվա Կրեմլ  
ընկ. Կիշինսկուն<sup>35</sup>

Սիրուշ Հովհաննիսյանից  
բնակվող Հայկական ՍՍՌ,  
Երեւան, Մոլոտովյան շրջան, Կրիվոյ փողոց, տուն 136

### Դիմում

Հայտնում եմ Ձեզ, որ եղբայրս՝ Հարություն Խաչատրյանը գտնվում էր Եգիպտոսում ընտանիքով՝ 4 հոգի (կինը եւ 2 երեխաներ):

Սովետական իշխանության շնորհիվ մեկ տարի առաջ եւս հայրենադարձվեց Սովետական Հայաստան եւ իմ երազանքը՝ ապրել եղբորս հետ միասին, իրականացավ: Բայց երջանկությունը երկար չտևեց եւ մեկ տարի անց նրան արքայազնի Ալթայի երկրամաս, Սորոկինսկի շրջան, Ալամբայսկի անտառարդուտ Ինկարա տեղամաս:

Երկար տարիներ իմ եղբայրը փայփայում էր իր Հայրենիքը՝ Սովետական Հայաստան վերադառնալու երազանքը: Նրա հետ ապրելով ես հանգիստ էի, որ ծերության օրերին մենակ չեմ լինի: Երկու տղաներս այժմ Սովետական բանակում են:


Ինդրում եմ ուշադրության արժանացնել վերոշարադրյալը, վերանայել նրա գործը եւ եթե հնարավոր գտնեք, ապա խնդրում եմ վերադարձնել նրան Սովետական Հայաստան: Եթե հնարավոր չէ նրան եւ նրա ընտանիքը վերադարձնելը, ապա ինձ եւս արքայազն նրանց մոտ՝ համատեղ ապրելու:

Ս. Հովհաննիսյան

25.03.50թ.



Բաեւ: Ալթայի  
երկրամաս, գյուղ  
Պլոտավկա, Լորչյան  
Առաքել Հակոբովիչին  
Ձեր գործը  
վերանայվել է  
դրական, սպասեք  
որոշման:



ՀԿԲՊ Կենտկոմ, ընկ. Ստալինին

հատուկ տեղահանված Տիգրան Հայկազի Մայիլյանից  
Ալթայի երկրամաս, Ուստ-Կալմանսկի շրջան,  
Կալմանսկի հացահատիկային սովխոզ

**Դիմում**

Ես ծնվել եմ 1912թ. Վառնա քաղաքում (Բուլղարիա): Սովետական գործերի հետ 1943-44 թթ. մասնակցել եմ ֆաշիստական գործերի ջախջախմանը: Եղել եմ Բուլղարիայի կոմկուսի անդամ:

1946 թ. հուլիսին կնոջս եւ տղայիս հետ Բուլղարիայից եկել եմ քաղաք Լենինական:

Կատարվեց Հայրենիք վերադառնալու մեր երազանքը:

Մեծ թափով անցել եմ աշխատանքի՝ ես Լենինականի գորգագործական արտելում, որպես վարիչ եւ գորգերի վարպետ, իսկ կինս ֆիլիարմոնիայում՝ որպես երգչուհի եւ պարուհի:

Մեր կյանքը սովետական իրականության ջերմության շնորհիվ դարձել էր ուրախ, հանգիստ եւ երջանիկ, հատկապես որ նյութական առումով նույնպես ստեղծվել էին միանգամայն բարենպաստ պայմաններ:

Արտելում շուտով սկսեցին ինձ գնահատել:

Ես ուժերս չէի խնայում աշխատանքում բարձր որակի հասնելու համար: Շուտով ինձ գնահատեցին եւ պարգևատրեցին աշխատանքային գերազանցության մեդալով եւ երկու անգամ սովեցին դրամական պարգևատրում: Ես զգում էի, որ կառավարությանը մեծ օգուտ եմ բերում: Նախշերը, որոնք ինքս էի նկարում գորգերի համար, մտնում էին զանգվածային արտադրություն: 3 տարվա ընթացքում ես շատ վարպետների եմ պատրաստել, որոնց միջոցով գերակատարում էինք պլաները: 8 ժամվա փոխարեն օրական աշխատում էի 12-13 ժամ: Արտելների վարչության նախագահը յուրաքանչյուր ժողովի ժամանակ ինձ մատնացույց էր անում որպես իր հպարտություն, եւ ինձ կոչում Լենինականի Չուսկիի<sup>36</sup>:

Ես աստիճանաբար բարձրացնում էի գորգերի որակը եւ առավելագույնս խնայողաբար օգտագործում հումքը:

Հանկարծ այդ ամենից հետո 1949 թ. հունիսի 13-ին գիշերով ինձ ընտանիքով աքսորեցին այդքան սիրելի Հայաստանից, ո-

րի համար մենք չէինք ինչայնու անգամ մեր կյանքը: Մեկ ակնթարթում ընտանիքս զրկվեց ամեն ինչից: Մեր ո՞ր հանցանքի համար են մեզ այսպես անխնա պատժում: Մենք անցել ենք ծովեր, անտառներ ու սարեր, Բուլղարիայում թողել ամեն ինչ՝ ունեցվածք, հարազատներ եւ այլն, որպեսզի գանք այսքան սիրելի Սովետական Հայաստան, բայց այդ նույն Հայաստանը մեզ հավերժ վտարեց իր սահմաններից: Խնդրում եմ ձեռնարկել միջոցներ՝ Ալթայի երկրամաս մեր աքսորի պատճառները պարզաբանելու համար:

08.08.1949



Տեղեկանք  
Տիգրան Մայիլյանի  
պարգևատրման  
մասին:

Սովետական Ա.Ռ. Միության Մինիստրների Սովետի  
Նախագահի տեղակալ ընկ. Անաստաս Իվանովիչ Միկոյանին

հայրենադարձ, ներկայումս Ալթայան երկրամասի  
Սորոկինի ռայոնի Խմելովկա գյուղում բնակվող  
Մկրտիչ Հովհաննեսի Տագեսյանից

### Դիմում

1949 թ. հունիսի 14-ի քստրից հետո ես երկու դիմում գրեցի Հա-  
յաստանի եւ Սովետական Միության ներքին գործերի մինիստր-  
ություններին՝ խնդրելով վերանայել իմ քստրի գործը եւ թույլ  
տալ ինձ վերադառնալ Հայրենիք՝ Սովետական Հայաստան, սա-  
կայն ոչ մի պատասխան ոչ դրական եւ ոչ էլ բացասական չստա-  
ցա:

Այժմ զգալով, որ մոտենում է իմ եւ կնոջս կյանքի վերջին օրերը ես  
Նորից դիմում եմ, այս անգամ անձամբ Ձեզ, ընկ. Միկոյան, խնդրե-  
լով ձեզ օժանդակել ինձ այդ գործում:

Ծեր մարդիկ երբ զգում են, որ իրենց մահը մոտենում է եւ իրենք  
հեռու են գտնվում մայր հողից, մի մտատանջություն ունեն միայն՝  
թաղվել հայրենի հողում իրենց նախնիների շիրիմների շարքում:  
Ես եւ կինս հենց մեր կյանքի այդպիսի շրջանումն ենք գտնվում: Ես  
արդեն 78 տարեկան եմ, կինս էլ համարյա նույնքան՝ հալից ընկած,  
վատառոջ, անհուն վշտով մտածում ենք, միթե մեր կյանքի այս  
փափագը չպիտի իրականանա:

Մենք տառապանք շատ ենք տեսել, բայց չենք հիշում թե երբեւէ մի  
արեւոտ օր ենք տեսել:

Տեսել ենք տաճկահայության կոտորածի եւ տեղահանության սար-  
սափելի օրերը, չերքեզների եւ ասկյարների սրերի տակ թողել ենք  
հայրենիքը, հայրենի տունը Կիլիկիայի Հաճին քաղաքում եւ մին-  
չեւ Արաբական անապատն անցնելը հորս 9 շնչից բաղկացած ըն-  
տանիքից միայն ես մնացի կենդանի: Հայրս մեռավ սարսափից,  
սովից եւ կորցրի կնոջս եւ 3 երեխաներիս, եղբայրս մեռավ կնոջ  
եւ երեխայի հետ միասին: Եւ միայն ես մնացի կենդանի եւ որպես  
վկա այդ սարսափ օրերի այն ոսկորների կույտը, որի լուսանկարը  
ուղարկում եմ այս դիմումի հետ:

Այդ նահատակների աճյունների մեջ են նաեւ իմ հարազատների  
ոսկորները: Ինչո՞ւ ես մնացի կենդանի, բախտավոր կլինեի, եթե ես  
էլ մեռած լինեի նրանց հետ:

Արաբական անապատից հայրենակիցների վերջին բեկորների  
հետ եկանք Եգիպտոս: Մարդիկ ինձ մխիթարելու համար ստիպե-  
ցին ամուսնանալ 2-րդ անգամ: Ունեցա 2 զավակ: Ծառայում էի որ-

պես վարձու բանվոր մասնավոր ծխախոտի գործարանում:

Ի՞նչ էր մնացել իմ դժբախտ կյանքի նպատակը: Չավակներիս հետ  
գնալ Նորից հայրենի հողը՝ Սովետական Հայաստան, զավակնե-  
րիս ուսում տալ, բախտավորեցնել, իսկ ինձ եւ կնոջս մարմինը հայ-  
րենի հողին հանձնել:

Սակայն իմ ճակատագիրն այդպես չէր որոշել:

Ես եւ կինս անգրագետ մարդիկ ենք: Չավակներս Նոր են չափա-  
հաս դարձել: Մենք քաղաքական դեմքեր չենք ներկայացնում մե-  
զանից: Սովետական իշխանությունը մեզանից ոչ մի վատ բան չի  
տեսել եւ չէր էլ կարող տեսնել, որովհետեւ 8 ամիս միայն մնացինք  
Հայաստանում: Տղաս լավ աշխատանք ուներ եւ մենք արդեն  
զգում էինք, որ մեր հայրենի հողումն ենք եւ տանը:

Այսօր մենք ուրիշ միջոց չունենք, քան դիմելու Ձեզ, ընկ. Միկոյան,  
եւ խնդրելու, որ թույլտրվի մեզ Հայրենիք վերադառնալու, մանա-  
վանդ որ շատերն են վերադառնում այժմ:

Իմ դժբախտ կյանքի մասին Երեւանում կարող են վկայել ինձ հետ  
իմ հայրենակից հայրենադարձներ Լեւոն Սինանյանը, Վարդան  
Ջարաջյանը, Ահարոն Մանղըրյանը, իսկ Եգիպտոսից մեր կարա-  
վանապետներ Խաչիկ Հովհաննիսյանը եւ Հովհաննես Արաբյանը:  
Դժբախտաբար ես նրանց ոչ ոքու հասցեն Երեւանում չգիտեմ:

*Հորս անգրագիտության պատճառով ստորագրում եմ ես՝ աղջիկը:*

07.02.1955

գ. Խմելովկա

Նամակին կցված  
լուսանկար



Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին

հատուկ տեղահանված Դալդարանյան Մելքոն Հակոբովիչից  
Դիմում

Սույն թվականի հունիսի 13-ին ինձ ընտանիքով Երեւանից արտոել են Ալթայի երկրամաս, Կալմանսկի շրջան Պետրովսկի անտառարդտնտ 154 տեղամաս

Ռումինիայից Երեւան եմ եկել 1946 թ. առաջին քարավանով: 1946-ից մինչեւ արտոբերվելը աշխատել եմ դերձակ Երեւանի «Նոր երկիր» արտելում: Ինքս անգրագետ եմ, ոչ մի կուսակցության չեմ պատկանում: Մինչեւ այս պահը չգիտեմ մեր արտորի պատճառները:

Երեւանում պետության օգնությամբ կառուցել էինք տուն, որտեղ ես գտել էի իմ ընտանիքի համար ամենաերջանիկ կյանքը, ապրում էինք շատ լավ, ուրախ եւ նույնիսկ «Պրավդա»-ի թղթակիցը լուսանկարեց մեր ուրախ տունը (լուսանկարը կցվում է): Իմ երեխաները (աղջիկ եւ տղա) սովորում էին Երեւանում մայրենի լեզվով: Ռումինիայում մեր եզակի երագանքս



2. Ռումինիայից ներգաղթած, այժմ Երեւանի Կարի արտելի դերձակ Մելքոն Դալդարանյանը իր կնոջ և դստեր հետ ընդմիջում փրկված է անօթևան և գործազուրկ մեալու ապառնալիքից: Նա, ինչպես և բոլոր հայրենադարձ հայերը, ունեն է՝ աջխառանք, և՛ գեղեցիկ ընտանիքն էին:


եր ապրել հայրենիքում, բայց այսօր ես ընտանիքով արթնացել եմ բոլորովին այլ տեղում: Ես եւ իմ ընտանիքը բացարձակապես չգիտենք ռուսերեն եւ մեզ համար շատ դժվար է այստեղ հարաբերվելը:

Իմ մասնագիտությամբ այստեղ աշխատանք չկա, իսկ իմ ֆիզիկական աշխատանքը չի ապահովում մեր ընտանիքի (4 անդամ) գոյատեւումը:

Սիրելի հայր Ստալին

Ես անկեղծ սրտով գրում եմ, որ ոչ մի հանցանք չեմ կատարել մեր սիրելի հայրենիքի նկատմամբ եւ համարում եմ, որ մեր արտորը անտեղի է, ինչի համար եւ խնդրում եմ ազատել ինձ ընտանիքով եւ հնարավորություն տալ վերադառնալ Հայրենիք:

1949թ.



Հայկական ՍՍՌ ներքին գործերի մինիստրին

հատուկ վերաբնակիչ Բուդապյան Անդրանիկ Գրիգորելիչից  
բնակ՝ Ալթայի երկրամաս, Չալտսովսկի շրջան,  
Կամենսկի անտարդտնտ, ավան Կորդոն

Դիմում

Ես ծնվել եմ Թուրքիայի Քիլիս քաղաքում 1914 թ. գյուղացու ընտա-  
նիքում: Ես թվականին սկսվել է պատերազմը Թուրքիայի եւ Ֆ-  
րանսիայի միջեւ եւ այդ պատճառով բոլոր հայերին աքսորել են  
Դեր Չոր, որտեղ սկսվել է հայերի կոտորած: Բարեբախտաբար ե-  
ղավ մի թուրք, որը երեխաներ չուներ, նա առաջարկեց իմ հարա-  
զատներին ինձ՝ 1,5 տարեկան տղային, հանձնել իրեն, ինչի դիմաց  
կփրկի նրանց կյանքը: Ծնողներս համաձայնեցին:

Ես 15 տարի ապրել եմ այդ թուրքի մոտ՝ չիմանալով իմ ծագումը,  
իմ հավատը եւ իմ ծնողներին: Մայրս (թուրք) մահացավ: Երկրորդ  
մայրս չցանկացավ ինձ պահել եւ դուրս արեց տնից: Հայրս  
(թուրք), որը որդեգրել էր ինձ, փրկել իմ կյանքը եւ ծնողներս կյան-  
քը, խղճաց ինձ եւ, իմանալով որտեղ են ծնողներս՝ տեղյակ պա-  
հեց նրանց, որպեսզի հայրս գա ու վերցնի ինձ:


1929 թ. հայրս եկավ եւ ինձ հետը տարավ Հալեպ քաղաք: Տեղա-  
վորեց ինձ ավտոմեխանիկի մոտ՝ որպես աշակերտ: Սովորեցի այդ  
արհեստը եւ սկսեցի աշխատել որպես վարորդ: 1944-ին ամուսնա-  
ցա, ունեցա մեկ զավակ:

1946-ին, երբ սկսվեց հայերի ներգաղթը Սովետական Հայաստան,  
ես մեծ հաճությամբ ընտանիքով տեղափոխվեցի Սովետական Հա-  
յաստան՝ իմ հայրենի երկիրը:

Առաջին իսկ օրից սկսեցի աշխատել վարորդ Իջեւանի անտա-  
ռարդոնտում 1,5 տարի: Կինս ծնեց 2-րդ երեխային, եւ ուժեղ հի-  
վանդացավ եւ այդ պատճառով ստիպված եղա տեղափոխվել  
քաղաք Երեւան: Այստեղ ես աշխատանքի անցա N 447 գործարա-  
նում որպես գեներատոր եւ աշխատեցի մոտ 3 ամիս:

1949-ին ինձ՝ կնոջս եւ երկու երեխաների հետ, ինձ համար ան-  
հայտ պատճառներով եւ առանց դատի աքսորեցին Ալթայի երկ-  
րամաս, Կորդոն ավան:

Հենց հասանք կինս հիվանդացավ վոյանկայով, մեկը չկար, որ  
խնամեր կնոջս եւ անչափահաս երեխաներիս եւ այդ պատճառով  
ես չէի կարող աշխատել: 1950 թ. մայիսին կինս մահացավ: Այդ թվա-  
կանից ես աշխատում եմ չուրկոբագայում\* եւ միաժամանակ խնա-  
մում անչափահաս երեխաներիս, ինչը ինձ համար շատ ծանր է:



Եւ այդ պատճառով դիմում եմ ձեզ՝ խնդրանքով աղաչանքով,  
խնդրում եմ ճշտեք վերոնշյալ փաստերը եւ վերադարձրեք ինձ ե-  
րեխաներիս հետ Սովետական Հայաստան, որտեղ ունեւք հարա-  
զատներ, որոնք կօգնեն ինձ մեծացնել իմ երեխաներին:

Ինձ համար ցանկալի է, որ իմ երեխաները սովորեն մայրենի լեզ-  
վով, քանի որ ինքս զրկված եմ եղել այդ հնարավորությունից:

Ես վստահ եմ, որ իմ դիմումը անհետեւանք չի մնա, կվերանայեք  
գործը եւ կբավարարեք իմ խնդրանքը:

ՍՍՌ Միության ներքին գործերի մինիստր  
ընկեր Բերիա Լ.Պ.

քաղաքացի Մաթեոսյան Գրիգոր Հովհաննեսովիչից  
հասցե՝ Հայկական ՍՍՌ, քաղ. Լենինական,  
Մարալիկի խճուղի, շարք 4, տուն 6

Դիմում

Մեծարգո ընկեր Բերիա,

կներեք ինձ, որ այս դիմումով խլում եմ թանկարժեք բոլորները Ձեր  
աշխատանքի, բայց անփարատելի վիշտը, որը հուզում է ինձ տա-  
րիներ շարունակ, ստիպում է ինձ դիմել Ձեզ՝ օգնության խնդրան-  
քով:

Ես արտասահմանից հայրենադարձվել եմ Սովետական Հայաս-  
տան 1948 թ., մինչ այդ ապրում էի Ռումինական Կոստանցա քա-  
ղաքում: 1922 թ. ամուսնացա Բուլղարիայի Ռուչչուկ քաղաքի  
բնակչուհի քաղաքացուհի Պերճուհի Բոյաջյանի հետ: Շուտով  
մենք մի տղա ունեցանք: Տղայի ծնվելուց հետո կինս՝ երեխային իր  
հետ վերցնելով, 1923 թ. հյուր գնաց իր ծնողներին՝ Ռուչչուկ քա-  
ղաք, իսկ ես մնացի Ռումինիայում:

Հենց այդ ժամանակ սրվեցին բուլղարա-ռումինական հարաբե-  
րությունները եւ բուլղարական կառավարությունը կնոջս չարտո-  
նեց վերադառնալ ինձ մոտ Ռումինիա: Այդպես կինս տղայիս հետ  
մնացին Բուլղարիայում եւ տարիներ անց նա այնտեղ ամուսնա-  
ցավ քաղաքացի Վահան Մաղաքյանի հետ:

Մեծարգո ընկեր Բերիա, պարզ, մարդկային լեզվով ես չեմ կարող  
նկարագրել, թե ինչ ահավոր դժբախտություն էր դա ինձ համար  
եւ ինչպես այդ բանը ազդեց ինձ վրա:

Ինքնին հասկանալի է, թե ինչպիսին կարող է լինել ծնողի՝ հոր հո-  
գեկան վիճակը, որը գրկվեց իր 2 տարեկան երեխայից եւ տարի-  
ներ շարունակ նրա հետ տեսնվելու հնարավորությունից:

Վերը նկարագրված դեպքի հետ կապված ես բողոքեցի ժողովրդա-  
վարական Ռումինիայի կառավարող օրգաններին, լաց եղա, աղա-  
չեցի, բայց ինձ ոչ ոք չլսեց եւ ինձ վրա ոչ մեկը ուշադրություն  
չդարձրեց եւ այդ վիշտը ավելի ու ավելի խորացավ իմ սրտում:

1946 թ.՝ լսելով երկար սպասված լուրը արտասահմանյան հայերի  
Սովետական Հայաստան հայրենադարձվելու մասին, ինձ թվաց,  
որ ես նորից ծնվեցի եւ վերջապես կտեսնեմ իմ սիրելի տղային, ո-  
րի փոքրիկ թաթիկները թվում էր թե անընդհատ ձեռքերիս մեջ եւ  
եւ ես զգում եմ դրանց ջերմությունը:

Վերջապես կատարվեց իմ երազանքը: Ես հայրենադարձվեցի Սո-  
վետական Հայաստան: Բուլղարիայից Սովետական Հայաստան  
ներգադրեցին նաեւ իմ տղան, նախկին կինս եւ նրա երկրորդ ա-  
մուսինը: Ես կանգնած էի երջանկության շեմին: Բայց մինչ կիմա-  
նայի, որ նրանք նույնպես Հայաստան են եկել եւ մինչ կճշտեի  
նրանց հասցեն, 1949 թ. նրանց արքայազնի Աթաբեյի երկրամաս,  
գյուղ Սորոկինո:

Մեծարգո ընկեր Բերիա, ես 1886 թ. ծնունդ եմ եւ արդեն 67 տարե-  
կան, իսկ որդիս՝ Մաղաքյան Օսիկ Վահանովիչը, 29 տարեկան է եւ  
ահա արդեն 27 տարի մենք միմիանց չենք տեսնում: Ներկայում ես  
ոչ մի հարազատ չունեմ բացի այդ տղայից, նրանից բացի ես այլ  
երեխաներ չեմ ունեցել եւ բնականաբար չեմ կարող ունենալ:

Հիմա՝ ծերության օրերին, ունենալով հարազատ որդի եւ 27 տար-  
վա ընթացքում գեթ մեկ անգամ նրան հանդիպած չլինելով՝ ես  
գտնվում եմ կյանքին հրաժեշտ տալու շեմին:

Հարգելի ընկեր Բերիա, ես չեմ կարող ասել ինչի համար է մեղադր-  
վում իմ որդին, բայց նրա նամակներից հասկանում եմ, որ նրան  
արքայազն Մաղաքյան Վահանի պատճառով, որը հանդիսանում  
է նրա երկրորդ հայրը:

Իմ որդին Մաղաքյան Օսիկը, որից կտրվել եմ 2 տարեկան հասա-  
կում, հիմա համարյա 30 տարեկան հասակում է եւ խնդրում է ինձ,  
որպեսզի ես օգնեմ նրան վերադառնալ Հայաստան, բայց ես չեմ  
կարող օգնել այլ կերպ, քան դիմելով Ձեզ եւ խնդրելով Ձեզ, որպես-  
զի Դուք մտնեք ինչպես իմ, այնպես էլ որդուս դրության մեջ եւ թույ-  
լատրեք նրան վերադառնալ Հայաստան:

Խնդրում եմ Ձեզ չմերժել իմ խնդրանքը եւ հնարավորություն տալ  
ծերունի հորը 30 տարի անց թեկուզ եւ կյանքի վերջին օրերին  
տեսնվել հարազատ եւ սիրելի որդու հետ:

18.06.53թ.

ք. Լենինական



[հատված]

Հայկական ՍՍՌ պետական անվտանգության մինիստր  
ընկ. Ս. Կորխմազյանին<sup>37</sup>

արտասահմանից հայրենադարձված  
Ճատուր Սարգիսովիչ Մալաքյանից

Դիմում

Երբ Մեծ Ստալինը բացեց Սովետական Հայաստանի դռները արտասահմանյան հայերի առաջ, ես թողեցի ինչ ունեի, մեկընդմիջտ թոթափեցի կապիտալիզմի լուծն ու շահագործումը, մեկընդմիջտ խզեցի կապերս հայ ժողովրդի համոզված թշնամիների՝ դաշնակների հետ, ազատեցի իմ չարչրկված ոսկորները եւ վերադարձա հայրենիք, որի մասին երազել եմ երկար ու անընդհատ, համբուրեցի նրա հողը, սկսեցի ազահորեն շնչել նրա օդը եւ բուժեցի իմ վերքերը հարազատ հայրենիքի վառ արեւի տակ:

Հայրենիք գալուս առաջին իսկ օրվանից ես ստացա համապատասխան աշխատանք, միավորեցի իմ շահերը միլիոնավոր մարդկանց շահերին, որոնք կոմունիզմ են կառուցում մեր երկրում, իմ ճակատագիրը կապեցի արյունակից եղբայրներիս եւ քույրերիս ճակատագրերին, որոնց հետ անմնացորդ ձգտեցի լինել կոմունիզմի բարձրունքները գրավողներից մեկը:

Ես անսահման ուրախ եի եւ երջանիկ:

Սակայն այդ երջանկությունը երկար չտևեց, որովհետեւ մեզանում դեռ կան երկերեսանի մարդիկ, դավաճաններ, որոնք անմեղ զոհերի հաշվին իրենց էժան հեղինակություն են վաստակում եւ, ի հետեւանք նրանց անմարդկային գործունեության՝ ներկայում ես գտնվում եմ սիրելի հայրենիքի սահմաններից հեռու՝ աքսորված:

Որպեսզի դուք չնչին իսկ պատկերացում ունենաք իմ անձի մասին, պետք է հաղորդեմ, որ ծնվել եմ 1895 թ. Թուրքիայի Ռոդոսթո կոչվող վայրում խեղճ եւ իրավագուրկ երկրագործի ընտանիքում: 1921 թ. թուրքական կոտորածներից ազատվելու համար տեղափոխվել եմ Ռումինիա եւ ընդհուպ մինչեւ հայրենիք հայրենադարձվելը ապրել եմ Բուխարեստ քաղաքում, որտեղ զբաղվել եմ կոշկակարությամբ եւ մանր առեւտրով՝ այդ կերպ փրկելով ընտանիքս եւ ստեղծելով նրա համար կյանքի նվազագույն պայմաններ:

Մաքուր սրտով պետք է խոստովանեմ, որ, դեռ լինելով քաղաքականապես կարճատես՝ ընկել եմ որոշ դաշնակների ազդեցության տակ եւ 1926 թ. ներքաշվել նրանց խմբի մեջ, բայց շուտով զգալով եւ հասկանալով հայ ժողովրդին դաշնակների կողմից հասցվող վնասը, ես տառաջիորեն չեմ արել նրանց համար որեւէ աշխատանք եւ ամենակարեւորը մեկ տարի անց, այսինքն՝ 1927 թ. մամուլի միջոցով հայտարարագրել եմ իմ հեռացումը դաշնակցական կուսակցությունից եւ այդ պահից մտել կոմունիստական կուսակցության մեջ՝ մինչեւ 1946 թ., այսինքն՝ մինչեւ հայրենադարձությունը եղել եմ Բուխարեստ քաղաքի կոմունիստական կազմակերպության ակտիվ անդամներից մեկը, անդամակցել փոխօգնության կոմիտեին, հայրենասիրական ճակատին եւ եղել կոմունիստական կուսակցության ակտիվ անդամներից:

Ժամանելով հայրենիք 1946 թ. օգոստոսի 15-ին՝ մինչեւ 48 թ. ապրիլի 28-ը աշխատել եմ Ալավերդու տեղական արդյունաբերական կոմբինատում, իսկ 48 թ. ապրիլի 28-ից մինչեւ Հայաստանից աքսորվելը Հայկոսպի համակարգում եղել եմ ավագ հաշվապահ:

Ընտանիքս կազմված է 4 անձից՝ ես, կինս եւ 2 երեխաներս: Փաստացի ես երեխաներ չունեմ, նրանց վերցրել ենք մանկատանից եւ պահում ենք:

Ընտանիքս կազմված է 4 անձից՝ ես, կինս եւ 2 երեխաներս: Փաստացի ես երեխաներ չունեմ, նրանց վերցրել ենք մանկատանից եւ պահում ենք:

Ինչո՞ւ եմ ես այսօր զրկված իմ հայրենիքից, ինձ հայտնի չէ, բայց կարծում եմ, որ իմ աքսորի պատճառը կարճատեւ անդամակցությունն է դաշնակցական կուսակցությանը, որի վրա, ինչպես վերը նշեցի, թքել եմ մեկընդմիջտ եւ հեռացել իրապարակայնորեն հայտարարելով դրա մասին մամուլում:

Դաշնակցական կուսակցությունից հրապարակային հրաժարման եւ կոմկուսի շարքերում ակտիվ գործունեությանս մասին կարող են վկայել Բուխարեստից հայրենադարձված հետեւյալ հայերը՝ [թվարկում է անուններ]:

Միաժամանակ իմ ակտիվ աշխատանքի մասին արդարացի վկայություններ կարող են տալ ներկայում Ռումինիայի ժողովրդավարական հանրապետությունում ապրող Բուխարեստի կոմկուսի հետեւյալ անդամները [թվարկում է անուններ]:

Խնդրում եմ Ձեզ Բուխարեստում ՍՍՌՄ դեսպանության կամ համապատասխան օրգանների միջոցով ստուգել իմ քաղաքական անձը, ազատել ինձ աքսորից եւ թույլ տալ ծերության օրերին ապրել Հայկական ՍՍՌ քաղաք Երեւանում:

01.07.1950թ.

[հատված]

Հուլիս 1955

Հանրապետական հանձնաժողովի եզրակացություն  
15 մարտ 1955թ. քաղ. երեսան

Իրենց հայտարարություններում ընտանիքի անդամները գրում են, որ Ճ. Ս. Մալաքյանը, ում պատճառով ընտանիքը աքսորվել է, մահացել է եւ խնդրում են իրենց ազատել հատուկ բնակավայրից:

Աքսորի հիմնավորումը ստուգելու ընթացքում պարզվել է, որ ընտանիքի գլխավոր Մալաքյանը իսկապես մահացել է 1952 թ., ինչը հաստատվում է մահվան վկայականի պատճենով: 1953-ի նոյեմբերի 28-ին հարցաքննված գործակալը «...» ցուցմունք է տվել, որ Մալաքյան Ծատուրի դաշնակցության կուսակցության անդամ լինելու մասին ինքը իմացել է այլ մարդկանց խոսքերից եւ անձամբ դրանում համոզված չէ: 1954-ի մարտի 22-ին գործակալ «...»-ը հայտնել է, որ 1916 թ. Մալաքյանը անցել է Ռուսաստան եւ մինչեւ 17-18 թթ. եղել դաշնակցական կամավորական ջոկատի հրամանատար եւ որ իր՝ Մալաքյանի խոսքից իրեն հայտնի է, որ նա անդամակցել է դաշնակցությանը մինչեւ 1928-30 թթ:

ՀՕԿ-ի (Հայաստանի օգնության կոմիտե) կազմավորումից հետո Մալաքյանը դաշնակցություն կուսակցության այլ անդամների հետ հեռացել է կուսակցությունից եւ ակտիվորեն պայքարել ընդդեմ դաշնակների: Այս հանգամանքը արտացոլված է նաեւ «...» գործակալի 13.05.1948 սահմանական տեղեկատվության մեջ:

Վերոշարադրյալը հաստատել է նաեւ գործակալ «...»-ը 1953-ի օգոստոսի 20-ին:

Հիմնվելով շարադրվածի վրա եւ հաշվի առնելով ընտանիքի գլխավորի մահը եւ այն, որ դաշնակցություն կուսակցությանը պատկանելու մասին նյութերը չեն հաստատվել,

ԿԱՌԱՋԱՐԿԵՒ

Ծատուր Սարգիսովիչ Մալաքյանի ընտանիքին հատուկ բնակավայրից ազատել:

18.03.1955



Սորոկինսկի շրջան,  
Խմելյովկա գյուղի  
դպրոցը  
1950-ականներ



ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄ

Եղիսաբեթ  
Չափշովեան-Մանկասարեան



# ԿՅԱՆՔԸ ԴՌՆՓԱԿ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գնացքը սլանում էր եւ իր հետ տանում հազարներով խեղճ ահել ու ջահել, նաեւ անմեղ երեխաներ եւ չգիտեինք, թե որտեղ են տանում: Ոմանք խոսում էին իրար հետ աքսորի մասին եւ կասկածում էին, որ աքսորում են մեզ:

Հունիսի 13-ի գիշերն էր, երբ շատ մեծ երազանքներով անկողին մտա, որպեսզի առավոտյան կանուխ արթնանալ, եւ ես գործի գնամ: Այդ երեկո ժամանակից շուտ պառկեցի: Անկողնում երկար արթուն էի եւ մտքերով տարված, թե ինչքան լավ կլինի մեր կյանքը: Մտածում էի, որ կարող եմ միշտ ամուսնուս<sup>38</sup> օգնեմ եւ երեխայիս մեծացնել: Ես մեծ պարտականություն ունեի կատարելու, յոթը երկար տարիների հոգսեր, որպեսզի երեխաս ապահով հանձնեի իր հայրիկին: Այդ էր, որ ինձ շատ էր ուրախացնում: Այդ հույսով քնեցի:

Չեմ հիշում, թե ինչքան ժամանակ էր անցել, երբ մեր դուռը բախվեց. ես արթնացա եւ մի սարսափ անցավ մեջես, սիրտս սկսեց բաբախել, չգիտեի, թե ինչ էր կատարվում ինձ հետ: Նստեցի անկողնու վրա, ավելի ուժեղ խփեցին:

Այդ զանգը նման էր նրան, երբ մեր դուռը խփեցին եւ ամուսնուս տարան:

Երկրորդ անգամ դուռը խփելուց բոլորը արթնացան եւ տիկինը զարմացավ, թե ով է այս ժամանակ, ես նայեցի ժամացույցին ու դիմ երկուսն էր, բոլորս սարսափեցինք, տիկինը մոտեցավ դռանը, ես անմիջապես պառկեցի եւ երեսու ծածկեցի վերմակով եւ չգիտեմ, թե ինչու էի վախենում:

Տիկինը դուռը բացեց: Ես լսեցի տղամարդկանց ձայներ եւ լսեցի, որ իմ անունն էին հարցնում, ավելի շատ խորացա անկողնու մեջ, փակել էի ամուր իմ աչքերը եւ դողում էր բոլոր մարմինս, երբ տիկինը մոտեցավ ինձ եւ ասաց.

- Վե՛ր կաց, քեզ են ուզում:

Աչքերս բաց արեցի. յոթ տղամարդ, բոլորը զինված կանգնած էին մահճակալիս մոտ: Սարսափից աչքերս այնքան էին բացվել, որ կարծես ուզում էին դուրս գալ:

Պարոնները ինձ ասացին.

- Վե՛ր կաց, նստի՛ր, հարցեր ունենք քեզ տալու:

Ես կարծեցի ամուսնուս մի դեպք է պատահել, անմիջապես սարսափահար հարցրեցի ամուսնուցս: Ինձ այդ մասին չպատասխանեցին, ասացին.

- Վե՛ր կաց, մենք քո վերաբերյալ հարցեր ունենք:

Անմիջապես ցած իջա անկողնուց: Այնքան էի շփոթված, որ չանդրադարձա, թե գիշերանոցով կանգնած էի յոթը տղամարդու դիմաց: Երբ ուզեցի մոտենալ աթոռին, որ վերցնեմ խալաթս, ու ծածկեմ ինձ, ասացին.

- Շարժվելու իրավունք չունես:

Բոլորը ռուսերեն էին խոսում եւ ես շատ քիչ էի հասկանում: Տիկի-նի տղուն ասացի թարգմանի ինձ եւ նույն հարցերն էին տալիս, ինչ որ ամուսնուս: Սարսափն ինձ տիրել էր, կոկորդս չորացել, ոտքերս թուլացել, եւ ես ամեն ինչ հասկացա, քանզի փորձառու էի, այժմ գիտեի, որ ինձ ձերբակալելու են, բայց տանջվում էի, որ փոքրիկիցս բաժանվելու եմ, եւ մնալու էր բոլորովին մենակ ու անօգնական: Ում պետք է հանձնեի երեխայիս, այդ ժամանակ արթնացավ երեխաս եւ սկսեց լաց լինել: Գրկել էի փոքրիկիս եւ սեղմել կրծքիս ու լաց էի լինում: Տիկիկի աղջիկը մոտեցավ ինձ, երեխայիս վերցրեց ինձանից եւ սկսեց հագցնել հագուստները, բոլոր ունեցվածքս իրար խառնեցին եւ փնտրում էին չգիտեմ ինչ:

Ուղիղ երկու ժամ փնտրեցին: Հարցեր էին տալիս զանազան եւ անվերջ գրում ու գրում: Կարծես պատրաստվում էի կախաղանին: Ընթերցողս թող կանգ առնի այս կետին եւ չանցնի անտարբեր. կարող եք երեւակայել իմ վիճակը:

Տառապանքները քայլում էին իրար հետեւից ինձ հետ, անկարելի էր, որ սրան դիմանայի, գետի նման արցունքներս թափվում էին, նայում էի երեխայիս ուրիշի գրկում եւ մտածում, դա կլինի քո մայրը... կանգնել չէի կարողանում, ոտքերս ուժասպառ էին եղել, այդ ժամանակ մտքովս անցավ, որ տիկինը երկու որբ ունի, հիմա երեք եղան: Աչքս չէր անցնում երեխայիցս, նայում էի այդ բարի աղջկան, թե ինչպես է համբուրում ու գուրգուրում մայրական սիրո պես: Ասում են աշուղները երգեր են գրել զուլումի մասին, բայց զուլումը միայն չէր կարող երգ լինել, նույնիսկ իրական կարող է լինի, որը արդեն եղել էր եւ կատարվում էր մի սարսափելի զուլում ինձ համար...

Երբ վերջացրեցին խուզարկությունը եւ հարցաքննությունը, ինձ ասացին.

- Հիմա կարող ես հավաքել եւ կապել պայուսակները:

Այդ թույլիս ես մտածեցի, եթե ինձ բանտարկելու են, ապա ինչու են ասում «ունեցածդ հավաքիր»: Մի պահ կանգ առա եւ մտածում էի այդ առթիվ, այդ թույլիս տղաներից մեկը ասաց.

- Շատ ապրանք չի կարող տանի իր հետ, որովհետեւ մենակ է:

Տիկիկի տղան ինձ ասաց.

- Ասում են հագնվի եւ երեխայիդ էլ պատրաստիր:

Երբ լսեցի երեխաս ինձ հետ պիտի լինի, այլեւս մոռացա ամեն ինչ եւ խելագարի պես հավաքում էի իրենց թափած հագուստները եւ լցնում պայուսակները, իրենք էլ օգնում էին ինձ, ինձ հետ անկո-

ղիներս հավաքում եւ կապում էին, խեղճ փոքրիկ աղջիկը լաց էր լինում եւ երեխայիս հագուստներն էր հագցնում, տիկինը քարացած ինձ էր նայում եւ լուռ արտասվում, չգիտեր, թե ինչ է կատարվում: Երբ ամեն բան պատրաստ էր, տղամարդկանցից մեկը ասաց.

- Այսքան ապրանքը չես կարող տանել:

Ես կարողացա հագիվ մեկ անկողին եւ երկու պայուսակ վերցնել եւ մնացած բոլոր իրերը թողեցի ամուսնուս քրոջը: Այդ մարդիկ ինձ ասացին՝ գրիբ երկտող քո ամուսնու քրոջը, որը տիկինը պետք է հանձնեի իրեն:

Չմոռանամ հիշեցնել, որ այդ ժամանակամիջոցում ամուսնացել էր ամուսնուս մեծ քույրը, որը ինձ հետ էր բնակվում, այդ բոլորը վերջացնելով ուզեցի գնալ միջանցք, որպեսզի հագնեմ իմ հագուստները.

- Այստեղ, մեզ մոտ հագնվիր, իրավունք չունես մեզանից հեռանալու:

Այնքան էի զայրացել, ինպե՞ս հանվեի այդ բոլոր տղամարդկանց առաջ, բայց հրամանը հրաման էր եւ բարկացած հանվեցի բոլորի առաջ եւ հագա հագուստներս:

Չարմանում էի, որ ինչու է մարդկությունը այսքան խիղճը կորցրել հանդեպ մի անզոր, տկար կնոջ: Չայրացել էի նույնիսկ ինձ վրա, թե այլեւս ինչու եմ ես ապրում, ինչի՞ համար, տանջվելով համար:

1949 հունիսի 13-ին<sup>39</sup> էր, առավոտյան ժամը չորսը: Ես տխուր դուրս եկա տնից՝ առանց ցտեսություն ասելու տիկինենց, միայն տխուր հայացքով նայեցի բոլորին: Երեխաս գրկած՝ արտասվելով դուրս եկանք փողոց, այնտեղ կանգնած էր մի հատ բեռնատար մեքենա եւ վարորդը նստած էր մեջը, բարկացած՝ մեքենան նստեցի մի չոր սառը տախտակի վրա եւ երեխայիս սեղմել էի կրծքիս, երկու տղաները նստեցին մեքենավարի մոտ, իսկ հինգ հոգին բարձրացան ինձ մոտ եւ շրջապատել էին ինձ:

Լուռ էին, բոլոր տեսարանը անտանելի էր, մթության մեջ տանում էին մի անմեղ արարած: Ես էլ չգիտեի, թե ուր են տանում, արդյո՞ք սպանելու, արդյո՞ք կախելու, թե՞ թալանելու, ինչ անվանեմ՝ ես էլ չգիտեի, այլեւս ոչինչ աչքիս չէր գալիս, միայն մահ էի սպասում, բայց խնդրում էի իմ Աստծուց, որ գոնե տանջամահ չանեն ինձ, այլ շատ հանգիստ մեռցնեն:

Ամառային զով քամին փչում էր երեսիս եւ թարմացնում ինձ, որպեսզի դիմանամ այդ տառապանքներին: Երեւանը լուռ էր, նաեւ լուռ էինք մենք: Աչքս չէր հեռանում այդ զենքերից, որոնք կապված էին մարդկանց գոտիներից եւ կարծես սպասում էի՝ հիմա պետք է գործադրեն ինձ վրա: Երբեմն ուզում էի հարձակվել այդ զենքերի

վրա եւ ինքս ինձ վերջ տալ, բայց երեխայիս հարցն էր ծագում եւ նորից այդ սարսափելի մտքից հետ էի դուրս գալիս, երեխայիս նայելով ու համբուրելով: Մեքենան շարժվում էր կամաց եւ օրորվում էինք բոլորս: Այդ ժամանակ շատ բաներ էի ես հիշում, որը կարդացել էի զանազան գրքերի մեջ, կանանց տանջալի մահերի մասին: Նայել էի շատ տեսակ տառապող կանանց շարժանկարներում եւ արցունք էի թափել այդ վեպերի համար, խղճացել եւ տանջվել էի, բայց ավաղ, սա հեքիաթ չէ, ոչ ալ պոեմ, այլ մի իրական դեպք է, որին ես ենթակա եմ եղել եւ ոչ ոք չէր լացում ինձ համար, ոչ էլ խղճում ու տանջվում, միայն կոմունիստն էր ուրախանում եւ ժպտում:

Շարժվում էինք դեպի ո՞ւր, ես էլ չգիտեի, գիշերվա մթության մեջ չէի կարողանում նշմարել այդ պարոններին, որոնք ոչ մի խոսք չէին փոխանակում միմյանց հետ: Փոքրիկիս սեղմել էի կրծքիս եւ փաթաթել էի իրեն տաք վերմակով: Անշուշտ ամառ էր, բայց գիշերային զով քամին փչելով մեր վրա, սառում էին մեր մարմինները: Կարծես երեխաս էլ էր հասկանում ամեն ինչ, աչքերն հառած ինձ էր նայում եւ կարծես ինքն էլ էր վախենում: Մոռացել էի ծնողներին, մոռացել էի ամեն ինչ, նույնիսկ ամուսնուս, մտածում էի միայն մի բանի մասին, դա իմ մահն էր:

Նաեւ մտածում էի մայրս մահս չիմանար...

Ընթերցողս չի կարող պատկերացնել իմ վիճակը, որովհետեւ հեքիաթի պես պետք է կարդա եւ անցնի ողբալի այս տողերը: Արդյո՞ք մայրս զգում է սա, կամ երագի մեջ տեսնո՞ւմ է իր բալիկին եւ վեր է թռնո՞ւմ տեղից ու պատմում հայրիկիս, որ քնած պետք է լիներ անուշ իր տաք անկողնում: Ոչ, բայց գիտեմ մայրական սիրտը միշտ արթուն է եւ արթուն էլ կմնա: Այդ առավոտ ես պետք է գործիս լինեի եւ իմ ամբողջ երազանքներս խորտակվեցին... Այժմ նստած մեքենայի մեջ գիշերվա մթին, յոթը տղամարդկանց հետ, բացօթյա մեքենայի մեջ եւ բոլորն էլ զինված, կարծես մարդասպան էին բռնել եւ տանում էին դատավճիռը կատարելու, բայց ի՞նչ էր մեղքս, Հայաստան էինք գնացել ապրելու եւ ոչ տանջվելու: Կարծես լուսինն էլ վշտացել էր եւ չէր երեւում: Նայում էի երկնքին, պայծառ էր, միայն աստղերն էին պսպղում, ու ինքս ինձ հառաչում էի՝ Տեր Աստված ինչո՞ւ եմ մարդիկ այսքան չարացել...

Փոքրիկս քնեց գրկիս, մինչեւ ես խորացել էի մտքերիս մեջ: Արցունքներս չէին դադարում: Երբեմն պարոնները մի հայացք էին զգում վրաս, կարծես խղճում էին ինձ, բայց երբեմն էլ ցույց էին տալիս, որ սա իրենց գործն է, ես կարդում էի այդ բոլորը իրենց հայացքներից:

Բավականին գնացել էինք ծուռումուռ փողոցներով: Նկատեցի՝ մե-

քենաներ եմ գալիս եւ անցնում: Ուշադիր նայում էի՝ մեր մեքենայից էին, ուր նստած էին մարդիկ եւ երբեմն լսվում էր երեխաների ձայներ, որոնք այնքան շատացան, որ համարյա կողք կողքի էին գնում, եւ լցվել էր աղմուկը քաղաքում: Ոմանք իրենց պատուհաններից նայում էին փողոց: Այդ ժամանակ ես կասկածեցի, գուցե երկիրը վտանգի տակ է եւ ժողովրդին հանում են քաղաքից, բայց նույն րոպեին ես մտածեցի՝ ապա ինչո՞ւ մեզ հետ բնակվող տիկիները մնացին: Ոչինչ չէի հասկանում. միայն այսքանով սիրտս հանգստացավ, որ ես մենակ չեմ:

Երբ քաղաքից դուրս եկանք, նկատեցի, որ գնում էինք դեպի գնացքի կայարան: Երբ կանգ առավ մեր մեքենան, նկատվում էր, որ հեռվում կանգնած էր մի երկար գնացք, որոնցով կենդանիներ կամ ապրանքներ էին տեղափոխում: Նկատեցի, որ ժողովրդին լցնում էին գնացքի մեջ եւ դռները փակում եւ մեքենաները աստիճանաբար առաջանում էին եւ դատարկվում ու անմիջապես հեռանում:

Հազիվ լինեի ժամը հինգը, դեռ լույսը չէր բացվել, առավոտվա ցողը դեռ օդի մեջ էր եւ այդ բոլորը աղոտ ձեւով էին երեւում: Մեր մեքենան մոտենում էր գնացքին:

Բոլորին լցնում էին վագոնների մեջ՝ կենդանիների նման: Մենք մոտեցանք: Արդեն դուռը փակում էին, բայց տեսնելով, որ մեկ հոգի եմ, ինձ էլ տեղավորեցին ներս եւ ճիշտ դռան մոտ կանգնեցի եւ դուռը փակվեց: Հազիվ կարողացան անկողինիս կապոցը եւ երկու փոքր պայուսակ սեղմելով ներս գցել: Թափվեցինք իրար վրա եւ չէինք կարող տեսնել, այնքան որ մուկ էր վագոնում. շնչելու հնարավորություն չկար, բոլորը սկսեցին քրտնել: Միայն մի պատուհան կար՝ շատ փոքր, այդ էլ փակել էին մինչեւ գնացքը ճանապարհվի: Բոլորս էլ հայեր էինք, ոչ ոք չէր խոսում, պապանձել էինք եւ կծկվել իրար կողքի եւ համարյա բոլորը արտասվում էին:

Հայրենադարձներս ոչինչ չէինք հասկանում, բայց տեղացիները գիտեին եւ լուռ արտասվում էին...

Երբեմն նայում էինք ճեղքերից դուրս եւ տեսնում էինք լույսը, որ արդեն բացվել էր եւ կարելի էր նշմարել մարդկանց: Ձայները կամաց-կամաց մարում էին, միայն լսվում էր զինվորների սուլոցների ձայնը: Գիտեինք շուտով պետք էր ճանապարհվել եւ այդ ժամանակ բացվեցին պատուհանները, որոնք հազիվ էին լուսավորում:

Տղամարդիկ սկսեցին ծխել, ծերերը հագում էին, փոքրիկները լաց լինում: Նկարագրել չեմ կարող, թե ինչ տեսարան էր բացվել՝ իրար կանելով: Կամաց շարժվեց մեր ճակատագրի ճամփան, այդ բոլորի մեջ ինչ կարող էիր մտածել, ոչինչ եւ ոչինչ:

Ի՞նչ էի տեսնում՝ ահել եւ ջահել, իրար վրա թափված: Մուկ եւ խո-

րը բանտ: Երբեմն երանի էի տալիս ամուսնուս, որ գոնե բանտումն է, բայց ես որտեղ էի՝ ինքս էլ չգիտեի, ծխով գալարված մի մուգ խցում, սովետի ձեռքերում...

Դա 1949 հունիսի 14-ի առավոտն էր, երբ ամեն ինչ փոխվեց ինձ համար եւ խորտակվեցին բոլոր հույսերս, խափանվեց կյանքս: Ծփոթությունը ինձ տիրել էր, ես միայն նայում էի ժողովրդին, մարդկությունը ի՞նչ է, կարելի է մի քանի ժամվա մեջ դժբախտանալ: Նայում էի ու մտածում՝ սրանք բոլորն էլ անցյալ գիշեր երջանիկ էին եղել, ուրախ եւ զվարթ, նույնիսկ ինչ երազանքներով անկողին են մտել, վաղվա ինչեր են ունեցել անելու, բայց հիմա՞: Այս մի քանի ժամը ինչպես շտապ եւ անսպասելի փոխեց այս բոլորի իդեերը:

Ես զարմանում էի մարդկության եւ աշխարհի վրա, թե ինչ սրտեր բաժանվեցին, մայր եւ զավակ կամ ամուսիններ, քույր եւ եղբայր:

Այս բոլորի պատասխանատուն ո՞վ էր: Աստված, թե՞ մարդը: Չէ ո՞ր մարդուն էլ Աստվածն էր ստեղծել: Ոչ, այդ բոլորը գալիս էին կոմունիստական ծրագիրներից:

Ի՞նչ էր կոմունիզմը: Սա էր նրա արածը: Խեղճ ամուսինս ի՞նչ էր արել: Ոչինչ:

Ես ի՞նչ էի արել, ոչինչ: Մարդը հայրենիք էր եկել, որ բանտարկվեր, քսորովեր կամ սպանվե՞ր: Դա էր կոմունիզմը, իր դաժան եւ անօրեն ծրագրով...

Գնացքը սլանում էր եւ իր հետ տանում հարազատներով խեղճ ահել ու ջահել, նաեւ անմեղ երեխաներ եւ չգիտեինք, թե որտեղ են տանում: Ոմանք խոսում էին իրար հետ քսորի մասին եւ կասկածում էին, որ քսորում են մեզ: Բայց ես կարծում էի, որ միայն այն մարդիկ են քսորվում, որոնք հանցավոր են, մտածում էի՝ ես ի՞նչ եմ արել, որ քսորվեմ: Սլանում էին նաեւ ժամերը: Ժողովուրդը սկսեց առավոտվա նախաճաշը ուտել, ինչ որ ունեին, ամեն մարդ մի կտոր պատառով կշտացնում էր իր ստամոքսը եւ ոմանք էլ ոչինչ չունեին իրենց հետ եւ մնացել էին սոված:

Ես հիշում եմ այն ժամանակը, երբ պարոնները հավաքում էին իմ ունեցվածքը. դրանցից մեկը ինձ ասաց, ուտելիք ունե՞ս, վերցրու քեզ հետ: Ես միայն մի փոքր կտոր հաց ունեի եւ մի քիչ կարկանդակ փոքրիկիս համար: Այդ ժամանակ վագոնում շատ ուրախացա, քանի որ դեռ երկու օրվա հաց ունեի եւ փոքրիկիս դեռ կերակրում էի մայրական կաթով: Երբեմն նաեւ մի փոքր հացի կամ կարկանդակի կտորներով էի կերակրում:

Առավոտ էր, անշուշտ բոլորս էլ կարիք ունեինք լվացվելու կամ ատամները մաքրելու եւ կար հատկապես արտաքնոցի կարիքը: Դժբախտաբար դրանցից ոչ մեկը չունեինք, ոչ ջուր, ոչ արտաքնոց:

Երեխաները արդեն անզսպելի էին դարձել եւ նույնիսկ մեծերը:

Գնացքը չէր կանգնում, քանզի վախենում էին, որ փախնեինք: Մեզ հետ կային մեծահասակներ նաեւ հիվանդներ, որոնք իրենց պետքերը զսպել չկարողացան եւ նստած տեղներում սկսվեց զանազան հոտերը եւ տեսակտեսակ ձայները: Ծիծաղել չէինք կարող, բարկանալ չէինք կարող, պետք էր համբերել...

Տղամարդիկ խոսում էին, որպեսզի մի հնարք գտնեին: Մեկ պարոն առաջարկեց վագոնի մեկ անկյունի տախտակը կտրել անցք բացել, որպեսզի գործածվի որպես արտաքնոց: Քանի մը տղամարդ գգուշությամբ փոքրիկ դանակներով սկսեցին եւ փորեցին, կտրեցին հատակի տախտակը, մի քանի սավանների ծայրերը իրարու կացնելով վարագույրի տեղ ծառայեցին... Եվ արդեն ամենկարեւորը ունեինք... Չնայած, որ շատ տհաճ էր բոլորիս համար, բայց ուրիշ ճար չունեինք:

Վերելի անկյունում նստած էին երկու ծերուկներ, սպիտակ մազերով եւ թռռմած դեմքերով եւ տխուր դեմքերով նայում էին ինձ: Ձեռքի նշանով ասացին ինձ արի մեզ մոտ: Ճանապարհ չկար, որ անցնեի, բայց տղաների օգնությամբ ինձ եւ ունեցվածքս փոխադրեցին անկյունումը վտանգավոր դռան առաջից, քանզի եթե դուռը բացվեր, ես երեխայիս հետ դուրս կընկնեի: Մոտեցա ծերուկներին, շնորհակալ եղա իրենցից եւ նստա անկողնուս վրա: Կինը հարցրեց ինձ՝ մենա՞կ ես, գլխի շարժումով ասեցի՝ այո: Չէի վստահում ոչ ոքի եւ ոչինչ չէի ասում իմ ցավերի մասին: Խեղճ կինը նայում էր ինձ եւ արտասովում: Տեղացիներ էին, անունները չգիտեմ:

Ամառային տաքը խեղդում էր բոլորիս. նաեւ շատ զգալի եղավ մեր ջրի պահանջը: Ծարավը խեղդում էր մեզ, բայց ոչ մի կերպ չէինք կարողանում դրա առաջը առնել: Չունեինք ոչ մի կաթիլ ջուր:

Այդ օրը անցավ, երեկոյան էինք մոտենում եւ դեռ մեր գնացքը չէր կանգնել: Դրսում մուգ էր, նաեւ ներսում: Մարդիկ սկսեցին մի պատառ բան ուտել: Վախենում էինք պառկելու, քանզի երբեք տեղ չկար շարժվելու, բոլորը համարյա նստած ննջում էին, հոգնած եւ հուզված: Լռությունը տիրեց նորից: Հիվանդները ծանր տնքում էին, ծերերը խռմփացնում, երիտասարդները տանջվում: Ոտքերս թմրել էին, ձեռքերս՝ հոգնել, բայց երեխաս պառկեցնելու տեղ չկար, ոչ մեկ իր տեղից շարժվել չէր կարող: Միայն պետքարանի ժամանակ, շատ զգուշությամբ իրար վրայից թռնելով կարելի էր լինում շարժվել:

Կեսգիշեր էր, խավարի միջից հանկարծ լսվեց մի տիկնոջ մեղմ ու անուշ ձայնը. տխուր երգում էր, երգի բառերը ճիշտ մեզ էր վերաբերում կարծես, հուզիչ էր այնքան, որի պատճառով բոլորս ցնցվեցինք: Այդ մուգ վագոնում բոլորս ծայնակցեցինք տիկնոջ մեղմ եւ

ազդեցիկ երգին: Բոլորիս վերքերը նորոգվեցին, որովհետեւ շատ տարբեր վշտեր կային: Ոմանք այդ գիշեր բաժանվել էին զավակներից, ծնողներից, նույնիսկ ամուսիններից: Պատահել էր, որ ամուսինը աշխատանքով մի քանի օրվա համար գնացել էր շրջանները եւ իր ընտանիքը այժմ աքսորի մեջ մեզ մոտ նստած էր, առանց ամուսնու: Կային նաեւ զավակներ, առանց ծնողների: Կային վարորդներ, որոնց հրամայված էր գիշերվա ժամը երկուսին գնալ աշխատանքի եւ վարորդը հետեւել էր կոմունիստի հրահանգին, տեղափոխել կայարան իր ընտանիքը, տունը՝ անկողնում թողնելով գնում էին: Մի ուրիշ վարորդ էլ իր ընտանիքն էր վերցրել եւ այնտեղ՝ կայարանում դեպի աքսոր:

Բոլորս էլ այլազան ցավ ունեինք: Տիկիներ իր երգի ձայնը ավելի էր բարձրացնում եւ արցունքների հետ դուրս էին թռնում հրաշալի եւ իմաստալի բառերը: Սլանում էր գնացքը առանց կանգնելու: Լռեց նաեւ մեր վագոնը: Նայում էի շուրջս, բոլորը նստած ննջել էին, հոգնածությունը հաղթել էր բոլորին. արթուն էի ես: Ամռան տոթն ու ծարավը ուժասպառ էին արել բոլորիս, այդ բոլորի մեջ ամենաերիտասարդը ես էի:

Առավոտյան լույսը բացվում էր: Սուլոցների եւ զինվորների ձայները լսվում էին: Գնացքը դանդաղեցրեց իր ընթացքը եւ կանգնեց մի անապատում: Դռները բացվեցին, մի անուշ թարմ օդ շնչեցինք, կարծես նոր աշխարհ էինք ընկել: Չինվորը բարձրացավ վագոն եւ հրահանգեց բոլորիս ցած իջնել: Բոլորս իրար կողքի շարվեցինք՝ առանց իրարմե հեռանալու: Իրար կպած շարվել էինք վագոնի առաջ եւ զինվորները մեր առաջը շարված, հրացանը ձեռքներին մեզ տասը թուփե ժամանակ տվեցին արտաքննողի համար: Կանայք եւ տղամարդիկ բոլորը իրենց հագուստները ցած քաշելով նստել էին կողք կողքի: Ամոթը մոռացել էինք, արտաքննող էինք նստել զինվորների առաջ: Մարդկային կերպարանքից դուրս էինք եկել, կարծես կենդանիներ լինեինք:

Կալանավորները կարծես հանգստացան եւ սկսեցին քիչ շարժում անել մարմինները, քանզի 24 ժամ փակված եւ կծկված էինք մնացել: Քիչ ետք բոլորս նորից նստած էինք մեր վագոնում, բայց ոչ մի կերպ ջուր չէինք կարող ունենալ անապատում:

Ոչ մեկիս պարզ չէր, թե որտեղ ենք մենք գնում կամ ինչ է կատարվելու մեզ հետ: Երկու օր է, որ համարյա ոչինչ չէինք կերել: Մոտիս ուտելիքը պահում էի երեխայիս համար, ուժասպառ էի եղել, որովհետեւ երեխաս քամում էր ինձ ծծելով մայրական կաթը: Ամեն անգամ, երբ գնացքը կանգ էր առնում, զինվորները ներկա-բացակա էին անում, որպեսզի փախած մարդ չլինի: Մոտենում էինք ճաշի ժամանակին: Գնացքը կանգնեց եւ զինվորը հայտարարեց, որ մեզի կերակուր են տալու, անշուշտ շատ ուրախացանք, որովհետեւ

բոլորս էլ սոված էինք: Մի քանի զինվորներ լրագրի մեջ փաթաթած աղի չորացած ձուկ եւ մի կտոր սեւ հաց տվեցին բոլորիս: Մենք՝ աքսորյալներս, կերանք այդ չոր աղի ձուկը, բայց խեղդվում էինք ծարավից:

Հազիվ էր անցել մի քանի ժամ, երբ նորից կանգեց գնացքը եւ մեզ ջուր պետք է տային, բոլորս ցած իջանք եւ սպասում էինք: Ինքնաշարժի մեքենայի միջից ջուր հանեցին, նավթով ջուր էր, խմում էինք ագահորեն, փչում էինք ջրի երեսի նավթը եւ խմում էինք: Կոմունիզմը ուզում էր մեզ տանջելով մեռցնել:

Փոքրիկս լաց էր լինում, ջուր էր ուզում, վախենում էի այդ ջրից իրեն տայի, բայց հեկեկում էր թուլացած ձեռքերիս մեջ, աչքերը փակել եւ այլեւս կարծես չէր շնչում. ստիպված եղա այդ ջրից շատ քիչ տալ, փչում էի ջրի երեսի նավթը եւ խմեցնում, չէի կարողանում բաժակը քաշել բերանից, ոմանք էլ իրեց թասերը լցնում եւ պահում էին:

Մենք համարյա կես ժամ քայլում էինք զինվորների հսկողությամբ, որոնք հրացանները մեկնած ժողովուրդի վրա, ասեցին.

- Ով որ փորձի փախչել, կխփենք:

Նորից բոլորս նստած ենք մեր տեղերը եւ գնացքը շարժվեց առաջ՝ մեր բախտին:

Դեռ նոր էինք երեկոյան մոտենում, բոլորս սկսեցինք փորացավով բռնվել, նավթով ջրից եւ սարսափելի այդ չոր, աղի ձկից: Բոլորս իրար հետեւից մեր վագոնի պետքարանն էինք վագոն, այլեւս հերթ չէր հասնում, բոլորը փորահարիներով էին բռնվել, ոմանք փոքրերին չէին կարողանում հասցնել արտաքննող եւ իրենց նստած տեղերում պարպում էին ստամոքսները: Սարսափելի տեսարան բացվեց, գարշելի հոտը եւ ժողովրդի փորացավի տնքոցը լցվեց ամբողջ վագոնում...

Միեւնույն ժամանակ երեկոյան մութը մտավ ներս, ոչ ոք ոչինչ չէր տեսնում, միայն մարդիկ իրար հրելով, իրար վրայից թռչելով արտաքննող էին վագոն: Երեխասս հիվանդացավ, նրա ստամոքսն էլ սկսեց վազել, անդադար արտաքննող էի տանում, այլեւս այնքան վատ եղավ, որ չէի կարողանում դեկավարել իրեն եւ այդ մթության մեջ ոչինչ չէի տեսնում: Շատ դժվարությամբ անկողինս բացեցի եւ սպիտակեղենը գործածեցի երեխայիս համար: Հավաքվել էին բոլորիս մոտ այդ կեղտոտ սավանները, բարձի երեսները, սրբիչները: Արդեն ժողովուրդը սկսեց այդ փոքրիկ պատուհանից դուրս թափել այդ կեղտոտ շորերը:

Ամմոռանալի եւ սարսափելի դեպք պատահեց մեր վագոնում: Նստած էին մեկ երիտասարդ ամուսիններ եւ ունեին նորածին, որը հազիվ լինել մեկ ամսվա, կծկված նստած էին իրենք փոքրիկի



հետ: Երեխան քնած էր իր մայրիկի կողքին, խեղճ մայրը հոգևել էր իր գիրկը պահելուց եւ դրել էր կողքը, այդ ժամանակ մարդիկ արագորեն շարժվում էին դեպի արտաքնոց: Մուգին մեջ իրենց փորահարկներով տարված՝ անուշադրուքամբ մի մարդ ոտքը դնում է փոքրիկի վրա եւ անցնում: Երեխան ճչալով հառաչեց գիշերվա խավարի մեջ: Ոչ մի բան չէինք տեսնում, մարդիկ իրենց լուցկիների միջոցով տեսան, որ խեղճ երեխան վնասվել էր գլխից: Ամբողջ գիշեր լաց եղավ եւ ոչ ոք չէր կարողանում մի ճար անել, ողբում էին երիտասարդ ծնողները եւ օգնություն բղավում, խփում էին վագոնի բոլոր կողմերը եւ դռանը հարվածում, որպեսզի մեկը մեր ձայնը լսեր, բայց ոչ ոք մեզ չէր կարող լսել:



Ամբողջ գիշեր փոքրիկը տնքում էր եւ իր ծնողներին տանջում: Առավոտյան լույսը բացվեց եւ տեսանք, որ երեխայի գլուխը համարյա ճեղքվել էր, աչքերը դուրս էին թռել, լեզուն կախվել: Մի սարսափելի տեսարան էր ստացվել մեր վագոնում եւ մեզ բոլորիս ազդել: Փոքրիկը ուժասպառ եղավ եւ այլեւս ձայնը դուրս չէր գալիս, հագիվ էր բաբախում նրա սիրտը: Բոլորս տխուր էինք, մայրը գրկել էր ու կացրել սրտին վիրավորված թռչունի պես ու պահպանում էր իր բալիկին եւ հեկեկում: Ես երեխայիս գրկիցս ցած չէի դնում, որի պատճառով նա տանջում էր ինձ, բայց գոնե փոքրիկս ապահով էր: Սարսափահար նայում էի այդ փոքրիկ վիրավորված երեխային եւ անհիծում Սովետ միությանը...

Բոլոր տղաները եւ երեխայի հայրը նորից սկսեցին բղավել եւ խփում էին դռանը, որպեսզի օգնություն հասցնեին իրենց:

Կալանավորները ուժասպառ էին եղել, թե փորահարությունից, եւ թե հուզմունքից, նաեւ սովից:

Առավոտյան արեւի շողերը ներս էին թափանցել մեր փոքրիկ պատուհանից եւ երեւում էր գիշերվա անցած դժբախտ

Երիտասարդի որդին՝  
Անդրանիկ  
Մանգասարյանը  
մեկուկես տարեկան  
հասակում: 1949,  
Երեւան

պատահարը, մարդկանց ստամոքսի կեղտերը: Ոտք դնելու տեղ չկար, գարշելի հոտը խեղդում էր մեզ, բայց այդ բոլորից վատը այն էր, որ այդ երեխան մահամերձ էր ծնողի գրկում:

Կողքիս նստած տարիքով ամուսինները ինձ հարցրեցին տալիս, ես պատմում էի ցավս, իմ տանջանքներս եւ արտասվում էին ասելով.

- Բաժանվեցինք մեր զավակներից եւ թոռնիկներից:

Սիրում էին փոքրիկիս եւ կարծես կարոտ էին առնում, երբեմն երեխայիս գրկում էին եւ ինձ ասում էին, աղջիկս, շատ երիտասարդ ես:

Դիմացս նստած էին երկու երիտասարդ տղաներ, թախիծն էր թափում նրանց աչքերից: Խեղճ տղաները շրջաններից գնացել էին Երեւան եւ սովորում էին համալսարանում եւ ծնողները գյուղում էին ապրում, անշուշտ երկուսն էլ ունեցել են ընտրած աղջիկներ, որոնցից, նույնիսկ կրթությունից զրկված էին, այժմ նստած տխուր հեկեկում եւ պատմում էին ծերունիներին:

Հանկարծ մի ճչոց լսեցինք, փոքրիկի մայրը ձեռքերը երկիքն մեկնած, աղաչում էր Աստծուն, որ փրկի իր բալիկին. ամուսինը գրկել էր կնոջը եւ ասում էր. «մեր փոքրիկը մահացավ»:

Բոլորս արտասվում էինք երիտասարդ ամուսինների հետ եւ չէինք կարողանում ոչ մի տեսակով մխիթարել նրանց: Դա մեր առաջին զոհն էր: Տղամարդիկ այլեւս ծխելիք չունեին եւ ավելի շատ էին մտածում ու նեղանում:

Մայրը փոքրիկի դիակը պահել էր իր գրկում եւ ուժ չէր մնացել խեղճի վրա: Հիմա կեսօրվան էինք մոտենում, մեր գնացքը կանգնեց դարձյալ անապատում եւ բոլորս շարվել էինք իրար կողքի՝ զինվորների առաջ արտաքնոցի համար: Փոքրիկի մահվան մասին ոչ ոքի ոչինչ չէինք ասում, որովհետեւ մայրն ուզում էր տեղ հասնել եւ իր ձեռքով թաղել գերեզմանում: Դիակը փաթաթված շորի մեջ, ծնողի գիրկն էր, երբ մոտենում էինք Ռուսաստանի քաղաքներից մեկին եւ պետք էր խուզարկում անեին: Դեռ քաղաքը չի սած՝ գնացքը կանգնեց եւ մեզ հայտարարեցին բոլորս մեր տեղերում մնալ: Քիչ վերջ, երբ եկան մեծավորները, սկսեցին կարոզալ բոլորիս անունները եւ բոլորս պետք էր, որ ոտքի կանգնեինք, որպեսզի տեսնեին մեզ:

Երբ հասան այդ խեղճ երիտասարդ ծնողին, հարցրեցին իրենց երեխայից, հայրը դողդոջուն ձայնով ասեց զինվորին, թե մեր երեխան քնած է՝ ցույց տալով փաթաթված եւ ծածկված դիակը: Այնքան հուզված էր մայրը, որ իր արտահայտությամբ մատնեց իրեն, խոզ գինվորը մոտեցավ, բացեց երեխայի երեսը եւ տեսավ այլանդակված եւ սեւացած երեխային, հարցրեց պատահածի պատճառը եւ հայրը արցունքով պատմեց պատահարի մասին եւ խաբեց,

թե նոր է մահացել, հրամանատարը դիմեց զինվորին, որպեսզի երեխան վերցնի իր մոր գրկից, մայրը լալով դիմադրում էր զինվորին, աղաչանքով խնդրում էր: Այդ ժամանակ հրամանատարը դիտելով այդ, ինքը մոտեցավ խեղճ կնոջը եւ դաժանորեն խլեց երեխայի դիակը մորից եւ դուրս շարտեց պատուհանից: Մայրը ուշաթափված ցած ընկավ: Խեղճ ամուսինը դողալով, կնոջը իր ձեռքերի մեջ առել եւ լաց էր լինում, բղավում էր բալիկս, մեր բալիկը...

Բոլորիս տիրել էր սարսափը, լաց էինք լինում իրենց հետ: Խեղճ մայրական սիրտը տրորվում էր միմուռից: Ամուսինը ջանաց նայել պատուհանից, որպեսզի տեսնի ինչ եղավ իրենց երեխան: Տեսավ չկա, տարել էին զինվորները... Դաժանները վերջացնելով իրենց հաշվարկը դուրս եկան վագոնից եւ նորից փակեցին դռները:

Ծնողները գնում էին առանց փոքրիկի, որն հագիվ մեկ ամսական էր, որ աշխարհ էր եկել ապրելու եւ ոչ կորչելու:

Հազարավոր մարդիկ էին լցված այդ գնացքի մեջ, բոլորն էլ հայեր էին: Ասում էին թուրքը հայ է ջարդել, գրվել էն Հայոց Ջարդերի մասին, իսկ այս ջարդի մասին, որն հիմա ես եմ գրում...

Ընդամենը երկու ժամվա մեջ բոլորիս հավաքեցին եւ լցրեցին վագոնները: Ինչ անուն կարելի է տալ սրան: Սա թուրքը չէր, այլ կոմունիզմն էր, որի համար բառեր չեմ գտնում անվանելու եւ գրելու: Մտածում էի՝ դեռ սա չորս օր է, որ գնում ենք եւ չգիտենք թե ուր: Այս կարճ ժամանակամիջոցում, որ մենք արդեն մեկ գոհ տվեցինք, արդյոք սրանից հետո ինչքա՞ն գոհեր պիտի տայինք եւ ո՞վ է լինելու երկրորդը: Յուրաքանչյուր վագոնում մի սարսափելի դեպքեր էին պատահել, որոնց մասին հետո իմացանք, երբ հանդիպեցինք իրար:

Իմ փոքրիկը ուժասպառ էր եղել փորահարությունից, քանզի ոչ մի բան չէի տալիս ուտելու, քանզի վախենում էի, որ ավելի կվատանա: Անշուշտ մոտս միայն մի կտոր սեւ հաց ունեի, ուրիշ ոչինչ, մեր դիմացի տղաները տեսնում էին, թե երեխաս ինչքան է տանջվում, երբեմն իրենց մոտ էին տանում եւ խաղում իր հետ: Տղաներից մեկը, որի անունը Համլետ էր, ասավ ինձ.

- Այս անգամ որտեղ որ գնացքը կանգ առնի, ես քո երեխայի համար ուտելիք կգտնեմ:

Արդեն մոտենում էինք Ռուսաստանի քաղաքները եւ մեզ թողնում էին մի քիչ հեռանալ վագոնից, բայց զինվորների եւ հրացանների հսկողությամբ: Առավոտյան մոտեցանք մի քաղաքի եւ կանգ առնելով բոլորս ցած իջանք, որպեսզի քայլեինք եւ շարժում անեինք, բայց քաղաքում արտաքնոց չէինք կարող ունենալ, միայն քայլում էինք վերեւ ու ցած գնացքի կողքով եւ բոլորս իրար էինք հանդի-

պում, ծանոթներ, ընկերներ, նույնիսկ ազգականներ: Ես հանդիպեցի իմ շատ մտերիմ ընկերուհուս, որը իր ծնողների հետ էր եւ ուներ հիվանդ եղբայր, պատմեց, որ իր եղբայրը գործողության է ենթարկվել Երեւանում եւ այդ օրը հիվանդանոցից տուն էր գալիս եւ այդ գիշերը իրենց էլ վերցնում են եւ ահա չորս օր էր, որ տղայի վերքը չէր փոխվել եւ բարձր ջերմություն ուներ: Ես ոչինչ չասացի նրան մեր վագոնում պատահած դեպքի մասին:

Այդ ժամանակ Համլետը մոտեցավ եւ ասաց՝ դրամ տուր ինձ, ես անմիջապես տվեցի եւ հեռացավ:

Այդ օրը մեր գնացքը համարյա մի ժամ կանգնեց եւ ջուր էինք փնտրում: Այս անգամ ոչ ոք չիմեց այդ նավթոտ ջրից, հակառակ անոր, որ ամառային արեւի տակ բոլորս այրվում էինք: Ռուս կանայք ուտելիք եւ պտուղ էին բերում գնացքի մոտ, որպեսզի վաճառեն, բայց զինվորները քշելով հեռացնում էին նրանց մեզանից, տղամարդիկ ծխախոտ էին ուզում գնել, չէին կարողանում գտնել:

Լսվեց սուլոցի ձայնը, ես նայում էի Համլետի ճանապարհը, բայց տղան չկար, գնացքը շարժվեց, Համլետի տեղը դատարկ էր, հարցրեցի իր ընկերոջը, ասաց՝ չգիտեմ, շատ անհանգստացա, հազար ու մի բան էի մտածում, արդյոք փախավ՝ կյանքը փրկելով կամ դրամս գողացավ, քանի որ ես իրեն տվել էի մի խոշոր հիսուննոց: Երբեմն էլ խղճում էի ասելով, երեւի բռնվեց եւ խիստ պատժի ենթարկվեց իմ պատճառով, երբեմն էլ մտածում էի գուցե այդ իմ տված դրամով կարողանա իր կյանքը փրկի: Եթե այդպես էր, ես շատ ուրախ կլինեի: Ամբողջ օրը գնացքը սլանում էր եւ Համլետը չկար: Փոքրիկս քաղցած էր եւ լաց էր լինում, մի փոքր կտոր սեւ հացով կերակրեցի, բայց չէր հանսգտանում: Հասանք մի անապատ եւ կանգ առանք: Մարդիկ դուրս թափվեցին արտաքնոցի համար: Այլեւս շատ խիստ չէին վարվում մեզ հետ, թողնում էին հեռանալ գնացքից, բայց նորից զինվորների հսկողության տակ: Տեսանք մի փոսի մեջ հավաքված ջուր, սկսեցինք լվացվել, բայց խմել չէր կարելի, մարդիկ միայն լվացվում էին:

Հանկարծ մեկը քիչ հեռվից բղավեց.

- Ջուր, ջուր...

Բոլորս վազեցինք, մի շատ գեղեցիկ առվակ էր, մաքուր եւ պարզ ջուրը վազում էր քջջալով, բոլորս խմում էինք ազահորեն, լվացվում: Փոքրերը նույնիսկ հանվել էին եւ մտել ջուրը: Տակից վազում էին փոքրիկ ձկնիկները, մաքուր եւ պարզ քարերի վրայով: Թարմացանք տաք օդից եւ լցնում էինք մեր ամանները պահելու համար, այնքան էինք հավաքվել իրար վրա, որ ջուրը կարծես պակասում էր, պառկել էինք խոտերի վրա, ջրի կողքին: Ես նորից մտածում էի Համլետի մասին: Մոռացել էի ամեն ինչ, ծնողներիս, հա-

րագատներին, նաեւ ամուսնու, կարծես միայն մտածում էի ներկա իմ կյանքի եւ տղու համար եւ ոչ մի ուրիշ բանի ժամանակ չկար, միայն չէի հասկանում, թե ինչ է կատարվելու եւ որտեղ ենք գնալու:

Տարվել էինք այդ անապատի տարածության վրա՝ ոչ մարդկություն կար, ոչ էլ բնակիչ: Շատ էի զարմանում, որ այդ ջուրը որտեղից է գալիս եւ որտեղ էր գնում: Կարծես Աստված հասցրեց այդ պարզ ու մաքուր ջուրը:

Հանկարծ մեկը խփեց ուսիս, դառնալով տեսա, որ Համլետն էր, ձեռքերի մեջ եւ գրպանները լցրած կարկանդակներով: Շատ ուրախացա: Պատմեց, որ ինքը ուշացել էր մեր վագոնին հասնել, թռել էր ամենավերջին վագոնը եւ չէր կարողացել գալ մեզ մոտ, մինչեւ որ գնացքը կանգներ:

Բավականին կարկանդակներ էր առել: Երկու տղաներին էլ տվեցի եւ մեր մոտի ծերուկներին: Տղան իր մոտի դրամի մնացորդները ուզում էր վերադարձնել, ես չընդունեցի, ասելով պահիր քեզ մոտ, որովհետեւ շատ մեծ օգնություն արեց իմ փոքրիկիս: Գաղտնի խոսում էի տղայի հետ: Ասեցի.

- Ես կարծում էի, որ փախել ես եւ ես շատ ուրախ կլինեի...

Ասեց.

- Չեմ կարող նման բան անել, քանզի վախենում եմ բռնեն եւ սպանեն:

Համլետն էլ օգտվեց այդ մաքուր ջրից եւ մեզ հայտարարեցին, որ հաջորդ օրը հասնելու ենք մի քաղաք, որտեղ առատ ուտելիք պիտի ունենանք: Սուլոցների ձայնը մեզ բոլորիս վերադարձրեց մեր վագոնները...

Հինգերորդ օրն էր, երբ հասանք Ռուսաստանի քաղաքներից մեկը, որտեղ մեզ արդեն մի քիչ ազատ էին թողնում: Երկաթուղու մոտ եկան ռուս կանայք, վաճառելով հաց, կաթ, խաշած հավկիթ եւ տեսակ-տեսակ պտուղներ: Ժողովուրդը սոված հափշտակեց, առնելով ինչ պատահեր: Ես դրամ ունեի եւ բավականաչափ ուտելիք գնեցի, բայց շատ քիչ էի տալիս երեխայիս, որովհետեւ հազիվ ստամոքսը կարգի էր ընկել:

Երկաթուղին երկու ժամ կանգ առավ: Տղամարդիկ ծխում էին ազահորեն:

Համլետը մեծ քանակությամբ պտուղ էր առել եւ բերեց մեզ համար: Ես չվերցրեցի, ասեցի.

- Ես առել եմ, դու ընկերոջդ հետ կերեք:

Խնայում էի մոտիս դրամը, որովհետեւ չգիտեի, թե ուր եմ գնում:

Այդ ժամանակ մի հայ զինվորի հանդիպեցինք, որը ծառայում էր այդ քաղաքում: Երբ իմացավ, որ բոլորս հայեր ենք, մոտեցավ մեզ եւ խոսեց բոլորիս հետ: Հարց էին տալիս մարդիկ զինվորին, թե որտեղ են մեզ տանում: Խեղճ տղան ամեն ինչ իմանում էր, բայց չէր ուզում վշտացներ դժբախտ մարդկանց: Չինվորը ասել էր մի քանի մեծահասակ մարդկանց, որ դուք մի քանի օրից հասնելու եք մի մեծ կամուրջի եւ ուշադիր եղեք, եթե կամուրջի վրայով անցաք՝ Սիբիր են տանելու ձեզ: Չինվորը հեռացավ եւ չգիտենք գտավ ուրեւ մեկին, թե՛ ոչ:

Սուլոցների ձայները լսելով, բոլորս նորից նստանք մեր տեղերը, այս անգամ սակայն բոլորը թարմացած եւ փորերը կուշտ:

Խռիռոցով մեր գնացքը շարժվեց եւ բոլորը անուշ քուն մտան: Մեծ մասամբ քնած էին, բայց արթուն էին մահացած երեխայի երիտասարդ ծնողները: Ամուսինը ջանում էր կնոջը մի փոքր բան կերցներ, բայց մայրը վշտից բերանը չէր բացում: Կողքիս ծերուկները իմացել էին աքսորի մասին եւ անդադար լաց էին լինում, ինձ ոչինչ չէին ասում եւ նստած իրենց տեղը տանջվում էին:

Անցնում էին օրերը նույն ձեւով, բայց ավելի ազատ էին թողնում մեզ: Արդեն մեկ շաբաթ էր, որ ճամփորդում էինք: Հունիսի 20-ն էր, կեսօրվա տաք օրերից մեկը, երբ մի ծերուկ մեզ ասաց, որ գնում ենք Սիբիր: Այդ անունը ցնցեց բոլորիս: Սկսեցինք լալ ու ողբալ մեր բախտին: Այդ ծերուկը երկրորդ անգամ էր, որ աքսորվում էր, մեզ մխիթարում էր իր բարի խոսքերով: Տղաները բարձրացել էին մեր փոքր պատուհանից եւ նայում էին դուրս, որպեսզի տեսնեն կամուրջը: Բոլորս լուռ էինք: Գրկել էի փոքրիկիս եւ կարծես մահն էր չոքել իմ առաջ: Նկարագրել անկարելի է, թե ինչպես մարդը իր մահվան հետ հաշտվում է, նաեւ իր գալիք դժբախտությանը:

Ես պատկերացնում էի Սիբիրը մի սառնամանիք երկրամաս, որտեղ հանցագործներին են ուղարկում, բայց չէի կարողանում հասկանալ, թե ինչ է մեր հանցանքը, ով էր մեղք գործել, ծերուկները, թե՞ այդ անմեղ երեխաները:

Ես տարվել էի մահվան հետ, եւ պատկերացնում էի, որ արդեն մեզ համար կախաղանի օղակներ են պատրաստում, բայց արդյո՞ք երեխայիս ինչ էին անելու եւ երբեմն էլ մտածում էի եւ կարծում, որ պետք է հանդիպեի ամուսնուս, չգիտեի, որ Սիբիրը շատ լայնատարած է եւ պիտի չկարենայի տեսնելի նրան:

Հարցնում էի իմ մոտի ծերունուն, որը հուզված՝ նստած էր իր տանջված տիկնոջ հետ:

Ես հետաքրքրվում էի, որ Սիբիր կոչվածը ինչպիսին է եւ մարդիկ ինչպես են ապրում հոն:

Հարցրեցի.

- Կարո՞ղ է հանդիպելի ամուսնուս:

Նա չպատասխանեց ինձ եւ ձեռքը ուսիս դնելով ասաց.

- Աղջիկս, ամուսինդ մեզանից շատ հեռու է լինելու:

Վագոնում լռություն էր, բոլորը ննջում էին, նույնիսկ իմ մոտի ծերուկները, երեխաս քնած էր գրկիս մեջ: Հոգնել էինք այդ երկար ճանապարհից, ես էլ նստած՝ աչքերս փակ եւ անցել էի երազներիս մեջ, ուր մայրս էր եկել եւ շոյում էր մազերս, բայց չէր խոսում ինձ հետ: Նա էլ էր զայրացած ինձ վրա, որ ես իրենց այսքան տանջում եմ, միգուցե մայրական սիրտը զգում էր իր որդու տառապանքները, բայց ինչ կարող էի անել դաժան սովետի դիմաց, միայն ես չէի, ինձ նմանները՝ 18 հազար<sup>40</sup> հայեր երկու ժամվա մեջ հավաքել էին եւ լցրել վագոնները եւ ուղարկել Սիբիր:

Քանի՞ մայրեր էին արտասվում իրենց զավակների համար: Քանի՞ սրտեր են բաժանվել ու արտասվում են իրենց կորուստների համար: Ո՞վ է այս բոլորի պատասխանատուն, ոչ ոք, մի հզոր ու սարսափելի մարդ՝ Ստալինը:

Ամբողջ օրը մենք չկանգնեցինք: Հաջորդ օրը արդեն անտառի միջով էր գնում մեր գնացքը եւ անտառը այնքան խիտ էր, որ ոչինչ չէր երեւում: Տեղ-տեղ տեսնում էինք ձյունի կուտակված բլուրներ, որոնք ձմեռվանից դեռ մնացել էին անտառի փոսերի մեջ ու դեռ չէին հալվել: Այդ օրը մենք ցած իջանք անտառում, ուր շատ երկար չմնացինք. այլեւս մեզ հետ զինվորներ չկային եւ մեզ ազատ էին թողել:

Նորից բոլորս նստած էինք մեր վագոնում եւ երեկոյան էինք մոտենում, ամենքս սկսեցինք մեր ընթրիքով զբաղվել եւ նորից այդ տիկինը իր գեղեցիկ ձայնով երգել սկսեց:

Լուռ էինք:

Տղաները կարողացել էին վագոնի ճեղքերը ավելի մեծացնել, որպեսզի թե օդը մաքրվեր եւ թե դուրսը տեսնեինք: Կարծում էի միևնչեւ տեղ հասնելը վագոնի բոլոր տախտակները կբաժանվեին իրարից եւ մենք ցած կթափվեինք, որովհետեւ բոլոր վագոններում արվել էր նույնը:

Այդ մեր վերջին գիշերն էր: Հունիսի 23-ի առավոտյան հասանք մի անտառ:

Օդը բավական պաղ էր, փչում էր ձյունախառն քամի եւ համարյա բոլորս ամառային հագուստներով էինք: Հիմա էլ մրսում էինք, կծկվել էինք. տասը օրվա ճամփորդությունը ավարտվեց եւ ահա բոլորս հավաքված մեր ունեցվածքով նստել էինք գետինը, անտա-

ռի կտրտած ճյուղերի վրա եւ սպասում էինք մեզ տեղափոխող մեքենաներին: Մեզ հետ շրջում էին մի քանի պաշտոնյա մարդիկ՝ իրենց ձիերով:

Ոմանք պառկել էին գետնին եւ հանգստանում էին տաս օրվա նստակյաց վիճակից: Ես էլ էի հանգստանում:

Նստած նայում էի այն հազարավոր անմեղ մարդկանց, որոնք թափված էին անտառում: Մի անտանելի վիճակ էր ստեղծվել, ես կարծում էի, թե մենք այլեւս արեւ չպետք է տեսնեինք, բայց նայում էինք նոր ծագած արեւին, որ նույն փայլը ուներ եւ կարծես շատ էր տաքացնում: Այդ ժամանակ ես սկսեցի արտասվել, կարծես ամուսնուս էի հիշել, որի բացակայությունը շատ զգալի էր, որովհետեւ այդտեղից չգիտեի ինչ պետք է լիներ: Գնացքի մեջ ես մենակ չէի, բայց այստեղ ինչ կլինի, ոչ մեկ չգիտեր:

Ես շատ էի զարմանում Հայաստանի եւ իր ղեկավարների վրա: Արդյո՞ք չէին մտածում, որ քառասուն հազար հայ են կորցնում, որ այդքան արժեք ուներ այդ ժամանակ: 100 հազարներով ներգաղթեցինք հայրենիք, որպեսզի հզորացնենք երկիրը մեր եղբայրների հետ, քանզի պատերազմի ժամանակ շատ ու շատ զոհեր էր ունեցել եւ հիմա հազարավոր ժողովուրդ է կորցնում:

Երանի Հայաստանի բանտերի մեջ մեզ լցնեին եւ մենք Հայաստանի համար աշխատեինք եւ ոչ ուսի համար, որովհետեւ արժեք չունեինք իրենց աչքում, եթե Հայաստանը մեզ պատժում էր, թող երկրում պատժեր եւ ոչ Ռուսաստանում:

Այդպես էի մտածում այն օրերին:

Ճաշին էինք մոտենում, երբ եկան ռուս մեծամեծները մեքենաներով եւ հավաքվեցին ու սկսեցին բոլորիս համար ճառախոսել: Մեզ բացատրում էին վայրի եւ աշխատանքի մասին, պետք է երկու մասի բաժանեին. երիտասարդներին եւ առողջներին տանում էին անտառի փայտամշակման համար, իսկ տկարներին՝ հողագործության:

Ես բախտ ունեցա, որ ընկա ընկերուհուս հետ: Տեղափոխում էին մեքենաներով նրանց, ովքեր հողագործությամբ պետք է աշխատեին եւ սկսեց իրարանցումը. բոլորս խառնվել էինք իրար, հերթով կանչում էին անունները, նստեցնում էին մեքենաները ու իրար հետեւից հեռանում: Իսկ փայտամշակման համար պետք է սահնակ գար:

Մի քանի ժամից եկան հսկա սահնակներ, որոնցից ամեն մեկը կազմում էր մի սենյակի չափ եւ կապված երկու ձիերով: Սահնակ տեսել էի: Երեխաները խաղում էին ձյունի վրա, բայց այսպիսի մեծ սահնակ չէի տեսել եւ այն էլ առանց ձյունի: Սկսեցին տեղափոխել

ժողովրդին, բայց այդ օրը չավարտվեց, համարյա կեսը, որովհետեւ շատ հեռու էր, եւ չէին կարող այդ օրը վերադառնալ, պետք էր սպասել մի քանի օր, այդտեղից չէր գնում:

Երեկոյան ենք մոտենում, կարծես սարսափում էինք այդ խոր անտառից եւ գիշերը պետք էր անցկացնել մթութեան մեջ: Մեզ հետ գինված հսկիչներ կային: Բոլորս մեր անկողիների վրա պառկել էինք եւ զրուցելու շատ բան ունեինք իրար հետ: Երեկոյան մութը պատեց ողջ անտառը:

Ես պատմում էի ընկերուհուս մեր վագոնում պատահած երեխայի մասին:

Կատաղած անձրեւը թափվում էր մեր վրա եւ պաշտպանվելու ոչ մի հնար չուներինք, բոլորս թրջվել էինք ու դողում էինք:

Զգիտեի փոքրիկս ինչ անեի, ինչպես պաշտպանեմ: Ծառերը մեզ չէին օգնում, քանզի անձրեւը առատ էր թափվում: Բոլորս վեր կացանք եւ չգիտեինք ուր փախչել, միայն մի քանի խոշոր կրակներ վառեցինք, թե տաքանում էինք, թե չորանում: Իսկ անձրեւը թափվում էր կրակների վրա՝ մոխիրը փչելով բոլորիս աչքերին: Բոլորս սկսեցինք վերմակներ, սրբիչներ, սավաններ կապել իրար եւ ծառերին հարմարացնել, որպեսզի պաշտպանվենք անձրեւից, բայց դրանք էլ թացանում եւ ծանրանում ու ցած էին ընկնում: Ամբողջ գիշերը մարդիկ դարձյալ չկարողացան հանգիստ քնել:

Առավոտյան հագիվ էր անձրեւը դադարել, երբ նորից եկան սահնակները եւ մեքենաները: Սկսեց իրարանցում, ժողովուրդը շտապ հավաքել եւ կապել էր բոլոր ունեցվածքները, որոնք թրջվել ու փչացել էին: Այս անգամ ինձ բախտ վիճակվեց ընկերուհուս ընտանիքով լինել առաջինը: Ես շատ էի վախենում փոքրիկս համար, որ չհիվանդանա: Սահնակները շարժվեցին, անցնում էինք խորը անտառով: Գիշերվա անձրեւը սարսափելի ցեխ էր առաջացրել: Երբեմն մի խոշոր փոսի միջով էինք անցնում, լիքը ցեխոտ ջուրը թափվում էր եւ գլորվում էինք իրար վրա: Այս ու այն կողմ գնում էինք ու գնում, անտառը վերջ չէր գտնում եւ տեղ չէինք հասնում: Երբեմն էլ անցնում էինք հսկա մի ծառի ընկած ճյուղերի վրայով, կարծես բոլորս ցած պետք է թափվեինք, իրար բռնելով ու բղավելով նորից մեր տեղն էինք նստում:

Վախի մեջ գնում էինք ցեխոտ ջրի մեջով, որոնք թռնում էին մեր վրա եւ այլանդակել էին բոլորիս դեմքերը: Փոքրիկս քնած էր գրկիս մեջ:

Ես նորից խորացել էի մտածմունքներիս մեջ, թե արդյոք մեր տառապանքին վերջ կտրվի եւ բոլորովին միտքս չէին գալիս հարազատներս: Իսկապես, որ այդ ժամանակ մոռանում էս բոլորին:

Հագիվ մի քանի ժամ էինք գնացել, երբ մեր սահնակները կանգնեցին, ձիերը շատ էին հոգնել եւ սպառել, պետք է հանգստանային, մենք էլ բոլորս ցած իջանք, բայց քայլել չէինք կարողանում, այնքան ցեխ էր: Սահնակը բոլորովին ցեխոտվել էր, նաեւ մենք:

Քիչ հանգստանալով նորից շարունակեցինք մեր ճանապարհը:

Երեկոյան ժամը հիսգն էր, մոտենում էինք մեր ապագա բնակվելիք վայրին:

Տեսնում էինք անտառում մարդիկ եւ կանայք աշխատում էին, ծառեր էին կտրում, մեքենաներ էին անցնում հսկա փայտերով բեռնավոր եւ մի տարօրինակ ձայն էինք լսում անտառի միջից, որոնք սողոցների ու կացինների ձայներ էին: Ինչքան մոտենում էինք, այնքան ավելի մարդիկ էինք տեսնում եւ մի ավելի ուժեղ ձայն էինք լսում:

Այդ սողոցարանի ձայնն էր, որն իր արձագանքով խլացնում էր մեր ականջները:

Հեռվում երեւացին փոքրիկ տնակներ, որոնք հագիվ լինեին 30 կամ 40 հատ. վերջապես հասանք այդ վայրը, հոգնած եւ քաղցած:

Մութը ընկնելու վրա էր, նորից մեծամեծներ եկան եւ կարգացին բոլորիս անունը եւ կարգադրում էին այդ գիշերը ապահովել մեզ: Այդտեղ մեկ հսկա սենյակ կար, որտեղ բնակվում էին այդպիսի աշխատողներ: Տղա, աղջիկ միասին բնակվում էին, դրանց բոլորին հանեցին, չգիտեմ ուր տարան եւ մեզ բոլորիս լցրեցին իրար վրա եւ ասացին վաղը բոլորիդ համար տեղ կկարգադրենք:

Անքուն էինք: Ամենքը անմիջապես քնեցին, առանց մտածելու ուտելու մասին:

Սենյակում ոչ մի լույս չկար: Երեխաները լացում էին, հիվանդները՝ տնքում: Ես ամբողջ ժամանակ նստած՝ երեխաս գրկիս քնացնում էի, ցած չէի դնում, վախենում էի նրա վրա կոխեին, այնքան որ մութ էր:

Հագիվ էր անցել մի քանի ժամ, երբ սկսվեց իրարանցումը: Բոլորը արթնա-



Եղիաբեթը  
որդու հետ  
աքսորավայրում:  
1952

ցան ու սկսեցին քորվել, միջատները եւ ոջիլները հարձակում էին գործել մեր վրա:

Ոչինչ չէինք տեսնում, ոմանք լուցկի էին վառում եւ տեսնում էին գաւազան միջատներ, որոնք վազվզում էին պատերի եւ մեր վրայով:

Ես շատ էի սարսափում, փոքրիկիս էի պաշտպանում միջատներից:

Ոչ ոք չկարողացավ պառկել եւ բոլորս նստած մթութեան մեջ սպասում էինք, որ առավոտյան լույսը բացվի: Շատ շուտ լույսը բացվեց, առավոտվա ժամը երկուսն էր, կարծում էինք մեր ժամացույցներն են սխալ, բայց բոլորը աշխատանքի էին գնում, մեր այդ մուգ սենյակը լուսավորվեց, իրար էինք տեսնում:

Արեւն էր փայլում գիշերվա ժամը երկուսին, շատ էինք զարմացել:

Քիչ ետք նորից այդտեղէն մեծամեծները եկան եւ սկսեցին ճառագիտել եւ բացատրել մեզ ամեն ինչ, նաեւ աշխատանքի մասին:

Ամեն մի ընտանիքի սկսեցին տանել ռուս ընտանիքների տները, որպեսզի միասին բնակվեն:

Այդ օրը ինձ տարան մի ռուս ընտանիքի մոտ, որոնք շատ սիրով ընդունեցին մեզ. տան տիկինը իրենց մեկ սենյակում ինձ հատկացրեց մի անկյուն: Սենյակը փոքր էր, բայց մաքուր եւ շատ լուսավոր: Մեկ անկյունում դրված էր աղյուսից պատրաստված մի հսկա վառարան: Վառարանի վրա միշտ անկողին կար եւ կողքին՝ փոքրիկ ելարան:

Գիշերները պառկում էին վառարանի վրա. ամբողջ օրը վառարանը վառում էին, ցերեկը կերակուր էին պատրաստում եւ գիշերը դրա պատճառով տաք էր լինում քնելու համար, քանզի աղյուսը տաքությունը իր մեջ է պահում:



Եղիաբերթի վերջին լուսանկարն աբսորբավորում

Սիբիրի տները բոլորը այդպես էին սարքված, անշուշտ, եթե աշխատանքի չէր գնում տան տիկինը եւ փոքր երեխաներ ուներ:

Մենք մեր անկողինը եւ մի քանի հատ պայուսակ դրեցինք մեկ անկյունը եւ վրան նստեցանք՝ մայր եւ զավակ: Տիկինը խոսում էր ինձ հետ, ես չէի հասկանում: Սենյակը տաք էր եւ հաճելի եւ չգիտեմ, թե ինչքան ժամանակ էինք քնել: Երբ արթնացա տան տիկնոջ ամուսինը աշխատանքից տուն էր եկել եւ կերակուր էին ուտում: Տունը լցվել էր խաշած տաք գետնախնձորի եւ նոր թխած հացի բուրմունքը: Սոված էինք մենք եւ ախորժակով էինք նայում տաք գետնախնձորներին: Շատ բարի ընտանիք էին, տիկինը զգալով, որ մենք ոչ մի ուտելու բան չունենք, բերեց մի քանի խաշած գետնախնձոր եւ մեկ բաժակ կաթ, որոնք մեծ ախորժակով կերանք:

Գլխիս շարժումով հասկացրեցի տիկնոջը մեր շնորհակալությունը եւ քիչ վերջը դուրս եկանք փնտրելու ընկերուհուս. նրանց էլ տարել էին ուրիշ ընտանիքի մոտ, յուրաքանչյուրիս տարբեր տներում օթեւան էինք ստեղծել, բայց ոչ մի ուտելու բան չկար, նույնիսկ խանութ չկար, ոչ մեկը ոչինչ չէր վաճառում, ով ինչ ուներ՝ իր համար էր: Բոլոր բնակիչները կենդանիներ ունեին, այսինքն՝ կով, խոզ, հավեր, բադեր նաեւ հողամաս, որտեղ ցանել էին գետնախնձոր, ստեպղին, ճակնդեղ: Ունեին նաեւ առատ հավկիթ, իսկ այլուրը կենտրոնից էին առնում եւ տանը հաց էին թխում, իսկ մենք՝ խեղճերս, որ հազիվ մեկ օր էր հասել էինք անտառ, դեռ ոչինչ չունինք եւ չգիտեինք, թե ինչպես ենք ապրելու:

## Միհրան Վարժապետյան



# ՀՈՒՇԵՐ

Իմ բոլոր ցանկությունս այն էր, որ չմեռնեի: Գիշեր-ցորեկ Աստուծո՛ւմ այս կիսնդրեի եւ կարծես անտեսանելի մի զորություն ինձ սպասել եւ հուսալ կստիպեր այդ ցանկալի օրվան:

Կյանքը ընդհանրապես տխուր էր, ամեն օր տեսակ-տեսակ դեպքերու մասին կպատմեին: Անվստահություն, վախ, սարսափ. վստահ չեինք թե գիշերը մեզի համար ինչ անակնկալներ կպատահի, արդյոք կլուսացնենք խերով եւ այլն եւ այլն: Այս ամենը բոլոր ժողովրդին հայտնի է: Մեր ընտանեկան դրությունը այս էր մինչեւ որ հասավ 14 հունիսի 1949 թվի այն մահասարսուռ օրը, որ հայերու համար, մանավանդ մեզի՝ հայրենադարձ ժողովրդի համար աննկարագրելի եւ աներեւակայելի մի բան էր, որ ոչ մի մարդու մտքեն նույնիսկ չանցնիր: Աքսոր զանգվածային մի գիշերվան մեջ դեռ լույսը չբացված տեղափոխեցին Ուլուխանլու կայարանը: Հարց ու փորձ չկա, հրաման է, ան ալ վերեն, ով կարող է առարկել կամ բողոքել, ուր կամ ում: Արդեն շրջապատված ենք, ոչ ոք իրավունք չունի տեղից տեղ փոխվելու: Բոլոր ընտանիքները իրենց հատկացված տավարնի (բեռնատար) վագոններում պետք է սպասեին, նույնիսկ կարիքի համար, որ ստիպողական է գինվորը կհսկեր:

Այս բոլորը՝ կանխամտածված, պլանավորված վերելից անհատի պաշտամունքի կուռքին նվիրված էին: Բացի պաշտոնական ծառայողներից տեղացի, որոնք գիշեր-ցորեկ հետեւում էին ժողովրդին, նրանք թվին ավելացան նաեւ նորեկներից շատերը իբրեւ հարազատ հայրենասերներ եւ պետության առաջ հավատարիմ երեւալու համար «Հուդայի» արհեստը ձեռք առին, սկսան մատնության, թե այս ինչը այսպիսի մարդ էր արտասահմանում, թե այսպես խոսքեր ասաց պետության դեմ: Սուտ-իրավ հարցնող չկար, բոլոր ղեկավարությունը Չեկայի ձեռքն էր, անմիջապես գիշերը սեւ ավտոյով տանում էին: Ասում էին, որ բոլոր թաղային լիագործներին հրահանգ տրված էր, որ ամեն ամիս որոշ թվով մարդիկ պետք է հանձնել պարտադիր. մեղավոր է թե ոչ նշանակություն չունի: Ահա այսպես էր դրությունը այն օրերին, երբ սկսավ տեղահանությունը: ...

14 հունիս երեկոյան հանկարծ մի լուր տարածվեց, որ Երեւանում բոլոր բեռնատար ավտոները մոբիլիզացրեց են: Այսինքն՝ մեքենաները իրենց շոֆերներով հավաքեց են, հսկողության տակ են առել, ուրեմն արտակարգ մի բան կա: Սպասում էինք անակնկալի, թե ինչ պիտի պատահի: Այսպիսով պառկեցանք քնելու՝ վախը սրտերնիս, հանկարծ առավոտյան դեմ մեր տուն մտան 4 հոգի՝ 2 սիվիլ մարդ, 2 հատ էլ զինվորական: Մեկը սավառնորդ (օդաչու) սպա մը՝ իր հետ մի զինվոր գենքով ռուս: Անմիջապես արթնացուցին բոլորիս եւ այդ հայերը, թեեւ ես չէի ճանաչում, բայց Չարեհը ճանչցավ, նա երկաթգծի աշխատողներից է եղեր, անոնցմե մեկը ասաց. «-Շուտով պատրաստվեք, դուք Երեւանից դուս պիտի ապրիք»: Ես անկողնում նստած լսում էի, մարդը կրկնեց, թե շուտ հագվեք: Ես հագիվ ըսի, թե ինչ տարբերություն, Երեւանը չեղավ, ուրիշ տեղ կապրինք, կարծելով թե մեզի տեղափոխում են Հայաստանի ու-

րիշ քաղաք կամ գյուղ: Սպան ճրագ ուզեց, լույս չունեինք, մի մոմ վառեցինք, նստավ ու սկսեց գրել: Չենք գիտեր թե ինչ է գրում, հարցուց թե ուր ես աշխատում: Հայերու միջոցով ես ըսի՝ քաղչի-նում, հաշիվ ունի՞ս նրանց մոտ, ըսի՝ ոչ: Ձեր մնացած գույքերը ո՞ւմ անունով պիտի թողնիք, քանի որ բոլորը ձեզ հետ տանել չի կարելի: Այն ատեն պարզվեց, որ մեզի աքսորում են: Պարզելի անունը եւ հասցեն տվի: Ձեր անկողինն ու շորերը առեք՝ ասացին: Հազիվ անկողինները հավաքեցինք ու առանց կապելու տարան ու ավտոյի մեջ դրին, որ միասին բերած էին, մենք տեղյակ չէինք: Նույնիսկ կարիքի համար չէին թողնի որ դուրս ելլանք, անզգամ ու անզուրկ մեկն էր սպան, չթողուց, որ ուրիշ բան վերցնենք: Գոնե կարի մեքենան առնենք՝ ըսինք, չթույլատրեց, միայն իմ գործիքների սնդուկը կրցանք վերցնել, ինչ որ կար մեջը, ուրիշ ոչինչ: ...

5 հոգի տարան Ուլուխանլու, հոն էշալունը արդեն պատրաստ էր լիքը եւ մեզ տեղավորեցին վերջին վագոնում: Ոչ ուտելիք ունեինք, ոչ ալ դրամ. կարող էք պատկերացնել ի՞նչ վիճակում էինք: Վագոնում 5-6 ընտանիք էինք, միայն իմ ընտանիքը նորեկ էր, մնացածը տեղացիներ էին: Ոչ մի ծանոթ չկար, որ գոնե քաղաք ուղարկեինք Պարզելի մոտ, որ մի ճար աներ, մի քիչ փող եւ ուտելիք հասցներ մեզի: Հանկարծ պատահական մեկը տեսանք, Չարեհին աշխատանքի ընկերներից է եղեր, անունը Գեւորգ էր կարծեմ: Նրան խնդրեցիք, որ մի լավություն անե մեզի, երթա Պարզելի մոտ մեր մասին տեղեկություն տա եւ մեզ օգնություն հասցնե: Մի երկտող տվինք իրեն ու գնաց, չմերժեց, այս էր մեր վերջին հույսը, որ սպասում էինք:

Հոս պետք է նշեմ, որ մարդը իր վրա դրված խնդիրը ազնվորեն կատարեց, վերադարձավ բավարարված՝ բերավ թե փող եւ թե ուտելիք: Որքան երախտապարտ ենք այս անձին ու շնորհակալ, չի կարելի մոռանալ մինչեւ մեր կյանքի վերջը մեզի ըրած ծառայության համար, քանի որ մեր դրությունը անհայտ էր եւ ոչ ոք չէր իմանում թե ներկան, ոչ ալ ապագան: Այն օրը մինչեւ երեկո շարունակվում էր ձերբակալությունը, իրարու ետեւեն բերում էին նորերը մինչեւ որ տարածամեց, մթնցավ:

### **Ճամբորդություն անհայտ ուղղությամբ**

Նույն օրը երեկոյան, երբ մթնցավ, բոլոր վագոնի դռները փակեցին, ամեն մի վագոնի մի պահակ գինվոր կարգեցին, որ հսկե՝ չըլլա, որ ոեւէ մեկը փախչի կամ փորձի, ու այսպիսով ճամփա ելանք, բայց չէինք իմանում, թե մեզ ուր են տանում: Գիշեր-ցորեկ չկար, առանց կանգ առնելու: Միայն կարիքի համար՝ ջուր եւ այլն, որ հազիվ մի կես ժամ [էր տեւում]: Այդ միջոցից օգտվելով՝ մարդիկ մեծ ու փոքր իջնում էին «թեթեւանալու», մեկ ալ մի քիչ սուպ տալիս էին, որովհետեւ ժողովուրդին մեծ մասը ոչ մի մթերք, ուտելիք չու-

նեին, քանի որ բոլորն ալ հանկարծակի բերած էին, նույնիսկ ոեւէ բան չէին թույլատրեր վերցնելու, ինչպես մենք մեր ընտանիքը: Ու այսպես 15 օր գիշեր-ցորեկ շարունակ գնում էինք առանց ոեւէ քաղաքի կամ գյուղի հանդիպելու, որովհետեւ միշտ որքան կարելի է տեղվույն բնակչութենեն հեռու ճանապարհներով տանում էին, ինչը հետո իմացանք:

Ահա այսպես շարունակում էինք մեր ճամբորդությունը եւ չէինք իմանում, թե երբ կվերջանա, սակայն, քանիտորոք օրն էր չեմ հիշում, ժողովուրդը սկսավ գանգատիլ, թե պետք է գոնե մաքրվինք, այս քանի օր է ճամբորդում ենք, սրան վերջը հայտնի չէ եւ այլն: Սրա հետեւանքը եղավ այն, կերելի իրենք ալ զգացին նույնը, կոմենդանտը, երբ հասանք մի տեղ, անունը չգիտեմ, ըստ երեւույթին քաղաք էր, քանի որ մեծ բաղնիք մը կար, ամբողջ ժողովուրդը միանգամից տղամարդ, կանայք, երեխա՝ լեցուցին ներս, իսկ մեր հագուստները առին եւ կոխեցին փուռի մեջ վնասագերծելու համար: Մենք աղամային մերկությամբ կայներ ենք առանց սեռի խտրության՝ ոչ ամոթ, ոչ ալ ակնածանք, սպասում ենք: Մեր այս ներկայացման հանդիսատեսն էր Սարգսյան անունով մեկը՝ միլիցիայի տարագով կապիտան էր թե մայոր, չգիտեմ, անամոթին մեկը եւ ստորին այն աստիճան, որ զվարճանում էր այս տեսարանով: Այս մարդը մեզ տանող կոմենդանտի հետ մաս կկազմեր՝ իհարկե պետության կողմե նշանակված: Ան անզգա եւ այլասերված, վավաշոտ մեկն էր, նրա ապացույցը՝ մեր խումբի մեջ 2 երիտասարդ չափահասներ կային, քույր եւ եղբայր, ծնողք չունեին, առաջին օրեն այս մարդը գիշեր-ցորեկ հետեւում էր աղջկան, որ համաձայնի, այդ դեպքում զիրենք այս աքսորեն պիտի ազատե եւ վերադարձնե երեւան, բայց այնպես ալ չհաջողվեց նրան իրականացնել եւ գոհացում տալ իր ստոր ցանկության: ...

Սրանից հետո մի օր թե երկու արդեն հասանք մի տեղ, ընդարձակ դաշտ կամ ավելի ցանքի արտեր, կայարան-բան չկար: Մեզի հոն իջեցուցին, ուրեմն անցել ենք Բառնաուլ քաղաքը, քանի որ նա մեր ետեւը մնացեր էր: Ժամանակը երեկոյան մոտ էր: Հոն մեզի ընդունելու համար եկած էր մի մարդ՝ պողպուկովսիկ: Նա ճառ ասաց, թեմե մենք չէինք հասկանում, բայց քանի որ մեզ հետ կային տեղացի հայեր, որոնք իրենց մայրենի լեզվից ավելի ռուսերեն խոսում էին, մեզի բացատրեցին: Ամփոփումը այսպես՝ դուք եկեր էք հոս բնակելու եւ աշխատելու, ձեզի վերադառնալ չկա, իսկ ով որ փախչելու ըլլա, 20 տարվա կբանտարկվի: Ու երբ արդեն արեւը մարդ մտավ սկսան մաս առ մաս բեռնատար ավտոներով ուղարկել իրենց բնակավայրը մինչեւ առավոտ: Մեր վագոնը, որ վերջինս էր, մնացինք ամենեն վերջը: Ոչ ոքի իր ծանոթին կամ բարեկամին հետ երթալու չթույլատրեցին: Ուրեմն մենք ալ մեր բախտակիցներու հետ նստանք 2-3 բեռնատար ավտոներին եւ առավոտ էր ար-



դեն, հասանք քաղաք Չալեսուվո: Օրը կարծեմ կիրակի էր: Գիշերեցինք: Մենք կարծում էինք, որ սա ճամբորդության վերջին կայանն է, այսինքն մեզ հոն կթողուն, սակայն մեր հաշիվը սխալ դուրս եկավ: Հաջորդ օրը նորից ավտոներ եկան, մեզ մասերու բաժանեցին, ամեն մեկս տարբեր տեղեր ուղարկեցին: Չորս ընտանիք էինք, մեր բախտակից երեք ընտանիքը տեղացի հայեր էին Երեւանի շրջակա գեղերից: Նարդու Հովհաննեսյան՝ 5 անձ, 3 տղա, մեծը՝ Հայկո, ամուսնացած էր, միջնակը Ժորա, իսկ փոքրը Ռաֆիկ: Երկրորդը Պողոսյան Հակոբ, 5 հոգի՝ մարդ ու կին, 2 երեխա եւ մայրը: Երրորդը Խաթուն Օհանեսյան՝ մայր եւ 2 երեխա, նրա ամուսինը արդեն նստած է եղեր Սիրիոյում, բայց ուրիշ տեղ, ավելի հյուսիս: Երկու հատ ալ ազապ երիտասարդներ, մեծը Էդիկ Շահվերդյան, Լեւոն Սողոմոնյան, նույնպես երկու անչափահասներ՝ մեկը աղջիկ, մյուսը տղա, կարծեմ Ռաֆիկ էր անունը: Իմ ընտանիքը նաեւ 5 հոգի՝ ես, կինս Սիրանուշ, տղաս Չարեհը եւ երկու աղջիկներ՝ Մարին կնկանս աղջիկը 9 տարեկան, իսկ Սիրվարդը՝ իմ աղջիկը 3 տարեկան: Բոլորս 22 հոգի 2 բեռնատար ավտոյով հասանք մի գյուղ ուր կոչվում էր Կաստիլի, որ նշանակում է անթացուպ:

Ռայոնից մեր խումբին ընկերացող միլիցիան մեզ հանձնեց կոլխոզի նախագահին, իր հերթին ան ալ մեզ տեղավորեց հոն ապրող ընտանիքների մոտ, ում տանը հարմարություն կար, պարապ սենյակ կամ նման մի տեղ: Մեզ համար բոլորովին նորություն էր այս տեսակ բնակարանների գոյությունը, մանավանդ շինության կերպը, որ կլոր գերանները իրարու վրա շարած, իսկ ծայրերը խաչածեւ իրար միացուցած՝ 10 կամ 11 [հատ], բարձրությունը 2 մետր, վրայի ծածկը նույնպես տախտակից: Մեխ գոյություն չունի, կրիշ (կտուր) կապեր են: Բոլոր տախտակներին երկու եզերքները ակոսված են ներսի կողմից, որ անձրեւի դեպքում ջրերը հոսին, ոչ մի կաթիլ տակը չի անցնում: Իսկ ներսը բարակ ծառի շեղբերով բաղադրի պես շեղակի խփում եւ ծեփում են կիր, ավազ եւ ձիւթ թրիք, հետո սպիտակեցնում են կիրով 3-4 ամիսը մի անգամ:

Այսքանը բավ համարելով՝ դառնանք մեր կացության մասին: Երբ տեղավորվեցինք, հետեւյալ օրը նախագահը մեզի ընտանիքի անդամներին թվոյն համեմատ սնունդ նշանակեց, որ մարդու համար 500 գրամ հաց եւ կաթ... կիլո էր, լավ չեմ հիշում: Բայց հացը ի՛նչ հաց, կյանքումս շատ տեսակ նեղություններ տեսած էի, սակայն խոզերի համար իբրեւ կեր առանձնացրած բանը, ինչ անուն տամ չգիտեմ, բացի այլուրից, ամեն ինչ կար՝ սվաղ, ապակիի կտորներ ալ, կարտոլը, որ քերում էին, խառնելով իբր հաց մեզ տալիս էին, թթու՝ կարծես քացախից են պատրաստել: Այս բանը ոչ թե մեզի համար մասնավոր անում էին, մեզ տանջելու կամ ուրիշ նպատակով, ոչ, պատճառը չունեին: Ժողովուրդն ալ [տեղի] գրեթե մեզի պես էին, միայն թե նրանք իրենց ուտելիքը իրենք պատրաստում

էին՝ իհարկե ավելի լավ պայմաններում: Երկրորդ՝ ամեն մի ընտանիքին 500 մետր տարածությամբ կարտոլի դաշտից առանձնացուցին, որ կոլխոզը ցաներ էին, բավական ընդարձակ դաշտ մը այս ձմռան պաշարի համար:

Այս կարգադրությունից հետո, հետեւալ օրը դեռ լույսը չբացված մի զանգի ձայն լսեցինք, չէինք գիտեր՝ ինչ զանգի ձայն է: Նրանից անմիջապես հետո նախագահը եւ ուրիշ մարդ մը, որ բրիգադիր է եղեր, խուժեցին ներս, մեզ արթնացուցին. «Դավայ, դավայ, ելեք աշխատանքի»: Այս բանը մեզի համար նորություն էր, սակայն մեր տան տերը բացատրեց, թե այս բանը միայն ձեզի համար չի, ընդհանուր օրենք է:

Հավաքվեցանք գրասենյակի առաջ եւ անմիջապես գործի անցանք: Առաջին անգամ մեր գործը՝ հնձված խոտը պետք է հավաքեինք ու դեզ կապեինք: Բայց ինչպե՞ս: Կարող է նախամարդիկ այս ձեւով աշխատել են, սակայն այդ մասին ոեւէ հիշատակություն նույնիսկ չկար: Ուրեմն լսեք, թե ինչպես: Կեչիի ծառից /բերյուզա/ մի մեծ ճյուղ կտրում են, որը իհարկե հարմարություն ունի վրան խոտ բառնալու համար: Մարդիկ եղաններով, խոտը որքան կարելի է վերցնել, բերում եւ հավաքում են, իսկ փոխադրողները, որ արդեն պատրաստ են լծած եզին, որուն կապված է հնարագետների սայլը, այսինքն՝ բերյուզայի ճյուղը, վրան կբառնան որքան կարելի է եւ կփոխադրեն սահնակի պես: Ահա այս է իմ առաջին անգամ սովորած եւ աշխատած գործը: Ինձ համար որքան դժվար էր, «չիմացող մարդուն ամպը բեռ է», մինչեւ կեսօր աշխատեցանք, հանգստի ժամին բերին ավյոսի (վարսակի) այլուրից պատրաստված խաշիլ: Բանվորների համար հաց գոյություն չունի, իսկ խաշիլը այնքան դառն է, որ կարծես թույն է՝ կեր աշխատիր, այսպես էր մինչեւ խոտհարքը վերջանալը: Հունձքի ժամանակ կոմբայնը կհնձեր, մեր գործը լեցուն տոպրակները սայլի վրա բառնալն էր, որ տանում պարպում էին արտին մեջ մաքրված մասնավոր տեղ մը, որ հետո երբ հունձքը վերջանա փախադրեն գյուղ, որ չորացնեն, քանի որ կեսկանաչ հնձում էին, չէր հասնում: Ավյոս, ռոժ (աշորա), կտավատ էր, ցորեն չկար: Ռոժը պետության կտային, չորացնելու հետո, իսկ ավյոսը ժողովրդին՝ 300 գրամ:

### **Կաստիլի գյուղը համառոտ նկարագրություն**

Ռայոնից՝ Չալեսուվոյից, 50 կիլոմետր հեռավորությամբ մի տեղ, անտառի մեջ, ոչ մի երթեւեկության ճանապարհ չկա: Տարին 12 ամիս ոեւէ օտար մեկը չես տեսնի, բացի գյուղի բնակիչներից, որոնք բաղկացած են պառավներից եւ կանանցից, տղամարդիկ գրեթե չկան: Այս գյուղը մի ժամանակ բավական մեծ եւ հարուստ է եղեր, սակայն հեղափոխության ատեն մեծամասնությունը սպաներ են, մի մասն ալ փախեր են ուրիշ տեղեր: Մեր ժամանակ հաշ-

վում էին 20 տնտեսություն կոլխոզ: Ընդարձակ հողատարածություն ունեին ցանելու, բայց ժողովուրդ չկար, որ հավաքեր: Կոլխոզի նախագահը, գլխավոր հաշվապահը, պահեստապետը, տրակտորիստների բրիգադը՝ բոլորը ուրիշ տեղերեն եկած էին: Կարող է հարցնեք, թե տղամարդիկ ո՞ւր գացեր են: Սրանք պատերազմի գացեր են, չեն վերադարձեր, իսկ երկրորդ պատճառը՝ առաջին անգամ կոմունիզմը այս գյուղում փորձեր են, բոլոր երեխաներին տարեր են, ընտանիքներու տան, գույքերը գրավեր են եւ բնակչությունը անասունների պես գոմը հավաքեր են: Հոն կպառկին եղեր խառը, իսկ առավոտուն նախիրի պես աշխատանքի տանում են եղեր, իսկ սնունդը զինվորականի պես մեկ-մեկ աման սուպ տալիս են եղեր, բայց չեն կրցած կարգ-կանոն հաստատել, թողեր են, բայց գացողներից ոչ մեկը հետ չի վերադարձել:

Այսքանը բավ համարելով գաղափար կազմելու համար, թե ինչպիսի տեղ ընկած ենք եւ պետք է մշտական ապրենք, դառնանք մեր կիսատ թողած պատմության եւ շարունակենք հետագա մեր աշխատանքի եւ ապրելակերպի մասին՝ ըստ հնարավորին ամփոփ կերպով:

Ինչպես արդեն նշեր եմ, հունձքը կոմբայնով էր կատարվում, իսկ ցորենը մաքրված որոշ տեղ հավաքում էինք, որ հետո գյուղ փոխադրվեր, որովհետեւ փոխադրության համար բավարար միջոց չունեին, եղածով հագիվ հասցնում էին հավաքելու: Այս աշխատանքին մասնակցում էինք ես եւ տղաս՝ Չարեհը: Եղանակը անձրեւոտ էր, այդ պատճառով գործը դանդաղ էր գնում: Երբ պալատնոն (կաշվից կամ գործվածքից ժապավեն) թրջվեր, մեքենան չէր աշխատում, մինչեւ որ չորացնեինք մասնավոր տաքցրած տան մեջ, արդեն օրը վերջանում էր, իսկ գիշերը աշխատիլ անկարելի էր:

Արդեն սեպտեմբեր ամիսն էր եւ պատահեցավ անխուսափելի: Հագիվ մի կերպ ռոժի եւ ավյոսի հունձքը վերջացուցեր էինք, սեպտեմբերի 15-ին ծյուն եկավ եւ գործը կիսատ մնաց, հացահատիկը չկրցանք փոխադրել, իսկ կտավատը եւ կոլխոզի կարտոլը եւ այլն մնացին ծյան տակ ամբողջ ձմեռը, որ տեւեց յոթ ամիս մինչեւ մայիս ամիսը: Այդ երկրում մայիսի 1-ից առաջ հող չես տեսնում, այս ալ կարծես մեր բախտից էր: Սա կարծես նախախնամութենեն կարգադրված մի բան է, երբ հայ ժողովուրդը ունէ մի դժբախտության ենթարկվի մարդկության կողմից, բնությունն ալ իր կողմեն պակասը կլրացնէ:

Մի բան որ մեզ հաջողվեց, ձմռան համար փայտ կտրած եւ թողած էինք անտառում, որը շատ մոտ էր: Գյուղը գրեթե անտառին կից էր եւ փոխադրությունը այնքան էլ դժվար չէր, իսկ մեզի հատկացված կարտոլի բաժինը հաներ էինք, որ 500 քառակուսի մետր տեղից ստացանք 63 վեդոն կարտոլ: Ահա այս էր մեր ամբողջ ձմռան

Միհրանի որդին՝ Չարեհ  
Կարժապետյանը  
աքսորավայրում



պաշարը, ուրիշ ոչինչ չունեինք: Սրանով պետք է ապրեինք մի տարի, մինչեւ որ նոր բերք հասներ:

Մեր ընտանիքը 5 հոգի էր, բայց ցավալին այն էր, որ մենք ոչ մի հարմար հագուստ չունեինք, դժբախտությունը հոն էր, որ ունէ հույս ալ չունեինք օգնության: Իսկ նամակագրությունը արդյոք մեր հարազատներու հետ արդյունք կտա՞ր, անորոշ կացության մեջ մնացեր էինք: Արդեն առաջին ծյունը եկած նստած էր, հայտնի էր, որ ձմեռը սաստիկ պիտի ըլլար, ցուրտը զգալի էր: Ճիշտ թվականը չեմ հիշում, մի օր փոստից մեզի թուղթ եկավ, որ փող ունիք, եկեք ստացեք: Չարեհը գնաց ստացավ: Երեւանից Պարգեւը դրկած էր: Մի նամակ ալ ստացանք, որուն մեջը գրած էր, որ մեր թողած գույքերից բաներ մը ծախեր է, ներառյալ կարի մեքենան ալ, որ Սիրանուշինն էր: 1000 ռուբլի փող ստացանք, այդ փողով անմիջապես առինք մի վալենկա, որ գոնէ Չարեհը աշխատանքի ժամանակ հագնի, մեյ մեկ ալ ձմռան գլխարկ ինձի եւ իրեն, մնացած մի փոքր մասով ալ անհրաժեշտ բան առնում էինք: Շատ չանցած մի փող եւս ստացանք: Ես երեւանում աշխատած ժամանակ մեզի պարտադիր կերպով ապլի-գացի տալիս էին՝ տարեկան 600 ռուբլի արժեքով: Մի 100-նոց տոմս

ունեի, նրանից ալ շահեր էր 500 ռուբլի: Այսպիսով մի քիչ տրամադրություննսիս բարձրացավ, սակայն կարիքը մեծ էր, ծովի վրա մի կաթիլ ջուր:

Ես չէի աշխատում, ի՞նչ աշխատեի, մանավանդ որ դուրս ելնելու համար ոչ հագուստ եւ ոչ ոտնաման ունեի: Արդեն ստիպողական գործ ալ չկար, բացի անասունների համար դաշտից խոտ բերելը, որը բավական տաժանելի գործ է: Առավոտ կանուխ 5-6 սանկա (սահնակ) լծում էին եզներով հագիվ մինչեւ իրիկուն վերադառնում էին: Այս ամեն օր անպայման էր, թե ոչ ինչով կարելի էր այնքան կով, ոչ խար, եզ եւ այլն պահել:

Մի օր նախագահը, որ Չալեստվոյից եկած էր, Չարեհին ասում է. «Ես տեսնում եմ, որ դուք մեր երկրի ժողովուրդից չեք, այսպես հոս չեք կարող ապրել, արի քեզ ուղարկեմ Չալեստվո եւ սովորիր կոմբայնավար, հունձքի ժամանակ կաշխատես, հաց կստանաս՝ ինչպես

տրակտորիստները եւ ուրիշներ, նրանով կարող է ապրեք»: Այսպես ալ ըրավ Չարեհը: Մինչեւ մարտ ամիսը մեզի հետ մնաց, հետո գնաց սովորեց հինգ ամիս մինչեւ օգոստոս: Հակառակ անոր, որ ռուսերեն չէր իմանում, ռուսերենը հայերեն գիրերով գրելով, հաջող կերպով ավարտեց, որ 1950 թ. ցանքը ինքը հնձեց: Այդ հինգ ամսվան տան վառելիքը եւ ուտելիք այլուրը կոխոզը տվավ: Մնացածը հետո:

Շուտով նախագահը իր գործը թողուց եւ իրեն փոխարինեց բրիգադիրը, որ կոչվում էր Պավել Պլիտ: Առաջին օրեն այս մարդուն հետ մեր հարաբերությունները լավ չէին, ոչ ոք նրանից գոհ չէր: Երիտասարդ, ոչ մի մասնագիտություն չունեւ, ոչ ալ ուսում, սակայն քանի որ գյուղում ուրիշ մարդ չկար, նախագահի պարտականությունը նրան հանձնեցին: Ինքզինքը բարձր դիրքի տեր եղած մեկը համարելով՝ սկսավ ալ ավելի կոպիտ վերաբերվել, հայիոյել, անպատվել եւ այլն: Գործը հոն հասավ, որ գնաց ռայոն բողոքեց: Մեր մեջ կար մի երիտասարդ, որ կոչվում էր Էդիկ Շահվերդյան, նրան տարան Չալեսովո, որ նստեցնեն, բայց տղան՝ ուսյալ մեկը, կոնսերվատորիայում կաշխատի եղեր ջութակահար, մայրենի լեզվի պես ռուսերեն խոսում էր, 3 օր հետո վերադարձավ գյուղ: Արդեն հրաման եկած էր, որ թույլատրված է իրանց ընտանիքին միանալ ու այսպես ոչ միայն ինքը, այլ իրեն հետ ուրիշ 3 հոգի եւ մի ընտանիք ալ գացին իրենց ընտանիքին միացան: Մնացինք մենք, իմ ընտանիքի համար վատը այն էր, որ մենք ոչ մի բառ ռուսերեն չէինք գիտեր: Նա շատ աշխատեց խոչընդոտել, որ Չարեհը չերթա սովորելու, բայց չկրցավ ու ինձի հետ գրեթե միշտ կոպիտ կվարվեր: Մանավանդ Չարեհն ալ չկար, կաշխատեր ինձ ստրկացնել, բայց չէր հաջողվում: Մեր վիճակը արդեն հայտնի էր իրեն, որ մենք ապրուստ չունինք: Երբ դիմում էի օգնության համար, կմերժեր: Վերջապես ապրիլ ամսու վերջերն ենք, մայիսի 1-ը բանվորական տոն է: Նորից դիմեցի, որ մի քանի կիլո այլուր տա, դարձյալ մերժեց: Եկա տուն, տեսա որ Նարդուշ Օհանեսյան իր երկու տղաքներով նստեր են, նրանց առջեւ բան մը չըսի, բայց սիրտս ավելոծված է: Տան մեջ գնում-գալիս եմ, մեյ մըն ալ մեկը եկավ տուն, ասաց որ նախագահը քեզ կանչում է: Զգացի: Երկրորդ մըն ալ եկավ՝ քեզի կանչում են գրասենյակից, նորեն չգացի: Մեյ մըն ալ տեսնամ ինքը բորբոքված ներս մտավ, սկսավ գոռոռալով խոսել, ես այլեւ չհամբերեցի, ձեռքս քանոնի պես մի երկաթ կար, հարձակվեցի վրան, որ խփեմ, փախավ: Մահեն ուրիշ բան մը կա՝ մի օր առաջ կամ ուշ, խո մենք գերի չե՞նք, որ այսպես վարվում եք: Ինքը գրասենյակ հասնելուն պես կպատմե եղելությունը հաշվապահին եւ անմիջապես կորոշեն, որ երթան գյուղսովետ Գորեանեկա՝ 7 կիլոմետր: Խոսքից գործի անցնելով մեկ-մեկ ձիու վրա նստած ճամփա կելլեն: Երեկոյան վերադարձան, բայց տրամադրությունն ընկած էր: Ես ոչ գացի, ոչ ալ հետաքրքրվեցա, սակայն շուտով հասկցանք

եղելությունը, այն որ լսել էր մեր բախտակից Ժորա անունով մի տղա: Պատմեց այսպես՝ սրանք երբ կներկայանան գյուղսովետ, կպատմեն եղածը՝ որքան կարելի է սեւ գծերով ալ կավելացնեն, որ ես երկաթ ձողը ձեռքիս հարձակվել եմ վրան, եթե չփախչեմ, պիտի սպանվեմ եւ այլն, բոլորը լսելն հետո մարդը կհարցնե թե ինչ է պատճառը, կխոստովանի, որ հաց ուզեց՝ չտվի: Քանի տարեկա՞ն է: 60-ն անց է: Ասում է՝ լսիր մարդը այդ տարիքում է, չես օգնում, հաց չես տալիս ու ստիպում ես աշխատի, լավ այդ մարդուն ընտանիքը ինչո՞վ պիտի ապրի, շուտով դարձիր եւ մարդուն հաց տուր, սիրաշահիր, եթե ոչ փոխանակ նրան նստեցնելու, քեզ կնստացնեն, եթե նա բողոքի:

Արդեն մայիսի 1-ից ձյունը կհալի եւ շուտով դաշտային աշխատանքը կսկսի եւ մարդիկ գիշեր-ցորեկ պետք է աշխատին: Ծեր-երեխա չկա, դպրոցներն ալ կփակեն, որ սովորողներն ալ մասնակցին, պատճառը՝ գործը շատ, իսկ աշխատողները քիչ: Մայիսյան տոնի առթիվ տղաս Չարեհը մի քանի օրով եկած էր Չալեսովոյից մեզ այցելության: Մեր ներկա վիճակին տեղեկանալու հետո պատմեցինք նաեւ նախագահի հետ իմ ընդհարման մասին: Երբ գնաց գրասենյակ իր հերթին նա ալ (Պավելը) գանգատվեւր է, թե հայրդ ինձ հանդեպ վատ վերաբերմունք ունեցավ եւ այլն, հետո ասել է, որ հասկանում ենք կոխոզի աշխատանք չի կարող, բայց մենք մարդու պետք ունինք, իրեն թեթեւ գործ կուտանք, այսպիսով մեզի օգնե, մենք ալ իրեն կօգնենք, հաց կտանք, այլուր կուտանք ընտանիքի համար: Վաղը եկեք պահեստից սերմացու կարտով վերցրեք եւ ցանեք ձեզ համար: Հաջորդ օրը գացինք, սերմացուն վերցրինք, եզներն ալ բերինք՝ մի լուծ, Չարեհը թե վարեց, թե ալ ցանեցինք, որ ձմռան պաշար ունենանք: Նրան այսպես մեզ հանդեպ իբր հոգատարություն ցույց տալը ես լավ հասկանում էի: Այս բոլորը Չարեհին սիրաշահելու համար էր, որովհետեւ կոխոզին բոլոր ցանքը Չարեհը պիտի հնձեր: Ցանելը այնքան ալ դժվար գործ չէր՝ 3 հատ տրակտորիստներ կային, գիշեր-ցորեկ շուտով ցանեցին, բայց քաղելը միայն մեկ կոմբայնավար կար հատուկ իրենց համար, ուրիշ մը ճարել չէր կարելի, ասիկա ոչ միայն ինքը կհասկնար, այլ բոլորը:

Հոս պետք է նշեմ, որ 1 հուլիս 1949 որպես կոխոզնիկ մինչեւ նոր բերքի աշխատանքի սկսելը, մինչեւ 1 մայիս 1950 14 ռուբլի փող ստացել եմ: Դպրոցի համար 3 լուսամուտի կրկնակ փեղկը շինեմ եմ, ստացեմ եմ 15 ռուբլի հին փողով, իսկ 3 հատ ալ մի մարդու համար լուսամուտի փեղկ շինեմ եմ, անհատական մեղվապահ էր, 3 փուղ (մոտ 49 կգ) կարտոլի դիմաց: Ահավասիկ մի տարվա հաշիվը, եզրակացությունը ձեզի կթողում մեր վիճակի մասին:

Հասանք հունիսին, որ կոխոզնիկների համար կամաց-կամաց դաշտային աշխատանքը սկսում էր: Մի օր պահեստից 4 սալ ռոժ

բարձած ուզում էին այլուր աղալու երթալ Գյունիի՝ 17-20 կիլոմետր հեռավորություն ուներ մեր գյուղից, անկից ավելի մոտ տեղ ջաղաց չկար: Մանավանդ ՄՏՍ-ի կենտրոնը հոն էր, տրակտորների եւ այլ-նի համար պետք եղած սայարկա, նավթ եւ այլն այնտեղից ստանում էին: Քանի որ երեք հոգի կային չորս սայլի համար, նախագահը կարգադրեց, որ ես նրանց ընկերանամ եւ սովորիմ թե տեղը, թե կերպը եւ այլն, որ հետո երբ կարիք լինի ես առանձին երթամ: Այդպես հաջող կերպով գացինք, մի օր հետո վերադարձանք, ոչինչ դժվար բան մը չկար, թեեւ ռուսերեն չէի իմանում, գրեթե նրան ալ կարիք չկար, որովհետեւ ծանոթ էին, որ Կաստիլի կոլխոզից եմ:

Երբ 2-րդ անգամ ինձ նորից պիտի ուղարկեին աղալու, սայլին լծած էին մի եգ, որը վատ սովորություն ուներ՝ կպանկեր, չէր գնում: Ես որքան պնդեցի, որ ասոր հետ ես չեմ երթար, ասիկա զիս ճամփան կթողու, կպանկի, ինչ պիտի անիմ, քովս մարդ ալ չկա, որ օգնե որեւէ մի կերպ տանիք բերենք, ըսին ուրիշ չունենք, այս է պետք է երթաս: Ի՞նչ անեմ, չերթամ տունը մի կտոր հաց կամ այլուր չունիմ, երթամ ալ հաստատ համոզված եմ, որ դժվար թե հաջող երթամ ու վերադառնամ: Տեսան որ ես ալարում եմ, մարդը ասաց՝ հաց կամ այլուր ես ուզում, չունինք, որտեղից տանք, գնա աղա ու բեր, քեզի ալ մեզի ալ: Մի քանի փոքր տոպրակներ ալ կոլխոզիկները բերին, վերջապես կամա-ակամա ճամփա ելա: Մի բուխանկա հաց տվին, որ մինչեւ վերադարձ իմ ուտելիք պաշարս էր:

Նույն օրը հասա ջաղաց, հերթը շատ էր: Գիշերեցի հոն, հաջորդ օրը հերթը հասավ, աղացի, պետք էր վերադառնալի արդեն, օրը տարածամ էր, բարձա այլուրը եւ լծեցի, ճամփա ելա: Հագիվ գյուղից դուրս պիտի գայի, եզը պանկեց, ինչ ըրի ոտքի չելավ: Արեւը մարը մտավ: Ճամփու եգերքին մի տուն կար, մի մարդ դուրս եկավ, իձի կանչեց՝ արի հոս պանկիր մեզ մոտ, առավոտ կերթաս, գիշերով ինչպես պիտի կտրես 20 կիլոմետր ճանապարհը, մանավանդ որ այդ եզով ցորեկով դժվար թե հասնիս, ալ ուր մնաց գիշերով: Անծանոթ մարդ, ինչ իմանամ թե ինչ նպատակով է կանչում, ասենք թե կյանքիս վտանգ չկա, իսկ այլուրը գիշերով տանեն, ինչ պետք է անեմ, անել կացություն, ինչ ալ լինի պետք է երթամ՝ ըսի եւ եզը նորից լծեցի ճամփա ելա: Բարեբախտաբար մինչեւ Գորեանկա 13 կիլոմետր ոչ մի անգամ չպանկեց: Երբ գյուղը մտա, գյուղը երկու մասի բաժանված է, առաջինը անցա, երկրորդը չհասած՝ ճիշտ ճամփուն կեսը պանկեց, այլեւս ինչ որ ըրի անկարելի եղավ տեղեն շարժել: Օդը սաստիկ ցրտեց, մոտիկ ոչ մի տուն չկա, որ օգնության կանչեմ, իսկ եթե հեռու երթամ, հապա այլուրը տանեն, նորեն նույն վախը՝ չկրցա հեռանալ: Քանի գիշերը կհառաջանար, ցուրտը ավելի զգալի կդառնար, իսկ իմ ունեցած մի բուխանկա հացը 2 օրվան կերած էի: Անոթի փորով, ցուրտ գիշերով

չվարած եմ, պատասպարելիք տեղ ալ չկա, գնում-գալիս եմ, որ գոնե չսառիմ: Զգիտեմ որքան տուեց այս վիճակը, ըսի մի անգամ էլ փորձեմ, կարող է կհաջողվի հասնել այն տանը, ուր կապրի մի մարդ՝ այդ շրջանի հարկահավաքն է եւ իր տղան ալ մեր գեղացի աղջկան հետ ամուսնացրեց: Նրանց միջոցով լուր ուղարկեմ, որ թող գան տանեն, ուրիշ ինչ ճար կա: Եզը որ արձակած էի, նա իր համար արածում էր, իսկ ես մի երկար պարան կապած էի, որ կարենամ բռնել: Բերի լծեցի, կամաց-կամաց սկսանք հառաջանալ եւ հուսադրված էի, որ պիտի հաջողվի մտադրությունս, բայց պատահեցավ հակառակը: Մի փոքր ջուր պետք է անցնեինք, որ նրանից հետո շատ քիչ էր մնում հասնելու իմ ակնկալած տանը, հանկարծ եզը նորից պանկեց: Հիմա դրությունը ավելի վատ էր, առաջ գոնե ցամաք տեղ էր, կարծակեի, հետո կլծեի, իսկ հիմա ջուրի մեջ ի՞նչ անեմ: Ես ամբողջ գիշերը ցրտից ոտքի վրա կենալու նույնիսկ դժվարանում եմ եւ հանկարծ զգացի, որ ինձ բաներ մը լինում է՝ կարծես ամբողջ արյունը խուժեց գլխիս, ալ ուր ըլլալս չեմ իմանում, ամբողջ մարմնով դողում եմ ոչ կրնամ քալել, ոչ ալ նստիլ, աչքերս ալ չի տեսնում: Զգացի, որ պիտի մեռնեմ: Զգիտեմ այս դրության որքան մնացի, կերելի ընկեր եմ ու քներ, որովհետեւ ինքզինքս երբ գետին գտա, ուրեմն գիտակցությունս կորցրած ըլլալուս ապացույցն է: Աման Աստված՝ ըսի, ոտքի ելա, բայց ոտքերս դողդողում է եւ գլուխս պտտվում է, կարծես ուսերիս արճի գունդի պես ծանրություն ճնշում է ինձ: Ըսի փորձեմ, կարող է ոտքի կանգնի եւ գոնե հասնեմ այն տունը, ուր հույս ունեի օգնություն ստանալ: Դեռ իրեն ձեռք չտված՝ ինքն իրմե ոտքի կայնեց, կերելի ջրի մեջ պանկելով մրսած էր: Անմիջապես կողքից բռնեցի՝ իբր քաջալերանք «դավայ, դավայ» ըսելով, հագիվ հասա տունը: Տանը մոտ նորից պանկեց, ալ ետես չնայեցա, արդեն ճրագի լույս տեսնում էի: Մտա ներս, տեսա կինը փեչը վառում էր, երբ ինձ տեսավ, երեսս նայեց ու հարցուց. «Չտո եստ»: Թեեւ ռուսերեն չէի գիտեր, բայց այդքանը հասկանում էի: Սկսա մի քիչ ձեռքով, մի քիչ ռուսերեն բառերով խոսել «Կյունիի, մեկնիցա, մուկա, ըսպայտ բուղեմ տուդա եւ այլն, յա բոլիս», արդեն դողում եմ: Սա իմացավ, ըսավ «սադիս, սադիս»: Փեչը լավ վառվեց, ես նստած եմ, տաքանում եմ մի ժամից ավելի արդեն, լուսացավ, մարդը ելավ պանկած տեղից, ինձ տեսավ, նայեց վիճակիս, ես աշխատեցա մի կերպ հասկացնել նրան, որ, եթե կարելի է, հարսի միջոցով լուր տա գյուղ, որ գան այլուրը տանեն, դուրսը եզը լծված պանկած է, չի գնում: Մարդը դուրս գնաց տեսավ եւ անմիջապես ճանաչեց է այդ եզին, քանի որ իրենց գեղից ամեր էին: Ինձ ասաց՝ ատդիխայ, ես տեղես հալ չունիմ, լվացվեց, նախաճաշ էլ ըրավ, հետո ինձի ըսավ՝ դավայ: Դուրս ելանք, մարդը մի խոշոր փայտ առավ՝ տուր թե կտաս, այնպես է խփում կարծես սպաննելու է: Եզը որքան ալ համառ էր, մարդը նրանից ավելի, վերջապես ոտքի կայնեց, բայց մարդը շարունա-

կեց հարվածները՝ շարունակ մինչեւ գեղի սահմանը, որ բավական վերելք էր: Ասաց՝ ալ չպառկիր, դե գնա, այսպիսի մարդ պետք է սրան քշելու համար, ինչո՞ւ քեզի դրկեր են: Ու այսպես մինչեւ գյուղ հասա, ալ չպառկեց: Հասնելու պես պահեստի առաջ թողուցի սելը լծված ու վազեցի տուն եւ առանց մի խոսք ըսելու պառկեցա, ոտքի վրա կենալու վիճակ չունեի: Չիզուեմ, թե որքան քներ եմ, մեյ մըն ալ զիս արթնացուցին, որ ուտենք: Բան չունեինք, խաշած կարտուլ էր: Նստա տաբուրետկայի վրա, մի հատ վերցրի, չեմ հիշում ուրիշ ալ առի, միայն գիտեմ, որ նստած տեղես ինկա, ուրիշ բանե լուր չունիմ: Շուտով գրասենյակ գնում, լուր տալիս են, թե հասեք հայրիկը մեռնում է: Գալիս տեսնում են, որ վիճակս վատ է: Նույն օրը բժիշկ կանչեք էին տրակտորիստ Սաշայի համար, որ ծանր հիվանդ էր, եւ բանը որ ինձ պատահեց, բժիշկը

դեռ գյուղում է եղեր: Սա կուգա, իսկ մի ուրիշ բժշկուհի ալ հարեւան գյուղից պատահական եկեր է գյուղ, նրա քույրը խանութպան էր, նրանք թաթար էին: Երկու քույրեր կայցելին մեր տուն, սուրճ են խմում եւ բաժակ նայել կտան Սիրանուշին, նրանց ասում է, որ ձեր մտադրած բանը պիտի հաջողի եւ այլն: Ան ալ կուգա, մյուս բժիշկի հետ կքննեն, նախագահին ասում են՝ ի՞նչ կեցեր ես, այս մարդը մի-նինգիտ է, շուտ հիվանդանոց հասցուցեք: Ասնք ես հետո իմացա: Անոր վրա շուտով պատրաստում են կոլխոզի սելերից 2 հատ՝ մեկը ինձի, մյուսն ալ իրենց համար: Վերջապես երեկոյան դեմ սելը բերին, ինձ պառկեցուցին ճամփա ելան: 50 կիլոմետր է գեղից մինչեւ Չալեսովո: Ես չգիտեմ թե ինչպես հասանք, աչքս բացի, որ արդեն առավոտ է եւ արեւը բավական բարձրացեր է: Ինձ վար առին, նրանից հետո նորից չեմ հիշում, թե ինչ պատահեց, միայն երեկոյան դեմ բժիշկները եկան ինձ արթնացուցին: Մարդ ու կին էին նրանք, իրարու հետ խոսեցան, ես ռուսերեն չեմ իմանում, դեղ գրեցին, մի բաժակ ալ թեյ ու պատվիրեցին, որ դեղը եւ թեյը խմեմ, բայց չքնեմ ու գացին: Ու այսպես ամեն օր նույնը՝ առավոտ երեկո գալիս էին, նայում, ասում էին՝ դեղը խմիր,



Միհրանի որդին՝  
Չարեհ  
Վարժապետյանը  
աքսորավայրում

մի քնիր: Բայց ես ուզում էի միշտ քնել: Ախորժակ չունեի թեեւ, առաջին օրեն Չարեհին լուր տված էին, որ հայրիկը բերինք հիվանդանոց, հետաքրքրվե ինչ որ պետք է, հասկցիր բժիշկներից, անոր համեմատ հոգա, նշանակում է, որ ուտելիք եւ այլն քո վրա է, քանի որ հիվանդանոցում հիվանդին չեն բավարարում ըստ կարիքին: Այսպես է եղեր սովետական բոլոր հիվանդանոցներում, թեեւ մեզի անծանոթ էր այս, բայց գրեթե ամեն օր կեսօրին կամ երեկոյան ինձի համար ուտելիք բերում էին, սակայն ով էր բերողը չէի ճանաչում: Կարծում էի, որ Չարեհն է բերողը, բայց ո՞վ է պատրաստողը: Ինքը մի ռուս ընտանիքի տանը ապրում էր եւ սովորում, բայց հետո իմացա, որ Չալեսովոյում ապրող մեզի պես աքսորական հայ ընտանիքներ կան, որոնցմե մեկը, որ կոչվում էր Խորասանջյան<sup>41</sup> Կարապետի ընտանիք, որոնց հետ տղաս Չարեհը ծանոթացեր է եւ բարեկամություն հաստատեր: Ահա այս ընտանիքը, երբ իմանում են, որ ես հիվանդանոցում եմ ծանր վիճակում, ըստ կարելիին ինձ համար ունեն ճաշ ուտելիք պատրաստում են եւ ուղարկում իր տղոցմե մեկին հետ: Երկու տղա ուներ: Հետո իմացանք, ծանոթացանք երկու տարի անց, երբ փոխադրվեցանք ընտանյոք Չալեսովոյի շրջկենտրոն: Իմացանք որ նրանք Ետիրենցի են եղեր եւ Հայաստան եկեր են Իսկեզի ըսված քաղաքից: Հոս տեղին է հիշել արաբական մի ասույթ, որ հետեւյալն է. «Իլլի դայիպ աննիք ասլու, տիլայիլ ֆաալու» (եթե մեկու մը տոհմը քեզի անհայտ է, գործը ապացույց կլինի): Այն օրից մինչեւ այսօր ալ մենք անկեղծ բարեկամներ ենք: Տիկնոջ անունը Թագուհի է, իսկապես ալ այդ անվան արժանի է:

Չեմ հիշեր, որքան մնացի [հիվանդանոցում], բայց ոչ մի օգուտ կամ փոփոխություն տեղի չունեցավ: Մի բան միայն հայտնի եղավ իմ կարծիքով, որ բժիշկներին ալ համոզմունքը նույնն էր, այսինքն՝ տեսան, որ շուտով բուժվելիք հիվանդ չի, թող երթա իրեն տանը կապրի կամ կմեռնի իր բախտին: Քանի որ թե գյուղում բժիշկներին ըսածը, որ 4 օրեն ավելի չապրիր, ճիշտ չեւալ, թե ալ հիվանդանոցի բժիշկներինը, եթե մեռնելու ալ ըլլա, իր տանը լինի, այսպիսով ինձ հանեցին հիվանդանոցից սայլի վրա պառկած: Հաշվապահը, որ կոչվում էր Կոզմա Արտեմիչ, բերավ գյուղ, հասցուց իմ տունը: Գյուղում արդեն կոլխոզի աշխատանքը սկսեր էր: Խոտը ինձեր են, պետք է հավաքել, դեզ կապել: Կոլխոզակները պետք է աշխատանքի ելլեն՝ մեծ փոքր չիկա: Բոլորը՝ կին արմատ, տղամարդ, աղջիկ, տղա պիտի խոտի գործը վերջացնեն ու պատրաստ լինեն հունձքի: Երբ կոմբայնավարը ինձում է, իրենք ալ տոպրակները լեցնեն ու փոխադրեն մթերման կետը, որ նույն արտի մեջ հատկացված տեղ է: Գալով ինձ՝ տանը պառկած եմ, ոտքի վրա չեմ կարող կենալ, ալ ուր մնաց աշխատիմ: Այդ մասին արդեն հաշվապահը եղելությունը հայտներ է նախագահին, թե երբ հիվանդանո-

ցից վերադառնում էինք միզելու համար սայլից իջա, ինքզինքս չկարողացա բռնել, ետ ետ գնալով ինկա: Իսկ ինքը ջուր խմելու համար մի քիչ հեռու գացեր էր, տեսավ, որ ես սայլի վրա չեմ, ինկած եմ եւ պառկած գետին, եկավ ինձ վերցուց ու մի կերպ տեղավորեց սայլի վրա, ինքն ալ քովս նստավ չթողուց որ տեղես շարժիմ: Այս տեսնողը իհարկե նույնությամբ պատմեր է եւ ինձ ոչ մի անգամ էլ չկանչեցին: Կինս Սիրանուշը արդեն ոչ մի աշխատանքի չէր մասնակցում, միայն Մարին կնոջս աղջիկը, որ 10-11 տարեկան էր, կմասնակցեր: Օրական մի բուխանկա հաց տալիս էին, այս էր մեր ընտանիքի սնունդի նորման՝ մի քանի խաշած կարտոֆի հետ: Խոտի հավաքման աշխատանքը երբ վերջացավ, շուտով պետք էր սկսել հացահատիկի հունձքը: Այս կարճ ժամանակամիջոցում սայլերը պետք է ռեմոնտ եղած (նորոգված) պատրաստ ըլլային, որ աշխատանքի պարապուրդ չըլլար: Այս գործին համար պատահական մի պլոտիկ ճարել էին եւ նրա հետ պայմանավորվել՝ որոշ գումար, հացահատիկ, նույնիսկ մեղր ալ որոշված չափով հատկացնելու պայմանով: Մարդը համաձայներ էր, ասոր օգնելու համար ալ ինձ կանչեցին գործի, իսկ ես հիվանդ վիճակում ինչպե՞ս պիտի աշխատեի՝ աջ կողմս վերեն վար թուլացած էր, ձեռքս ուժ չունեի, թմրած էր, ոտքս ալ քսվելով քայլում էի: Այս վիճակում ստիպեցին որ անպայման աշխատիմ: Ճար չունեի, կամաց-կամաց սկսա ինչքան որ կարող էի, մինչեւ որ Չարեհը Չալեսովոյից եկավ, հունձքը սկսավ, այն ատեն իմ վրա նախկին ճշումը թեթեւացավ: Հունձքը որ վերջացավ, հիմա ալ չորանոցում պետք է աշխատեի: Հունձքը չէր հասնում, կեսկանաչ փոխադրում էին գյուղ, հոն թե մաղում եւ չորացնում էինք, ես մինչեւ իրիկուն մաղելու մեքենան դարձնում էի ձախ ձեռքով՝ միշտ միկողմանի, քանի որ աջ կողմս թույլ էր, ուժ չունեի: Ու այսպես մինչեւ որ այդ աշխատանքն ալ վերջացավ, արդեն ծյուն եկավ, չկրցանք հավաքել ոչ կտավատ, ոչ կանեփ եւ ոչ ալ կոլխոզի կարտոլը: Բոլորը մնացին ձյան տակ, նույնիսկ ներառյալ հացահատիկի մի մասը, որ կարելի չեղավ փոխադրել գյուղ: Երբ հունձքը վերջացավ, Չարեհը իրեն հասանելիքը ստացավ, այսինքն՝ ավյոս, որովհետեւ ռոժը պետության հանձնում էին: Միայն իբր սերմացու կփոխանցեին, որքան որ նրանց պետք էր աշխատային եւ գարնանային ցանքի համար: Քանի որ մեզ մոտ հացահատիկը չէր հասնում, կարելի չէր իբր սերմացու օգտագործել: Չարեհին ստացածը իր աշխօրի դիմաց, որքան ըլլալը չգիտեմ, մեծ բան մը չէր, որից մի մաս ծախեց, կարծեմ 50 ռուբլի փող ունեցավ: Մինչեւ որ հունձքը վերջացավ, մի քանի անգամ ընհարվեցան նախագահի հետ, նա հրաժարվեց կոլխոզում մնալ ու աշխատիլ: Նրա համար ալ, ինչ որ օգներ էին իրեն սովորած ատեն, իրեն հասնելիք հատիկեն բռնագրավեցին: Այն օրեն նա բաժանվեց մեզից ու գնաց հաստատվեցավ Գունիխա, որ այդ շրջանի USU-ի կենտրոնն էր եւ հոն աշխատեց Էլեկտրոսվարչիկ

(զոդող), որովհետեւ բրիգադիրի հետ շատ մոտ ծանոթացեր էր, որը կոչվում էր Իվան Իվանովիչ: Միշտ ալ Չարեհին պաշտպանում էր, նախագահին ասում էր, որ այս է, սրանից հետո նրան չես տեսնի, նա ինձ հետ պիտի աշխատի, կոլխոզինի չի:

Այսպիսով նա գնաց, մնացինք 4 հոգի՝ ես, Սիրանուշը, Մարին, Սիրվարդը (5 տարեկան): Հացահատիկ չունեինք, բայց կարտոլ եւ փայտ բավական ունեինք, երկուքն ալ բերել, տեղավորեր էի տանը, ալ կարիք չկար դրսից ունեւ բան բերելու բացի ջրից: Գետը սառչում էր, գրեթե ամեն օր առավոտ մեկ մետր խորությամբ սառույցը կտորում էի, որ տանը ջուր ունենայինք: Ինչպես արդեն գրած եմ, ձմեռը շուտ սկսավ եւ հենց առջի օրեն շատ մեծ քանակությամբ [ծյուն եկավ]: Մենք քառասուն եւ ավելի տարիներ ձյան երես տեսած չէինք, տեղացիները մեզ արհավիրքի մեջ պահելու համար ավելի սարսափելի բաներ էին պատմում՝ թե դեռ ասիկա ոչինչ, մինչեւ տների բարձրության կհասնի ծյունը եւ այլն:

Ասոնք մի կողմ թողնելով, գալով իմ մասին, վիճակս միանգամից փոխվեցավ, ավելի վատացավ, կարծես սրան սպասում էր: Աննորմալ էր դրությունս, քանի դրսի եղանակին նայում էի, վրաս ահ էր գալիս, կզգայի հիմա կիսամ ու կմեռնեմ, վախենում էի՝ «աման Աստված» ըսելով: Տան մեջ պտտվում էի, հուսահատություն էր, թե ուրիշ բան, չգիտեմ, անդորրությունս բոլորովին խանգարվեցավ, ալ քուն դադար չունեի: Գիշեր-ցորեկ տան մեջ շրջում էի, չէի կարող ոչ նստել, ոչ քնանալ, որ մի քիչ հանգստանայի: Մեր նախկին բնակած տանը ռուսական փեչ կար, որ գիշեր-ցորեկ վառում էինք, տաք էր: Երբ փոխադրվեցանք ուրիշ բնակարան, սա լքված մի տուն էր, միջի ռուսական փեչը քանդեր, քերփիչներն (աղյուսները) ալ տարեր էին: Ամառը մի կերպ դուրսը յուր էինք գնում ճաշ եփել, լվացք եւ այլն, սակայն ձմեռը բոլոր տունը տաքացնել պետք էր, որ կարողանայինք ապրիլ: Քանի անգամ դիմեցինք նախագահին որ փեչը շինել տան, պատասխանում էր՝ դուք շինեցեք ձեզ համար, թեեւ մեզանից ոչ ոք չէր իմանում ռուսական փեչ շինել, մանավանդ ինչո՞վ՝ ոչ քերեմիդ (աղյուս) կար ոչ ալ շինող, մինչեւ որ ծյուն եկավ ամեն ինչ թաղված մնաց, ի՞նչ անել: Մեզի հետ մի ընտանիք կար Հայաստանի Նուռնուս գյուղից, 3 եղբայր էին: Մեծը որ կոչվում էր Հայր, կուզեց (դարբին) էր: Մի գիշեր նրա հետ գնացինք չորանոցի մոտ, հոն մի մեքենա կար, նրան վրայի ժեշտը (թիթեղը) պոկեցինք: Ես պահակ կեցա, քանի որ ինքը խուլ էր, չէր լսում, եթե ունեւ մեկը գալու լինի, իրեն իմաց տամ: Բարեբախտաբար ոչ ոք չեկավ, ոչ ալ տեսնող եղավ: Ժեշտը իրենց տունը տարինք, նրանից մի հատ փեչ պատրաստեց, ահա ասոր հետ ձմեռը անցուցինք, վայ այն անցնելուն: Թեեւ տունը պետք եղածին պես չէր տաքանար, գոնե կարտոլ խաշելու եւ այլն կծառայեր, իսկ մայր ու աղջիկ, այսինքն՝ Սիրանուշը եւ Սիրվարդը, անկողինեն դուրս

չէին ելլեր, կնստեին փեչի կողքը, կտաքանային: Ահա այդ մարդուն մեզի ըրած այս օգնությունը կամ բարիքը անմոռանալի է, եթե այդ չըլլար, կարող է ցրտից ընտանյոք ալ սառնիք, ով է իմանում: Նախագահին ինչպիսի անխիղճ եւ մարդկային զգացումե զուրկ մեկը լինելը կարող էք դատել այն արարքից, որ մի օր եկեր, մեր փեչի տրուբան (խողովակը) առեր տարեր է՝ ըսելով, որ դա տրակտորի տրուբան է: Սրան այս քաջագործության համար ալ դուք անուն դրեք, կարդացողներ: Այս ալ իրեն վերջին հարվածն էր, որ փորձեց մեր վրա՝ մեզի ստրկացնելու համար:

Արդեն տեսաք, թե ինչպես անցուցինք 49-50 թվականի սեզոնը: Երկրորդ տարին էր, այս վիճակում հասանք 51-րդ տարվա ծմռան: Կրկնելու կարիք չկա, միայն այսքանը պետք է իմանաք, որ ծմռոն այդ երկրում վեց ամիս է եղեր, մեր բախտից այդ տարին յոթ ամիս տեւեց: Մայիս 1-ից առաջ հող չես տեսնի, անկից հետո կամաց կհալի: Տրակտորիստները կսկսեն վար անել եւ բոլոր կոլխոզնիկները կեւլեն աշխատանքի, դպրոցներն ալ կփակեն, որովհետեւ երեխաներն ալ պետք է աշխատին:

Իսկ իմ վիճակս միշտ մնաց նույնը՝ այսինքն 8 ամիս գիշեր-ցորեկ ոչ քուն ունեի, ոչ ալ դադար: Սենյակին մեջ պատվում էի՝ «աման Աստված» կանչելով: Չարեհը երկու-երեք շաբաթը մեկ կայցելեր մեզի, նրա գալովը կարծես մի քիչ սրտապնդում էի, սակայն հետեւալ օրը՝ նորից նույնը: Երկրորդ ամիսն էր, թե երրորդ՝ չեմ հիշում, կռնակիս խոշոր չիբաններ ելան, նրա հետ ալ քերվտուկ, ալ բոլորովին հանգիստս կորցրի: Ի՞նչ անել, ոչ մի ճար եւ ոչ ալ դարման: Այս վիճակով, ապրիլ ամսույն օդը մի քիչ մեղմացավ, թեեւ մեկ-մեկ ձյուն գալիս էր, սակայն եղանակը հաճելի էր: Այս ամսույն է, որ բոլոր գետերի սառույցը ուժանակով (դինամիտ) կպայթեցնեն: Ջուրը բարձրանում է այնպես, որ նրա միջոցով բոլոր անտառանյութը կփոխադրեն քաղաք: Բոլոր հիմնարկները ունին իրենց բաժին անտառն, ամեն մի հիմնարկ իր բանվորներով կերթան կկտրեն ծառերը, 3-4-5 երկարությամբ գերանները ձիերով կամ եզերով քաշելով կտանին գետի եզերքը եւ իրենց պատրաստած գերանները կթափեն գետը՝ հերթով, որ իրար չխառնվին, եւ հսկելով, որ ոեւէ արգելքի չհանդիպի, քանի որ շատ անգամ կպատահի, որ ոեւէ մի տեղ փոքր անկանոնություն ամբողջ ընթացքը կխանգարե, այսինքն կկայնի փոխադրությունը: Նրա համար ալ գետի երկու կողմեն աչալուրջ կհսկեն, իսկ երբ իրենց տեղը հասնեն, արդեն հոն ալ մասնավոր բանվորներ դուրս կհանեն, գետի եզերքը կշարեն, հետո կփոխադրեն հիմնարկ: Բոլոր փոխադրությունը ծմռոն կկատարեն ցամաքում սահնակով, քանի գետինը սառած է, ամառը բացի թեթեւ բաներից ուրիշ ոչինչ չի կարելի:

Մի կարելուր հանգամանք, որ անտես ամսել եւ նրա ազդեցություն-

նը մեր կյանքի եւ գոյության տեսակետից ալ որոշ կերպով հայտնի դարձավ, մեզ անհայտ պատճառները, որով մենք զոհ եղանք այսպես մեծ եւ զանգվածային տեղահանության, այսինքն՝ աքսորի: Այն Սեւ օրից մի տարի հետո Երեւանից անվանացանկ ուղարկեր էին Ալթայսկի կրայի կենտրոն, որով ամեն մի ընտանիքին մի բանով պոչ կցեր էին, այսինքն, մեղադրում էին: Սրանք 2 տեսակ էին: Առաջինը հայրենական պատերազմի պլեն (գերի) ընկնողներ, իսկ մնացածները դաշնակցական: Այս թղթերը շրջաններում միլիցաներու միջոցով բոլոր ընտանիքներին ալ ստորագրել տվին, նույնպես ալ մեզ, ոչ մի առարկություն չի կարելի, կամա-ակամա ստորագրել տվին, եղան մարդիկ, որ հրաժարվեցան, սակայն զենքի ուժով ալ ստորագրեցին: Կաստիլի գյուղում մենք երեք ընտանիք էինք: Մեկը Պողոսյան Հակոբ<sup>42</sup> (պլեն), իսկ երկրորդը Օհանեսյան Նարդուզ<sup>43</sup>, երեք տղա ուներ: Այս կնկան մարդը, կարծեմ, 36 թվականին եղած զանգվածային աքսորի ժամանակ իբրեւ դաշնակցական աքսորեր են եւ չի վերադարձել: Եւ ինձ՝ որպես դաշնակ: Այն ատեն թեեւ գլխի չընկանք, իսկ հիմա որ գրում եմ այս մասին, ուրեմն կարելի է, որ նույնիսկ Երեւանեն հրահանգ ստացեր են մեզի ավելի խիստ հսկողության տակ պահելու կամ եւ այլն... Քանի որ շանորդին (Պավել Պլիտ՝ նախագահը) ինձ հետ միշտ խիստ կվարվեր մյուսներից ավելի, ենթադրութենեն հեռու չի:

Մեր ընտանիքի թշվառության պատճառներեն մեկն ալ մեր ռուսական լեզուն չիմանալն էր, քանի որ դիմացի խոսող մարդը խոսում է, բայց որ չիմանաս ինչ պատասխան պիտի տաս, իսկ իրենք բացի ռուսերենից ուրիշ լեզու չեն իմանում: Խոսքս ապացուցելու համար մի փոքրիկ դեպք պատմեմ, դուք ալ կհամոզվեք, որ ըսածս ճշմարտություն է: Երբ հունձքի ատեն հացահատիկը տեղափոխում էին գյուղ չորացնելու համար սուշիկայում (չորանոցում), ինչպես արդեն սրանից առաջ այդ մասին գրած եմ, քանի որ ուրիշ ծանր գործ, այսինքն՝ վերցնել, շալակել ես չեմ կարող, այն օրը Հայոն՝ կուզնեց տղան եւ ես դրսում փայտ էինք ջարդում, իսկ օրը ամպոտ էր, անձրեւը բարակ-բարակ մաղում էր, իսկ մեր ջարդած փայտը մի կին ներս տանում եւ փեչը վառում էր: Այնպես պատահեց, որ անձրեւը միանգամից զորեց, որ մինչեւ որ ներս փախանք, բավական թրջվեցանք, նույնպես ալ փայտ փոխադրող կինը: Հիմա բոլորս ալ փեչին կողքերը կռթնած տաքանում, համ էլ չորացնում ենք մեր հագուստը: Հայտնի բան է, որ ռուս կանայք շատախոս են (եթե կարելի է այսպես արտահայտվել): Փեչ վառող կինը կայներ է փեչի դռան առաջ, շատ մոտ եւ տաք խոսքի է բռնվեր մի ուրիշ կնկան հետ: Թե ինչի մասին է, որ այդպես խանդավառ կերպով խոսում են, չգիտեմ, ռուսերեն չեմ իմանում, որ հետաքրքրվեմ: Մեկ ալ տեսա, որ կնկան ետեւին կողմին փեչը բռնկեր եւ վառում է: Ես նրան ասում եմ՝ այ կնիկ, վառում ես, իսկ ինքը ինձ

պատասխանում է՝ գավարի գավարի: Ես նորից կրկնում եմ կնիկ վառում ես, նորից նույն պատասխանը: Ալ տեսա, որ չի հասկանում եւ չի ուզում գրույցը կիսատ թողուլ, ուսից բռնեցի, թափ տվի, ըսի՝ Նայե վառում ես: Կարծեմ համոզվեցաք, որ լեզու չիմանալը մարդուն ինչ տեսակ դժվարությունների կենթարկե:

Այսքանը բավ համարելով՝ դառնանք նորից կիսատ թաղած պատմությանը եւ շարունակենք: Ինչպես արդեն բավական եւ պարզ կերպով նկարագրեր եմ ապրիլ ամսու թե եղանակի եւ աշխատանքի մասին, գալով ինձ յոթ ամիս է ավելի բանտարկված այդ աննորմալ վիճակում տանջվելիս հետո ուզում էի դուրս գալ: Ես ինձ համար զբաղմունք, ալ ավելի՝ ժամանց ճարեր էի, առավոտ կանուխ կառնեի մի մեծ սղոց եւ կացին եւ փոքր սահնակ, կերթայի անտառ՝ մոտավորապես 5 կիլոմետր, եւ կկտրեի մեծ ծառեր, որոնք չոր կամ կիսաչոր ձմռան խիստ եղանակին արմատախիլ եղած էին: Ծառերը մեկ մետր երկարությունով կտրում եւ սանկայի վրա կապելով տուն էի բերում: Այս բանը առնվազն կտեւեր 3-4 ժամ, այսպիսով թե օրը անցնում էր եւ թե ինձ ավելի լավ կզգայի եւ երբեմն երկու անգամ գնում գալիս էի: Եւ այսպիսով ես ինձ ավելի լավ զգում էի օրավուր եւ սկսա մի քիչ ալ քնել:

Մայիսին ձնհալը սկսավ եւ շուտով ցանքատարածության հողերը բացվեցան եւ կամաց-կամաց տրակտորիստները աշխատանքի սկսան, որ գարնանացանքը կատարեն: Կոլխոզնիկներից մեծահասակները՝ տղամարդ թե կին, մասնակցում էին այս աշխատանքին, ես չէի մասնակցում, որովհետեւ չէի կարող, իսկ ես ինձի իբրեւ զբաղմունք սկսա տան առաջի հողամասը փորել լապատկայով (բահով), որ գոնե կարտոլ ցանենք, որ հաջորդ ձմռան պաշար ունենանք: Քանի որ դպրոցը փակվեց՝ ըստ երկրի սովորության, այսպիսով Մարին ալ ազատ էր տանը: Արդեն ձմռանը մենք մտածում էինք, որ գարունը բացվի, դիմենք Չալեսովո՝ կենտրոն, որ ընտանյոք փոխադրվենք, հնարավորություն ունենանք ապրելու, իսկ եթե չհաջողվի տեղափոխվել մեր գոյության պահպանումը վտանգի տակ է: Անոր համար հունիս ամսու սկզբին մայր ու աղջիկ (Սիրանուշը եւ Մարին) ճամփա ելան՝ իբրեւ թե բժշկի են գնում Գարեբեւկա: Եթե կոլխոզի նախագահը իմանար բուն նպատակը, չէր թողուր գյուղից դուրս գալ: Այսպիսով գնացին, բայց ինչպես պիտի հասնեին Չալեսովո, 50 կիլոմետր ճանապարհ կտրելը իրենց համար անկարելի էր: Մնացինք ես ու աղջիկս (Սիրվարդ): Անցավ 10-12 օր, ոչ մի տեղեկություն չունինք, թե ինչպես գացին հասան կամ ինչ են անում հոն: Սկսա անհանգստանալ, նույնիսկ կասկածել, թե այս բանը պատրվակ բռնելով՝ մայր ու աղջիկ իրենց օձիքը ազատեցին, ալ ետ չեն գար. մենք ազատվեցանք ինքն ալ իր գլխի ճարը թող նայի եւ այլն: Օրերը անցնում էին, իսկ ես ամեն առավոտ ելնում, առաջին գործս մի թենջերե (թուլջե կաթսա) կարտոլ խա-

շում էի, մեկ-երկու հատ ալ հավկիթ աղջկան համար, նրանից հետո նորից աշխատանքի անցնում էի: Կարող է մտածեք, թե փող որ չունինք, հավկիթը որտեղից: Մենք ունեինք երկու հավ, մի աքլոր, որ ճուտից մեծացրած էինք: Թեեւ մի գործ անում էի, սակայն ոչ լրիվ ու կանոնավոր, ինչպես որ պետք է: Երբ կարտոլը տնկում էի, այսինքն լապատկայով մի փոքրիկ փոս բանալեն հետո երկու հատ սերմացուն ձգում էի փոսի մեջ, հետո նորից վրան հող լեցնում ու հաջորդաբար՝ առաջին փոսին մեջ սերմացուն նետելեն հետո երկրորդ փոսի հողը առաջինին վրա լեցնում էի: Սակայն ես առաջին անգամ է, որ այս գործը անում էի, ուստի սերմացուն պետք եղածին պես չեմ զոցեր, այսինքն քիչ հող լեցուցեր եմ: Ես սպասում եմ, որ ծիլ կանաչի, բայց մտում են նույնը: Թեեւ ծլեր է, բայց չի կանաչում, ի՞նչ անեմ: Ես իմ խելքով նոր աշխատանք բացի ինձ համար: Ամեն առավոտ երկու վեդրոյով ջուր վերցնում էի գետից, որ հողամասին կպած կվազեր եւ ամեն մի փոսիկին մի կիլոյանոց թիթեյա բանկայով ջուր լեցնում էի: Այսպես բոլոր ցանքը ջրում էի, մինչեւ կանաչավ: Պատկերացրեք թե ինչ հոգնեցուցիչ աշխատանք՝ 1000 մետր տարածությունը այս ձեռով ջրելը, բայց ես երբեք չէի զգում ինձ հոգնած:

Մի հանգամանք եւս՝ անկախ ինձանից հաճախ կպատահեր, հանկարծ թուլությունն գալիս էր վրաս, ալ ինչ ընելիքս չէի իմանում, այդ դրության ժամանակ մահվան ահից ցանկանում էի մեռնել, քան թե ապրել եւ հուսահատված անձնասպանության էի դիմում, քանի որ մեր «կռուկները», որ գացեր էին այն հույսով, որ կհաջողին ձեռք բերել թույլտվություն՝ իբրեւ երաշխիք մեր ընտանիքի գոյությունը պաշտպանելու համար, ուրախ լուր կբերին: Քանի ուշանում էին, մտահոգության պատճառով իմ դրությունը օրավուր ավելի վատանում էր: Հետեւանք եղավ այն, որ ես քանի-քանի անգամ չվանը (պարանը) վիզս անցուցեր եմ, որ միանգամից վերջ տամ կյանքիս ու ազատվեմ, քան թե ամեն օր այսպես տանջվեմ: Եւ այս բանը կկատարվեր, եթե չլիներ աղջիկս (Սիրվարդը), միշտ նա էր աչքիս առաջ: Եթե ես այսպես մեռնելու ըլլամ, աղջիկը արթննալուն պես ինձ տեսնե, վախից անպայման ինքն ալ կմեռնի ու ես ոճրագործ պիտի լինեմ: Միակ բանը որ կար այս էր պատճառը եւ չէի կարող խղճիս վրա կծանրանար երեխային մահը: Իմ այս վիճակը այս դրության մեջ տատանվում էր, թեեւ չեմ հիշում քանիերորդ օրն էր, երեկ 14-15 օրը, երեկոյան հանկարծ հայտնվեցան մայր ու աղջիկ, իրենց հետ բերին 2 սայլ եւ մի պատանի, որ ընկերակցեր էր իրենց: Իմ այդ հարցման, թե ինչու այսքան ուշացաք կամ գոնե երկու տող մի բան չգրեցիք, որ մեզ այլեւայլ մտահոգությամբ տանջեցիք, պատմեցին հետեւյալը: Նախ դիմում տվեր են ռայսովետի նախագահին (Պապով) թույլտվություն ստանալու, միեւնույն ատեն աշխատանք ապահովելու համար ալ հիմնար-



կին՝ դերձակություն: Հոն աշխատող հայ դերձակ մը օգներ է իրենց եւ հաջողացուցեր ստանալ թույլտվությունը, քանի որ աշխատանքը ապահոված են: Մինչեւ որ սրանք հաջողացուցեր են եւ ահա երկու հատ սայլ բերել են, որ գույքերը բառնան ու փոխադրվեն: Ասոր վրա գիշերը մի քանի տոպրակ կարտուլ եւ անկողին եւ տնային ինչ որ կարելու էր բարձանք եւ հետեւյալ առավոտ շատ կանուխեն ճամփա ելան: Մնաք բարովից հետո Սիրանուշը, դառնալով ինձ ասաց՝ դու առայժմ հոս սպասի, երբ քեզի ալ գործ ճարենք, քեզ կգրեմ կուգաս ու գացին: Այսպիսով հուլիսի 12-ը մը ունեցա եւ նախկին քելու եւ այլ խորհրդածությունները մի քիչ փարատեցան: Ինչո՞ւ, որովհետեւ երկու տարվա մեջ նա ինձմե գաղտնի դիմում գրած էր Երեւան իր եւ աղջկան ազատության մասին եւ մերժում ստացած, բայց ես ուրիշներից իմացած էի: Նրանից հետո երբեմն կատակի ձեւով ասում էր՝ արի մի դիմում գրի, որ ես այս կինը չեմ ուզում եւ այլն: Ես ալ կպատասխանեի՝ ի՞նչ պատճառով, առանց ոեւէ հարգելի եւ օրինական պատճառի այդպիսի բան ես չեմ կարող ընել: Ուրեմն՝ առջի օրեն նա մտադիր է եղեր, ինչ միջոցով ալ լինի՝ ազատվել ինձանից, մանավանդ հիվանդությունից հետո՝ էլ ավելի: Այս մասին զինքը խրախուսողներ ալ կային, թեպետ իմ ներկայությամբ բան չէին ասում: Ես նույնիսկ կասկածում էի, որ նա անպայման իր դիմումին մեջ կարող է ոեւէ պոչ գցել, ով է իմանում, բայց ես միշտ աշխատում էի, որ ոեւէ պառակտում չլինի մինչեւ որ մի փոփոխություն ըլլա իմ ֆիզիկական կամ քաղաքական տեսակետով: Բայց ներկայիս, որ առաջին քայլը առեր էինք եւ հույս ունեինք մեր դրության բարելավման, համբերությամբ սպասում էի:

Իրենց երթալուց հետո անցեր էր ավելի քան 10 օր: Հունիս ամսու վերջին ստացա մի երկտող, որուն մեջը գրած էր. «Քեզի համար գործը պատրաստ է, բնակարանը եւս ապահով, ուրեմն առանց հապաղելու անմիջապես արի»: Ես որ գրությունը ստացա, ալ ոչ



գյուղ  
Չալեսուվո,  
Լեւոնայա  
փողոց  
1950-ականներ

մի բանի չնայելով արդեն պատրաստ էի: Իրիկունին մոտ տան բանալին տվի հարեւանիս՝ Պողոսյան Հակոբին, որ նույն տան մեջ էին բնակում, բայց մեջտեղից բաժանված: Նրան հանձնարարեցի, որ հետագայում կարտուլը ինքը հավաքի, չթողնի որ ուրիշները տեր դառնան, եթե հնարավորություն ունենանք ավտոյով կուգանք կտանենք, իսկ տան մեջ եղած մնացած բաները ես Չարեհին կըսեմ, նա կուգա, կտանի իր մոտ: Երկու հավ որ ունեինք, տվի իրենց, իսկ աքլորը հետս առի, մի քիչ ալ խաշած կարտուլ: Մութն ու լուսուն ճամփա ելա դեպի Չալեսուվո: Ժամը 9-10 հասա Գունիխա՝ Չարեհի մոտ, ըսի՝ ես գնում եմ, ինչ որ մնացեր է տանը, կբերես քովդ, ամենակարելու իմ գործիքների սնդուկը մի կերպ շուտով ինձի բեր, որ աշխատանքի սկսեմ: Նա աշխատեց, որ եթե իրենց քովեն Չալեսուվո գնացող կա, ինձ ավտոյով դրկե, բայց չհաջողվավ եւ ես ոտքով ճամփա ելա: Երեկոյան ժամը չորսն անց կես-հինգին էր հասա Չալեսուվո: Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, օրը շաբաթ էր: Ներկայացա հիմնարկ, անմիջապես փոխդիրեկտոր (-Պետրովիչ) ինձ հետ եկավ, տունը ցույց տվավ եւ շուտով մի սայլ դրկեց մի մարդով, որն անմիջապես բարձանք եւ փոխադրվեցանք Նոր տունը: Նույն օրը շաբաթ իրիկուն, կիրակի օրը հանգստացա եւ երկուշաբթի առավոտ ներկայացա գրասենյակ: Ահա այսպես 2 տարի տանջվելե հետո ազատվեցանք Կաստիլի գյուղից, կոլխոզից կամ ալ դժոխքից:

Չալեսուվոյում մնացինք 1951 հուլիս 1-ից մինչեւ 1955 մարտի 10-ը՝ 3 տարի 8 ամիս:

Չալեսուվոյում մեր աշխատելիք հիմնարկը կոչվում էր Պրոմոնայկոմ-բինատ (Շրջարդկոմբինատ), նրա դիրեկտորն էր մի մարդ Գաժանկով անունով, փոխդիրեկտորը՝ Պետրովիչ, պահեստապետը՝ Տուտինով, իսկ պլոտնիկների բրիգադի ղեկավարը Սիմյոն Պավլովիչ: Կային նաեւ 3 հատ գերմանացի վարպետներ՝ Գուստավ Գրիպու, Նաեւ եղբայրներ՝ Անդրեյ եւ Վալոդյա Կեկսիլի կոչվում էին: Ասոնք բոլորն ալ Սարատովի մարզից մեզի պես տեղափոխեր էին պատերազմի պատճառով: Ուրեմն կա եղեր նաեւ մի վարպետ՝ Նույնպես գերմանացի, որ թողեր է աշխատանքը եւ տեղափոխվեր է ուրիշ գյուղ ընտանյոք: Այսպիսով տեղ բացվեր էր պլոտնիկի համար եւ այդ մեկը ես եղա: Սիրանուշը կարի հիմնարկի հետ համաձայններ էր, որ երկու սայլ էին տրամադրեր փոխադրվելու, սակայն բնակարան չունենալուն համար հրաժարվեց եւ ինձի հետ նույն հիմնարկում ընդունվեցավ: Նախկին հիմնարկը պահանջեց, որ անպայման իրենց քով աշխատի, եթե չպիտի աշխատի, պետք է երկու սայլի համար վճարի: Սակայն այս գործում ալ Պոպովը օգնեց՝ ասելով «քանի որ բնակարանով չեք կարող ապահովել, նա իրավունք ունի մյուս հիմնարկում աշխատիլ, մանավանդ երկուսով ամուսնու հետ» եւ մերժեց սայլի համար վճարելու նրանց պահան-

ջը: Թեեւ աշխատանքի ընդունվեցի, բայց քանի որ ես ինձ հետ գործիք չէի բերած, ստիպված ամեն առավոտ գնում էի հիմնարկ, նույնպես ալ Սիրանուշը, օրը անցնում էինք:

Ինձ համար գործը պատրաստ էր, սպասում էի, որ Չարեհը գործիքները բերեր: Վերջապես եկավ եւ 9 հուլիս 1951 սկսա աշխատանքի: Առաջին գործը աթոռ էր, ճկած աթոռի ձեւով, բայց ոչ թե կլոր, այլ քառակուսի ձեւով: Երբ դիրեկտորը եկավ, իրեն հետ ալ երկու հոգի, որ տեսնեն, թե արդյոք այս մարդը իսկապես վարպետ է կամ ինչպես է աշխատում, առաջին հերթին նրանց ուշադրութունը գրավեցին գործիքները, որ շարած էի սեղանի վրա: Սկսան իրարու հետ ուրախ զրոյց անել, միեւնոյն ատեն մյուս վարպետներն ալ եկան ու մասնակցեցան խոսակցության, հետո ծիծաղելով ըսին՝ խարաշո (լավ), թեեւ ես ռուսերեն չէի իմանում, որ խոսակցության մասնակցեի կամ ուրիշ բան ասեի իմ մասին, ըստ երեւոյթին գոհ էին: Սակայն հոս ալ լեզվի հարցը շատ կարեւոր էր առաջին հերթին: Ինչպես ես, նույնպես ալ Սիրանուշը, ռուսերեն չէր իմանում: Իրեն իբրեւ օգնական մի աղջիկ ճարեց, որ մի քիչ ռուսերեն հասկանում էր, կերելի Երեւանում սովորեր է, քիչ մըն ալ կարել գիտեր: Անունը Վիոլետ, ծնողը ուրֆացի են եղեր, եւ այսպիսով ամեն օր գնում գալիս էին, հաճախորդի սպասում էին:

Սրանք թողելով՝ շարունակեցնք մեր ապրուստի հարցը, քանի որ ես գյուղից բան չէի բերած, թեեւ կարտոլից բացի ուրիշ պաշար չունեինք, դրամ ալ չունեինք: Ի՞նչ անել, մինչեւ աշխատես եւ առնելիք ունենաս, առնվազն գոնե մի ամիս ժամանակ պետք է: Թեեւ ես տեղյակ չէի, բայց Սիրանուշը առաջվանե նրա ճարը ապահովեր է եղեր, այսինքն՝ հենց որ առաջին անգամ Չալեսովո գացին մայր ու աղջիկ, այն ատեն իմ ունեցած կոստյումը միասին տարեր են, հոն ծախեր են 500 ռուբլիով: Կերելի այս փողից դեռ մնացեր է, որ ամեն օր հաց առնում էին, սակայն սա կարիքի բավարարում չի նշանակում: Ամենից առաջ վառելիք է հարկավոր: Սրա համար դիրեկտորը՝ Գաթանկով, թույլատրեց, որ ամեն երեկո աշխատանքից տուն գնալուս մի կարգինկա (գամբյուղ) փայտ տանեմ, այսինքն՝ տախտակի կտորներ, որոնք մեր օգտագործած անտառանյութի ավելցուկներն էին, մինչեւ որ ես հիմնարկի բանվորների պես անտառից փայտ բերեի: Երկրորդ՝ թեեւ ես Կաստիլիում կարտոլ ցաներ էի, սակայն նրան հանել եւ Չալեսովո փոխադրելը թե ժամանակի, թե աշխատանքի, ծախքի պետք ուներ: Հարմար դատեցինք Չալեսովոյից ճարել, առիթը ներկայացավ հետեւյալ կերպ: Մի ընտանիք փոխադրվում էր Բառնաուլ, նրանք ցանած կարտոլ ունեին, ընկերովի ներսեյան Գրիշայի<sup>44</sup> հետ գացի նայեցա եւ իրենց բաժինը՝ կեսը 500 ռուբլիով համաձայնեցանք եւ քանի որ պատրաստ փող չունեի, համաձայնեցանք հետո ուղարկելու պայմանով, միայն թե ցանքը հավաքելու աշխատանքը ինձ վրա: Այդ տարի կար-

տոլի փուլը 14 ռուբլի էր, սրանով ապահովեցինք ձմռան պաշարը: Իսկ փայտի հարցը, այս գործում ալ Չարեհը օգնեց մեզի: Խորասանջյան Կարապետի տղուն հետ անտառից կտրեր պատրաստեր էին 10 խմ երկու ավտո: Բերելու համար ինքը ժամանակ չունեի, իսկ ես չէի կարող բերել: Դրա համար համաձայնեցանք Բաբկենի հետ, որ փայտը փոխադրե կիսովի, այսինքն՝ մեկ ավտո մեզի, մյուսը իրեն: Այդպես ալ փայտը եւս ապահովված եղավ, սակայն իրեն բաժին փայտը բռներ են տանը՝ ըսելով որ արգելված տեղից կտրեր եք, պետք է տուգանք վճարեք: Ասոր համար գացինք հիմնարկ ներկայացանք, մի շարք սպառնալիքներից հետո 200 ռուբլի վճարեցի եւ այդ փորձանքից ալ ազատվեցանք:

Հիմա ալ պատմեմ Սիրանուշի աշխատանքի մասին: Ավելի քան մի շաբաթ սպասելեն հետո մի օր երկու չափահաս աղջիկներ մի կտոր բերում են, որ պալտո (վերարկու) կարել տան: Իրենց ցույց են տալիս կատալոգը, համաձայնում են մի ձեւի վրա՝ իհարկե պետական գինով: Քանի օր տեսեց չգիտեմ, երբ վերջացուցեր են, որ հանձնեն, աղջիկները սկսեր են առարկել, թե մենք այսպես չէինք ուզում եւ այլն: Հապա ի՞նչ էիք ուզում: Կտորին գինը տվեք, մենք այս պալտոն չենք վերցնի: Բավական վիճելեն հետո, որուն միջամտեր է դիրեկտորի տեղակալը, սակայն ապարդյուն: Չէ ու չէ փողը կուզենք: Սիրանուշը հիմնարկում առնելիք չունեի, այս նրա առաջին գործն էր, որտեղից վճարել: Մեկ ալ մեկը եկավ ասաց՝ դիրեկտորը քեզ է կանչում: Գացի իմացա, թե բանը ինչումն է: Մարդը ինձի ըսավ՝ համաձայն ես քո աշխատավարձից վճարենք ու վերջացնենք այս գործը, ըսի՝ համաձայն եմ: Այսպես վերջացավ վեճը, պալտոն մնաց իրեն, մինչեւ վերջ ալ հագնում էր: Այս եղավ առաջինը եւ վերջինը, կարգին գործ չունեցավ: Ինքը խամ էր, հիմնարկում չէր աշխատած, որ իմանար, սակայն ծանոթ թե անծանոթ իրեն խրատեր են, թե հիմնարկի հաշվին աշխատելով բան դուրս չի գա, այլ գործը իրիկվան կտանիս տուն, կկարես, որ օգտվիս: Այդպես ալ ըրավ: Հագիվ մի ամիս իբրեւ թե աշխատեց, չգիտեմ մի բան ստացավ թե ոչ, միայն տեսա որ 25 ռուբլիանոց արվագալի տոմս տված էին: Ահա այսպես դուրս եկավ հիմնարկից, այլեւս ոչ մի հիմնարկ: Եթե երբեմն կպատահեր ուրիշ գործ այս անգամ ալ ուրիշ դժվարություն մեջտեղ ելավ, այսինքն մեքենա չունեի, ուստի հարեւանից՝ ռուս կնկանից, վերցնում էր եւ իհարկե նրան ալ բաժին կուտար: Ինչպես արդեն նշել եմ, մեր ապրելակերպը կարելի էր բարելավ վիճակ համարել գեղի կյանքի բաղդատմամբ: Ուրեմն աշխատող ձեռքը միայն ես էի: Թեեւ օրավուր աշխատանքս բարելավելու ջանք չէի խնայում, սակայն տանջվում էի, որովհետեւ ֆիզիկապես թույլ էի: Աշխատանքի ծանրությունը միշտ էլ ավելի աջ ձեռքն է, որ կկատարե, իսկ իմ աջ կողմն չէ՞ որ թուլացած էր այնպես, որ սողոց երբ ուզում էի վերցնել, առանց ձախ ձեռքի

օժանդակության չէի կարող բարձրացնել: Բայց եւ այնպէս միշտ ալ պլանը կատարում էի, երբ ժողով էր լինում գովասանքով խոսում էին եւ պատվո տախտակի վրա ալ անունս գրում էին: Սրա պատճառը այն է, որ երբ աշխատանքի ժամը վերջանար, բոլորը գնում էին, իսկ ես մինչեւ ուշ ատեն աշխատում էի եւ բանալին հանձնում էի գիշերապահին: Այսպէս գրեթէ բոլորին կողմէ ալ գնահատված էի:

Երկրորդ շնորհակալ գործը՝ Նույնպէս կենսականը, որի համար ալ Չարեհը Նորից մեզ օգնության հասավ, այսինքն հունձքը վերջացնելէն հետո իրեն ստացած հացահատիկից մեզի բերավ ցորեն: Ճիշտ չեմ հիշում, թե որքան էր, 150 կիլո էր՝ ավելի թե պակաս, բայց մեզի համար շատ մեծ օգնություն էր քանի որ տեսաք, թե իմ աշխատանքից ստացած փողը տարբեր բաների համար ծախսեցինք, որոնք հաշիվի մեջ չկային:

Ինչ որ է, արդեն ծմբոյ մոտ էր, այսինքն Նոյեմբերին այլեւս ոչ մի դրսի գործ կատարել անկարելի է: Ամսուր 7-ին, ինչպէս գիտեք հաղթանակի տոն է: Պրագնիկին (տոն) ձյունը՝ առնվազն մեկ մետր կամ մի քիչ պակաս, ամբողջ սար ու ձոր սպիտակ սավանով զոգվեցավ: Ուստի եղանակի փոխվելու հետ աշխատանքի եղանակն ալ փոխվեց, այսինքն ծմբանը այստեղ պլոտնիկները պատրաստում էին դահուկ եւ սանկա, որը պետք է ասել, որ ծմբանը ոեւէ տեղ ճամփորդության համար շատ լավ միջոց է՝ մանավանդ հարմար եւ հանգստավետ: Ինձ համար Նորություն էր դահուկ շինելը, Նույնիսկ գործնականորեն տեսած չէի, մանավանդ դահուկ պատրաստելու համար մասնավոր գործիք չունեի, սակայն շուտով շինեցի: Երկաթեղենը շինելու համար ունեի պողպատի կտորներ, իսկ փայտեղեն մասը արդեն ունեինք՝ բերյոզայի չորացրած ձողեր, տախտակ եւ այլն, որ մեր բոլոր շինած աթոռ-սեղան եւ այլն նրանով պատրաստում էինք: Երկու օրվան մեջ պատրաստեցի: Ես գործիք շատ ունեի, վարպետները միշտ ալ ինձնից վերցնում աշխատում էին, սակայն ես ուզում էի, որ նրանք տեսնեն եւ համոզվեն, որ ես իսկապէս վարպետ եմ: Այն օրից սկսած՝ անունս կանչում էին վարպետ: Ես ալ սկսա դահուկ պատրաստել, թեեւ քանակով չէի կարող նրանց պես շատ շինել, սակայն որակով իրենցմէ ետ չէի մնում, պլանը կատարում էի:

Սակայն պետք է նշեմ մի պարագա, որը զանց առնել չի կարելի: Երբ դահուկի սեզոնը վերջացավ, գործերը թեթեւացան, մի անգամ ինձ իբր աշխատանք տվին 20 հատ տաբուրետկա, ուրիշ բան չտվին, իսկ մյուս գերմանացի վարպետներին տվին շիֆաներկա (զգեստապահարան), գրասեղան եւ այլն: Չեմ հիշում, այս որ տեսա նեղացած գացի գրասենյակ, բարկացած ձեւով ըսի. «Էտո շտո բուդիտ ու Նաս, ադին չալավեկ կուշիտ մյաս-մյոդ, դրուզոյ սենա-

սալումա» (Այս ի՞նչ է կատարվում մեզ մոտ. մի մարդ միս ու մեղր է ուտում, ուրիշը՝ խոտ ու ծղո՞տ). սկսան ծիծաղիլ վրաս: Ճիշտ այն ատեն մեր գրասենյակում էր գտնվում մի հայ՝ Ջահիոյան Իվան, նա կաթի գործարանում հաշվապահ էր կարծես: Ինձ դառնալով հարցուց, թե ինչ եմ ուզում: Ես նրան բացատրեցի այն ջոկողությունը (խտրություն), որ ինձ լավ աշխատանք չեն տալիս, որ աշխատիմ ապրենք, քիչ առաջ ինձի քսան հատ տաբուրետկայի գործ տվեցին, իսկ մյուս վարպետներին՝ հանդերձապահարան, գրասեղան եւ այլն: Նրա համար բողոքում եմ, որ ատ ինչպե՞ս կըլլա, որ Նույն տեղ Նույն գործը աշխատողներից մեկը ուտի մեղր եւ միս, իսկ մյուսը՝ խոտ ու դարման ուտի: 20 տաբուրետկա շինելով ստացած փողով ի՞նչ կարելի է ուտել: Երբ վերջացուցի, դարձավ մեր կառավարիչներին, ըսավ՝ այս մարդը բողոքում է անտարբերության եւ խտրականության դեմ, որ դուք նրան կարգին գործ չեք տալիս, որ աշխատի ու ապրի, եթե այս մարդը բողոքելու ըլլա, դուք պատասխանատու եք, այդպիսի արարք չի կարելի բանվորի դեմ: Ահա այս եղավ, որ նրանից հետո ինձ ալ բոլոր տեսակի գործ կուտային, որով մի քիչ ալ ավելի բարելավեցավ մեր վիճակը, որովհետեւ ինչպէս արդեն նշել եմ, հիվանդության պատճառով չէի կարող արագ աշխատիլ, բայց նրա փոխարեն շաբաշից հետո ալ աշխատում էի, երբ բոլոր բանվորները տուն կերթային: Ահա այսպիսով Նորից պետք եղած պլանը կատարում էի, իսկ այս բանը դիրեկտորին եւ մյուս ղեկավարներին ուշադրութենէն չէր վրիպած: Երբ ժողովի համար գրասենյակ հավաքվում էին, օրվա զեկուցողը՝ դիրեկտոր կամ տեղակալ, գովեստով խոսում էին իմ մասին՝ ցույց տալով, թե նայեցեք այս մարդուն, թեեւ հիվանդ է, սակայն շատ լավ աշխատում է, իսկ դուք ինչո՞ւ թերանում եք, եւ այն օրը պատվո տախտակին անունս գրված էր:

Միհրանի որդին՝  
Չարեհ  
Վարժապետյանը  
աբսորավայրում



Մեր աշխատանոցը բավական մեծ էր, երկու փեչ վառում էր, տաք այնպես, որ աշխատանքի ատեն ավելորդ լաթերը հանում ամառվան պես թեթև լաթերով աշխատում էինք, իսկ դուրսը 35-40 աստիճան ցուրտ էր: Բայց ես չէի զգում, առանց ուրիշ լաթ հագնելու՝ պաշտպանվելու համար, այդ դրությամբ դուրս կելլեի պետքի համար, իսկ ընկերներս ետեւես կանչում էին՝ այ մարդ, հիմա քիթդ, ականջներդ ցուրտը կտանի: Թեեւ ես չէի զգում, բայց շուտով հայտնի եղավ, այսինքն՝ ատամներս բոլորը միանգամից սաստիկ ցավելու սկսան: Երբ բժշկի գացի, ասաց, որ ատամներդ ցուրտը տարեր է, պետք է բոլորը քաշել: Չթողուցի, տանը բուրդի գլխաւոնց ունեինք, որ գինվորականները հագնում էին, Դամասկոսէն եկած ատեն լաթերու մեջ ան ալ եկեր է, ասով փրկվեցանք մեծ փորձանքե մը:

Հիմա շարունակենք մեր պատմությունը: Ձմեռը անցավ, ձյունը հավելեց, մայիս ամիսն է 1952 թվի: Այս մի ամսվան մեջ կոլխոզը բոլոր ցանքը կվերջացնի, իսկ ժողովուրդը եւ բանվոր դասակարգը նույնպես կարտուլ, կաղամբ, դդում, սոխ եւ այլն կցանեն: Մի բանվոր իրավունք ունի 1500 մետր հողամաս ցանել, ուստի իմ բնակած տան առաջ կար 1500 մետր հողամաս՝ 15 ստի: Ես պետք է ցանեի, որ հաջորդ ձմռան համար պաշար ունենամ: Երկու օր թույլտվություն ամի հիմնարկից, գացի Չարեհին մոտ Գյունիխ, անկից ալ Կաստիլի, որ տեսնանք բան մնացեր է իմ կարտուլից: Կերած էին, ինչ որ մնացեր էր, լեցուցինք բերինք Չալեսովո սերմացու, որ ցանենք: Մեր հարեւան ռուսը կոլխոզից մի գույգ ձի բերած էր իր արտը վարելու համար: Առիթից օգտվելով մերն ալ հերկել տվինք, իհարկե վճարովի՝ 15 ռուբլի փող եւ 2 բուխանկա հաց: Մեր բերած սերմացուն քիչ էր, չբավեց, գացի բազարից գնելու, սակայն հոն եղածը գրեթե նույնն էր՝ ցրտից ազդված եւ թուլացած: Վերջապես իմ կարծիքով լավագույն տեսակից գնեցի 30 կիլո, բայց սրանք ցանելու համար խոշոր էին, ուստի միայն ծլած աչքերը դանակով կտրեցինք ցանելու համար, իսկ մնացածը ճաշի օգտագործեցինք: Շատերը ըսին, որ ձեր աշխատանքը պարապ է, սրանից բան դուրս չի գար: Մեր գեղեն բերած սերմացուն ծլավ, կանաչավ, ծաղկեց, բայց այս վերջինը հագիվ մի կերպ կանաչավ: Մեր Սիրանուշը սկսավ ծաղրել, թե անա քո առած կարտուլը, տե՛ս, ինչպես փարթամ ծլեր, ծաղկեր է եւ այլն: Երբ հանելու ժամանակը եկավ, իրեն ըսի, որ կամաց կամաց հանի ու հավաքե, երբ երեկոյան աշխատանքից տուն կգամ, ես կփոխադրեմ եւ հորը կլեցնեմ: Ու այսպես մի քանի օրվա մեջ բոլորը հավաքեցինք, բայց իմ կարտուլը մնաց ամենավերջ: Ըսի՝ վաղն ալ մնացածը կհանես: Երեկոյան երբ տուն եկա, հարցուցի ի՞նչ եղավ, ասաց՝ արի տես: Պարտեզ իջա, որ տուպրակի մեջ լեցնենք ու տանիմ լեցնեմ հորը: Աչքով տեսածիս հավատալս չէր գար, ամեն մի կարտուլը մեր գիտցած սովորակա-

նի համեմատ 4-5 անգամ ավելի խոշոր էր, նույնիսկ մի քանի հատը կար, որ 25x25 մեծություով՝ թողած անցքից ներս չինկավ: Հետեւյալ առավոտ հիմնարկ տարի, ցույց տվի մեր աշխատակիցներին, զարմացան: Կարծեմ մեր բրիգադիրն էր, ըսավ՝ այս կարտուլը կոչվում է «Բեռլինյան սորտ»: Այս գործն ալ վերջացավ: Սրանից հետո ինձ մտում էր փայտի գործը, որ մի մարդու գործ չէր: Երբ հիմնարկի բանվորները խումբով պիտի երթային անտառ, ես ալ մեկին վարձեցի 15 ռուբլով, գացինք, կտրեցինք եւ հավաքեցինք իրարու վրա, ինչպես ուրիշները, թողուցինք, եկանք, որ հարմար ժամանակին հիմնարկի ավտոյով փոխադրենք տուն: Մի կիրակի օրը ավտոն տվին իսկ փայտը բառնալու համար Խորասանջյանի մեծ տղան՝ Մկրտիչը, ես ու շոֆերը գացինք, լեցուցինք, բերինք, բայց փայտի կեսը պարպեցինք պրոֆեսոր Պավել [անընթ.]-յանի տունը, որովհետեւ Սիրանուշը նրանից 100 ռուբլու փող պարտք ամեր էր 2 իմ փայտի փոխարեն: Հետո ալ գացի, ջարդեցի եւ շարեցի: Հետո մեր փայտն ալ աշխատանքից տուն գալիս թե կտրում թե ջարդում էի, առանձին այս գործն ալ վերջացուցի, ալ դրսի գործ չմնաց:

Սիրանուշը միշտ մտածում էր մի կարի մեքենա ձեռք բերել, որ գոնե քիչ թե շատ եկած գործի համար ուրիշից չխնդրի: Բախտի բերմամբ թե պատահմամբ նա արդեն ծանոթացեր էր մի քանի ընտանիքների հետ, այդ թվում Ներսեսյանի ընտանիքի հետ: Նրա կինը՝ Վայան, բժշկուհի էր, աշխատում էր Չալեսովոյի հիվանդանոցում: Կերելի նրանց հետ մի հարմար առիթով խոսեր է, որ շատ ուզում է, որ մեքենա առնե, բայց փող չունի եւ այլն: Այն ատեն Վայան ասեր է, որ մենք պիտի փոխադրվենք Բառնաուլ, ուզո՞ւմ ես մեքենան քեզի տանք: Այս խոսքից հետո գործնականին կանցնին եւ կհամաձայնին, որ եթե փողին մի մասը կարողանաս ճարել, մնացած մասը կթողունք քեզ ապառիկ, գիտենք, որ վստահելի եք եւ այլն: Ճիշտ օրը չեմ հիշում, երբ աշխատանքից տուն եկա, պատմեց եղելությունը, ըսի՝ լավ, դուն փողը ճարե, ես երաշխավորում եմ վճարել: Այս խոսքի վրա 200 ռուբլի (հին փողով) վերցրինք Հարություն Գույումջյանից<sup>45</sup>, Անտոն կոչում էին, 100 ալ պրոֆեսորի ընտանիքից: 300 ռուբլի տվինք, իսկ մնացածի համար Ներսեսյանի մի պլաշը (թիկնոց, անջրանցիկ վերարկու) վերանորոգեց՝ 100 ռուբլի, այսպիսով 400 վճարեցինք: Մնաց 100 ռուբլի ապառիկ վճարելիք եւ մեքենան առինք եւ բերինք տուն: Երբ աշխատավարձ ստացա, առաջին հերթին վճարեցի Անտոնին, ինչպես տեսաք պրոֆեսորին փայտով, մնացածն ալ հետո դրկեցինք Բառնաուլ, քանի որ փոխադրված էին: Արդեն մեր գնած կարտուլի փողը 500 դրկած էինք, հիմա այլեւ ոչ մի պարտք չունեինք, կարելի էր ապրել, եթե գոհանայինք եղածով:

Թվականների մասին կարող է ամիսների անճշտություններ կան,

բայց դեպքերը եւ եղելությունները բոլորը ճշմարիտ իրականություններ են: Ան ալ ըսեմ, որ այս օրերս այնքան ալ նախանձելի չէ հիշողությունս, առողջությունս նույնպես, մանավանդ որ գրում եմ անցյալի դժվարությունների եւ թշվառության մասին: Ազդվում եմ, կարծես հիմա ալ զգում եմ այդ սեւ օրերը, որ ապրեցինք, որովհետեւ ոչ մի հույս չունեինք մեր ազատության համար: Իմ բոլոր ցանկությունս այն էր, որ չմեռնեի: Գիշեր-ցորեկ Աստուծոյ այս կիսնդրեի եւ կարծես անտեսանելի մի զորություն ինձ սպասել եւ հուսալ կստիպեր այդ ցանկալի օրվան: Ապացույցը դրա, թեեւ քիչ թե շատ, ծմռան պաշարը ապահոված էինք՝ ըստ մեր հնարավորության:

Մի օր աշխատանքի ժամին գերմանացի վարպետները ձեռքերնին մի թերթ բռնած հետաքրքրությամբ նայում, խոսում էին: Մոտեցա եւ հարցուցի, թե ինչ կա, ըսին՝ արվագացիայի աղյուսակ է: Ըսի՝ ես ունեմ նրանից: Ըսին՝ քո՞վդ է: Ըսի՝ ոչ տանն է: Կեսօրին ճաշին կբերես, կնայինք, կարող է մի բան շահած կըլլաս: Կեսօրին գացի, բերի, նայեցանք: Երկու համար շահեր էր՝ մեկը 500 էր, նրա կեսը ինձի կհասներ, իմ տոմսը 50 ռուբլիանոց էր, իսկ 2-րդը նույնպես 500 էր, բայց իմ տոմսը 25 ռուբլիանոց էր: Ուրեմն պետք է ստանայի 4-րդ մասը: Ուրեմն առաջինից 250, 125 ալ երկրորդից, 375 ռուբլի ստացանք: Ինձի հետ եկավ Անդրե Կեկսիլին, քանի որ ես ռուսերեն չէի իմանում: Երբ վերադառնում էինք կես լիտր օղի առինք, բերինք աշխատանոց, երեկոյան երբ աշխատանքը թողուցինք, մեկ-մեկ բաժակ խմեցինք: Իրենք ալ ունեին նույն արվագացիի տոմսեր, բայց ոչ մի բան չէին շահել: Ասիկա 2-րդն էր, առաջինը Կաստիլիում էր: Ուրեմն այդ անտեսանելի ու անհասանելի գոյության (Աստծո), բացի նրանից ով էր մեզ հասնողը: Դեռ այս բոլորը չէ, հետագայում նորից կդառնամ այս խնդրին եւ կտեսնեք, որ ճշմարտություն է:

Ահա այսպես այս փոքրիկ հաջողություններից ես թե ուրախանում էի եւ թե կորով ու եռանդ ստանում եւ ավելի համոզմունք կգգայի, որ Աստված մեզ իր հզոր բազուկով պաշտպանում է եւ կազատի այս դժոխային վայրից ու վիճակից:

Սիրանուշն ալ ուրախանում էր, որ վերջապես հասավ իր փափագին եւ ունեցավ սեփական մեքենա, ինձ այդպես թվում էր: Երբ գործ ունենար, ալ ուրիշին կարիք չկար խնդրելու, իսկ լեզվի համար ալ պետք չունեի թարգմանի, քանի որ աղջիկը՝ Մարին, արդեն լավ ռուսերեն կխոսեր եւ դարձում ալ կարծեմ հարվածային էր:

Ձմեռն անցավ, գարունը բացվեց, 1953-ի մարտ ամիսն էր: Անսպասելիորեն մի գույժ տարածվեց, որ Ստալինը մահացեր է: Ժողովրդի մեջ տարբեր կարծիքներ կային՝ թեր ու դեմ, սակայն շուտով ամեն ինչ պարզվեցավ: Հետեւանքը այն եղավ, որ կենտրոնեն՝ Բառնաուլեն, մեկը եկած էր բոլոր աքսորյալներս՝ հայերը եւ

գերմանացիները, որոնք ալ տեղափոխված էին Սարատովի մարզից, հավաքեցին Չալեսովոյի կիևոյի սրահը եւ այդ մարդը ելույթ ունեցավ եւ իմիջիայլոց ասաց, թե կառավարությունը ձեզ թույլատրում է, որ այսօրվանից ով ուզում է ընտանիքով տեղափոխվի ուրիշ տեղ, բացի Երեւանից: Կարող եք ապրել ու աշխատել, այս շնորհքը պետությունը տալիս է ձեզ նրա համար, որ այս չորս տարիներու ընթացքին հավատարմորեն աշխատեք եւ առանց ունե դեպքի: Իսկ անչափահասներից, որոնք 16 տարեկանից ոչ ավելի են, սովորելու համար կարելի է Երեւան ալ երթալ: Այս թույլտվությունն օգտվողները ավելի տեղացիները եղան: Մի քանի ընտանիք, որ ուզում էին փոխադրվեն ուրիշ տեղ, բայց չէին թողում, հիմա արդեն առիթը ներկայացրեք էր: Նրանք ռուսերեն գիտեին, ինչ տարբերություն՝ ուր որ երթան ոչ մի դժվարության չեն հանդիպի, կապրին ավելի լավ պայմաններում, իսկ մենք հազիվ մի կերպ ապրում ենք, ոչ փող ունինք տեղափոխվելու, ոչ լեզու իմանում ենք, որ գործ ճարենք, մանավանդ բնակարան:

Այսքան դժվարությունները աչքի առջև ունենալով՝ անխոհեմ քայլի դիմելը ուղղակի հիմարություն էր, նրա համար էլ ես սովորականի պես մայիսին սկսա հողամասը փորել կարտով ցանելու համար: 1500 մետր, ամեն առավոտ կփորեի 100 մետր, աշխատանքից հետո՝ երեկոյան՝ նույնպես: Մի շաբթվան մեջ փորեք եմ առանց գործից ետ մնալու: Ցանեցի, քանի որ այս անգամ մենք սերմացու ունեինք: Նույնպես ալ փայտը, երբ հիմնարկի բանվորները գացին փայտ կտրելու՝ թե հիմնարկի եւ թե ալ իրենց համար, ես ալ մի բանվոր վարձեցի, կտրեցինք մի օրում 10 իմ փայտ: Հետո ալ տուն փոխադրեցի, ամեն օր մաս-մաս կտրեցի, ջարդեցի, շարեցի տան կողքը, որ ձմռանը ներս բերելը դյուրին ըլլա: Փայտը որ կտրում ենք, իմ կարծեք 8 ռուբլի, իսկ փոխադրության արժեքը չեմ հիշում՝ քանիս էր, հաշվապահը պահում էր իմ աշխատավարձից: Ահա այսպես իմ կարողությանս եւ հնարավոր միջոցներով գիշեր-ցորեկ աշխատում էի, միակ նպատակս էր համբերությամբ տոկալ բոլոր դժվարությունները, մինչեւ որ տեսնեք մեր հույսի իրականացումը, այսինքն ազատություն աքսորավայրից:

Վահան  
Հովիվեան



# ԴԵՐ ԶՕՐԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԻՔԻՐ

Ձմեռը վրայ հասաւ: Մենք ոչ մէկ պատրաստութիւն չունէինք հագուստի տեսակետով՝ սիբիրեան սաստիկ ձմեռը դիմագրաւելու համար: Ռուսերը մեր վրայ ծիծաղում էին ու գլուխնին ճոճելով ասում էին՝ դուք բոլորդ կը կոտորուիք այս ձմեռ:

Մենք վագոններու մէջ էինք, իսկ դուրսը քարտեալներու բեռնաւորումը շարունակւում էր: Հագարաւոր կառքեր անընդհատ բերում էին նոր ու նոր քարտեալներ՝ Հայաստանի զանազան շրջաններից: Մի շոգեքարշ, որ լրանում էր, նրան յաջորդում էր մի ուրիշ շոգեքարշ, այնպէս որ՝ քարտեալներու բեռնաւորումը տեւեց մինչեւ 13 յունիսի ժամը մէկը:

Մենք, որ կէսօրուանից արդէն տեղաւորուել էինք մեր վագոններու մէջ, չէինք իմանում, թէ ինչեր էին կատարուում դուրսը, բայց մինչեւ կեսգիշեր մեզ լսելի էր լինում կիներու եւ երախաներու աղիողորմ ճիչերն ու ցասումի պոռչտանքները: Առաւօտուայ ժամը վեցին շարժուեց մեր գնացքը, բայց ի՞նչ ուղղութիւն առաւ, մենք անմիջապէս չիմացանք:

Մեր վագոնի մէջ 27 հոգի էինք մենք, որ հետզհետէ միմեանց ծանօթացանք: Փարթամեան Կարապետի<sup>46</sup> ընտանիքը՝ 8 հոգուց բաղկացած, Հալեպից ներգաղթած, անգրագետ, որ Հալեպի մէջ Ազգային Դպրոցի հոգաբարձու է եղեր, եղբայրը Հապէթ Նոյնպէս հոգաբարձու է եղեր: Յունաստանից մի ընտանիք բարեպաշտ մի մարդ<sup>47</sup>, կինը եւ 17-ամեա մի աղջիկ՝ կիսագրագետ, եւ տիրացու, որ ժամերգութիւն կընէր եկեղեցիի մէջ: Երեւանի շրջանի Սուհուպ գիւղից մի ընտանիք՝ Լեւոն Խաղիսեան<sup>48</sup>՝ Նախկին կոլխոզի Նախագահ, որ ռազմագերի է եղեր, կինը եւ 14-ամեայ իր տղան: Կիսագրագետ մի հատ Նախկին չեկիստ՝ Վահան<sup>49</sup>, որուն ազգանունը չեմ յիշեր եւ կինը: Երկու անչափահաս երախաներն այդ գիշեր Լեւիսական մեծ մոր տանն են եղեր եւ մնացեր են այնտեղ: Մի տարեց դասախօս Գրիգոր Մակարովիչ Ներսեսեան՝ ճեմարանի Նախկին ուսանող եւ Երեւանի համալսարանի դասախօս՝ առանց ընտանիքի: Եւ երեք հատ երիտասարդ ուսանողներ՝ Ռուբեն, Չաթթոն<sup>50</sup>՝ այս վերջինը քիւրդ ուսանող, եւ մի երիտասարդ ուսանողուհի<sup>51</sup>՝ մօտաւորապէս 20 տարեկան, որոնք երեքն ալ համալսարանի հանրակացարանից էին բերել, միացրել քարտեալների կառախումբին:

Այս երկու երիտասարդ ուսանողները մեզ շատ օգտակար եղան մեր երկար ճամփորդութեան ընթացքին, քանզի ամէն կայան, որ շոգեքարշը կանգ էր առնում, խիզախաբար, բոլոր հնարաւոր միջոցներ օգտագործելով. մեզ մատակարարում էին ջուրով եւ սննդամթերքով: Նամանաւանդ Չաթթոն՝ համալսարանի երկրորդ կարգի ուսանող, որ քաջ ծանօթ էր հայերէն լեզուին եւ ընկերային գիտութեան իսկ: Նարգիզը՝ այդ տարաբախտ հայուհին, կնմանէր այն սպիտակամորթ գառնուկին՝ անջատուած իր մօրմէն եւ հօրէն, երկիւղալից՝ հաւանական շատերու անպատուութեան ամօթից, մի անկիւն կծկուած շարունակ լաց էր լինում: Կիսս տեսնելով խեղճ աղջկան յուսահատ վիճակը՝ իր պաշտպանութեան տակ առաւ

Նարգիզին, որուն վիճակը անասելի յուսահատական էր: Նա մեզ լալահառաչ պատմում էր իր հոր ու մոր, իր նշանածին մասին, թե ուր մնացին, ուր կորան, հաւանաբար նրանք եւս աքսորուած կը լինէին, բայց ինչ ուղղութեամբ, ուր գտնել նրանց եւ ինչ միջոցներով: Մենք միտքարեցինք նրան այնչափ, ինչքան կրնայինք, թէեւ մենք ալ միտքարուելու կարիք ունէինք, բայց մի առաւելութիւն, որ ունէինք, բոլորս ընտանիքով էինք:

Խեղճ աղջիկը այնքան յուսահատ վիճակի մէջ էր, որ ես կարգադրեցի վագոնի դռան մօտ չի թողնել նրան հակառակ իր աղաչանքներուն, քանզի ես զգում էի, որ նա անպատճառ ինքզինք վագոնի սրընթացք անկներու տակ կնետի: Նա զգալով իմ մտածումները՝ ինձ պաղատագին հարց տուեց. «Հօրեղբայր Վահան, դու ուզում ես, որ ես ապրի՞մ, բայց ինչի՞ համար, տառապելո՞ւ համար, դա լաւութիւն չի ինձ, որ անում ես»: Եւ կինս առակներ էր ասում, թէ արեւը չի ծագած ինչե՛ր կծագին եւ մի կերպ միտքարում էինք յուսահատ հայուհին, եւ երբեմն կիսահամոզուած արցունքներու մէջէն լալախառն ծիծաղով ասում էր. «Իրա՞ւ կտեսնեմ իմ նշանածին, իմ հօրը, մօրը, իմ փոքրիկ քոյրիկին, կգրկե՞մ նրանց դարձեալ իմ կուրծքին»:

Մեր վագոններու դռները փակ էին մեր ճամբորդութեան առաջին չորս օրերը: Մեր աջ կողմ, ուր թրջական ու պարսկական սահմաններն էինք եզրում, նոյնիսկ վագոններու տախտակներու ճեղքերը սեւ ձիւթով պատեր էին, որպէսզի չի դիտենք ու գոռանք ի տես թուրք կամ պարսիկ սահմանապահներին, քանի որ Երեւան-Բաքու գիծը թրջական ու պարսկական սահմաններն էին եզրում մինչեւ համարեա Հալալի (Ատրպէյճան): Միայն մեր ձախ կողմի վերեւի լուսամուտը, որ բաց էր օդանցքի համար, դէպի երկիրի ներքին կողմն էր նայում: Մենք ազատ էինք դուրսը դիտել, բայց գլուխնս ցցելու իրաւունք չունէինք, քանզի վագոնի երկու ծայրամասերը զինեալ պահակներ ունէինք, որոնց իրաւունք տրուած էր չանսացողներու նոյնիսկ կրակել:

Մինչ մեր գնացքը սլանում էր, մենք վագոնի մէջ անյարմար դրութեան մէջ էինք: Մեր բնական պետքը հոգալու ոչ միայն յարմարութիւն, այլեւ միջոցներ իսկ չունէինք: Թուղթերու մէջ էինք անում եւ լուսամուտից դուրս գցում՝ թունաւորելով վագոնի միջի մեր շնչելիք նվազագոյն օդը: Մենք անցանք Արտաշատ, Շիրազլու, Ավշար, Արարատ, Արմաշ կայարանները: Ոչ մէկ տեղ մեր գնացքը կանգ չառեց: Մենք կանգ առինք միայն երբ հասանք Նորաշեն<sup>52</sup> (Ատրպէյճան), ուր մեր վագոնի դռները բաց արին մեր բնական պետքերը հոգալու համար, բայց մեզ հրամայեցին գծից 10 մեթր չհեռանալ: Այդ հրամանը գործադրելու համար գնդացիներով զինուած զօրքեր դիրք էին բռնած մեր դէմ: Կիներ, երախաներ, հարսներ ու

աղջիկներ հարկադրուած ու մոռացած տարրական ամօթն ու խիպը վեր էին առնում իրենց փեշերը ու իրանց պետքն էին անում՝ առանց նկատի առնելու ոչ մեզ եւ ոչ ալ ատրպէյճանցի թուրքերը, որոնք կայարանի աշխատողներ էին եւ որոնք անկուշտ տենչանքով ու ծիծաղով դիտում էին իրանց ամօթից գալարող կիսամերկ հայուհիներին, որոնք հարկադրուած էին տեսանելի անել իրանց բաց հետոյքները եւ մեր հայ պահակները մտրակները ձեռքերին շտապեցնում էին նրանց, որ շուտ վագոնը բարձրանան: Ես այնտեղ նկատեցի, որ իւրաքանչիւր վագոնի ծայրամասերում ռուս պահակները հեռախօսի ցանցով կապուած են եղեր մեր կառախումբի հայ պետերուն, որոնց յանձնախումբի կազմը կը գտնուի առջեւի առաջին վագոնի մէջ: Շատ պարզ կարելի էր տեսնել Էլեկտրական հեռախօսի թելերը, որ իւրաքանչիւր վագոնի տանիքից երկարում էր՝ բոլորը մի ուղղութեամբ դէպի առաջին վագոնը:

Մեր երկրորդ կայանը եղաւ Նախիջեւան քաղաքը, որ դարձեալ վագոնի դռները բաց արեցին Ատրպէյճանի թուրքերուն հանդիսատես անելու համար նոյն խայտառակ ու ամօթալի տեսարանին: Մենք անցնելով Ջուլֆա, Օրդուբադ, մտանք դարձեալ հայկական հողը՝ Մեղրի, ուրկէ Շվանիձոր կայարանից անդին դարձեալ Ատրպէյճան, ուրկէ ուղղուեցինք Բաքու:

Մինչ Բաքու մեզ ոչինչով չի մատակարարեցին: Մենք մեր ունեցածներով կամ չունեցածներով բաւարարուեցանք: Ես երկու հատ հաց ունեի իմ հետ՝ Երեւանից վերցրած: Մի մասը Լեւոնին (կոլխոզի նախագահին) տուի, որ ինձ հաւատացուց, որ ոչինչ չունէր ուտելու եւ մի մասն ալ մենք կերանք: Մեր պաշտպանեալ Նարգիզը միշտ մերժում էր բան ուտել, թէրեւս երկու օրէ անելի ոչինչ չէր կերեր: Երրորդ օրը միայն Բաքուում յայտարարեցին, որ գնանք մեզ յատկացուած աքսորեալի պարենները ստանանք: Ուրեմն երրորդ օրէն սկսեալ մենք ստացանք 500 գրամ հաց եւ աղի ծուկ եւ այլ անպիտան սննդամթերքներ մինչեւ մեր ճանապարհի վախճանը:

Մեր գնացքը կեզրեր Կասպից ծովու արեւելեան ափով դէպի Ստալինգրադ: Վեցերորդ օրը հասանք Մախաչկալա՝ Դաղստանի մայրաքաղաքը՝ Կասպից ծովու եզերքին, բայց մենք ոչինչ չէինք տեսնում, քանզի հսկողութեան տակ էինք եւ ծովն ալ չէինք տեսնում, որովհետեւ մեր աջ կողմը փակ էր: Միայն վագոնի ուշադրութիւնէ վրիպած մանր ճեղքերից նշմարում էինք ծովը: Դաղստան հասնելէ վերջ հսկողութիւնը թուլացրին եւ ամէն մի կանգառում մեզ իջեցնում էին կայարանի պիւթներից (կրպակ) ուտեստեղէնի գնումներ կատարելու: Վաճառողներուն խստիւ արգիլուած էր մեզ ոգելից ըմպելի վաճառել: Մեր վագոնները թէեւ փակում էին գնացքի ընթացքին, բայց Չաթթոն՝ մեր երիտասարդ քիւրդ ուսանողը, բաց էր անում եւ մենք շնչում էինք Դաղստանի մաքուր օդը, իսկ մեր

բնական պետքի յարմարութիւնները մնացին նոյնը մինչեւ մեր ճամփորդութեան վախճանը:

Հետագայ օրերուն, մենք արդէն նոյնացած մեր դժբախտութեան հետ եւ մասամբ հաշտուած մեր վիճակին հետ՝ մեր ողբերգութիւնը վերածուեր էր եղերական կատակերգութեան: Ամէն անգամ, որ վագոնները յանկարծակի դանդաղացումով բախում էին միմեանց, թախտի վրայ եղող վերելի ժողովուրդը վարը եղողների վրայ էին թափուում: Բարեբախտաբար բոլոր մեր տեղաշորերը վարն էին եւ ընկնողը չէր վնասուում եւ ամէն ինչ ծիծաղով էր վերջանում:

Եւ ահա հասանք 8-րդ օրը Աստրախան՝ Ղազախներու երկիրը՝ 200 հազար բնակչութեամբ, ուր Վոլգան կմիանայ Կասպից ծովուն՝ մուշտակներու հայրենիքը: Մենք անունը միայն լսեցինք եւ կայարանը միայն տեսանք: Վահան Խաչատուրեանը՝ նախկին չեկիստ, որ լաւ ռուսերէն գիտէր եւ հանած-վարածին մէկն էր, մեզ պատմում էր, թէ ինքն անձամբ քանի-քանի քարտեալ կարաւաններու է ընկերացեր այս ճանապարհներով եւ մեզ ասում էր, որ երբ Ստալինգրադ հասնինք, նա մեզ որոշակի կասի, թէ Սիբիրի ո՞ր կողմն ենք մենք գնալու: Նրա միակ մեղքն է եղեր իր պատերազմական գերութիւնը, որ մեզ հետ քարտուել է: Շարունակ հայիոյում էր Սովետական Միութեան հասցէին:

Լեւոն Խաղիսեանը՝ մեր կոլխոզի նախկին կիսագրագետ նախագահը գլուխը օրորելով ասում էր՝ ա՛յ մարդ, մի ժամանակ չեկաները, երբ մեր Միուբն էին գալիս՝ մարդ քարտելու, ինձ էին դիմում, թէ որոնք են գիւղի հակայեղափոխականները, իսկ հիմա ժամանակները փոխուեր են, ես ալ եմ եղեր քարտական: Նա ինձ պատմում էր, որ ինք հակայեղափոխական ոչ մի քայլ չի արեր, բայց միայն ռազմագերի է եղեր Ֆրանսայում: Ես կատակաբար իրեն ասի, թէ հապա դու չէի՞ր որ Բեռլինում Դրոյի բանակին մաս կազմեցիր եւ հայկական ազատագրական խումբի մէջ մտար ու քու թելին եռագոյնը կապած՝ Բեռլինի փողոցներում, «Դաշնակցական խումբ գնանք մեր Սասուն» երգելով, ման էիր գալիս, ապուշացած երեսս նայելով՝ ինձ ասաց. «Դուն ու՞րկէ գիտես այդ բոլորը»: Ես իրեն պատմեցի այն, ինչ հաւանաբար տեղի ունեցած կլինէր եւ նաեւ պատմեցի ինչ որ տեղի ունեցեր էր 1937 թուականներուն առհասարակ բովանդակ Հայաստանում՝ ենթադրաբար յիշել տալով իրայ ունեցած տխուր դերը՝ որպէս կոլխոզի նախագահ: «Ա՛յ մարդ, դու ամբողջ իմ պատմութիւնը գիտենում ես, ոնց որ սաղ կեանքդ իմ հետ ապրած լինես: Դու էնեց բաներ ես պատմում, որ իմ կողակից կինս իսկ չի գիտի»: ըսաւ Լեւոնը: Այդ վայրկեանին վագոնները զօրաւոր բախեցին միմեանց եւ մածուկի ամանը, որ վերեւում պահած էր եղեր՝ մեզ ալ հաւատացնելով, որ ոչինչ չունի ուտելիք երեւանէն բերած, որ մենք ալ խղճահարուելով իրեն ա-

ռաջին երեք օրերը հաց էինք տալիս, գլխուն վրայ թափուեց, եւ մեր կոլխոզի նախկին նախագահը գլխից մինչեւ ոտքերը մածուկի լուգանք առաւ: Կինը՝ Լեւան, այս տեսնելով, ոտքի ելաւ եւ անմիջապէս մի լաթի կտորով ուզեց մաքրիլ ամուսնուն: «Աղջի, ի՞նչ ես անում, տխմա՛ր, խի ես փչացնում մածուկը, էն է մի շերտի առ ու հաւաքի, պուտուկի մէջ դիր, որ ուտենք»: ըսաւ Լեւոնը: Ո՛ւ՛՛՛՛՛, հողեմ քո գլուխը, իր վիճակին չի նայում, մածուկին է ափսոսում՝ ըսելով, Լեւան ամուսինին վրայի թթուած մածուկը մաքրիլ սկսաւ՝ ընդհանուրի ծիծաղի տակ: Հապա Լեւոնին հարցրին ոմանք՝ ասում էիր, որ ոչինչ չունիս ուտելիք, ուսկի՞ց ընկաւ այդ մածուկի պտուկը գլխիդ: Ա՛յ մարդ, պահել էի՝ մի գուցէ ասկից աւելի նեղ օրերու կընկնինք, ո՞վ է իմանում:



Ռընե, Ալիս եւ  
Էդմոնդ  
Յովիվյանները  
(ձախից աջ)  
աքսորավայրում



Կարապետ աղայ, քեզ ինչո՞ւ են աքսորել՝ հարց տուինք մեր Հալեպէն ներգաղթած հայրենակիցին: Չի գիտեմ՝ պատասխանեց այս վերջինը, միայն մի բանի եմ կասկածում, որ երբ ուզեցի Հայաստան գալ, ներգաղթի յանձնախումբը ինձ ասաց, որ Հայաստան գնալու համար դու պետք է դաշնակցութիւնից հրաժարիս, իսկ ես ըսի, որ դաշնակ-ինչակի խելքս չի հասնիր, եւ երբեք դաշնակ չեմ եղած: Հապա դաշնակ դպրոցի հոգաբարձու ես՝ ըսին ինձ: Ես այդ դպրոցի դաշնակ ըլլալը ձեզմէ եմ իմանում՝ ըսի: Այո, այո՝ ըսին, դա դաշնակի դպրոց է, դու քո հրաժարականը տուր, մենք քեզ Հայաստան կորկենք: Ես ալ ըսի՝ ինչ կուզէք, ըրէք, միայն թէ ես եւ երախաներս Հայաստան գնանք: Երկու օր վերջ ինձ մի թերթ բերին, որուն մէջ այսպէս գրուած էր. «Ես՝ այսինչեանս, նկատելով, որ դաշնակցութիւնը էլ անելիք չունի, կը հրաժարիմ դաշնակցութենէն ու Հայաստան կերթամ»: Իմ հարեանը, որ դաշնակցական էր եղեր եւ ես լուր չունէի, ինձ դիտել տուաւ, թէ Կարապետ աղայ, դու ե՞րբ դաշնակցական ես եղեր, որ այսօր հրաժարում ես, ես ըսի, որ ես երբեք դաշնակ չեմ եղեր, բայց Հայաստան երթալու համար այդպէս պետք է գրուի եղեր, եւ գրեր են, ի՞նչ կա որ: Ես ի՞նչ գիտէի, որ այդ իմ գլխուն մի օր փորձանք պիտի լինէր:

Մեր վագոնին մէջ կար նաեւ մի տէրտէր, որուն երրորդ աքսորն էր այս: Ամբողջ Սովետական Միութեան ժողովուրդի կեանքը եւ մասնաւորաբար սովետահայ ժողովուրդի կեանքը կատարեալ կատակերգութիւն էր եղած, բայց ողբերգական կատակերգութիւն մը: Այս կիսագրագետ տէրտէրը ոչ միայն կիսագրագետ էր, այլ նոյնիսկ բառիս բուն իմաստով ապուշ: Տէր Եղիշէ՝ այս էր իր անունը, Տէր Եղիշէ Վարդանեան<sup>53</sup>՝ ըստ իր պատմածին: 1930 թուականին Էջմիածինի շրջակայ գիւղերից մէկում, ուր ինքը ծնուեց ու մեծացեր է, իրենց գիւղի քահանայի հետ հաշտ չի եղեր իր հայրը, եւ վերջի-վերջոյ քահանայի գլուխը կերեր են եւ տեղւոյն կոմկուսի մեղսակցութեամբ քահանայ ձեռնադրուեց Է կիսագրագետ Եղիշէն: Շնորհիւ կոմկուսի պաշտպանութեան՝ նախկին թշուառ ընտանիքը մի ժամանակ բարեկեցիկ կեանք է ունեցեր, բայց իրերու կացութիւնը երկար չի տւեր: Չորս տարի վերջ զինք տէրտէր ձեռնադրող կոմկուսին յաջորդեր են ուրիշ կոմկուսներ եւ մեր հնացած քահանան դասուեց Է հաւատացեալ քահանաներու դասին եւ աքսորուել է Աստրախան: Հինգ տարի վերջ վերադարձեր Է Հայաստան եւ շարունակաբար այսպէս, այսօր մեր աքսորի կարաւանին մաս է կազմել՝ դարձեալ շարունակելու համար յաւիտենական աքսորեալ վիճակը՝ կինը եւ իր 4 երախաները եւս իրենց հերթին:

Մենք բոլորս էլ միմեանց պատմում էինք մեր պատմութիւնները եւ արդէն մտերմացեր էինք միմեանց, միայն Գրիգոր Մակարովիչ Ներսեսեանն էր, որ ոչ ոքի հետ չէր խօսում: Միայն նրա ձայնը լսում էինք, երբ մեր կառախումբը կանգ էր առնում մի կայարանում՝

Չաթթոյ, մի չայ բեր ինձ, չայ էր ուզում Ներսեսեանը: Տաք ջուրը Չաթթոն ստանում էր շոգեշարժից (լոկոմոտիվ), քանզի նոյնիսկ այդ շոգ օրերին նա սառը ջուր երբեք չէր խմում:

Մենք բոլորս ատելութեամբ էինք լեցուեր այդ մարդուն, նկատելով որ նա մեզ վրայ լրտես է դրուած վագոնի մէջ: Բաւական պատկառելի մէկն էր եւ շարունակ ընթերցումի մէջ էր կամ տխուր մտածումներով տարուած: Ես շատ էի հետաքրքրուում, թէ ինչու նա մեզ հետ չի խօսում, բայց չէի համարձակում հարցնել: Մի օր նա ինձ մօտեցաւ եւ հարցուց, թէ Ֆրանսայի ո՞ր կողմից եմ: Պատասխանեցի, թէ Լիոնից, ձայն չի հանեց: Հարցրի իրեն, թէ քու կարծիքով քեզ ինչու են աքսորած: Չեմ գիտեր՝ պատասխանեց եւ աւելացրեց՝ ես իզուր ինձ հարց եմ տալիս, բայց պատասխան չեմ գտնում: Նա ինձ պատմեց, որ ինք միշտ եղեր է լաւ սովետական քաղաքացի եւ դասախօս, ուսուցիչ: Սովետական կարգերը հաստատուելուն ինք եղեր է ճեմարանի ուսանող եւ հետագային բարձրագոյն ուսում ստանալով՝ եղեր է հարազատ սովետական մարդ: Ի վերջոյ ինձ պատմեց, որ նա Փարիզում ունեցեր է մի աներծագ: Ես հարցրի իրան, թէ ինչ է քո աներծագի անունը: Խնկարեան՝ պատասխանեց իմ խօսակիցը: Խնկարեան: Նշանաւոր դաշնակցական Խնկարեանը քո աներծագն է, եւ դու դեռ զարմանում ես, թէ քեզ ինչո՞ւ են աքսորել: Քո աներծագն է, որ զօրավար Դրոյի հետ կազմակերպեր է լեզինական բանակը, որ երբ Կովկասը գրաւուի Հիտլերի կողմէ, Հայաստանի կառավարութիւնը ձեռք առնեն: «Բայց ես նրա հետ երբեք չեմ թղթակցեր, ես ինչո՞վ եմ մեղաւոր, որ իմ աներծագը, որ 30 տարի ինչ չեմ տեսեր, այդպիսի արարքներ է ունեցեր ու քեզից եմ միայն իմանում»։ Ըսավ Գրիգորի Մակարովիչը: Դու ինձից աւելի լաւ գիտես ձեր սովետական կարգերը՝ պատասխանեցի ես: Մեծ հայրը թթու է կերեր, թռռան ատամներն է ամեր: Իսկ դու ընտանիք չունի՞ս, միևնույն են աքսորել քեզ՝ այս հարցումիս անմիջապէս չի պատասխանեց, միայն տեսայ, որ այտերն ի վար արցունքները հոսում էին: Թաշկինակով արտասուքը սրբելէն վերջ, նա ինձ պատմեց իր պատմութիւնը, որ աւելի տխուր էր, քան մերը:

Դուք երեկ պատմում էիք, որ Արարատ Ղարիբեանն<sup>54</sup> էլ է աքսորուել: Արարատը իմ բաջանաղն է: Նա եւ ես միեւնոյն տան մէջ մեր յարկաբաժինը ունէինք, նա չի աքսորուած, այլ՝ ես միայն: Ես կին մը ունիմ եւ զաւակ երբեք չեմ ունեցած: Այս աքսորի դրութիւնը մեր Սովետական Հայաստանի մէջ միշտ եղեր է եւ ամէն քաղաքացի ենթակայ է աքսորի: Շատ անգամ մեր ընտանեկան յարկի տակ խօսակցութեան գաղտնի առարկայ է եղեր, թէ մեզ ալ յանակարծ մի օր չաքսորին, եւ միշտ ալ կինս ասում էր, եթէ այդպիսի մի բան պատահի, ես ինքզինքս կը թունաւորեմ, բայց Սիբիր չեմ գնար: Յունիս 12-ի գիշերը, ինչպէս ձեզ եւս վիճակուեց, եկան մեզ եւս

աքսորելու: Երբ մեզ յայտնեցին, որ եկեր են չեկայի հրամանով մեզ աքսորելու, ես ինքզինքս կորցրել էի եւ չէի իմանում ինչ էր կատարուում իմ շուրջ: Երբ խուզարկութիւնները վերջացան, կնոջս դառնալով ըսի՝ Աշխէ՛ն, վերցրու մեր շորերը ու գնանք, այս է եղեր մեր ճակատագիրը: Կինս յանկարծօրէն ինձ պատասխանեց, թէ վերցրու ինչ որ հարկաւոր է քեզ, ես չեմ գնալու, կը մնամ այստեղ: Այս որ իմացա, ուշադրութեամբ ու սարսափով դիտեցի կնոջս դէմքը, որ կապոյտ կապարի գոյն էր ստացեր եւ շրթները մանուշակագոյն, անմիջապէս յիշեցի իր երբեմնի սպառնալիքները, թէ «այդպիսի բան որ պատահի ինքզինքս կը թունաւորեմ, բայց նրանց չի վիճակուիր ինձ աքսորել»: Աղջի, չի լինի թէ քու սպառնալիքը գործադրած լինի՞ս: Այո՛, պատասխանեց կինս, մինչ նրանք խուզարկութիւններ էին կատարում, մի ժամ առաջ ես արդէն թունաւորեմ եմ ինքզինքս եւ արդէն իսկ թոյնը իր ակերը գործեր է եւ ես զգում եմ իմ մահը: Դու գնայ քո սեւ ճակատագրի ետեւէն, իսկ ինձ համար շուտով վերջ կլինի իմ տանջանքներին: Եւ կինս հազիւ վերջացրեց այս խօսքերը, աթոռից ցած ընկաւ, մեր դահիճները՝ շուարած այս տեսարանից, վերցրին կինս ու թիկնաթոռի վրայ դրին: Նա ոչինչ չէր խօսում, միայն գալարուում էր իր ցաւերու մէջ: Չեկայի պաշտօնեան անմիջապէս հաղորդակցութեան մէջ մտաւ անվտանգութեան պետի՝ Գորգմագեանի հետ, տանը թելեֆոն ունէի, եւ մանրամասն պատմեց կնոջս մօտ կատարուածը, թէ կինս արդէն մահուան գալարումների մէջ է, ի՞նչ պետք է անել: Նա պատասխանեց, թէ կինը հիւանդանոց փոխադրել, իսկ այրը՝ կայարան: Եւ հակառակ իմ թախանձանքներուս, ինձ բերին կոխին այստեղ եւ կինս տարին հիւանդանոց: Այժմ ինձ յայտնի չէ, թէ ինչ եղաւ կնոջս վիճակը եւ վերջին խօսքերը արցունքներու մէջ խեղդուեցան: Ես եւ շուրջիններս լսելէ վերջ այս մարդուն տխուր պատմութիւնը, խղճահարուեցինք, որ նրա լռութիւնը մութ մտքերու էինք վերագրում եւ մխիթարեցինք, թէ կինդ փրկուած կլինի, եւ շուտով դուք հնարաւորութիւն կունենաք նրա հետ հաղորդակցիլ: Բայց նա համոզուելու երեւոյթ չունէր: Արդէն մեր կառախումբը հասեր ու կանգ էր առեր Ստալինգրադ ու տարաբախտ Ներսէսեանը՝ ըստ իր սովորութեան, հազիւ ընկճուած ձայնով կրցաւ ըսել՝ Չաթթոյ, մի հատ չայ բեր ինձ: Այս անգամ մեր անձնուէր Չաթթոն ակելի հոժարակամ փութաց չայ բերելու մեր բախտակից Ներսէսեանին, որ այնուհետեւ մեր հոգատարութեան առարկայ եղաւ:

Ստալինգրադ: Այս քաղաքը մեր բոլորին հետաքրքրութեան առարկան էր, քանզի մեծ մարտեր էին տեղի ունեցեր հիտլերական զավթիչներու կողմէ 1942-ին, բայց մենք քաղաքից ոչինչ չի տեսանք: Մեր կառախումբերը առհասարակ կանգ էին առնում բեռնատար կայարաններում եւ շատ անգամ քաղաքից 5-6 քիլոմէթր հեռու, ինչպէս պատահեց Բաքուում: Մենք Ստալինգրադի կայարանը մի-

այն տեսանք, ուր միայն տախտակաբարաքներ էին եւ շուրջը կիսափով ակերակ շէնքեր: Պատերազմի հետքերը թարմ էին: Մենք ստացանք մեր առօրեայ հասանելիք սննդամթերքը եւ կայարանի կրպակներից զանազան գնումներ կատարեցինք: Շատ բան չի կար, միայն կարելի էր գտնել լիմոնադ, սպիտակ հացիկներ եւ շաքարեղէն, թէեւ շատ թանկ, բայց մեզ համար անհրաժեշտ:

Մեր վրայ հսկողութիւնը ակելի թուլացած էր: Մենք կարող էինք կայարանի բոլոր շրջակայքը պտտիլ, բայց մեր ինչի՞ն էր հարկաւոր: Մեզ համար ամենայն ապահով կայանը մեր բանտ-վագոններն էին: Այս վերջին քաղաքից ուղղութիւն վերցրինք դէպի Ուրալսկ՝ դազախներու բերդաքաղաք: Այդտեղ Վահան Խաչատուրեանը՝ նախկին չեկիստ, այժմ մեզ բախտակից, յայտնեց, որ մենք ուղղութիւն ենք առեր դէպի Կեդրոնական Ասիա: Թէ ո՞ր ենք կանգ առնելու, չեմ կարող ասել եւ, իրօք, միւս օրը հասանք Ուրալսկ: 120 հազար բնակչութեամբ այս քաղաքի կայարանը մենք տեսանք միայն կեղտոտ մօրուսաւոր եւ նոյնքան կեղտոտ հագուստներով եւ շինելներով մարդիկ եւ կիներ, որոնք երկաթգծի վրայ ծանր աշխատանքով էին տարուած:

Մեր յաջորդ կայարանը եղաւ Օրենբուրգ՝ նախկին Չկալով՝ Ուրալ գետի վրայ եզրուած, ուրկէն այս քաղաքը Ղազախստանի մաս չի կազմեր, այլ՝ Ռուսաստանի: Յաջորդ կայարանը՝ Կուրգան, ուսկից Պետրոպավլովսկ՝ դարձեալ Ղազախստան: Այս վերջին քաղաքից հեռանալով մենք հասանք Տոմսկ: Արդէն Սիբիր էինք եւ մի անգամ ալ Ղազախստան չէինք մտնելու: Տոմսկ մնացինք համարեա չորս ժամ: Մեր կառախումբից քսան վագոններ անջատեցին, որ պետք է մնային Տոմսկ, իսկ մնացեալ վաթսուն վագոնները ճանապարհ ելան՝ ուղղութիւն վերցնելով դէպի Գուլունտա, ուրկէ վերջ մեծ քաղաքներու չի հանիպեցինք, բայց բազմաթիւ մանր շրջկեդրոններու մէջ կանգ առինք:

Տոմսկէն սկսան Սիբիրի ճահճային անապատները: Մեզ յանձնարարեցին վագոններու դռները եւ լուսամուտը փակ պահել, որ թունաւոր ճանճերը մուտք չի գործեն: Եւ իրօք, բազմահարիւր տեսակի ճանճեր ու մլակներ մեր բաց լուսամուտից ներս էին խուժում, բայց մենք մեր թաշկինակները ձեռքերնուս անընդհատ ճոճում էինք՝ նրանց մուտքը արգիլելու համար: Ամէն մի հիսուն-վաթսուն քիլոմէթրին ճանճերու եւ մլակներու տեսակները փոխուում էին: Այս բոլորը տեղի էին ունենում, երբ մեր կառախումբը անցնում էր ճահճային վայրերից, որմէ դուրս, ուր բնակչութիւն հաստատուած էր, նուազ մոծակներ կային, եւ անվսաս էին:

Այս երկար ճամփորդութիւնը մեզ համար եղեր էր արդէն մի բնական ինքնայատուկ կեանք: Մեր կոլխոզի նախագահը՝ Լեւոնը, մեզ պատմում էր Միուքի իրենց կոլխոզային կեանքից, թէ ինչ բարգա-

լաճ կեանք է ունեցեր, որքան մարդիկ են աքսորուել իրենց գիւղից 1937-ին, թէ ինք ինչպէս հաւատացեալ բուշուիկ է եղեր եւ մարդկային փրկութիւնը տեսեր է միայն այդ ռեժիմի մէջ եւ այսօրուայ իր յուսալքութիւնը, երբ կարգը իրեն է եկեր աքսորուելու: Ներսէսեանը մեզ պատմում էր իր երբեմնի բարգաւաճ օրերը՝ որպէս դասախօս, եւ ափսոսանքով հառաչում էր, թէ կորան իր մանկավարժական երկերը, որ տպագրութեան մամուլի տակ էին, էլ չեն տպուիր: Վահան Խաչատուրեանը «տո ես դրանց ինչը» անընդհատ հայիտում էր, իսկ կինը՝ Ռոզան լաց էր լինում, թէ ուր մնացին իր երախաները:

Մի աննշան կայարան հասնելով, երբ, ըստ սովորութեան՝ մեր պետքերը հոգալու համար ցած էինք իջնում, 75-ամեայ մի պառաւ կին չէր կարողանում վար իջնել բարձր վագոնից: Տղան՝ Մնացա-



Հովիւկյան ընտանիքի տունը Ռասիպկայա գյուղում, Սորոկինոյի շրջան, 1950-ականներ

կան Ֆարիադեանը<sup>55</sup>, որ նոյնպէս մեզ ուղեկից էր, ըսաւ՝ այն պառաւ, դու ամբողջ սովետական բանակը վախեցրիր եւ Ստալինը քու վախից թուլացաւ ու մեզ աքսորեց, ես վագոնից ո՞նց չես կարողանում վար իջնել: Եւ բոլորս ծիծաղեցինք եւ օգնեցինք, որ պառաւը ցած իջնէ:

Ինչպէս առհասարակ բոլոր հանրային վայրերում, այդ կայարանի մէջ եւս դրուած էր Ստալինի մեծատիպ նկարը՝ հիմարներու պաշտամունքի առարկան: Մնացականը ձեռք բարձրացնելով գոռաց. «Մի՛ վախենար, հանգի՛ստ կաց, գնում ենք, թող մղձավանջը փարատի»:

Մեր ճամփորդութեան տասնետօթերորդ օրը հասանք Ալթայսկի կայարան՝ Պառնաուլէն տասներկու քիլօմէթր հեռու: Պետք է նշել, որ այդ օրերուն մեր աքսորեալներու թիւը վաթսուն հազարի<sup>56</sup> կիսաներ՝ Վրաստանից, Ատրպէյճանից, Ղարաբաղից, Կրասնոդարից, Նախիջեւանից՝ ամէն կողմէ կազմուած աքսորեալի կառախումբեր, որոնք միայն հայեր էին, ոչ մի վրացի կամ ատրպէյճանցի չի կային: Շարունակ ճանապարհի ընթացքին միմեանց խաչաձեւում էին, երբեմն մենք առաջ էինք ընկնում, երբեմն ուրիշներ եւ այնպէս որ մենք չի կարողացանք ստուգել, թէ քանի հատ կառախումբ կար, բայց հաւանաբար քսանէն երեսունի կիսաներ կառախումբերու թիւը:

Ալթայսկի կայարանում մեր կառախումբը կանգնեցրին եւ բոլոր աքսորեալներին իջեցրին բաց դաշտի մէջ: Դա ինձ յիշեցրեց 1915 թիւը, որ թուրքերը մեզ ստիպում էին մարդկային բնակչութենէ հեռու գիշերել բաց դաշտերու մէջ, որ ուշ գիշերին շրջակա թուրք բնակչութիւնը մեր վրայ թափուելով՝ մեզ մորթէին, բաց թաղուած դիակներու գարշահոտութիւնից իրանք չի վնասուէին: Ուրեմն երկաթգիծի մօտ բաց դաշտի վրայ տեղ գրուեցինք: Մեր դահիճները զինեալ ուժերով շրջապատուած՝ եկան մեզ մօտ: Նրանցից մի հատը հայ սպայ էր եւ մնացեալները ռուսեր, հայը հետեւեալ ճամբը խօսեց մեզ. «Քաղաքացիներ՛ր, դուք այսօր կգտնուիք Ալթայի երկրամասի մէջ, որ Սովետական հողի եւ Սովետական Միութեան ամենայ բերքաբեր հողամասերից մին է: Մեր բարեխնամ կառավարութիւնը ձեզ բերել է այստեղ, որ դուք լինեք այս երկրի բնակիչները: Դուք ազատ քաղաքացիներ եք՝ ոչ մի տարբերութեամբ տեղացի բնիկներից եւ նոյնիսկ քուէարկելու իրաւունքից չեք զրկուած: Այժմ մենք ձեզ կբաժանենք ու կուղարկենք զանազան շրջաններ աշխատելու համար կոլխոզներում, սովխոզներում եւ անտառարդիւնաբերական շրջաններում: Դուք այստեղ չեք դրկուել ժամանակաւորապէս: Որպէս այս երկրի բնակիչներ՝ դուք մինչեւ ձեր կեանքի վերջ բնակուելու եք այստեղ: Եթէ ձեզմէ ոեւէ մէկը փորձի փախչել, կդատապարտուի 25 տարի բերդարգելութեան:

Վահան Խաչատուրեանը, խօսք առնելով ըսաւ՝ ընկե՛ր մայր, ու-

րեմն անլի ձեռնտու է փախչիլ, քանի որ փախչողը 25 տարի կբանտուի, միևնույն ժամանակ փախչողը՝ ցմահ: Այո՝ պատասխանեց մայրը, բայց 25 տարին լրանալէ վերջ դարձեալ այստեղ կգաք թաղուելու, ու վերջացուց:

Մենք երեք ժամ մնացինք դաշտի կանաչ խոտերուն վրայ: Օրը հաճելի էր, բնութիւնը գեղածիծաղ, իսկ մեր սրտերը՝ սեւ ու արիւնտ: Վերջապահին մենք գրաւեցինք մեր տեղերը վագոնի մէջ: 25 վագոն անջատեցին մեր կառախումբից, մնացին այնտեղ, իսկ մնացեալները մի նոր ուղղութիւն վերցրին՝ դէպի Սիբիրի ներսը, դէպի հիւսիս:

Գիշերը մինչեւ լոյս մենք ճամփորդեցինք: Երբ լուսացաւ, մեր կառախումբը անտառներու մէջէն կանցներ: Դա մեզ թէ՛ ուրախացրեց, թէ՛ տոկոսով պատճառեց: Ուրախացրեց, քանզի Ուրալէն ի վեր ճամփորդած ըլլալով Ռուսաստանի ճահճային տափաստաններից շատ քիչ անգամ ծառեր կը տեսնէինք, իսկ այժմ առատ անտառ էր՝ զով եւ հաճելի: Սարսափում էինք, քանզի մարդկային բնակչութիւն չիկար եւ մեզ այնպէս էր թւում, որ ուրուականներու հայրենիքն էր այս, ուր եկեր էինք:

Մինչեւ երեկոյ ճամփորդեցինք, ոչ մի բնակչութեան չի հանդիպեցինք: Վերջապահին մօտ յանկարծ գծի մօտ անտառից մի մորուսաւոր մարդ ելաւ՝ կաղանդ պապայի նմանոյ: Մենք սարսափեցանք՝ ի տես այս մարդուն: Մեզ այնպէս թուաց, որ կարծես անտառի ուրուականն էր, որ դուրս էր եկեր ծառերի արանքից:

Դարձեալ գիշերը վրայ հասաւ, որքան քնինք, չեմ գիտեր, միայն արեւի ճառագայթը աչքիս էր ընկեր վագոնի բաց լուսամուտից: Առաջին անգամ ժամացույցիս նայեցի, ժամը առաւօտուայ 1:30-ն էր: Վահան հաչատուրեանը, որ քովս էր քնել, գարթների ու հարցրի՝ ժամը քանի՞ն կը լինի քո մօտ: Նայեց ու ըսաւ՝ ժամը 4.30-ն է: Ուրեմն՝ իմ ժամացույցը չի աշխատիր, որ ժամը 1.30-ին կեցեր է: Նայեց ու ըսաւ՝ ոչ աշխատում է եւ ճիշտ է, միայն երեւի ժամը չես փոխեր, դեռ երեւանի ժամով ես մնացեր: Այստեղ Սիբիր է, ընկ. Հովիւեան, այստեղ երեւան չէ, 4 ժամ առաջ տուր ժամացույցդ: Եւ այդպէս ալ ըրի: Կեսօրին հասանք Չարեայ՝ երկաթգծի վերջ, ուրկէ անդին երկաթուղի գոյութիւն չունէր:


Մեր պահակ ռուս զինուորները եւ նրանց պետը Ալթայսկի կայարանում մեզ յանձներ էին մի նոր պետի, որ ռուս էր եւ մեր երկօրեայ վերջին ճամփորդութեան ընթացքին մենք զինուած պահակներ չունէինք, այլ միայն մէկ առաջնորդ՝ քաղաքացիական հագուստով մի չեկիստ, որ մեզ հետ ընկերացեր էր մինչեւ Չարեայ: Այս վերջին վայրում մեզ հրամայեցին ցած իջնել վագոններից մեր կայքերով միասին: Յովիսի այս առաջին օրերին արեւը եթէ ոչ անտանելի, սակայն տաք էր՝ զովասուն վայրեր փնտրելու չափ, եւ ո-

րովիտեւ մեր կայանը գտնուում էր երկու անտառներու միջեւ, բաւական ընդարձակ ու լայնածաւալ դաշտավայրի մը մէջտեղ, ուր ծառ գոյութիւն չունէր, մենք արեւէն պաշտպանուելու համար մտանք վագոններու տակ մեր կայքերով միատեղ: Արդէն իսկ շրջակայ գիւղերէն եկեր էին 20-30-ի չափ բեռնատար քամիոններ եւ բաց դաշտին մէջ մեզ էին սպասում: Մեր մի մասը անջատեցին, նրանց կարգին նաեւ՝ Չաթթոն, Ռուբենը եւ Ներսիսեանը եւ կառքերու մէջ տեղաւորելով՝ տարին շրջակայ կոլխոզները հաւանաբար: Իսկ մենք նոյնպէս տեղաւորուելով բաց կառքերու մէջ՝ ճանապարհ ընկանք եւ արեւամուտին հասանք իմիջովքայ:

Մեր ճանապարհորդութիւնը կատարուում էր համարեա արտերու միջով, քանզի սարքուած ճամփայ գոյութիւն չունէր: Եղանակը չոր էր եւ մեր առջեւի կառքը այնքան փոշի էր բարձրացնում, որ մենք փոշու մէջ խեղդուում էինք, հակառակ որ մեր շոֆէրը պետք եղած հեռաւորութիւնը պահում էր: Այնպէս որ ճանապարհի կէսին արդէն մենք անճանաչելի էինք եղեր միմեանց: Մեր հագուստները մեր մազերը եւ դիմագիծերը... միայն փոշի էր երեւում եւ փոշու միջից մեր ատամները եւ աչքերն էին փայլում: Դրա հետ վրայ տուեց անձրեւը եւ պակասը լրացուց՝ եղաւ ցեխ: Թեւ մենք վերմակներ առինք մեր վրայ եւ որոշ կերպով պաշտպանուեցինք անձրեւից, բայց կեղտի մէջ կորանք: Մուրը արդէն սկսեր էր պատել, երբ հասանք իմիջովքայ: Մի 170 ընտանիք կլինէինք: Մեզ տեղաւորեցին գիւղի դպրոցի փայտաշէն սրահները եւ գրասենեակները: Արդէն մեր վագոնի ընկերներէն շատերը բաժնուել եւ ուրիշ շրջաններ էին գացեր, իսկ մենք այստեղ գտանք ուրիշ բախտակիցներ, որոնք թեւ մեր կառախումբին մաս կկազմէին, բայց նոր էինք ծանօթանում միմեանց:

Միւս առաւօտ դարձեալ մեզնից բաժանեցին ու տարին մի 70 ընտանիք: Իհարկէ, մեզ չէին ասում, թէ ուր էին տանում: Որովիտեւ մեզնից շատեր լեզու չէինք գիտեր, բնիկ հայաստանցիները տեղեակ լինելով սովետական կարգերու, աշխատանքի պայմաններու դրութեան, կրնային ընտրութիւններ ընել եւ ըստ այնմ գնալ կամ պնդել, թէ ես աշխատանքի այսինչ կամ այնինչ բաժանմունքի մէջ կուգեմ աշխատիլ եւ իր ծայնը լսելի ընել, բայց մենք որ ոչ մի փորձառութիւն չունէինք, հարկադրուած էինք թողուլ, որ մեզ առաջնորդէին սպանդանոց տարուող ոչխարներու նման:

## ԷԴՄՈՆԴ ԲԵՐԺԵ



Երբ 1947-ին եկանք Հայաստան եւ տեսանք իրական վիճակը, հայրս շատ ընկճվեց: Անընդհատ ինքն իրեն մեղադրում էր՝ կործանեցի երեխաներիս ապագան: Դա իր կյանքի մեծ դեպրեսիան էր, իր կյանքի մեծ ափսոսանքը: Բավական երկար ժամանակ մնաց այդ վիճակում՝ մոտ երկու-երեք տարի: Հետո, երբ հայտնվեցինք Սիբիրում, մի տեսակ փակվեցինք պատյանի մեջ եւ իմաստ էլ չկար մտածելու անցյալի մասին, պետք էր ապրել օրվա հոգսով:

Հայրս փայտահատ էր, եղբայրս փայտահատ էր, ես «передвижная ремонтная мастерская»-ում (վերանորոգման շարժական արհեստանոցում) էի աշխատում: Քույրս չէր աշխատում, մայրս տան տնտեսուհի էր. այդպես ապրում էինք:


Իշխանությունների հետ ոչ մի հարաբերություն չունեինք: Իշխանությունը պարետն էր, որը հետեւում էր, որ աքսորյալները որեւէ ինդիք չառաջացնեին: Նայում էր, որ գյուղից դուրս եկողը, եթե գնում էր, ասենք՝ մթերք բերելու, շուտ վերադառնար ու տեղում լիներ:

Հայրս նամակներ էր գրում հայերեն եւ ուղարկում Երեւանում մնացած ընկերներին, որպեսզի նրանք բարձրացնեն մեր հարցը, սակայն դա անօգուտ էր: Երբեք պատասխան չստացանք, ոչ ոք որեւէ պատասխան չտվեց հորս նամակներին, որոնցով նա բացատրություններ էր պահանջում եւ հարցնում, թե երբ կկարողանանք Հայաստան վերադառնալ: Ապրում էինք՝ սպասելով ավելի լավ օրերի, մեր

մտքերում միշտ ունենալով մի օր հետ՝ Ֆրանսիա վերադառնալու գաղափարը:

Երբ Սիբիր հասանք, տասնհինգ տարեկան էի, էլ դպրոց չգնացի, գրքեր կարդալով ինքնակրթվում էի, ռուսերեն սովորում: Աշխատել էր պետք: Գյուղում, որտեղ ապրում էինք, Ռասսիական էր կոչվում, շարժական արհեստանոց կար՝ բեռնատարների մասնակի նորոգումներ անելու համար: Մի օր իմացա, որ խառատի կարիք ունեն: Հանդգնություն ունեցա ներկայանալու եւ ասելու, որ խառատ եմ, որ արդեն խառատի գործ արել եմ, ինչը սուտ էր, երբեւէ խառատի հաստոցի չէի դիպել: Ընդունեցին գործի, շատ արագ սովորեցի: 1954-ին մեզ թույլատրեցին տեղափոխվել Ալթայի երկրամասի գլխավոր քաղաքը՝ Բառնաուլ, որովհետեւ եղբայրս՝ Ռընեն, այնտեղ աշխատանք էր գտել, գաղտնի, իրավունք չունեինք, չէ՞, տեղաշարժվելու: Եղբայրս նկարիչ էր, նա այնտեղ թերթեր էր գտել, որոնք տպագրում էին իր գծանկարները, եւ դա մեզ հնարավորություն տվեց գյուղից քաղաք տեղափոխվել: Երբ եկանք Բառնաուլ, գնացի ուղիղ գործարան, կաթսաների մեծ արտադրություն էր, ընդունվեցի որպես խառատ: Այսպես՝ երկու տարի էլ Բառնաուլում խառատ աշխատեցի:

Մենք երբեք չիմացանք՝ մեզ ինչո՞ւ են աքսորել: Միակ թուղթը որ տեսանք, հանրահայտ справка-ն (տեղեկանքն) էր, որում նշված էր, որ մեր աքսորը սխալմունք է եղել եւ ասվում էր, որ ազատ ենք գնալու՝ ուր ցանկանանք, իհարկե՝ Սովետական Միությունում սահմաններում: Այդպես՝ 1956-ին վերադարձանք Հայաստան:



## ԳԵԻԼ ՀՈՎԻՎԱՆ



Հորս մասին գիտեմ նրա կենսագրության հիմնական գծերը միայն՝ վիենում անցկացրած մանկությունից, մինչև այն պահը, երբ իր ընտանիքի հետ մեկնել է Հայաստան ու հետո աքսորվել են Սիբիր: Գիտեմ, որ այնտեղ յոթ տարի փայտահատ է եղել, հետո վերադարձել են Հայաստան:

Ինքն այդ մասին շատ քիչ էր խոսում, կարելի է ասել՝ երբեք: Բացառությամբ երբ փոքր էի, գիշերները քնելուց առաջ, ինձ պատմում էր Սիբիրի մասին: Պատմում էր՝ ինչպես էին սառցակալած լճում ձուկ որսում, ինչպես էին փայտ կտրում. դրանք ասես հեքիաթներ լիեին:


Հորս մահից հետո՝ 2005-ին, գտա

պապիս ձեռագիր հուշերը, այն թարգմանել տալու քայլեր ձեռնարկեցի, քանի որ հայերեն չեմ կարդում: Այդպես պապիկիս կյանքի պատմությունն էլ բացահայտեցի՝ ցեղասպանության ծանր օրերից մինչև Ֆրանսիա, Ֆրանսիայից՝ Սովետական Հայաստան, աքսոր Սիբիրում եւ վերադարձ Ֆրանսիա:

Բացի այդ՝ կան հորս նամակները, որոնցում նա պատմում է, թե ինչ ծանր էին այնտեղ կյանքի պայմանները, բայց անձամբ իրենից նման պատմություններ երբեք չեմ լսել: Եղբայրս հիշում է՝ երբ հորս հարցնում էին Սիբիրի մասին, միայն մի բան էր ասում. «Նոր արիեստ եմ սովորել՝ փայտահատություն»: Ինձ թվում է՝ քանի որ իսկապես ծանր

է եղել, նա վստահաբար նախընտրել է այլևս չմտածել եւ չխոսել դրա մասին:

Հայրս երգիծանկարիչ էր՝ Ֆրանսիայում բավական ճանաչված: Երբեմն իր գծանկարներով անդրադառնում էր կոմունիզմին ու կոմունիստներին: Կարծում եմ՝ դա հաստատապես կապված էր ԽՍՀՄ-ում նրա ունեցած փորձառության հետ, իսկ առհասարակ նրա հիմնական թեման այսօրն էր՝ ներկան: Ես իհարկե նրա գործերը մանրամասնորեն չգիտեմ, բայց բավական լավ հիշում եմ, օրինակ՝ մի գծանկար: Արձան է, ամենայն հավանականությամբ Ստալինի արձանը, որն ինչ-որ ուղղություն է ցույց տալիս, իսկ իսկայական մի ամբոխ հակառակ է գնում:



Ողնե Զովիվի սիբիրյան ծաղրանկարներից

## ՌԸՆԵ ՀՈԿԻԿՅԱՆԻ ՆԱՄԱԿՆ ԸՆԿԵՐՈՋԸ՝ ԱՐԹՈՒՐԻՆ

20 / III / 1950

Շատ սիրելի Արթուր,

[...]

Այստեղ ոչ մի փոփոխություն չկա, իրավիճակը նույնքան վատ է: Եվս մեկ անգամ շնորհակալություն Մորիսի ուղարկած 200 ռուբլու համար: Դա մեզ օգնեց գնել կարտոֆիլ, մի քիչ կարագ եւ 3 ճագար: Երկար ժամանակ էր ինչ կուշտ չէինք կերել:

Այս պահին աշխատում եմ «անընթեռնելի»-ում տնից 35 կիլոմետրի վրա: Այսօր գտնվում եմ համեյովկայում, որտեղ մի ծանրոց պիտի ստանամ, որ մորս բարեկամներն են ուղարկել: Ջերմաստիճանը բավական մեղմ է այս օրերին: Հաջորդ ամիս տեղատարափ անձրեւներից ծյունը կհալչի: Այդ ժամանակ մեզ բոլորիս կմոբիլիզացնեն՝ ծառերի բները գետով մինչեւ Բլինովո տեղափոխելու համար, մեզ մոտից 80 կիլոմետրի վրա: Ասում են, դա առնվազն մեկ ամիս կտեւի: Դրանից բացի, ուրիշ նորություն չկա:

Մեր տրամադրությունը հիասքանչ չէ: Փողի պակաս ունենք: (Ով է այն անձը, որ այնպիսի հիմարություն է ասել, թե երջանկությունը փողի մեջ չէ): Մայրս շատ է նիհարել, հայրս նույնպես: Ինչ վերաբերում է ինձ, ես երբեմն ինձ թույլ եւ անուժ եմ զգում:


Մեկ ամսից ավելի է, ինչ քնում եմ չոր փայտի վրա, նույնիսկ մոռացել եմ, որ մարդիկ կարող են քնել ծածկոցներով փաթաթված, փափուկ ներքնակի վրա: Ո՞վ կմտածեր, Արթուր, որ մի օր նման փորձությունների միջով եմ անցնելու:

Այնուամենայնիվ, Աստծո օգնությամբ, մենք դիմադրում ենք: Ի՞նչ կլինի վաղը... Նամակս այստեղ դադարում եմ, զգում եմ, որ արցունքները ողողում են աչքերս: Այս երեկո ձեր մասին կմտածեմ քնելուց առաջ, ծխախոտ ծխախոտի հետեւից կվառեմ ու լաց կլինեմ կրկին՝ անսահման թախիծս մեղմելու համար:


Բարեւիր իմ բոլոր ընկերներին ու ընկերուհիներին, ինչպես նաեւ Ալիսի ընկերներին:

Համբույրներ:

Քո եղբայր,  
Ռընե



Ռընե Գովիվ  
1952,  
գյուղ  
Տյագուն



ԱՔՍՈՐՎԱԾ  
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ  
ՑՈՒՑԱԿՆԵՐ



# ՈՒՂԵՑՈՒՅՑ ՑՈՒՑԱԿՆ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԱՄԱՐ

Ցուցակները կազմելիս ուսումնասիրվել են նյութեր, որոնք պահվում են ՀՀ ազգային արխիվում (աքսորյալների անձնական գործեր, գործերի վերանայման միջգերատեսչական հանձնաժողովի արձանագրություններ եւ այլն): Ձեռք են բերվել նաեւ տեղեկություններ ՌԴ պետական արխիվներից, այդ թվում Ալթայի երկրամասի: Որոշ փաստեր ճշգրտվել են ականատեսների վկայություններով: Այսուհանդերձ անճշտությունները բացառված չեն:

Ռուսական արխիվների նյութերը տրամադրել է պատմական գիտությունների դոկտոր, Նովոսիբիրսկի համալսարանի պրոֆեսոր Նատալյա Աբլաժեյը:

Համառոտելու համար դուրս է թողնվել այն, ինչը վերաբերվում է բոլորին՝ աքսորի տարեթիվն ու ամսաթիվը, ընտանիքով աքսորված լինելու հանգամանքը: Նշված չէ Պետական անվտանգության Նախարարին կից Հատուկ խորհրդակցությունը, քանի որ աքսորի բոլոր որոշումներն այդ մարմինն է կայացրել:

Նույն ցուցակը ներկայացված է նաեւ ռուսերեն, քանի որ բոլոր գործերի բնագիր լեզուն ռուսերենն է:


Ստորեւ համեմատության համար ներկայացված են մեկ ընտանիքին վերաբերվող տեղեկատվության համառոտ եւ ամբողջական տարբերակները:

**ԱԶԱՐՈՒՄՅԱՆ Երեմ Խաչիկի,** ծն. 1908 (1903): Եկել է Իրանից 1946: Բն. Սիսիանի շրջ. գ. Սիսիան: Աքսորը ձեւակերպվել է 22.02.1950: Աքսորավայր՝ գ. Մաքսիմովկա, Մաքսիմովսկի գ/ս, Սլավգորոդսկի շրջ: Ազատվել են 33 Ռ 22.12.1954: Գաղթ. հանվել են 09.02.1955: Ընտանիք՝ կին Սարգսյան-Յարություն Վարսենիկ Սիմոնի ծն. 1923 (աքսորում մահացել է): որդիներ Թորոս ծն. 1932, Յարություն ծն. 1936, Զովհաննես ծն. 1938

**ԱԶԱՐՈՒՄՅԱՆ Երեմ Խաչիկի,** ծնվել է 1908 (1903): Եկել է Իրանից 1946 թվականին: Բնակություն՝ Սիսիանի շրջանի գյուղ Սիսիան: [14.06.1949 թվականին ընտանիքով աքսորվել է ՌՍՖՍՌ Ալթայի երկրամաս]: Աքսորը ձեւակերպվել է [ՍՍՌՄ Պետական անվտանգության Նախարարին կից Հատուկ խորհրդակցության որոշմամբ] 22.02.1950: Աքսորավայր՝ գյուղ Մաքսիմովկա, Մաքսիմովսկի գյուղսովետ, Սլավգորոդսկի շրջան: Ազատվել են Հակահեղափոխական հանցագործությունների համար դատապարտված եւ ՍՍՌՄ ՆԳՆ ճամբարներում ու բանտերում պահվող, աքսորավայրերում եւ հատուկ բնակավայրերում գտնվող անձանց գործերի վերանայման Հանրապետական հանձնաժողովի որոշումով 22.12.1954: Աքսորավայրի հաշվառումից հանվել են 09.02.1955: Ընտանիք՝ կին Սարգսյան-Յարություն Վարսենիկ Սիմոնի ծնված 1923 (աքսորում մահացել է): որդիներ Թորոս ծնված 1932, Յարություն ծնված 1936, Զովհաննես ծնված 1938

# ՀԱՄԱՌՈՑ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Ռ	Հակահեղափոխական հանցագործությունների համար դատապարտված եւ ՍՍՌՄ ՆԳՆ ճամբարներում ու բանտերում պահվող, աքսորավայրերում եւ հատուկ բնակավայրերում գտնվող անձանց գործերի վերանայման Հանրապետական հանձնաժողովի որոշում		
ՀԽ	ՍՍՌՄ Պետական անվտանգության Նախարարին կից Հատուկ խորհրդակցություն		
ՀՍՍՌ ԳԴ ԴԿ	ՀՍՍՌ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիա		
ՀՍՍՌ ԳԴ	ՀՍՍՌ գերագույն դատարան		
ՍՍՌՄ ԳԴ ԴԿ	ՍՍՌՄ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիա		
ՍՍՌՄ ԳԴ ՊԼԵՆՈՒՄ	ՍՍՌՄ գերագույն դատարանի պլենում		
ՍՍՌՄ ՆԳՄ	ՍՍՌՄ Ներքին Գործերի Մինիստրություն		
ՍՍՌՄ ԳՍՆ	ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահություն		
ՌՍՖՍՌ ԳՍՄ	ՌՍՖՍՌ Գերագույն Սովետի Նախագահություն		
ՉՏ	ՀՍՍՌ Ներքին գործերի մինիստրության զինվորական տրիբունալ		
ՀՃ	Հատուկ ճամբար, ԳՌԼԱԳ-ի հատուկ ճամբարների համակարգ քաղբանտարկյալների համար		
Ալթայի երկ. ՆԳՄԿ	Ալթայի երկրամասի Ներքին գործերի մինիստրության վարչություն		
ՀՍՍՌ	Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա (տարբեր ժամանակներում՝ ՀՍՍՀ, ՀԽՍՀ)		
ս-զ	սովխոզ	հ/ս	հացահատիկի սովխոզ
կ-զ	կոլխոզ	ՄՏԿ	մեքենա-տրակտորային կայան
գ/ս	գյուղսովետ	տեղ.	տեղամաս
ԱԱՏ	անտառարդյունաբերական տնտեսություն	ե/տեղ	ենթատեղամաս
ԱՄՏ	անտառմշակման տեղամաս	կայ.	կայարան
ճ/ս	ճակնդեղի սովխոզ	երկ.	երկրամաս



**ԱԲԱՍՅԱՆ Լենոն Սարգսի**, ծն. 1879: Եկել է Լիբանանից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեւակերպվել է 01.02.1950: Աքսորավայր՝ գ. Նիժնայա Պետրովկա, Պետրովսկի գ/ս, Կալմանսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 16.05.1955: Հաշվ. հանվել են 07.07.1955: Արդարացվել են ՅՅ Դատախազության կողմից 23.07.1993: Ընտանիք՝ կին Սիմա Սարգսի ծն. 1910; դուստրեր Մարի ծն. 1939, Սիմա ծն. 1942; որդի Հայկ ծն. 1946

**ԱԲԳԱՐՅԱՆ Սարգիս Աբրահամի**, ծն. 1894: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Լենինական: Աքսորը ձեւակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ Չարիչսկի հ/ս (4-րդ բաժ.), գ. Ուստ-Կալմանսկա, Ուստ-Կալմանսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 07.09.1955: Հաշվ. հանվել են 31.10.1955: Արդարացվել են ՅՅ Դատախազության կողմից 09.07.1993: Ընտանիք՝ կին Հայկունի Բաղդասարի ծն. 1908; դուստր Մարիա (Մարիամ) ծն. 1933; որդիներ Աբրահամ ծն. 1931, Գեորգ ծն. 1935, Նուբար ծն. 1937

**ԱԲԵՇՅԱՆ Թովմաս Սարգսի**, ծն. 1908: Եկել է Լիբանանից 1946: Բն. Արթիկի շրջ. գ. Մեղրաշեն: Աքսորը ձեւակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ Ալեյսկի շաբարի գործարան (Մամոնտովսկի բաժ.) ք. Ալեյսկ, Ալեյսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 07.09.1955: Հաշվ. հանվել են 07.12.1955: Արդարացվել են ՅՅՍՀ Դատախազության կողմից 25.06.1990: Ընտանիք՝ կին Ազատուհի Գրիգորի ծն. 1911; որդիներ Սարգիս ծն. 1938, Հովհաննես ծն. 1939, Գուրգեն ծն. 1947; դուստր Մարիա ծն. 1943

**ԱԲԵՇՅԱՆ Սեդրակ Եսայու**, ծն. 1911: Եկել է Լիբանանից 1946: Բն. Արթիկի շրջ. գ. Մեղրաշեն: Աքսորը ձեւակերպվել է 01.02.1950: Աքսորավայր՝ գ. Պյոտավա, հետո Ալեյսկի շաբարի գործարան (Մամոնտովսկի բաժ.) ք. Ալեյսկ, Ալեյսկի շրջ: Մահացել է 02.01.1950: Ընտանիքը ազատվել է ՍՍՌՄՆԳՄ № 0067 հրամանով 19.03.1956 եւ ՅՅ Ո 30.04.1956: Հաշվ. հանվել են 10.04.1956: Արդարացվել են ՅՅ Դատախազության կողմից 04.08.1993: Ընտանիք՝ մայր Գոհար Հովհաննեսի ծն. 1886 (մահացել է 18.09.1950); կին Եսթեր Հովհաննեսի ծն. 1924; որդի Եսայի ծն. 1948

**ԱԲԵՇՅԱՆ Սիսակ Պողոսի**, ծն. 1910: Եկել է Լիբանանից 1946: Բն. Արթիկի շրջ. գ. Պարնի: Աքսորը ձեւակերպվել է 01.04.1950: Աքսորավայր՝ Ալեյսկի շաբարի գործարան (Մամոնտովսկի բաժ.) ք. Ալեյսկ, Ալեյսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 07.09.1955: Հաշվ. հանվել են 07.12.1955: Ընտանիք՝ կին Խաչատուրյան Հայկանուշ Միհրանի ծն. 1921

**ԱԴԱՄՅԱՆ Հովհաննես Նշանի**, ծն. 1913: Եկել է Պաղեստինից 1947: Բն. Բերիայի շրջ. Բերիայի անվ. ավան: Աքսորը ձեւակերպվել է 01.04.1950: Աքսորավայր՝ գ. Մոստովայա, Չիրյանովսկի գ/ս, հետո 1952-ից գ. Տյագուն, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 18.05.1955: Հաշվ. հանվել են

18.07.1955: Ընտանիք՝ հայր Նշան Հովհաննեսի ծն. 1882 (մահացել է 21.02.1954); մայր Երանուհի Դանիելի ծն. 1898; քույր Թագունի ծն. 1931; կին Պատրիկյան Գյուրջի Աբրահամի ծն. 1931: Աքսորում ծնվել են դուստրեր Լուսին, Վիդեւա, Երանուհի

**ԱԴՈՒՐՅԱՆ Գեորգ Հովհաննեսի**, ծն. 1920: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեւակերպվել է 11.02.1950: Աքսորավայր՝ Սորոկինսկի շրջ, հետո գ. Նիժնայա Պետրովկա, Կալմանսկի շրջ: Ազատվել է ՅՅ Ո 07.09.1955: Հաշվ. հանվել է 22.11.1955: Արդարացվել է ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 06.01.1971

**ԱԴՈՒՐՅԱՆ Խաչիկ Հովհաննեսի**, ծն. 1924: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեւակերպվել է 01.02.1950: Աքսորավայր՝ Տյագունսկի ԱՄՏ, Սորոկինսկի շրջ, հետո գ. Նիժնայա Պետրովկա, Կալմանսկի շրջ: Ազատվել է ՅՅ Ո 07.09.1955: Հաշվ. հանվել է 18.11.1955: Արդարացվել է ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 08.08.1989

**ԱԴՈՒՐՅԱՆ Հարություն Հովհաննեսի**, ծն. 1903: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեւակերպվել է 30.11.1949: Աքսորավայր՝ Տյագունսկի ԱՄՏ, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 07.09.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 27.06.1972: Ընտանիք՝ հայր Հովհաննես Հարությունի ծն. 1876 (մահացել է 21.10.1950 Կալմանսկի շրջ); քույր Նազիկ ծն. 1925; կին Խաթուն Գեորգի ծն. 1917; որդիներ Չոհրաբ ծն. 1942, Հովհաննես ծն. 1944; դուստրեր Գյուլան ծն. 1945, Արաբայա ծն. 1948

**ԱՉԱՏՅԱՆ Հարություն Ազատի**, ծն. 1900: Եկել է Լիբանանից 1947: Բն. ք. Արթիկ: Աքսորը ձեւակերպվել է 01.04.1950: Աքսորավայր՝ Ալեյսկի շաբարի գործարան (Մամոնտովսկի բաժ.) ք. Ալեյսկ, Ալեյսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 02.02.1955: Հաշվ. հանվել են 29.04.1955: Ընտանիք՝ կին Արփենիկ Գեորգի ծն. 1914; դուստր Չաբել ծն. 1937; որդիներ Ազատ ծն. 1932, Սերոբ ծն. 1942, Հակոբ ծն. 1944

**ԱՉԱՐՈՒՅԱՆ Երեմ Խաչիկի**, ծն. 1908 (1903): Եկել է Իրանից 1946: Բն. Սիսիանի շրջ. գ. Սիսիան: Աքսորը ձեւակերպվել է 22.02.1950: Աքսորավայր՝ գ. Մաքսիմովկա, Մաքսիմովսկի գ/ս, Սլավգորոդսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 22.12.1954: Հաշվ. հանվել են 09.02.1955: Ընտանիք՝ կին Սարգսյան-Հարություն Վարսենիկ Սիմոնի ծն. 1923 (աքսորում մահացել է); որդիներ Թորոս ծն. 1932, Հարություն ծն. 1936, Հովհաննես ծն. 1938

**ԱԹԱՐՅԱՆ Իսկանդար Գրիգորի**, ծն. 1921: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Արթիկ: Աքսորը ձեւակերպվել է 17.05.1950: Աքսորավայր՝ Չիստյունսկի ճ/ս, գ. Չիստյունկա, Տոպչիխինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 16.02.1955: Հաշվ. հանվել են 14.04.1955: Ընտանիք՝ կին Հայրապետյան Ես-

րաքայա Գուրգենի ծն. 1923 (մեկնել է կամավոր); որդի Լենոն ծն. 1948: Ծնվել է որդի Արամ՝ 1952

**ԱԹՁԱՐՅԱՆ Սարգիս Գրիգորի**, ծն. 1921: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Արթիկ: Աքսորը ձեռակերպվել է 17.05.1950: Աքսորավայր՝ Չիստյունսկի ճ/ս (1-ին բաժ.), գ. Չիստյունսկա, Տոպչիխինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 18.05.1955: Հաշվ. հանվել են 17-18.09.1955: Արդարացվել են ՅՍՍՌ ԳԴ ԴԿ որոշմամբ 04.05.1962: Ընտանիք՝ հայր Գրիգոր Սարգսի ծն. 1881; մայր Նոյեմբար Գրիգորի ծն. 1898; քույր Ալիս ծն. 1931 (ամուսնացել է Գորգիսյան Գեորգ Սամվելի ծն. 1922 հետ, ապրել է ք. Բառնաուլում, հաշվ. հանվել է 06.09.1955)

**ԱԼԱՉԱՉՅԱՆ Հարություն Արտաշեսի**, ծն. 1926: Եկել է Լիբանանից 1946: Բն. ք. Կիրովական: Աքսորը ձեռակերպվել է 01.04.1950: Աքսորավայր՝ գ. Շադրովա, Ուզլովսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 16.05.1955: Հաշվ. հանվել են 08.08.1955: Արդարացվել են ՅՍՍՌ ԳԴ ԴԿ որոշմամբ 06.12.1962: Ընտանիք՝ հայր Արտաշես Աբրահամի ծն. 1874 (մահացել է 1950); կին Կարապետյան Հայկուշ Կարապետի ծն. 1925: Ծնվել է դուստր Տիգրան՝ 1952

**ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Աբրահամ Բաղդասարի**, ծն. 1915: Եկել է Լիբանանից 1946: Բն. Հոկտեմբերյանի շրջ. Բերիայի անվ. ավան (ս-գ № 2): Աքսորը ձեռակերպվել է 30.11.1949: Աքսորավայր՝ «Հոկտեմբերի 12-ամյակի» հ/ս (2-րդ բաժ.), Պոսպեյիխինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 15.08.1955: Հաշվ. հանվել են 17.11.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 29.12.1972: Ընտանիք՝ կին Մարիամ Գրիգորի ծն. 1922; դուստր Աղավնի ծն. 1937; որդիներ Բաղդասար ծն. 1939, Հակոբ ծն. 1944, Կարապետ ծն. 1949

**ԱԼՈՒՆՅԱՆ Կարապետ Մովսեսի**, ծն. 1913: Եկել է Լիբանանից 1946: Բն. Հոկտեմբերյանի շրջ. Վորոշիլովի անվ. ավան (Հացիկ, ս-գ № 4): Աքսորը ձեռակերպվել է 11.02.1950: Աքսորավայր՝ Մամոնտովի անվ. հ/ս (Ցենտրալնայա ուսադբա), Պոսպեյիխինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 02.02.1955: Հաշվ. հանվել են 06.12.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 29.03.1974: Ընտանիք՝ կին Սիմա Խաչերի ծն. 1921; դուստր Շուշան ծն. 1940; որդիներ Վարուժան ծն. 1943, Չոհրաբ ծն. 1946, Կայծակ ծն. 1947

**ԱԽՈՅԱՆ Աբրահամ Կիրակոսի**, ծն. 1921: Եկել է Լիբանանից 1946: Բն. Հոկտեմբերյանի շրջ. Արարատորենտի ս-գ № 10: Աքսորը ձեռակերպվել է 11.02.1950: Աքսորավայր՝ «Հոկտեմբերի 12-ամյակի» հ/ս, Պոսպեյիխինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 16.02.1955: Հաշվ. հանվել են 19.04.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 13.04.1973: Ընտանիք՝ կին Սրբուհի Հովհաննեսի ծն. 1923 (հաշվ. հանվել է 27.10.1955); որդիներ Կիրակոս ծն. 1943, Եզնիկ ծն. 1944; դուստր Չաբել ծն. 1948

**ԱՂԱԽԱՆՅԱՆ Գեորգ Արշավիրի**, ծն. 1917: Ե-

կել է Լիբանանից 1947: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ Ալամբայսկի ԱԱՏ, տեղ. Ինկարա, հետո գ. Ռազմիշկա, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 18.05.1955: Հաշվ. հանվել են 21.07.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 20.09.1972: Ընտանիք՝ կին Շուշան Պետրոսի ծն. 1914 (մահացել է 23.04.1954); որդի Պերճ ծն. 1946

**ԱՂԱՉԱՆՅԱՆ Վաղարշակ Վարդանի**, ծն. 1915: Եկել է Իրանից 1946: Բն. ք. Երեւան: ՅՍՍՌ ԳԴ 03.11.1948 դատավճռով քր. օր. հհ. 67 մ.1, 68 դատապարտվել է 7 տարի ազատազրկման: Ազատվելուց հետո աքսորվել է Վորկուտա: Ազատվել է 10.03.1956: Ընտանիքի աքսորը ձեռակերպվել է 01.02.1950: Աքսորավայր՝ գ. Խմելյովկա, Սորոկինսկի շրջ: ՅՅ Ո 21.09.1955 ազատումը մերժվել է: Ազատվել են ՅՅ Ո 02.06.1956: Հաշվ. հանվել են 24.07.1956: Ընտանիք՝ կին Արմիկ Ալեքսանի ծն. 1914 (ընտ. գլխ.); մայր Հնազանդ Հովհաննեսի ծն. 1896; դուստրեր Անուշ ծն. 1942, Աշիկ ծն. 1945 (մահացել է 1950)

**ԱՄԻՐԻՄԱՆՅԱՆ Սարգիս Հակոբի**, ծն. 1902: Եկել է Լիբանանից 1947: Բն. Արթիկի շրջ. գ. Նոր Կյանք: Աքսորը ձեռակերպվել է 07.06.1950: Աքսորավայր՝ Ալեյսկի հ/ս, Ալեյսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 16.05.1955: Հաշվ. հանվել են 20.08.1955: Ընտանիք՝ կին Սաթենիկ Կարապետի ծն. 1912; որդիներ Հակոբ ծն. 1934, Գաբրիել ծն. 1938, Արտավազ ծն. 1941; դուստրեր Խանում ծն. 1936, Անահիտ ծն. 1946

**ԱՆԹԱՓՅԱՆ Սարգիս Փանոսի**, ծն. 1905: Եկել է Լիբանանից 1946: Բն. Ախուրյանի շրջ. գ. Կամո: Աքսորը ձեռակերպվել է 01.04.1950: Աքսորավայր՝ Չարիշսկի հ/ս, գ. Ուստ-Կալմանսկա, Ուստ-Կալմանսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 20.08.1955: Հաշվ. հանվել են 28.09.1955: Ընտանիք՝ կին Արսեն Սարգսի ծն. 1914; դուստր Մարլենա ծն. 1940; որդի Փանոս ծն. 1945

**ԱՆՏՈՆՅԱՆ Հակոբ Անտոնի**, ծն. 1888: Եկել է Հունաստանից 1947: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 10.12.1949: Աքսորավայր՝ Կամենսկի ԱԱՏ, գ. Կորդոն, Չայետովսկի շրջ: Մահացել է 02.04.1955: Ընտանիքը ազատվել է ՅՅ Ո 16.03.1956: Հաշվ. հանվել են 14.05.1956: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 10.05.1978: Ընտանիք՝ կին Եղիսաբեթ Հովհաննեսի ծն. 1898; որդիներ Անտոն ծն. 1926, Հովհաննես ծն. 1929, Էդվարդ ծն. 1935; հարս Հայկուշ Մուշեղի ծն. 1929; թոռ Մկրտիչ Անտոնի ծն. 1948

**ԱՇԿ(Խ)ԱՐՅԱՆ Ապետնակ Սարգսի**, ծն. 1924: Եկել է Լիբանանից 1946: Բն. Էջմիածնի շրջ. Արարատորենտի Միկոյանի անվ. ս-գ № 3: Աքսորը ձեռակերպվել է 11.02.1950: Աքսորավայր՝ գ. Ռիբնիի Բորկի, Նիժնե-Չումանսկի գ/ս, Բայենսկի շրջ, հետո Բիյսկի ճ/ս (1-ին բաժ.), Չոնալնի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 06.12.1955: Հաշվ. հանվել են 23.01.1956: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշ-

մամբ 13.05.1975: Ընտանիք՝ կին Բոջան-Աշխարյան Թագուհի Նշանի ծն. 1923

**ԱՇԿԱՐՅԱՆ Հակոբ Սարգսի**, ծն. 1924: Եկել է Լիբանանից 1946: Բն. Էջմիածնի շրջ. Արարատորենտի Միկոյանի անվ. ս-գ № 3: Աքսորը ձեռակերպվել է 17.05.1950: Աքսորավայր՝ գ. Ռիբնիի Բորկի, Նիժնե-Չումանսկի գ/ս, Բայենսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 29.02.1956: Հաշվ. հանվել են 02.04.1956: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 13.05.1975: Ընտանիք՝ կին Լուսին Մանուկի ծն. 1930

**ԱՉԱՄՅԱՆ Վարդանես Վարդանի**, ծն. 1912: Եկել է Լիբանանից 1946: Բն. ք. Լենինական: Աքսորը ձեռակերպվել է 30.11.1949: Աքսորավայր՝ Չարիշսկի հ/ս (2-րդ բաժ.), Ուստ-Կալմանսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 30.04.1956: Արդարացվել են ՅՅ Դատախազության կողմից 01.09.1993: Ընտանիք՝ կին Սուլթան Գրիգորի ծն. 1914; դուստր Չվարթ ծն. 1935; որդի Վարդանես ծն. 1943

**ԱՌԱՔԵԼՅԱՆ Եղիշ Առաքելի**, ծն. 1887: Եկել է Ռումինիայից 1946: Բն. Բերիայի շրջ. Բերիայի անվ. ավան: Աքսորը ձեռակերպվել է 01.02.1950: Աքսորավայր՝ Տյագունսկի ԱԱՏ, Բորովյանսկի գ/ս, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 16.02.1955: Հաշվ. հանվել են 12.04.1955: Ընտանիք՝ կին Չարուհի Հակոբի ծն. 1886; որդի Հայկազ ծն. 1926; զարմիկներ Մանուկյան Մանուշակ Հակոբի ծն. 1938, Մանուկյան Աղավնի Հակոբի ծն. 1940

**ԱՌԱՔԵԼՅԱՆ Ղահրաման Բաբախանի**, ծն. 1904: Եկել է Իրանից 1946: Բն. Արտաշատի շրջ. գ. Նորաշեն: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ գ. Կալիտովկա, Վերխ-Պայվինսկի գ/ս, Բայենսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 21.09.1955: Հաշվ. հանվել են 05.11.1955: Ընտանիք՝ կին Պայծառ Սուլթանի ծն. 1910; որդիներ Ժիրայր ծն. 1932, Ժորժիկ ծն. 1941; դուստրեր Այծելիկ ծն. 1935, Ազատուհի ծն. 1946

**ԱՌԱՔԵԼՅԱՆ Սեդրակ Թովմասի**, ծն. 1896: Եկել է Իրանից 1946: Բն. ք. Էջմիածին: Աքսորը ձեռակերպվել է 01.02.1950: Աքսորավայր՝ գ. Բայետո, Բայենսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 05.11.1954: Հաշվ. հանվել են 25.12.1954: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 22.03.1968: Ընտանիք՝ կին Ռուզան Մելքոնի ծն. 1906; որդիներ Իսահակ ծն. 1926, Վալենտին ծն. 1935; դուստր Արփելիկ ծն. 1928

**ԱՍՏՎԱՏԱՏՈՐՅԱՆ Վարդանես Կարապետի**, ծն. 1903: Եկել է Իրանից 1946: Բն. Սիսիանի շրջ. գ. Դարբաս: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ գ. Սիտնիկովո, Բայենսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 15.08.1955: Հաշվ. հանվել են 03.10.1955: Ընտանիք՝ կին Բալիս Սիմոնի ծն. 1919; որդիներ Արամ ծն. 1941, Կարո ծն. 1942, Համազասպ ծն. 1945, Աստվածատուր ծն. 1947; զոբանչ Գեորգյան Օսաննա Հովսեփի ծն. 1894;

քենի Գեորգյան Վարդուհի Սիմոնի ծն. 1927

**ԱՎԱԳՅԱՆ Խաչիկ Սարգսի**, ծն. 1912: Եկել է Իրանից 1946: Բն. Արտաշատի շրջ. գ. Բզովան: Աքսորը ձեռակերպվել է 01.04.1950: Աքսորավայր՝ գ. Պլոտավա, Բայենսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 15.08.1955: Հաշվ. հանվել են 03.10.1955: Ընտանիք՝ մայր Ֆարիզադա Սահակի ծն. 1860; կին Փարիզադ Սիւնասի ծն. 1921; քույր Սիրուհի ծն. 1925

**ԱՎԱԳՅԱՆ Հարություն Գրիգորի**, ծն. 1892: Եկել է Հունաստանից 1947: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 01.02.1950: Աքսորավայր՝ գ. Ռասիպայա, Տյագունսկի գ/ս, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 24.04.1956: Հաշվ. հանվել են 29.06.1956: Արդարացվել են ՀեՆԱՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 02.06.1989: Ընտանիք՝ կին Թագուհի Սիմոնի ծն. 1894; որդի Գրիգոր ծն. 1923; դուստրեր Գոհար ծն. 1931, Երմոնիկա ծն. 1936

**ԱՎԱԳՅԱՆ Հովհաննես Խաչատուրի**, ծն. 1905: Եկել է Լիբանանից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 01.04.1950: Աքսորավայր՝ Ալամբայսկի ԱԱՏ, գ. Ռազմիշկա, հետո գ. Վերխ-Ինկարա, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 13.04.1955: Հաշվ. հանվել են 16.06.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 04.03.1967: Ընտանիք՝ կին Ելիզավետա Դանիելի ծն. 1910; որդիներ Խաչիկ ծն. 1930 (1954 ամուսնացել է Դեմիրճյան Արաքսյա Գրիգորի ծն. 1932 հետ, աքսորում ծնվել է որդի), Դանիել ծն. 1931, Արամ ծն. 1933

**ԱՎԱԳՅԱՆ Սարգար Գրիգորի**, ծն. 1890: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 30.11.1949: Աքսորավայր՝ գ. Խմելյովկա, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 07.01.1956: Հաշվ. հանվել են 27.02.1956: Ընտանիք՝ կին Արմենուհի Արմենակի ծն. 1905; դուստրեր Շաբե ծն. 1941, Չելա ծն. 1943

**ԱՐԾՐՈՒՆԻ Գուրգեն Խաչատուրի**, ծն. 1904: Եկել է Ռումինիայից 1946: Բն. ք. Լենինական: Աքսորը ձեռակերպվել է 10.12.1949: Աքսորավայր՝ Չարիշսկի հ/ս (2-րդ բաժ.), Ուստ-Կալմանսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 08.12.1954: Հաշվ. հանվել են 25.01.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 16.05.1967: Ընտանիք՝ կին Անիկ Հովսեփի ծն. 1912; որդիներ Արսեն ծն. 1939, Հակոբ ծն. 1946

**ԱՓԱՂԱՉՅԱՆ Հովսեփ Արմենի**, ծն. 1918: Եկել է Եգիպտոսից 1948: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 11.02.1950: Աքսորավայր՝ Կամենսկի ԱԱՏ, Չայետովսկի շրջ: Ազատվել է ՅՅ Ո 10.04.1956: Հաշվ. հանվել է 18.05.1956

**ԱՖԱՐՅԱՆ Անդրանիկ Ծերունի**, ծն. 1900: Եկել է Ֆրանսիայից 1947: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 08.04.1950: Աքսորավայր՝ Կամենսկի ԱԱՏ, գ. Վիդրիխա, Չայետովսկի շրջ:

Ազատվել են ՅՅ Ո 15.08.1955: Հաշվ. հանվել են 28.09.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 20.09.1971: Ընտանիք՝ կին Սոֆյա Ալեքսանդրի ծն. 1911; կնոջ դուստր Պիմկինա Մարիա Դմիտրիի ծն. 1928

**ԲԱԲԱՅԱՆ Մելիք Թադևոսի**, ծն. 1897: Եկել է Իրանից 1946: Բն. Արտաշատի շրջ. գ. Նովրուզ-լու: Աքսորը ձեռակերպվել է 08.04.1950: Աքսորավայր՝ կ-գ «Կրասնայա զվեզդա», Վերխ-Չու-մանսկի գ/ս, հետո գ. Վասիլեանկի, Բայեանկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 15.08.1955: Հաշվ. հանվել են 03.10.1955: Արդարացվել են ՅՍՍՈ ԳԴ ԴԿ որոշմամբ 29.09.1962: Ընտանիք՝ կին Հայկանուշ Մարտիրոսի ծն. 1910; որդիներ Էդիկ ծն. 1935, Արծրունի ծն. 1936, Ռաֆիկ ծն. 1942, Թորգոմ ծն. 1944; դուստր Տիգրանուհի ծն. 1938

**ԲԱԲԱՅԱՆ Վահան Եզեկիեյի**, ծն. 1914: Եկել է Լիբանանից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 30.11.1949: Աքսորավայր՝ Կամենսկի ԱՍՏ, գ. Կորդոն, Չայետովսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 21.09.1955: Հաշվ. հանվել են 02.11.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 21.11.1973: Ընտանիք՝ կին Օսաննա Կարապետի ծն. 1921; որդիներ Եզեկիեյ ծն. 1940, Հովհաննես ծն. 1943; դուստր Սրբուհի ծն. 1945

**ԲԱԼՅԱՆ Ավետիս Նշանի**, ծն. 1904: Եկել է Սիրիայից 1947: Բն. Արտաշատի շրջ. գ. Յամանջա-լու: Աքսորը ձեռակերպվել է 24.12.1949: Աքսորավայր՝ կ-գ «Կրասնայա զվեզդա», Վերխ-Չու-մանսկի գ/ս, հետո գ. Վասիլեանկի, Բայեանկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 13.04.1955: Հաշվ. հանվել են 15.06.1955: Արդարացվել են ՅՍՍՈ ԳԴ ԴԿ որոշմամբ 30.09.1963: Ընտանիք՝ մայր Եղոյան Գյուլում Հակոբի ծն. 1897 (մահացել է 10.09.1955); կին Սաթենիկ Մարտիրոսի ծն. 1907

**ԲԱԼՅԱՆ Խաչատուր Մինասի**, ծն. 1924: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 01.04.1950: Աքսորավայր՝ Կամենսկի ԱՍՏ, գ. Կորդոն, Չայետովսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 16.05.1955: Հաշվ. հանվել են 06.07.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 18.07.1984: Ընտանիք՝ հայր Մինաս Խաչիկի ծն. 1886; մայր Գայանե Ավետիսի ծն. 1907; քույրեր Անժիկ ծն. 1930, Շուշանիկ ծն. 1938; եղբայր Միսակ ծն. 1931: Աքսորում ամուսնացել է Թամեյան Ռոզիսիկ Միխայիկ ծն. 1931 հետ

**ԲԱԼՅԱՆ Հակոբ Հակոբի**, ծն. 1885: Եկել է Հունաստանից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 17.05.1950: Աքսորավայր՝ Պետրովսկի ԱՍՏ, գ. Կալմանկա, Կալմանսկի շրջ: Մահացել է 20.04.1951: Ընտանիքը ազատվել է ՅՅ Ո 18.05.1955: Հաշվ. հանվել են 13.07.1955: Արդարացվել են ՅՍՍՈ ԳԴ ԴԿ որոշմամբ 08.09.1965: Ընտանիք՝ կին Լինա Թովմասի ծն. 1890; դուստր Անահիտ ծն. 1926

**ԲԱԼՅԱՆ Նազարեթ Գեորգի**, ծն. 1924: Եկել է

Լիբանանից 1946: Բն. ք. Լենինական: 1946 նոյեմբերին բռնվել է փախուստի փորձ կատարելիս: Աքսորը ձեռակերպվել է 01.02.1950: Աքսորավայր՝ Չարիչսկի հ/ս, գ. Ուստ-Կալմանկա, Ուստ-Կալմանսկի շրջ: Ազատվել է ՅՅ Ո 07.09.1955: Հաշվ. հանվել է 31.10.1955: Աքսորում ամուսնացել է Կարապետյան Ժենյա Սեդրակի ծն. 1929 հետ, ծնվել է դուստր Լինա՝ 1953

**ԲԱԼՈՅԱՆ Գեորգ Լեւոնի**, ծն. 1927: Եկել է Եգիպտոսից 1947: Բն. Էջմիածնի շրջ. գ. Նորակերտ: Աքսորը ձեռակերպվել է 24.12.1949: Աքսորավայր՝ գ. Սոկրովկա, Դեմիդովսկի գ/ս, Սուետսկի շրջ: Ազատվել է ՅՅ Ո 29.02.1956: Հաշվ. հանվել է 18.04.1956: Արդարացվել է ՅՅ Դատախազության կողմից 10.12.1992: Աքսորում ամուսնացել է Վարդանյան Քնարիկ Բալասանի ծն. 1928 հետ, ծնվել են դուստրեր Մարիամ՝ 1950, Անահիտ՝ 1952, որդի Լեւոն՝ 1954

**ԲԱԽՉԱԶՅԱՆ Գրիգոր Կարապետի**, ծն. 1913: Եկել է Լիբանանից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 11.02.1950: Աքսորավայր՝ գ. Տյազուն, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 09.03.1955: Հաշվ. հանվել են 07.06.1955: Ընտանիք՝ կին Ռոզա Մանվելի ծն. 1922; դուստրեր Փետրուզ ծն. 1942, Սոսի ծն. 1944

**ԲԱԽՏԱՎՈՐՅԱՆ Անդրանիկ Հարությունի**, ծն. 1901: Եկել է Իրանից 1946: Բն. Էջմիածնի շրջ. Արարատտրեստի Միկոյանի անվ. ս-գ № 3: Աքսորը ձեռակերպվել է 01.02.1950: Աքսորավայր՝ Սուետսկի ս-գ (Ֆերմա № 2), գ. Վերխ-Սուետկա, Սուետսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 07.09.1955: Հաշվ. հանվել են 03.11.1955: Ընտանիք՝ կին Թելո Գրիգորի ծն. 1911; դուստր Հայկուշ ծն. 1935; որդի Շմավոն ծն. 1938: Ծնվել է դուստր Սառա՝ 1950

**ԲԱՎՄԱԶՅԱՆ Հովհաննես Հակոբի**, ծն. 1911: Եկել է Լիբանանից 1946: Բն. ք. Լենինական: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ Չարիչսկի հ/ս, Ուստ-Կալմանսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 13.04.1955: Հաշվ. հանվել են 16.06.1955: Ընտանիք՝ կին Դայալ Էյուբի ծն. 1923; դուստրեր Պերճուհի ծն. 1932, Թագուհի ծն. 1943, Մարիա ծն. 1948

**ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ Բաղդասար Մովսեսի**, ծն. 1906: Եկել է Սիրիայից 1946: Բն. Իջեւանի շրջ. գ. Ռեւազլու: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ գ. Պավլովկա, Ուզլովսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 31.01.1956: Հաշվ. հանվել են 10.03.1956: Արդարացվել են ՅՅ Դատախազության կողմից 03.12.1992: Ընտանիք՝ մայր Սիմա Մովսեսի ծն. 1860; դուստր Տիգրանուհի ծն. 1934; որդիներ Տիգրան ծն. 1938, Հակոբ ծն. 1940

**ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ Գրիգոր Խաչատուրի**, ծն. 1910: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 01.04.1950: Աքսորավայր՝ Կամենսկի ԱՍՏ, Չայետովսկի շրջ: Ազատվել են

ՅՅ Ո 21.09.1955: Հաշվ. հանվել են 02.11.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 18.10.1979: Ընտանիք՝ կին Նվարդ Սարգսի ծն. 1922; որդի Հարություն ծն. 1940; դուստր Մա-նուշակ ծն. 1947

**ԲԱԾԲԱԼՅԱՆ Մինաս Սարգսի**, ծն. 1911: Եկել է Լիբանանից 1947: Բն. ք. Արթիկ: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ Ալեյսկի շաքարի գործարան (Պերվոմայսկի բաժ.) ք. Ալեյսկ, Ալեյսկի շրջ: Մահացել է 07.09.1955: Ընտանիքը ազատվել է ՅՅ Ո 05.10.1955: Հաշվ. հանվել են 07.12.1955: Ընտանիք՝ կին Եղիսաբեթ Հարությունի ծն. 1922; դուստրեր Ոսկի ծն. 1940, Սիրուն ծն. 1942; որդիներ Հարություն ծն. 1944, Սարգիս ծն. 1947: Ծնվել են որդիներ Հովհաննես՝ 1949, Վարդան՝ 1953

**ԲԱՅԱՍԻԼՅԱՆ Ասատուր Եսայու**, ծն. 1907: Եկել է Սիրիայից 1947: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 08.04.1950: Աքսորավայր՝ Կամենսկի ԱՍՏ, գ. Կորդոն, Չայետովսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 13.04.1955: Հաշվ. հանվել են 13.06.1955: Արդարացվել են ՅՍՍՀ Դատախազության կողմից 19.06.1990: Ընտանիք՝ կին Մարի Մկրտիչի ծն. 1927; դուստրեր Սեդա ծն. 1942, Արմանուշ ծն. 1944, Շաբե ծն. 1945, Ֆարմանուշ ծն. 1947; մայր Օսաննա Աբրահամի ծն. 1878 (մեկնել է կամավոր, մահացել է 26.02.1952); եղբայր Հովսեփ ծն. 1917; (մեկնել է կամավոր, հաշվառվել է); քույր Լուսածին ծն. 1927 (մեկնել է կամավոր, հաշվառվել է)

**ԲԱՅԱՍԻԼՅԱՆ Կորյուն (Խորեն) Եսայու**, ծն. 1912: Եկել է Սիրիայից 1947: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ Կամենսկի ԱՍՏ, գ. Կորդոն, Չայետովսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 07.09.1955: Հաշվ. հանվել են 02.11.1955: Արդարացվել են ՅՍՍՀ Դատախազության կողմից 19.06.1990: Ընտանիք՝ կին Ալիս Մաթոսի ծն. 1930

**ԲԱՐՍԵՂՅԱՆ Ապետ Հարությունի**, ծն. 1892: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ Ալամբայսկի ԱՍՏ, գ. Ռասիպնայա, հետո գ. Տյազուն, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 18.05.1955: Հաշվ. հանվել են 03.08.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 07.08.1987: Ընտանիք՝ կին Մարիամ Միսակի ծն. 1908; որդիներ Հարություն ծն. 1930, Վարդգես ծն. 1941; դուստրեր Սիրուն (Երանուհի) ծն. 1934, Սիրարիի ծն. 1946, Գայանե ծն. 1949

**ԲԱՐՍԵՂՅԱՆ Կարապետ Հարությունի**, ծն. 1890: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ կայ. Չարինսկայա (Նովոստրոյկա), Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 26.03.1955: Հաշվ. հանվել են 12.06.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 06.10.1981: Ընտանիք՝ կին Ազնիվ Սարգսի ծն. 1907; որդիներ Հարություն ծն. 1924

(1953 ամուսնացել է Դեդեյան Պերճուհի Կարապետի ծն. 1926 հետ, ծնվել է դուստր), Սարգիս ծն. 1935, Պարգե ծն. 1941, Հակոբ ծն. 1943, Կարպիս ծն. 1946; դուստր Մարիա ծն. 1931: Սարգիսը, Պարգեը, Հակոբը, Կարպիսը արդարացվել են ՅՍՍՀ Դատախազության կողմից 12.02.1990

**ԲԱՐՍԵՂՅԱՆ Համբարձում Մնացականի**, ծն. 1900: Եկել է Իրաքից 1947: Բն. Բասարգեշարի շրջ. գ. Գետակրուվար: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ գ. Վերխ-Պայվա, Բայեանկի շրջ: Ալթայի երկ. դատարանի որոշմամբ 31.07.1951 համաձայն 04.01.1949 ՍՍՌՄ ԳՍՆ հրամանագրի հ. 2 դատապարտվել է 15 տարի ազատազրկման: Ազատվել է 13.04.1953 համա-ներումով: Մահացել է 09.05.1956: ՅՅ Ո 05.10.1955 ազատումը մերժվել է: Ազատվել են ՅՅ Ո 30.04.1956: Հաշվ. հանվել են 21.07.56: Արդարացվել են ՅՅ Դատախազության կողմից 30.12.1993: Ընտանիք՝ որդի Արտավազը ծն. 1926 (1951 ամուսնացել է Մայխասյան Արշալույս Սերոբի ծն. 1927 հետ, ծնվել են որդի Օնիկի՝ 1952, դուստր Անահիտ՝ 1954); դուստրեր Մայրանուշ ծն. 1933 (աքսորում ծնվել է որդի Վասիլի՝ 1951), Սիլվարդ ծն. 1938 (մահացել է)

**ԲԱՔՐԵՅՅԱՆ Մինաս Սեդրակի**, ծն. 1890: Եկել է Հունաստանից 1947: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 25.01.1950: Աքսորավայր՝ Ալամբայսկի ԱՍՏ, գ. Ռասիպնայա, Տյազունսկի գ/ս, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 31.01.1956: Արդարացվել են ՅՅ Դատախազության կողմից 19.11.1992: Ընտանիք՝ կին Եղիսաբեթ Սարգսի ծն. 1900; դուստր Ռոզիպիմե ծն. 1933

**ԲԵԲԵՎՅԱՆ Գեորգ Սարգսի**, ծն. 1922: Եկել է Սիրիայից 1946: Բն. ք. Էջմիածին: Աքսորը ձեռակերպվել է 01.02.1950: Աքսորավայր՝ Բիլսկի ճ/ս (1-ին բաժ.), Չոնակի շրջ: Ազատվել է ՅՅ Ո 31.10.1955: Հաշվ. հանվել է 21.12.1955: Արդարացվել է ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 30.11.1983

**ԲԵԳԻՉԱԼՅԱՆ Միսակ Բեգիջանի**, ծն. 1901: Եկել է Իրանից 1946: Բն. Արտաշատի շրջ. գ. Վերին Արտաշատ: Աքսորը ձեռակերպվել է 11.03.1950: Աքսորավայր՝ կ-գ «Կոմսոմոլեց», գ. Պլոտավա, Բայեանկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 15.08.1955: Հաշվ. հանվել են 03.10.1955: Արդարացվել են ՅՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 16.06.1989: Ընտանիք՝ կին Գյուլնազար Մինասի ծն. 1910; դուստրեր Պերճուհի ծն. 1934 (1952 ամուսնացել է Խեչումյան Արամայիս Ստեփանի ծն. 1934 հետ), Սրբուհի (Սիրուն) ծն. 1938

**ԲԵՂՈՎՅԱՆ Գրիգորի Ստեփանի**, ծն. 1903: Եկել է Եգիպտոսից 1947: Բն. ք. Երեւան: Աքսորը ձեռակերպվել է 01.04.1950: Աքսորավայր՝ Տյազունսկի ԱՍՏ, գ. Ռասիպնայա, հետո գ. Տյազուն, Սորոկինսկի շրջ: Ազատվել են ՅՅ Ո 13.04.1955: Հաշվ. հանվել են 02.08.1955: Ընտանիք՝ կին Անժելա Օնիկի ծն. 1918; դուստր Ալիս ծն. 1946

**ԲԵԼԻՆՉՅԱՆ Կարապետ Հակոբի**, ծն. 1919: Ե-

կել է Լիբանանից 1946: Բն. Արթիկի շրջ. գ. Փա-  
նիկ: Աթորը ձեակերպվել է 11.03.1950: Աթու-  
րավայր՝ Ալեյսկի հ/ս (1-ին բաժ.), Ալեյսկի շրջ: Ա-  
զատվել են 33 Ռ 31.01.1956: Հաշվ. հանվել են  
03.03.1956: Արդարացվել են ՀՍՍՀ ԳԴ ԴԿ որոշ-  
մամբ 03.07.1970: Ընտանիք՝ հայր Հակոբ Կա-  
րապետի ծն. 1876 (մահացել է); մայր Եղիսաբեթ  
Պետրոսի ծն. 1880; եղբայր Պետրոս ծն. 1920  
(մահացել է); հարս Սիմա Սարգսի ծն. 1921; կին Լ-  
վարդ Պետրոսի ծն. 1922; դուստր Մարիամ ծն.  
1948: Ծնվել են դուստրեր Էլիզաբեթ, Ալիս, որդի  
Պետիկ

**ԲԵԼՈՒԼՉՅԱՆ Կարապետ Հովհաննեսի**, ծն. 1900: Եկել է Լիբանանից 1946: Բն. Հոկտեմբեր-  
յանի շրջ. ս-գ № 2: Աթորը ձեակերպվել է  
24.12.1949: Աթորավայր՝ «Հոկտեմբերի 12-ամ-  
յակի» հ/ս, Պոսպեյիխինսկի շրջ: Ազատվել են 33  
Ռ 10.04.1956: Հաշվ. հանվել են 22.05.1956: Ար-  
դարացվել են ՀՍՍՀ ԳԴ ԴԿ որոշմամբ 13.02.1972:  
Ընտանիք՝ կին Սրբուհի Պետրոսի ծն. 1911;  
դուստր Մարի ծն. 1928; որդի Հովհաննես ծն.  
1935

**ԲԵՅԼԵՐՅԱՆ Օնիկ Միսակի**, ծն. 1920: Եկել է  
Լիբանանից 1946: Բն. ք. Լենինական: Աթորը  
ձեակերպվել է 17.05.1950: Աթորավայր՝ Շի-  
պունովսկի հ/ս, Շիպունովսկի շրջ: Ազատվել է 33  
Ռ 16.02.1955: Հաշվ. հանվել է 11.04.1955

**ԲԵՐԲԵՐՅԱՆ Ահարոն Հովհաննեսի**, ծն. 1902:  
Եկել է Իրանից 1946: Բն. ք. Երեւան: Աթորը ձե-  
ակերպվել է 01.04.1950: Աթորավայր՝ գ. Նիժ-  
նայա Պետրովկա, Չիրիկովսկի գ/ս, Կալմանսկի  
շրջ, հետո ք. Բառնաուլ: Ազատվել են 33 Ռ  
13.04.1955: Ընտանիք՝ կին Կարմիլա Հովհաննե-  
սի ծն. 1914; դուստր Դիանա ծն. 1946

**ԲԻԴԱՆՅԱՆ Սիմոն Պողոսի**, ծն. 1907: Եկել է  
Լիբանանից 1946: Բն. Հոկտեմբերյանի շրջ. ս-գ  
№ 2: Աթորը ձեակերպվել է 11.03.1950: Աթու-  
րավայր՝ «Հոկտեմբերի 12-ամյակի» հ/ս, Պոսպե-  
յիխինսկի շրջ: Ազատվել են 33 Ռ 31.01.1956:  
Հաշվ. հանվել են 10.03.1956: Արդարացվել են 33  
Դատախազության կողմից 27.12.1990: Ընտա-  
նիք՝ կին Վիկտորյա Պողոսի ծն. 1912; որդիներ  
Սերոբ ծն. 1929 (Ալթայի երկ. Պոսպեյիխինսկի  
շրջ. ժողդատարանի որոշմամբ 14.06.1952 հա-  
մաձայն ՍՍՈՒ զԱՆ 04.06.1947 հրամանագրի  
հ. 2 (պետունեցվածքի հափշտակում) դատա-  
արտվել է 10 տարի ազատազրկման: Լերվել է  
ՌՍՖՍՌ ԳԴԼ կողմից 02.09.1954 եւ փոխադրվել  
ընտանիքի աթորավայր: 16.06.1955 ինքնա-  
կամ տեղափոխվել է կնոջ Չաբաբյան Բավական  
Արմենակի ծն. 1923 աթորավայր; հաշվառվել է  
գ. Իսսիկ Ենթեքշի-Ղազախսկի շրջ. Ալմա-Ատայի  
երկր. Ղազ. ՍՍՌ) Պողոս ծն. 1933, Քերոբ ծն.  
1934, Հայկ ծն. 1947; դուստր Լուսին ծն. 1936

**ԲԻՐՅԱՆ (ՓԻՐՅԱՆ) Կարապետ Մանուկի**, ծն. 1901:  
Եկել է Ֆրանսիայից 1947: Բն. ք. Երեւան:  
Աթորը ձեակերպվել է 01.02.1950: Աթորա-

վայր՝ Պետրովսկի ԱԱՏ (154-րդ տեղ.), Կալմանս-  
կի շրջ, հետո 1951-ից Ալամբայսկի ԱԱՏ, գ. Ռա-  
սիայնայա, հետո գ. Տյագուն, Սորոկինսկի շրջ: Ա-  
զատվել են 3ն Ռ 05.04.1952: Հաշվ. հանվել են  
12.05.1952: Ընտանիք՝ կին Բերկրուհի Նշանի  
ծն. 1910; որդիներ Անդրե ծն. 1937, Ալեն ծն.  
1944

**ԲՈՂԻԿՅԱՆ Աբրահամ Կարապետի**, ծն. 1921:  
Եկել է Պաղեստինից 1947: Բն. ք. Երեւան: Աթու-  
րը ձեակերպվել է 25.01.1950: Աթորավայր՝ գ.  
Սորոկինո, Սորոկինսկի շրջ, հետո 1954-ից ք.  
Բառնաուլ: Ազատվել են 33 Ռ 13.04.1955: Հաշվ.  
հանվել են 02.06.1955: Ընտանիք՝ կին Սիրանուշ  
Փանոսի ծն. 1929: Ծնվել է դուստր Մարիա՝ 1951

**ԲՈՅԱՉՅԱՆ Եզեկիել Սարգսի**, ծն. 1908: Եկել է  
Լիբանանից 1947: Բն. Աշտարակի շրջ. գ. Ոսկե-  
վազ: Աթորը ձեակերպվել է 11.03.1950: Աթու-  
րավայր՝ Յուժակովսկի ԱԱՏ, Տրոիցկի շրջ:  
Հասանք Նորաշեն, Նորաշենի մի հատվածը լրիվ աքսորյալներ արդեն լցված են: Եկել են Ազիզբեկովից (Ներկայում՝ Վայոց Ձորի մարզ), Եղեգնաձորից, հետո Մարտունու շրջանի Չոլաքար գյուղից, Վարդենիսից... Լիքը մեքենաներ են, արդեն դատարկվում են: Վերջին մեքենաները Սիսիանից են գալիս եւ ինչ տեսանք, երանի՜ չտեսնեիք: Ուրեմն, մեքենաները դատարկել են՝ կույտ-կույտ ժողովրդի եղած-չեղածը լցրել են, բոլորը լացում են, երեխաները դժժում են, լաց ու շիվան: Մի տեղ տեսանք մի ծեր կին մեռնում ա, ու գոռում են՝ մեռա՛վ, հասե՛ք, օգնե՛ք: Բայց ո՞վ օգնի, ի՞նչ օգնի... Ես պառավ, սմբված, գունատ կինը էդ վերմակների կույտերի վրա մահացավ: Երեւի մի տաս մետր էդ մեռնողից հեռու էլի ճվոց, գոռոց, ձեն են հանում հասեք, օգնեք, բուժքույր բերեք, բժիշկ բերեք, տատմեր բերեք, հարս ա ազատվում: Ըտեղ էլ հարսն ազատվեց:

Մի քիչ հանդարտվեցին արդեն, բայց ջուր են ուզում, ջուր տվող չկա: Ժողովուրդը՝ իրանց բեռներով, նստած են էդ շոգ տեղը, չասավոյները, ժամապահները ակրուժենու (շրջապատման) մեջ են վերցրել ամբողջ էդ ժողովրդին, սրանք գոռում են՝ ջուր են ուզում, մանեկենները ոնց են սառն ու անշարժ կանգնած, սառը մանեկենների նման կանգնած՝ իրացանները ձեռքներին, ոչ մի վերաբերմունք. ինչ ուզում եք եղեք: Էդպես ծարավ, սոված ժողովուրդը մնացին, մինչեւ ժամը հինգին մոտ գնացքներն եկան:



Խոտհարք,  
1952-ականներ  
Տախտանովկա

## ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ



Ես երեք-չորս տարեկան եմ եղել, եղ օրը չեմ հիշում, բայց մեծերից իմ լսածով գիտեմ, որ մեր վրա գրել էին, դաշնակցության հետ էին կապել:

Հայրս երեք եղբայր է ունեցել: Մեծը եղել է Անդրանիկի մանկության ընկերը: Մի մոմենտ ըմ Անդրանիկին էլ, չէ՞, նեղեցին, մեծերը կպատմեն, օր երգերը չէին թողե երգեն: Նրան սպանել են: Մյուս հորողորս քսորեցին 37 թվին, իբր Ստալինին քրֆել էր, վրեն գրել էին՝ թե Ստալինին հայիոյել է: Մի եղբայրն անհետ կորել է: Տունը, ընտանիքը շատ վատ վիճակում են եղել, հաց չեն ունեցել ուտելու, ասել է՝ հելնեմ գնամ եղ վերելի գյուղերը, տենամ ինչ կարամ ճարեմ: Ընպես գնացել է ու էլ ետ չի եկել: Թե ի՞նչ է եղել, արդեն չիդենք:

1949-ին հորս ու եղ անհետ կորած ախպոր ընտանիքին են քսորել: Հերս վատ լսողության պատճառով պատերազմ չի գնացել: Պլեն-բան (գերի) չէր կարա լիներ, ուրեմն գրել են դաշնակ: Ես որ գնացի, թղթերը նայեցի, ռուսերեն գրած էր. «Дашнак-националист» (դաշնակ-ազգայնական): Մեր ազգից մի երեք հոգու էլ 37 թվին քսորել էին, բայց հերս 1904 թիվ էր, եղ դաշնակների-բանի վախտով երեխա ա եղել, ի՞նչ կապ պտի ունենար:

Մորքուրս մեր կողքն է ապրել, չի իմացել, որ քսորել են գիշերով, առավոտ ելել է՝ չկանք: Բացել են դուռը՝ չկանք: Գյուղի ժողովուրդը չեն իմացել, բայց նախապես արդեն որոշ մարդիկ՝ եղ գրողները գիտեցած են եղել, եղ անիրավ մարդիկ: Ես հետո շատ կուզեի իմանամ եղ ովքե՞ր էին, բայց ասեցին՝ գործ չունես, թշնամություն-բան պետք չի: Հմի ըդոնք չկան, սատկել են, բայց արդեն իրանց երածն երել էին:

Որ հասանք ընդեղ՝ Պավլովսկի սովխոզը, սկզբում մեզ տեղավորեցին գոմերում: Շատ ահավոր վիճակ էր: Հետո սալովից (ծղոտից) տուն սարքեցինք, սալումով ու ցեխով: Ըտեղ էինք ապրում, մի տարի չանցած մերս մահացավ: Գնացել ենք 49 թվին, 50 թվին էր, քնեց-չեկավ: Երեսուկյոթ տարեկան էր: Ինֆարկտ էր խփել: Մտածմո՞ւնք: Մտածմունքը քի՞չ ա, որ մարդուն ըտենց բան պատահի՞՝ եղ անասնագոմի մեջ ապրելը-բանը, հետո սկզբից մեր հանդեպ վատ էին, ասում էին՝ ըսոնք վայրենի մարդիկ են, дикари:

Մորս թաղումը շատ աղոտ կհիշեմ: Քուրերս մեծ էին, իրանց ռուս դասատուներն եկել էին, օդեկյուն էին բերել, օդեկյուն «Школу»: Դրանց մոտ սովորություն կա, թաղման վախտ մեռնողի հետը օդեկյուն կղեն: Աղոտ կհիշեմ, դասատուներն եկան, եղ օդեկյունի 22երը դրեցին մորս կողքերը: Հետո որ ախպերս գնաց, գերեզմանը քանդեց, բերեց, ասում էր՝ եղ 22երը կային, մեկը կիսատվել էր, մյուսը՝ լիքը:

Մենք գերեզման էինք սարքել կիրախչով (աղյուսով) ու բետոնով: Ախպերս գնացել էր եղ սովխոզի ուպոռավենու նաչալնիկին (վարչության պետին) էր գտել, ասել էր՝ էսինչ մարդն եմ, նա էլ հորս հիշել էր, տարել էր տուն, լավ պատիվ էր տվել: Ըտենց օգնեցին: Քանդել, չամադանի (ճամպրուկի) մեջ դրել-բերել էր: Ստեղ մեծ թաղում էրեցինք, տարանք մեր Վահրամաբերդի գերեզմանոցում թաղեցինք՝ հորս կողքին: Մենք չուզեցանք, որ մեր ծնողը օտարության մեջ մնար:

Սկզբից, եղ որ հլը գոմերն էինք մնում, մերոնք սիլոսի հորեր էին փորում ձեռով: Շատ ծանր աշխատանք էր, վերաբերմունքն էլ, ասեցի արդեն, վատ էր, մեզի վայրենու տեղ էին դնում, բայց կամաց-կամաց տեսան՝ չէ, սրանք կարգին աշխատող մարդիկ են, ու մեր

ապրելակերպը լավացավ: Դե, ռուսներն աշխատող մարդ շատ կսիրեն, իրանց մարդիկ շատը պլանից (հարբեցող) են:

Հարուստ երկիր, ամեն ինչ կար: Մենք լավ հագել-կապել ենք: Անասուններ ունեինք՝ անչափ, անհամար: Ուտելիքը շատ լավ էր, անչափ լավ էր՝ ըստ պահանջի: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անասուն էինք մորթում խոզ է, ցուլ է, պահում էինք: Գալիս էինք տուն, մամիս ասում էինք՝ ի՞նչ կա ուտելու, ասում էր՝ չալաղաջ: Մենք էլ ասում էինք՝ каждый день чалагадж, чалагадж, надоело чалагадж (ամեն օր չալաղաջ, չալաղաջ, զզվել ենք չալաղաջից):

Զօրուգիշեր աշխատում էին: Ախպերս 17 տարեկան էր, արդեն կոմբայնավար էր:

Ռուսներն ասում էին՝ դուք որ եկաք, կկարծեինք վայրենի ազգ եք, հետո իմացանք, որ դուք հերոսներ եք, ի՞նչ վայրենի ազգ, դուք տաղանդ եք, ընդհանուր, պաշտում էին հորս: Հետո առաջ քաշեցին, անասնապահական ֆերմայով-բանով էր զբաղվում: Նույնիսկ կամենդանտն (պարետը) օր եկավ, ազատականը տվավ, հորս ըսավ՝ Степанич, ты не уходи (Ստեփանիչ, դու մի գնա), բայց մենք կարոտեինք զր:

Ստալինի մահվան օրը, կհիշեմ, հերս թերթը ձեռքիս նստած էր: Ռուսերեն թերթ էր, ինքը ռուսերեն չէր կարդում: Ընդեղ մի մարդ կար, դրան ասեց՝ արի կարդա, բայց էդ մարդը թերթից վախենում էր, ասեց՝ չէ: Ընչի՞ կվախնար, որտե՞ս մի անգամ Ստալինի նկարով թերթը դրել էր գլխարկի մեջ, դրա համար աքսորել էին: Ասում էր՝ չէ, չեմ կարդա: Տեղի ռուսները Ստալինին պաշտեին զր՝ наш вождь, наш учитель (մեր առաջնորդը, մեր ուսուցիչը), բայց հետո որ սկսեցին քննադատել, հետո Բերիային-բանին էլ, արդեն ասին, թե, հա՛, սխալներ եղել են:

Ես ազատականի օրը շատ լավ կհիշեմ: Կամենդանտը՝ կապիտան էր, շուտ-շուտ գալիս էր մեր տուն: Ամեն անգամ գալիս էր, բայց շատ строгий (խիստ), ժպտալ-բան չկար: Նույնիսկ պատահում էր, հորս հետ կնստեր հաց կուտեր: Բայց մի օր ուրախ եկավ, մենք զարմացանք, Նույնիսկ վախեցանք: Խնդալով, ժպտալով մտավ տուն, թե՛ Степаныч, иди смотри, вы освобождены, вы невинные люди, но прошу остатся, ты нам нужен (Ստեփանիչ, արի տես, դուք ազատված եք, դուք անմեղ մարդիկ եք, բայց խնդրում եմ մնա, դու մեզ պետք ես): Բայց չէ, հերս միշտ ձգտել ա՛ երթամ, հա երթամ: Ասում էր՝ ես Մուշից եկել եմ [Հայաստան], իմ կրոնը չեմ ուրացել, որպես հայ ես ըստեղ չեմ մնա: Հայրենասեր էր, էլի... Որ արդեն Հայաստանում էինք, երբեմն ասում էի՝ ինչի՞ եկանք, ասում էր՝ կդրա՛ [ձայնը], մենք հայ ենք, հայ պտի մնանք:

Մեր գալը 56 թվին էր: Ռասչյոտ (հաշվարկ) էրեցին, սովխոզը փող


տվավ, մեր ունեցվածքը ծախեցինք, տունն էլ իրանք վերցրին: Մեզի ընդհանուր բերեցին Բառնաուլ: Մինչեւ Բառնաուլ հասնելը ավար-յայի (վթարի) տակ մտանք, ահագին կոտորվածք-բան ունեցանք: Շուտ եկավ մեքենան, ես արդեն չեմ հիշում: Էն երկու ախպորս բան չէր եղել: Հերս, մամս ու ես կոտորվածքներ ունեինք, մեծ ախպորս վիճակն էր վատ: Ընդհանրապես մեծ ախպորս ու ընծի քանի օր մորգ (դիահերձարան) են պահել, կարծել են, թե մահացած ենք: Հետո մտել, տեսել են՝ չէ, մահացած չենք, ըստեղ հետ են բերել: Մեծ ախպերս արդեն ամուսնացած էր քսորական մի հայ աղջկա հետ, մորս մահից հետո իրան 17 տարեկանում ստիպված ամուսնացրել էինք, որ տունը-տեղը նայող ըլներ: Իրանք մնացին մինչեւ վերջնական լավանար ու եկան: Իսկ մենք ընդհանուր գալիս-բանի մեջ հասանք Հայաստան: Հետներս ահագին բան էինք բերել՝ կանտեռներով (կոնտեյներ) ցորեն, դավուրմա, խոզի սալ, հալած յուղեր-բաներ, Հայաստան շատ խեղճ կապրեին մարդիկ, երկու տարվա մեզի հերից էրավ դրանք:

Էկանք, ես հայերեն տառերը չիդեի, մինչեւ չորրորդ դասարան ընդեղ եմ դպրոց գնացել: Շատ լավ կտրվեի, բայց ռուսերեն: Հայերեն տառերը նկարելով սորվեցի, բայց հետո Էնքան լավ էի, որ չորրորդ դասարանից միանգամից վեցերորդ նստացրին: Հիմի էդ տառերով բանաստեղծություններ ու երգեր եմ գրում:

Պավլովսկի սովխոզ,  
1950-ականներ



## ԱՐՇԱԼՈՒՅՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ես եղ օրը տանը չեմ եղել՝ աքսորման ժամանակ: Ծնողներս ամեն տարի ուղարկում էին մայրական պապիս մոտը՝ Սեպասար: Երկու հատ Սեպասար կար՝ փոքր Սեպասար եւ մեծ Սեպասար: Մերը փոքրն էր: Լավ սովորելու համար ուղարկում էին ընդեղ ամառային եղ արձակուրդի օրերին՝ հանգստանալու:

Հունիսի 14-ի գիշերը շատ անհանգիստ էի, ես չէի կարողանում քնել: Ինձ եղ ժամանակ պահում, դաստիարակում ու խրատում էր փոքր մորաքույրս՝ Ծովիկը: Ինքն էլ անհանգստացավ, ինձ ասում էր՝ Աշիկ ջան, ընչի՞ չես քնի, ի՞նչ է եղել: Ես ասել եմ՝ մորքուր ջան, չիդեմ, բայց անպայման տուն կուզեմ երթամ:

Ընդամենը երկու շաբաթ ա ընդեղ եմ, բայց անպայման կուզեմ երթամ պապային, մամային, երեխանցը տեսնամ: Հըբը ի՞նչ է եղել, ի՞նչ է եղել, չիդեմ, ես չէի կարող բացատրել՝ ինչ է եղել: Վերջը, երկու օր հետո եղ գյուղում էլ շուխուռ ընկավ. փոքր Սեպասարից երկու ընտանիք էին աքսորել՝ Կյուրեղյան Մինասի, մեկ էլ եղիշենց ընտանիքը:

Ինչ որ է, Էնքան ասի՝ Լեննական եմ ուզում, Լեննական եմ ուզում, մամս ու պապս որոշեցին մորքուրիս հետ ինձ Լենինական դրկեն, Էթանք մերոնց հանդիպենք, դառնանք: Գյուղը քառասուն կիլոմետր ա հեռու Լենինականից, նույն օրը հասանք:

Ես ծնվել եմ կայարանի բարաքներում՝ չորրորդ շարք, երեսուն տուն: Առաջին շարքից որ անցանք, բոլոր ընկերներս, մանկության ընկերներս, մե տեսակ ըմ մեղք գալով մոտեցան, բայց մորքուրս չթողեց, որ հեչ մեկի հետ խոսամ: Եկանք դուռը հասանք, հետեւեն էլ ինձ շրջապատող տղերքը եկան, եկանք տեսանք, որ մեր դուռը ինչ որ մի էսպես խաչածեւ փետով մխած էր՝ ոչ բնակող կար, ոչ բան: Ու մորքուրս հասկցավ, չնայած իրանք արդեն մի թեթեւ գիտեին, հասկցավ, որ մերոնց աքսորել են: Արդեն ես էլ համոզվա, որ ծնողներս չկան:

Եղ օրվանից, իրական, հոգեպես շատ եմ տանջվել:

Վերդարձանք գյուղ: Գյուղում անհանգիստ էի: Մամս, պապս կըսեին՝ մեր քովը կմնաս, բարեկամներ շատ ունիք, բոլորից էլ շնորհակալ եմ, կիրավիրեին իրանց տունը մնալու, բայց ծնողի կարոտը շատ մեծ էր: Ես երկու ոտս մի աման դրի, որ կուզեմ երթամ հորս ու մորս քով:

Մեր բարեկամների մեջ պաշտոնավոր, լավ դիրքի մարդիկ էլ կային, կհամոզեին՝ մնա, ձերոնք շուտով կուզան, ես չհամոզվա: Միևնայան ժորան, կարող ա գիտենաք, հեղինակավոր տղա էր, հետո քաղկոմի քարտուղար Մուրադ Մուրադյանի վարորդն եղավ, ասեց՝ ես եղ հարցը կլուծեմ: Դիմեցինք քաղսովետ, ինձ բացատրեցին, որ մի վռագի, մի գնա, ձերոնք աքսորվել են, հեռու տեղ չեն, երկու-երեք տարի հետո կվերադառնան, ինչի երթասս նեղության գիրկն ընկնես: Ասի՝ ոնց թե, առանց ծնողի ո՞նց կըլնեմ: Ասին՝ լավ, որ պնդում ես, եղ բռնադատվածների համար երկրորդ աքսորում<sup>57</sup> կա, ըդպես էին ասում՝ դապալնիտելնի էշալոն (լրացուցիչ շարժակազմ), քեզի դրանով կուղարկենք: Այսինքն՝ ինձի պես շատերն էին մնացել, մեկն ուսանող ա եղել Երեւանում, մեկն աշխատանքի ա եղել ուրիշ քաղաքում, ամեն մեկը մի ձեւի մնացել են, պետությունը կազմակերպել ա, որ դրանց էլ ուղարկի՝ ով ցանկանա, չեն գոռե արդեն:

Ցուցակագրեցին, ըսին՝ Հոկտեմբերյան կայարանից հոկտեմբերի

4-ին գնացքը կմեկնի, ցանկացողները կերթան: Էդ ժամանակ ժողովրդական ինժեներական կոնստրուկտորները, հարազատները հավաքված ճամփուկներին՝ որոշ պատրաստակարար (աշակցություն) ենելով՝ գումար, վեջ, ուտելիք:

Հոկտեմբերի չորսին դուրս ենք եկել եւ տեղ ենք հասել Լոյսերի յոթին: Հունիսին աքսորվածները տասնյոթ օր են գնացել, իսկ մենք մի ամիս չորս օր ենք գնացել:

Նախքան եղ ասեմ, որ գիշերը հունիսի 14-ին, հորս հուշերով եմ ասում, որ իրական ճիշտ է, ամեն ինչը դակումենտալի ֆիքսված է, գիշերը ժամը իրեքին եկել են դուռը ծեծել են՝ վայենսի մայր, երկու հատ էլ զինվոր՝ ավտոմատներով, թաղայինը, մեկ էլ տեղի ինսպեկտորը՝ կապիտան: Մտել են, թե հավաքվեք: Հայ կապիտանը ասել է՝ վեջերը տաք-մաք՝ ինչ որ հագուստ ունեք, վերցրեք, ձեզ հանում են, տեղափոխում են: Աքսորման, բռնադատվածության մասին ոչ մի խոսք չի եղել, ասել է՝ ձեզ տանում են Կիրովականի մոտերը՝ Լոռի, ընդեղ կրակակալիք, վեց ամիս հետո՝ կվերադառնաք: Հերս կպատմեր, որ ռուս մայրը դրա դռնից բռնել ու ասել է. «Ինչի՞ կխաբես, փոխանակ խորհուրդ տալու, որ ամեն ինչ վերցնեն»:

Շուխուռը ելել է, հարեանները եկել են, ուզեցել են փող-բան տան, հեջ մե բան էլ չեն թողե վերցնելու: Դուրս են հանել ընտանիքով մամս, հերս ու մերս, եղբայրս ու երկու քուրերս: Հորս պատմածը իրական է, ես ճշտել եմ եղ բոլոր հարցերը: Դուրս են հանել, եղ բարաքների ճամփեքը մի քիչ նեղ են, ավտոն մեր տան դուռը չի հասել, ինչ որ կարողացել են վերցնեն, ավտոմատչիկները երկու կողմից հսկել են, բայց թողել են, որ հարեանները «գնաք բարով» ենեն: Հերս կըսեր՝ որ հասանք ավտոյին, մի ընտանիք էլ կար՝ Միսայան Միսակենք էին, կինն է եղել ու թոռը: Ու ըդպես տարել են Ջաջուռ կայարան, նստացրել 21-րդ վագոնը:

Հմի դառնամ իմ գնալուն: Մենք վագոնի մեջը տասնինը հոգի էինք, բայց մենք ուրախ էինք գնում, որտեւ գնում էինք մեր ծնողների մոտը: Որ ուզենայինք, չէինք գնա, բայց գնում էինք: Ես տասնմեկ տարեկան էի, բոլորն ինձանից մեծ էին: Նուբար Միմոնյան կար, քսանհինգ տարեկան էր՝ բանակ ծառայած-եկած տղա էր, Միսայանը Երեւանի բժշկական ինստիտուտի երրորդ կուրս էր, Հովհաննիսյան Ռեբեկան Երեւանից էր, բայց մեր սաստավի (գնացքակազմ) մեջն էր:

Ասեցի արդեն՝ ամսից ավել գնացինք: Ինչի՞ էդքան երկար, որտեւ օրվա մեջ 4-5 ժամ էինք գնում, մնացած ժամանակը կանգնած էինք: Թե գծերը ծանրաբեռնված էին, թե շինարարություն կերթար, չիղեմ: Էդ 33-34 օրվա մեջ մեզ չթողեցին, որ իջնեինք, մինչեւ մեր

դապալնիտելի պոյեզը (լրացուցիչ գնացքը) բերեցին նշանակված վայրը՝ Բառնաուլ: Բառնաուլը Ալթայի մայրաքաղաքն է:

Բառնաուլից տեղափոխեցին ավտոներով՝ ամեն մեկին իրա նախատեսված ռայոնը: Մեզ՝ չորս հոգու, որ վեջ չունեինք, Էդպես շատ բան չունեինք, նստցրին պալուտրկեն (սովետական բեռնատար մեքենա) եւ բերեցին մինչեւ Շիպունովսկի ռայոն: Արդեն մերոնց տեղյակ պահել էին, գիտեին մերոնք, բայց օրը՝ երբ կհասնեինք, չիղեին: Բերեցին Շիպունովսկի ռայոն, մե սուտկա (օր) պահեցին ու Լոյսերի յոթին, արդեն ընդեղ սաստիկ ցուրտ մառոզ էր, հասանք Շիպունով: Մեզ տեղավորելու համար եկավ ԿԳԲ-ի ներկայացուցիչը՝ ժողենկոն, ստարշի (ավագ) լեյտենանտ էր, շատ բարեսիրտ մարդ, հաշվեց մեզի՝ ճիշտ է քանակը, ամեն ինչը, տեղավորեցին ուրիշ ավտո եւ բերեցին, Ցենտրալի ուսադբա կկոչվի, Շիպունովսկի ռայոն, Մոլոտովսկի զեռնոսովխոզ (հացահատիկային սովխոզ):

Էդ ուսադբեն ուներ վեց ատդիլենի (բաժանմունք)՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգ, վեց: Մեր էս չորս հոգուս էլ երրորդ ատդիլենին էր՝ ուսադբայից յոթը կմ էր, բայց համարյա թե կես օրվա հազիվ հասանք: Հասանք, արդեն մեզի ընդեղ դիմավորում են, բոլորը տեղյակ են, որ ավտոյի վրա ենք: Հերս վագեց մոտիկ, էլ չեմ հիշում, երեւի ուշքս անցավ, հազիվ փրկել են: Մի խոսքով՝ շատ ուրախացանք: Եկանք տուն, տեսա, որ նոր քուրիկ ունեմ, հոկտեմբերի 17-ին էր ծնվել:



Մոլոտովի անվան  
հացահատիկի  
սովխոզ,  
Շիպունովսկի  
չրջան,  
1950-ականներ

## ՌՌԲԵՐՏ ՊՈՂՈՍՅԱՆ



Շատ լավ հիշում եմ, 1949 թվի հունիսի 14-ն էր, վաղ առավոտյան, ժամը մոտավորապես հինգի-վեցի կողմերը դուռը թակեցին: Բացեցինք, ներս մտան մի հաստ զինվորական կապիտան, մի հաստ սալդաթ (զինվոր): Վերջինս հրացանով կանգնեց դռան մոտ, իսկ կապիտանը մոտեցավ մեզ, շատ քաղաքավարի ձևով խնդրեց, որպեսզի բոլորս արթնանանք: Ինչ-որ սպասողական դրություն կար: Կանայք սկսեցին լաց ու կոծը: Հերս մոտեցավ, էս կապիտանը հորս ասեց. «Հավաքեք ձեր բոլոր իրերը, ձեզ ուղարկում են Երեւանի մոտ մի տեղ ապրելու, որովհետեւ դուք գերի եք եղել, ժամանակավոր ձեզ տեղափոխում ենք այդ տեղը»:

Մերոնք սկսան հավաքվել: Մամաս էլ էդ ժամանակ հղի էր, ոնց ասած՝ ժամանակը լրանում էր: Մամս էդ սալդաթին խնդրեց, թե հարեւանի հարթուկը մնացել է մեր տունը, ինչ կեղևի տանք իրանց, չասավոն (ժամապահը) ասավ՝ մենք կտանք ու տարան-տվեցին:

Ես փոքր էի, ուղիղ տասը տարեկան, մերոնք որ խառնված էին, իմ ուշքս ու միտքս մեկ ուրիշ բան էր. ինձ համար շատ հետաքրքիր էր տեսնել զինվորականի՝ էդ ձեւի կուկիկ հագնված: Կապիտանը հայ էր, բայց Լենինականից չէր, հետո իմացանք՝ թիֆլիսահայ էր: Ինքը մենակ ասեց, որ ինչքան կարող եք տաք շորեր վերցրեք, ինչքան կարող եք սննդամթերք՝ եթե ունեք,

բացի կոշտ գույքից բոլորը վերցրեք, հատկապես՝ տաք շորեր: Ըտեղ հասկացանք՝ ի՞նչ Երեւան, ի՞նչ բան, լրիվ ուրիշ տեղ են ուղարկում:

Ես ամեն ինչի պատճառը իմ հորս պլեն (գերի) լինելն էր: Կերչի մոտ գերի էր ընկել: Էդ Կերչը, գիտեք, հայերի, հայ զնվորների գերեզմանն էր: Մի խոսքով՝ գերի է ընկնում, ըտեղից տանում են ժիտոմիր քաղաքը, ժիտոմիրից Բերդիչեւ: Նեմեցները (գերմանացիները) ֆիլտրացիա (գտում) են անում կոմունիստ, եվրեյ (հրեա), հայտնաբերում են՝ մեկուսացնում կամ գնդակահարում: Իսկ մյուսներին, ով որ կոմունիստ կամ եվրեյ չէր, շուտափույթ ուղարկում են Հոլանդիա՝ տավարնի (ապրանքատար) վագոններով: Հոլանդիայում արդեն ծառայության են անցնում մարդկանց տներում: Ըդպես մի աման բալանդա (ջրիկ, անհամ կերակուր), գարոխի սուպ (ոլոռով ճաշ) ուտելով ապրել են, մինչեւ հաջողագրել են փախնեն: Փախել, միացել են պարտիզաններին: Նույնիսկ գիրք կա, մեջը հորս անունն էլ է գրված, որ հայ գերիները Հոլանդիայում պարտիզանական ջոկատների մեջն են եղել, Էստեղ գործողություններ-բաներ են արել, մինչեւ ամերիկացիներն եկել, ազատագրել են:

1945-ի նոյեմբեր ամիսն էր, հերս եկավ: Ես աղոտ եմ հիշում, որովհետեւ փոքր էի, ինչքան, վեց տարեկան էլ չկայի: Հերս որ եկավ, մի հետաքրքիր բան, իրան ասում են՝ չես ուզո՞ւմ տղիդ տեսաս, ասում է՝ ինչըղ չեմ ուզե, անպայման գուզեմ տեսնիմ: Ինձ բերում, նստցնում են գիրկը, համբուրում է, Էրեսի մազերն ըսպես ծակծկում են, ես ուզում եմ փախնեմ իրա գրկից: Դե, էդքան ժամանակ չեմ տեսել, չեմ ճանչի:

Հետո, մեկ էլ կիիշեմ, որ հորս շատ կնեղեին: Ամեն անգամ տանում էին հարցաքննության, ընկճված վերադառնում էր: Ինքը բան չէր պատմե, մենք գլխի կընկնեինք, որ ուժեղ նեղեին գը: Ալեքսանդրովսկի փողոցի վրա պաղվալներ-բաներ (նկուղներ) կային, հարցաքննությունն հիմնականում ըտեղ էր: Պռաժեկտորների (լուսարձակների) տակ նստցնում, հարցաքննում էին. «Արդյոք դու դավաճան չե՞ս եղել, ֆլան ես եղել, բեֆան ես եղել, ինչի՞ պլեն ընկնելու ժամանակ դու քեզի չգնդակահարեցիր, չխփիր քեզի: Եթե չես խփե, Ստալինի ըսելով՝ դու у же враг народа (ժողովրդի թշնամի) ես»:

Տո, ի՞նչ враг народа, մարդը կանտուզիայով գերի էր ընկել, բայց ծեծով, ջարդով, հալածանքով, հազար ձեւի վկաներ բերելով կուզեին ցուցմունքներ ստանալին: Բայց հերս чисто кристальный (մաքուր, բյուրեղյա) մարդ էր, մանկության վախտը Շիրազի ընկերն է եղել, միասին ջուր են ծախել, տեքստիլում երկար տարի աշխատել ա, լավ մասնագետ ա եղել՝ սլեսար (փականագործ) եւ այլն:

Ես պլեն եղնելու պատճառով, ուրեմն՝ եկել էին իրան ու մեզի աք-

սորելու: Ընդլուծել իրերը հավաքեցինք, կամաց-կամաց՝ իրենց ուղեկցամար, իջանք ներքե: Մենք երկրորդ հարկը կապրեինք, 17-րդ շենքն էր, տեքստիլի շենքերից էր: Մենք որ ներքե իջանք, տեսանք ոչ թե մենք ենք մենակ, ավտոները արդեն կանգնած էր, բոլոր տեղերից բերեին գր աքսորականներին, ըսպես կուչկա-կուչկա (խոււր-խոււր) հավաքված էին: Ու ընդլուծել մեզ ուղարկեցին Ջաջուռ կայարան: Ժամը 11-ին եկավ սաստավը (շարժակազմը), լցվանք վագոնները, մերը N35-ն էր, հինգ ընտանիք էինք մեջը՝ վեջերով-բաներով:

Կհիշեմ, օր ահագին ներգաղթողներ կային՝ Հովհաննեսը, Արշակը, Միսակը, մի մարդ էլ կար իրանց հերն էր, սաղից թուփուն (ծխախոտ) կուզեր, էդ մարդու անունը չիղեինք, կսեինք՝ թուփունի բիծեն եկավ: Միսակը մագ կտրող էր մասնագիտությամբ, Արշակը լավ սպորտսմեն էր, իսկ Հովհաննեսը սովորական ռաբատյագ (սեւագործ բանվոր), բարի մարդ, էսոնց էլ կաքսորեին:

Գնացքը շարժվեց, ուղիղ տասնյոթ սուտկա (օր) գնացինք: Կովկասից դուրս եկանք, նոր դռները մի քիչ բացեցին, որ օդ շնչենք: Էդ ճանապարհներին ապրող հայերն արդեն գիտեին, որ հայ են աքսորում, գալիս պեռոնների (կառամատույցների) կանգնում էին, կուզեին մի օգնություն տալին՝ տաք շորեր-բաներ, բայց էդ զինվորականները չէին թողում, ստիպված հեռվից գցում էին վագոնների մեջը:




Հասանք Ստալինգրադ, ախպերս ծնվեց: Մի հատ կին կար, էդ մեր վագոնների ֆելդշերն էր, շատ добросовестный (բարեխիղճ) կին էր: Որ տեսել էր մայրս հղի ա, կանգառների վախտ անընդհատ գալիս հետեւում էր, ասում էր՝ пока не время, пока не время (դեռ ժամանակը չէ): Ստալինգրադի մոտ բոլորիս իջացրին, վագոնում մնացին մենակ մերս ու էդ բժշկուհին: Էդ կինը ընդունեց ծնունդը, ամեն ինչը լավ եղավ, ուրախացան հայերը, որ էդ աքսորի ժամանակ երեխա է ծնվում: Ախպերս ծնվավ, բայց հմի էլ տաք ջուր չկա, որ երեխին լողնեն: Գնացին պառավոզի տոպկից (շոգեքարշի կաթսայից) ջուր բերեցին ու համապատասխան էդ միջոցառումը կատարեցին: Ընդլուծել, շատ հետաքրքիր, ինչըն օր կինոֆիլմ էլներ:

Եսպես շարունակեցինք, շարունակեցինք մինչև հասանք մե տեղ ըմ, առավոտվա ժամը վեցն էր, անձրև էր գալիս, մեղմ անձրև էր, բայց ոսկորները սառցնող, մեզի՝ բոլորիս, վագոններից իջացրին: Արդեն Միբիրում էինք, Ալեյսկի ռայոն (շրջան): Ալեյսկից էլ մեզի նստցրին ավտոներն ու մի վեց-յոթ ժամ գնացինք անտառների միջով: Բնությունը, չնայած գեղեցկություն էր, բայց տարօրինակ էր, էլի, մեր համար: Իրիկնամուտին հասանք Պավլովսկի ռայոն, Պավլովսկի գերնսովխոզ (հացահատիկային սովխոզ):

Որ չհափազանցեմ մոտավորապես մի 100-150 հոգի էինք: Տեղավորեցին մի տեղ, որ ժամանակին ակումբ էր եղել, հետո սարայ

Ընտանեկան լուսանկար, դարձերեսին ընտանիքի անդամների անունները





(ամբար, պահեստ) էին դարձրել, հացահատիկ-բան կպահեին մեջը: Նախապես մաքրել էին, որ այլ ցեղի մարդիկ են գալիս, պետք ա տեղավորվեն մեջը: Մեզի լցրեցին էդ սարայը, դռները փակին, ըսին՝ до утра (մինչ առավոտ):

Մեր մեջ ոչ ոք ռուսերեն չէր խոսում, ոչ ոք: Բաքվեցի մի հաստ Ռոբերտ կար, էդ Ռոբերտը ռուսերեն գիտեր, ինքը գնաց, իրանց հետ խոսաց, ասել էին՝ դուք առայժմ ըստեղ պետք ա մնաք, մինչեւ կամենդատուրայից (պարետատնից) գան, ձեզի փաստագրեն: Բայց էդ Ռոբերտը համ էլ ըսավ, թե տեղացիների մեջը շուխում են գցել, որ էսոնք [աքսորականները] վայրենիներ են: Ինչ ձեւի էին նկարագրել՝ չիղեմ, բայց էս Ռոբերտը ասեց՝

պետք ա պատրաստվել վաղվան: Ասեց՝ ով ինչ լավ շոր ունի, թող հագնի, կնանիք թող կռասկա-պուդրի (դիմաներկ, դիմափոշի) անեն, որ դրանց ըդպես դիմավորենք: Во-общем (մի խոսքով) հագանք-կապեցինք, հա, մեկ էլ մի բան չմոռանամ: Մեր մեջը երաժիշտներ կային՝ Արտո անունով մի տղա կլառնետ կնվագեր, Անդրեյը տրուբաչ էր (շեփորահար), մի հաստ Օնիկ կար, էդ էլ տրուբա կնվագեր, այլո նվագողներ, թմբուկ խփողներ կային, ըսոնք հո սերենադ ըմ չտվի՞ն: Էն ժամանակ պոպուլյարնի (հանրահայտ, սիրելի) երգը Սուլիկոն էր: Սուլիկոն օր նվագին, էդ պետական մարդիկ ըսպես շշման, մոռացան՝ եկել են կանցե՞րտ (համերգ), թե եկել են գործ անեն: Տեսան ի՞նչ ազգ, զարմացան, կկարծեին իտալական տրաֆեյնի (ավարառված) կինո են նայում դերասաններն ըսպես գեղեցիկ հագած-կապած: Մի կողմից էլ տեղի ժողովուրդն էր հավաքվել ու, բերանները բաց՝ մեզի կնայեին:

Ըստեղ մեծ բերյոզայի (կեչի) ծառեր կային, էդ ծառերի տակը սեղանները դրել էին՝ կանաչ սուկնոյով (մահուղով) ծածկած, նստել էին



Ռոբերտը փոքր եղբոր հետ, Բիյսկ 1953

ՆԿԿԴ-ի գներալ-բան, շրջանի ուպոռավենիի (վարչության) աշխատողներ: Նստել են, մեզի պտի ջոկեն, թե ում ուր գցեն: Էդ Ռոբերտի թարգմանությամբ սկսեցին գրանցել: Ով որ քաղաքից էր, արհեստավոր էր՝ մի կողմ, ովքեր որ գյուղերից էին՝ մի կողմ, որպեսզի երթան, զբաղվին գյուղատնտեսությամբ: Մենք ընկանք Ցենտրալնի ուսադբա: Հա, էդ էլ ասեմ, որ կանցերտից Էնքան էին ազդվել, որ արդեն իրանց խոսալու տոնն էլ էր փոխվել, դիմելուց կըսեին՝ красчик (այս դեպքում սիրուն, սիրունիկ):

Ըշտե ըդպես սկսեցինք ապրել: Մեզի ասել էին՝ постоянное переселение, постоянное жительство (մշտական բնակություն), լրիվ, դու պտի մնաս, ապրես մինչեւ կյանքիդ վերջը: Ամիսը մեկ կերթայինք, կստորագրեինք, որ տեղում ենք: Ու գիտեք մեր անունի դեմը ի՞նչ էր գրած՝ ոչ գերի, ոչ պլեն, ոչ մի բան, դաշ-նակ-ցա-կան: Մե բառ ըմ, դաժե (նույնիսկ) էդ ճամփին ծնված ախպորս անվան դեմն էր գրած դաշնակցական:

Հետո իրանք հասկցան, որ մենք շատ օգտակար մարդիկ ենք: Մեջներս ի՞նչ մասնագիտության տեր մարդ ասես կար, ու էդ բուլորն էլ իրանց պետք էր: Դե, հերս որ սլեսար էր, էդ սովխոզում մեխանիզացիայի վրա էր աշխատում: Լավ մասնագետ էր, ահագին գյուտարարություններ-բաներ արեց՝ ըտեղան կոմբայները, տրակտորները փչացումից փրկելու համար:

Ուսադբայում ապրեցինք մինչեւ Ստալինի մեռնելը: Ստալինը որ մեռավ, Էսորվա պես կհիշեմ, բոլորը, անխտիր բոլորը՝ տեղացի, քսորական, կուլային: Մերս՝ Էն երեխեն գիրկը, կուլար: Մեր մեջ Ստալինի հանդեպ ոխ չկար: Մի կողմից դարոցում անընդհատ «Ջան Ստալին» էին սորվեցրել, մյուս կողմից էլ, մեզի՝ քսորվածներիս, ներշնչել էին, որ Ստալինը մեր վիճակից, մեր քսորից տեղյակ չի: Անընդհատ, անընդհատ նամակներ էինք գրում էդ վնուշենին (ներշնչումը) մեր ուղեղներում: Դրա համար էլ մեծից փոքրը լալիս էին, երբ որ իմացան Ստալինը մահացել ա:

Հույսը մեր մեջն առաջացավ Բերիային սպանելուց հետո, հույս առաջացավ, որ կարող ա վերադառնանք: Էդ ռուսները, դե գիտեք, ուրախ ժողովուրդ են, խմեն, հարբեն, երգեն, չաստուշկա (չափածո քառատող երգ) էին երգում:

«Ах, Берия, Берия  
вышел из доверия,  
а товарищ Маленков  
надал ему пинков».

(Ախ, Բերիան, Բերիան, կորցրեց վստահությունն, իսկ ընկեր Մալենկովը հասցրեց նրան քացով):


Ապրելակերպը հեշ վատ չէր, չէինք դժգոհում, բայց կարոտը, կարոտը, կարոտը...

Եղ գյուղում մենք մնացինք չորս տարի, հետո տեղափոխվանք Բիյսկ քաղաքը՝ старый купеческий город (հին առեւտրական քաղաք): Ինչո՞ւ մենք գնացինք Բիյսկ: Դե, գիտեք, որ արքունիքը չէր կարելի տեղափոխվել, իրավունք չկար, բայց հերս օր լավ մասնագետ էր, ընդհանուր գյուտարարություններ-բաներ ուներ, իրաւունքն արդեն տարածվել էր ամբողջ կրայում (երկրամասում): Բիյսկում «Էլեկտրոպեչ» գործարան կար, զապրոս (հարցում) արին, թե եղ հային մեր մոտ ուղարկեք, որտեւ մեզի спецалист (մասնագետ) է անհրաժեշտ: Ընդհանուր զապրոսով մենք գնացինք քաղաք: Տուն տվեցին մեզի, գետի ափին էր, շատ լավ տեղ էր, ամեն ինչ սորմալ էր, բայց ձմեռը շատ ցուրտ էր: Ես դպրոց կերթայի: Մենք ի՞նչ՝ երեխա, արդեն ազատ ռուսերեն կխոսայինք, ռուս երեխեքի հետ ընկերություն կենեինք, Լեննականն էլ արդեն կարգին չէինք հիշե: Բայց հերս՝ չէ, իրա ուշքն ու միտքը Հայաստանն էր, դիմում դիմումի վրա կգրեր, ոչ էլ պատասխան կուզար: Ստալինն օր մեռավ, Բերիային բռնին, արդեն սկսին ազատել: Ազատեցին, 56 թվին մենք էլ վերադարձանք Հայրենիք:



աջից՝ Ռոբերտի  
հայրը, հորեղբայրը,  
մայրը եւ հարեանի  
տղան՝ Վովան:  
1954, Բիյսկ

## ՎՈՒՈՂՅԱ ՄԻԻԹԱՐՅԱՆ



Է՛հ, Աստված գիտե, թե հորս ինչի աքսորեցին: Գիշերը ժամը երկուսն էր, ախպերս եկավ տուն, ինքը Դեկայում (մշակույթի տանը) պարի խմբի մեջն էր, ըդպես կերթային, կպարեին, եկավ, մերս էլ հըը վրեն խոսաց, թե ընչի՞ Եսքան ուշ տուն կուգաս, Ես ժամին ի՞նչ գործ ունիս փողոցները եւ այլն, ախպերս ըսավ՝ ըդիկ հեչ, Դեկայի դուռն Էնքան ավտոներ կան հավաքված, գռուզավիկ (բեռնատար) ավտոներ, չիդեմ թե ինչ հաշիվ Է: Մերս էլ ջղայնացած ըսավ՝ քեզի ինչ, թե ինչ հաշիվ Է, հանվի, պառկի, քնի:

Հըըը թամամ չէր պառկե, մե հինգ րոպե անց դուռը ծեծեցին: Դուռը ծեծեցին, բացինք, տենանք ավտոմատներով սալդաթները կայնած են: Հավաքվեք՝ ըսին: Ո՞ր հավաքվենք, ինչի՞ համար հավաքվենք՝

հարցրին մերոնք, ասին՝ հավաքվեք, ձեզի տանինք զը:

Մեր տունն էլ հյուր կար էդ օրը, մորքուրիս աղջիկը հյուր էր եկել: Հմի կուգեն Ես երեխուն էլ մեզ հետ տանեն, հազիվ վկաներով-բաներով, հարեւաններին կանչելով ապացուցեցինք, որ ըսիզ մեր երեխեն չԷ, հյուր Է եկել: Իրան տարան հարեւանի տունը, մեզի էլ նորից ասին՝ հավաքվեք, մենակ անկողին-բան կվերցնեք, ուրիշ ոչ մի բան:

Մեծ ախպորս ձեռքերը կանդալեցին<sup>58</sup>, Էդպես մեզի նստցրին ավտո տարան Ջաջուռ կայարան: Մենք գիտենք, թե մենակ մենք ենք, բայց որ չհասանք Ջաջուռի կայարան, ի՞նչ տենանք՝ Էնքան ժողովուրդ, որ մերը մանուկ ուրացել էր: Վորքըմ (մի խոսքով) անասունի պես լցեցին տավարնի (ապրանքատար) վագոններն ու գնացինք: Ո՞ր՝ Աստված գիտե, մենք հեչ մե բանից խաբար չենք, հեչ մարդ չիդե, թե ուր կտանին, ըշտե ըդպես տարան: Մի վագոնի մեջը, պատկերացրեք՝ կանայք, աղջիկներ, տղամարդիկ, հեչ մե պայմանըմ չկա, տուալետ (արտաքնոց) չկա, բան չկա, ի՞նչ Էնեն:

Սնունդ-բան հետներս չէինք վերցրել, իրանք պտի տային: Օրական մի անգամ, որ կայարանները կկայնեինք, չեմ հիշե որ կայարաններն էին, կայարանի ճաշարանից մեզի ճաշ կբերեին, ճաշն էլ ի՞նչ՝ բալանդա (ջրիկ, անհամ կերակուր), շերեփով ըսպես մե թասի մեջ կածեին՝ կուգես կեր, չես ուզե՛ մի կեր:

Գնալը տեւեց մոտավորապես՝ 10-12 օր, եթե չեմ սխալվի, ըդքան էդ տավարնի վագոնով մեզի կտանեին, մինչեւ հասանք Ալտայսկի կրայ (երկրամաս): Վագոններից իջացրեցին, բառնեցին տարբեր գռուզավիկներ, տարան Շիպուկովսկի ռայոն (շրջան), Շիպուկովսկի գեռնասովխոզ (հացահատիկային սովխոզ), ցենտրալի ատդելենի (կենտրոնական բաժամունք):

Տարան մե տեղըմ, ի՞նչ տեղ՝ քանդ ու քարափ մե հատ ակումբ, անասնագոմի պես մե հատ կազարմա (զորանոց): Լցեցին ժողովրդին ըտեղ՝ ոչ տուն կա, ոչ բան կա, մոտավորապես մի ամսից ավել էդ սարայի (ամբար, պահեստ) մեջը ժողովուրդը մնաց, օբշչի (ընդհանուր, խառը) լցել են, Էլի:

Հա, մե բանըմ հիշեցի: Որ մեզի տնից դուս կենեին, ձեռս գցի, պատեֆոնն ու մի քանի պլաստիկաներ (ձայնապնակներ) վեր կալա: Որ վերցրի, մերս վրես խոսաց՝ այ բալա, էդ պատեֆոնն ո՞ր քաշ կուտաս-կտանիս: Ըսի՝ չԷ, պտի տանիմ, լավ Է որ չնեղեցան, թողին, որ ըդիկ տանիմ: Հմի, որ արդեն էդ կազարմի մեջն ենք, սաղ որ տխուր նստած կուլան, էդ պատեֆոնը կլարեինք ու տխուրտխուր պլաստիկեք կֆռցնեինք: Ըշտե կլսեինք, էդ տեղի ռուսներն էլ կուգային, դե, հետաքրքիր ա, չԷ՞, կհավաքվեին էդ ձենի վրա: Բայց պատեֆոնը օր տենային, վախցած կփախնեին՝ «ЭТО

нечистая сила, говорящий ящик» (Սա անմաքուր ուժ է, խոսող արկղ) ըսելով: Դե, հետամնաց, մուգ ժողովուրդ էին, կյանքում էին պատեֆոն տեսել:

Մենք հինգ հոգի էինք՝ իրեք ախպեր, հերս ու մերս: Ես էդ վախտը տասը տարեկան էի: Ախպերներիցս մեծը տասնինը տարեկան էր, փոքրը՝ յոթ: Եդ կազարմի մեջը ապրել հնարավոր չէր, հերս բան էրավ, մե հատըմ գեմյանկա (գետնափոր տուն) սարքեցինք, մտանք մեջը: Ըտեղ մե տարիմ մնացինք, հետո կավից ու սալումից (ծղոտից) տուն սարքեցինք: Մունդառ ժամանակներ էին՝ սով, բան չկար ուտելու, բայց մե կերպըմ յուր գնացինք: Ըտեղ հիմնականում գյուղատնտեսություն էր, մեծ ախպերս գնաց տրակտորիստների կուրս սովորավ, տրակտոր կվարեր, հերս էլ՝ էդ մեր ապրած տեղի մեջը հիմնական գործ չկար, ինչ գործ որ պատահեր, կեներ:

Մենք չիդեհինք մեզի ինչի՞ համար են բերե՞ մեկ կըսեին դաշնակցական եք, մեկ էլ կըսեին պատճառն էն է, որ հերս պլեն (գերի) է եղել: Պատերազմի վախտը գերի ընկել է, հա, գերի ընկել է, երեւի էդ գերության պատճառով էին աքսորել՝ ես չիդեմ: Բայց էն եմ հիշում, որ պատերազմից հետո մեղալներով-բանով տուն էր եկել: Թե հմի ի՞նչ հաշիվ էր, չէինք հասկնա, կըսեին քաղաքական բան կար մեջը: Ես շատ չեմ խորացե, բայց կըսեն՝ ուզում էին Հայաստանը դատարկեին, մարդ չմնար, կեսը տային Վրաստանին, կեսն էլ՝ Ադրբեջանին: Իրանց նպատակը ըդիկ է եղել, հիմնական նպատակը: Ըդիկ օր չեղներ, 12 վագոն հայ, էն էլ դվուխյառուսնի (երկհարկ) վագոններ, չէին լցնի, տանեին: Անասունի պես ըսպես պրեսս էին Երե (սեղմել, խտացնել) մեջը, հըբը ըդիկ սաղ հայ էին, չէ՞, ամբողջ Հայաստանից էին՝ մենակ Լեննականից չէին, ամբողջ Հայաստանից էին, նույնիսկ Բաքվից հայեր կային:

Ու պտի ամեն ամիս, ամիսը մեկ չափահաս մարդիկ ներկայանային՝ ոստիկանություն էր թե ԿԳԲ էր, ինչ էր, ըդպես ներկայանային ստորագրություն տային, որ իրանք ներկա են: Եդ էր, մնացածն ինչը ըսեմ, ոչ բռնավոր էինք, ոչ էլ ազատ, բայց էդ վայրից՝ մեր ապրած տեղից, ուրիշ տեղ գնալ չկար:

53 թվին մահացավ Ստալինը: Ժողովուրդը սաղ սգի մեջ էին, սաղ ժողովուրդը կուլային, որ Ստալինը մահացել է, մեզի համար ի՞նչ: Մեզի մենակ էն լավ եղավ, որ էդ ստորագրությունը-բանը վերացրեցին, դարձրին ազատ քաղաքացի՝ կուզես մնա, կուզես գնա, էլ ստորագրություն չես տալի: Կային մարդիկ, իրանց ապրելու տեղը փոխին, գնացին մոտիկ քաղաքները, մենք մեր էդ սալումի տանը մնացինք մինչեւ 1956 թիվը: Հետո մեզի արդարացրին ու առաջարկեցին՝ կուզեք մնացեք ստեղ, չեք ուզե գնացեք ձեր հայրենիքը: Ըդպես 56 թվին վերադարձանք Հայաստան:

Երկաթգծի  
շինարարություն,  
50-ականների սկիզբ,  
Ալթայի երկրամաս



# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սփյուռքում Հայաստան ներգաղթել ցանկացող ՀՀ անդամները հարկադրաբար հրաժարվում էին կուսակցական պատկանելությունից՝ այդ մասին հայտարարություն տալով մամուլում:
2. Ալեքսեյ Ստախանով (1906-1977) - Նոր տեխնիկային ստեղծագործորեն տիրապետող եւ արտադրության մեջ սովորական նորմաների նշանակալից գերազանցման հասած առաջավոր բանվոր: Նրան կրկնողները կոչվում էին ստախանովականներ:
3. Շարքազյան Հովհաննես Մովսեսի, ծնվ. 1904, ներգաղթել է Լիբանանից 1947-ին: Աբսորվել է Երեւանից:
4. Արմենակ Վասիլի Ներսիսյան, տես նաեւ էջ 182:
5. Խոսքը Անդրանիկ Բարսեղի Մարգարյանի մասին է: Տես նաեւ էջ 136:
6. Չե Կա-Հակահեղափոխականության եւ սաբոտաժի դեմ պայքարող հատուկ հանձնաժողով, որի ռուսերեն հապավումով (ՎԿ) ընդհարացվում էին պետական գույքի մարմինները:
7. Ոստիկանության [միլիցիայի] թաղային տեսուչ:
8. Բաժին շրջանային խորհրդի գործադիր կոմիտեում [ներկայում՝ թաղապետարան], որի աշխատակիցները հետեւում էին, որ մարդիկ չգբաղվեն մասնավոր ձեռներեցությամբ
9. Տեղական իշխանության ներկայացուցիչ, որն այն ժամանակ երբեմն նաեւ կատարում էր իրազեկողի դեր:
10. Կոմունիստական կուսակցության շրջանային կոմիտե:
11. Հայրենական մեծ պատերազմից առաջ, երբ ԽՍՀՄ-ը գրավեց Արեւմտյան Ուկրաինան եւ Արեւմտյան Բելառուսը, այդ տարածքներում ապրող լեհերի մի մասն աքսորվեց Սիբիր: Լեհաստանի ազգային հիշողության ինստիտուտի տվյալներով նրանց թիվը եղել է շուրջ 320 հազար:
12. Ալեքսանդր Սոլժենիցին (1918-2008), ռուս այլախոհ գրող, հասարակական գործիչ, Նոբելյան մրցանակի դափնեկիր (1970): 1974-ին կալանավորվել է հատուկ օդանավով տեղափոխվել է Արեւմտյան Գերմանիա, որտեղից էլ տեղափոխվել է ԱՄՆ:
13. Ռուբեն Չարյան (1909-1994), հայ խորհրդային գրականագետ, թատերագետ, մանկավարժ: ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (1974):
14. Հենրի Ալֆրեդ Քիսինջըր (1923), ամերիկյան պետական գործիչ, դիվանագետ: ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական (1969-1975), ԱՄՆ պետքարտուղար (1973-1977), Նոբելյան խաղաղության մրցանակի դափնեկիր (1973):
15. ОБИР (ռուս. հապավում) վիզաների եւ գրանցումների բաժին: ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ստորաբաժանում, որը զբաղվում էր արտասահմանյան հյուրերի գրանցմամբ եւ ելքի արտոնագրեր էր տրամադրում արտագաղթող խորհրդային քաղաքացիներին:

16. Աշխօր - կոլտնտեսային աշխատանքի վարձատրման չափի միավոր, որով որոշվում էր յուրաքանչյուրի բաժինը կոլտնտեսային եկամուտից:
17. Ազգային-քաղաքային երգիծաթերթ, որը հրատարակվել է 1919-71 թվականներին Կահիրեում:
18. ՀԿԿ Կենտկոմի պաշտոնաթերթ (80-ական թվականներին՝ «խորհրդային Հայաստան»):
19. Երեւանի քաղսովետի գործկոմի պաշտոնաթերթ:
20. 1946 թվականին սկսված Մեծ հայրենադարձությունն իրականում վերջնաժամկետ չունեց: Խորհրդային ղեկավարները տեսնելով տնտեսական դժվարությունները, ներգաղթողներին բնակարաններով ապահովելու անհնարինությունը 1948 թվականին «Պրեդա» նախկին վրա բռնկված հողեհի պատրվակով դադարեցրեցին քարավանների մուտքը Հայաստան: 1949-ի փետրվարի վերջին ԽՍՀՄ-ը բացառության կարգով մեկ քարավան (162 հոգի) ընդունեց ԱՄՆ-ից:
21. Հելսինկիի եզրափակիչ ակտ - 1975 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում կայացած «Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության համաժողովի» եզրափակիչ ակտը: Փաստաթուղթը ստորագրվել է 35 պետությունների ղեկավարներ, այդ թվում՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի եւ Եվրոպական բոլոր պետությունների (բացի Ալբանիայից եւ Անդորայից): Եզրափակիչ ակտը ճանաչարի էր բացում ԽՍՀՄ-ից արտագաղթել ցանկացողների համար:
22. Փիրյանների ընտանիք՝ Կարապետ, Բերկրուհի, Անդրե, Ալեն, տես նաեւ էջ 66:
23. Գեստապո (գերմ.՝ Gestapo-ըրիվ՝ Geheime Staatspolizei), պետական գաղտնի ոստիկանություն ֆաշիստական Գերմանիայում: Ստեղծվել է 1933 թվականի ապրիլին՝ ֆաշիզմի քաղաքական հակառակորդներին ֆիզիկապես ոչնչացնելու նպատակով: Համաշխարհային 2-րդ պատերազմի տարիներին (1939-1945) Գեստապոյի մարմինները (գաղտնի ոստիկանություն, զոնդեր-կոմանդոներ եւ այլն) օկուպացված տարածքներում դաժան հաշվեհարդար էին տեսնում խաղաղ բնակչության եւ ռազմագերիների նկատմամբ:
24. Ռաշիդ Մեջիդ օղլու Բեհբուլոլ (1915-1989), խորհրդային ադրբեջանցի էստրադային եւ օպերային երգիչ: 1938-1944 թվականներին եղել է կոմպոզիտոր Արտեմի Այվազյանի ղեկավարած Հայաստանի պետական ջազային նվագախմբի մենակատար: Չուգախեռ երգել է Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:
25. Վլադիմիր Ենգիբարյան (1932-2013), հայ նշանավոր բնօրհանարտիկ, Մեյբուռնի Օլիմպիական խաղերի չեմպիոն (մինչեւ 63,5 կգ քաշային կարգ), Եվրոպայի եռակի եւ ԽՍՀՄ բազմակի չեմպիոն:
26. 1941 թվականի օգոստոսին՝ Համաշխարհային 2-րդ պատերազմում ԽՍՀՄ-ի ներքաշվելուց երկու ամիս անց, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Պոլովոյի 367 հազար գերմանացիներ աքսորվեցին Սիբիր եւ Ալթայի երկրամաս: Միաժամանակ լուծարվեց նաեւ Պոլովոյի գերմանացիների ինքնավար հանրապետությունը:
27. Միսիսյան Զրիստափոր Հակոբի, ծնվ. 1934, ներգաղթել է Հունաստանից 1947-ին: Դաբադյան Շահեն Մարտիրոսի, ծնվ. 1935 Երեւանում: Երկուսն էլ աքսորվել են Երեւանից:
28. Պատմողը հավանաբար շփոթում է անունները: Սորոկինոյում ապրած նման անուններով ընտանիք «Ֆակտում»-ի տվյալների բազայում առկա չէ:
29. Հարությունյան-Համբարձումյան Հարություն Մանգասարի, ծնվ. 1983, կինը՝ Համբարձումյան Վարսենիկ Թադեոսի, ծնվ. 1900, ներգաղթել են Իրանից 1946-ին: Աքսորվել են Երեւանից:
30. Խոսքը Մարտիրոս (Մարդո) Լեւոնի Փոքրաչյանի մասին է, տես նաեւ էջ 142:

31. Խոսքը Սամսոն Զակորի Քեչիշյանի մասին է, տես նաեւ էջ 22:
32. Գրիգոր Զարոթյունյան (1900-1957), խորհրդային պետական, կուսակցական գործիչ: 1937-1953 թվականներին՝ ԶԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար:
33. Նիկոլայ Շվեբրևիկ (1888-1970), խորհրդային պետական, կուսակցական գործիչ: 1946-1953 թվականներին՝ ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ:
34. Բաբկեն Աստվածատրյան (1905-1960), խորհրդային պետական, կուսակցական գործիչ, ԶԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ (1940-1943, 1948-1951): Եղել է արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեի նախագահ:
35. Անդրեյ Վիշինսկի (1883-1954), խորհրդային պետական գործիչ, իրավաբան եւ դիվանագետ: ԽՍՀՄ գլխավոր դատախազ (1935-1939), 1940 թվականից՝ ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարի տեղակալ, 1949-ից՝ նախարար, 1953-ից՝ տեղակալ:
36. Ալեքսանդր Զուսկոկի (1903-1986), խորհրդային տնտեսական, պետական եւ քաղաքական գործիչ: Եղել է աշխատանքային խմբերի միջեւ արտադրանքի գերազանց որակի սոցիալիստական մրցության նախաձեռնողը:
37. Սերգեյ Կորիմազյան (1912-?), խորհրդային պետական գործիչ, ԶԽՍՀ պետական անվտանգության նախարար (1947-52): 1955 թվականին ձերբակալվել է, դատապարտվել 10 տարվա ազատազրկման:
38. Ալֆրեդ Սեդրակի Մանգասարյան, ծն. 1916: Ներգաղթել է Իրանից 1946-ին: 1948 թվականին դատապարտվել է 7 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Վորկուտլա-գում: 1954-ին փոխադրվել է ընտանիքի աքսորավայր:
39. Իրականում աքսորը եղել է 1949 հունիսի 13-ի լույս 14-ի գիշերը:
40. Իրականում Զայաստանից աքսորվել է մոտ 13300 մարդ:
41. Խորասանջյան Կարապետ Ասատուրի, ծնվ. 1889, ներգաղթել է Զունաստանից 1947-ին: Աքսորվել է Երեւանից:
42. Պողոսյան Զակար Արզումանի, ծնվ. 1909: Աքսորվել է Երեւանից:
43. Օհանեսյան Նարդուշ (Նատուշ) Մկրտիչի ծնվ. 1893: Աքսորվել է երեք տղաների՝ Զայկի, Ժորայի եւ Ռաֆիկի հետ: Ամուսինը՝ Մովսես Ղազարի Օզանեսովը գնդակահարվել է 1937 թվականին:
44. Ներսեսյան Գրիգոր Մակարի, ծնվ. 1894: Աքսորվել է Երեւանից: Անունը հիշատակվում է նաեւ Վահան Զովիլյանի հուշերում, էջ 266-280:
45. Զարոթյուն Գույումջյան / Կույումջյան Զարոթյուն Զովհաննեսի ծն. 1891, տես նաեւ էջ 98:
46. Փարթամեան Կարապետ - ազգանվան մեջ անճշտություն կա: Զեղինակի հիշատակած անձը Կարապետ Զարոթյունի Բարսեղյանն է՝ ծնվ. 1889-ին, ներգաղթել է Սիրիայից 1946-ին: Եղբայրը՝ Բարսեղյան Զաբեթ Զարոթյունի՝ ծնվ. 1892, ներգաղթել է Սիրիայից 1946-ին: Ընտանիքներով աքսորվել են Երեւանից:
47. Բագրեջյան Մինաս Սեդրակի, ծնվ. 1890: Ներգաղթել է Զունաստանից 1947-ին: Ընտանիքով աքսորվել է Երեւանից:
48. Լեւոն Խաղիսյան - ազգանվան մեջ անճշտություն կա: Զեղինակի հիշատակած մարդը Թադեոսյան Լեւոն Արշակի, ծնվ. 1909: Ընտանիքով աքսորվել է Կոտայքի Մուր գյուղից:
49. Չեկիստ Վահան-Խաչատրյան Վահան Խաչատուրի, ծնվ. 1912: Ընտանիքով աքսորվել է Երեւանից:
50. Սլոյան Չաթո Նասիբի, ծնվ. 1926: Աքսորվել է Երեւանից, իսկ ընտանիքը՝ Ապարանի շրջանի Ալազյա գյուղից:
51. Ուսանողուհի - Դանիելյան Նարգիզ Ավետիսի, ծնվ. 1926: Աքսորվել է Երեւանից, իսկ ընտանիքը՝ Կրասնոսելսկի շրջանի Զին Բաշթեղ գյուղից:
52. Նորաշեն - կայարան Ադրբեջանական ԽՍՀ Նախիջեւանի ինքնավար հանրապետությունում:
53. Վարդանյան Տեր Եղիշե Կնյազի, ծնվ. 1902: Ընտանիքով աքսորվել է Երեւանից:
54. Արարատ Սահակի Ղարիբյան (1899-1977), հայ լեզվաբան, ԶԽՍՀ ԳԱ իսկական անդամ (1960):
55. Ֆահրադյան Մնացական Գրիգորի, ծնվ. 1900: Աքսորվել է Երեւանից:
56. Իրականում Զայաստանից աքսորվել է մոտ 13300 մարդ:
57. 1949-ի սեպտեմբերին եղել է լրացուցիչ աքսոր ընտանիքների այն անդամների համար, որոնք այս կամ այն պատճառով հունիսի 13/14-ին տանը չեն եղել:
58. Կանդալեցին, այսինքն՝ ձեռնաշղթաներ հագցրեցին: Ավանատեղը հավանաբար չափազանցնում է, աքսորի ընթացքում զսպիչ միջոցներ չէին կիրառվում:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան .....	4
Աքսորյալ հայրենադարձների բանավոր խոսքում հանդիպող մի քանի մոլորությունների մասին.....	8
<i>Ականատեսի վկայություններ</i>	
Սիրարփի հաչատրյան.....	16
Սամսոն Թեշիշյան.....	22
Իսկուհի Թեշիշյան.....	28
Խաչիկ Ավագյան, Արաքսի Դեմիրճյան .....	32
Ռահել Դելի-Սարգսյան .....	40
Վարդավառ Պայտարյան.....	44
Նորա Պայտարյան.....	48
Հովհաննես Պայտարյան.....	52
Սիրանուշ Գեղոլյանյան.....	58
Եվգենիա Կակաչյան .....	62
Ալեն Փիրյան.....	66
Ստեփան Վերանյան.....	74
Հրաչ Ֆրունջյան .....	80
Էլիզաբեթ Բելինջյան .....	86
Պերճուհի Զրայան .....	94
Օնիկ Կույումջյան .....	98
Համբարձում Համբարձումյան .....	102
Սարգիս Մազմանյան.....	110
Էլմոն Ավագյան .....	120
Հարութ Ավագյան .....	126
Վերգինե Տերտերյան .....	132
Վարդգես Մարգարյան .....	136
Էրիկա Փոքրաչյան.....	142
Փերուզ Բոյաչյան, Ժիրայր Ռաթելոսյան .....	148

Ալթայում հիշում եմ.....	153
Նամակներ եւ դիմումներ .....	187
<i>Հուշապատում</i>	
Եղիսաբեթ Չափչովեան-Մանկասարեան «Կյանքը դռնփակ աշխարհում» .....	214
Միհրան Վարժապետյան «Հուշեր» .....	236
Վահան Հովիվեան «Դեր Չօրից մինչեւ Սիբիր» .....	266
Էդմոն Բերժե .....	280
Գեիլ Հովիվյան .....	282
Աքսորված հայրենադարձների ցուցակներ.....	287
<i>Այլ վկայություններ</i>	
Ժենյա Չարոյան.....	364
Տիգրան Գեղորգյան .....	372
Արշալույս Խաչատրյան .....	376
Ռոբերտ Պողոսյան.....	380
Վոլոդյա Մխիթարյան .....	388
Ծանոթագրություններ .....	392

**Կազմող խմբագիրներ՝**  
Տիգրան Պասկեւիչյան  
Սաթենիկ Ֆարամազյան

**Տեքստերի խմբագիրներ**  
Անուշ Գասպարյան  
Ռուզան Խաչատրյան  
Ծովինար Պասկեւիչյան  
Անուշ Թրվանց  
Անի Դուզդաբանյան  
Լիլիկ Ստեփանյան

**Ձեւավորում եւ շարվածք**  
Սաթենիկ Ֆարամազյան

**Նկարագարդումներ եւ շապիկի ձեւավորում**  
Հարութ Թումադյան

**Սրբագրիչ**  
Ծովինար Պասկեւիչյան

Գրքի նյութերը հավաքվել են 2011-2020 թվականներին «Վերսուս» ստուդիայի եւ «Ֆակտում» հասարակական կազմակերպության «Դարձ ի շրջանս յուր» նախագծի շրջանակում Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, National Endowment for Democracy ամերիկյան, DVV-International գերմանական կազմակերպությունների եւ Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի աջակցությամբ:

Ականատեսների վկայությունները, չլեզին բացառությամբ, տեսաձայնագրված են եւ պահվում են «Վերսուս» ստուդիայի արխիվում:

**Շնորհակալություն Հայաստանի ազգային արխիվին**  
Ամատունի Վիրաբյան, Սոնիա Միրզոյան, Մարինե Մարտիրոսյան, Գոհար Ավազյան

**Հատուկ շնորհակալություն**  
Հազել Անթառամյանին, Ալիս Տեր-Ղեւոնդյանին, Հուրի Վարժապետյանին, Մարսելի A.R.A.M կենտրոնին, Հայկ Տեր-Հարությունյանին, Տիգրան Արեգունի Մարտիրոսյանին, Նատալյա Աբլաժեյին (ՌԴ, Նովոսիբիրսկ), Նադեժդա Ստարցեւային (ՌԴ, Ալթայի երկրամաս)

Օգտագործված են լուսանկարներ եւ փաստաթղթեր անձնական արխիվներից, Ալթայի երկրամասի պետական արխիվից, Սորոկինոյի շրջանային երկրագիտական թանգարանից, ՀՀ ազգային արխիվից:

Տպագրված է «Չանգակ» հրատարակչության տպարանում

Ծրագիրն իրականացրել է «Ֆակտում» հասարակական կազմակերպությունը «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում: Նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն ստեղծողը: Գրքի բովանդակությունը կարող է չհամընկնել Շվեդիայի կառավարության տեսակետների հետ:

«Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագիրն իրականացնում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

ՑՈՒՐՏ ՀԱՅՐԵՆԻԶ: Վկայություններ աքսորից | Կազմող խմբագիրներ՝ Տիգրան Պասկեւիչյան, Սաթենիկ Ֆարամազյան  
Եր.: «Ֆակտում» սոցիալական ՀԿ, 2022.- 400 էջ:

ISBN 978-9939-1-1487-3  
© «Ֆակտում» սոցիալական ՀԿ, 2022

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3  
Ց 988





«Վերսուս» ֆիլմարտադրող ստուդիան ստեղծվել է 1999 թվականին Երեւանում՝ նպատակ ունենալով վավերագրելու եւ հանրային քննարկման առարկա դարձնելու Հայաստանի քաղաքական ու սոցիալական սուր խնդիրները, ինչպես նաեւ լուսաբանելու խորհրդային անցյալը:

Քաղաքական գործընթացներ եւ բռնություններ, կանանց թրաֆիքինգ, բանտերում պահվող անձանց իրավունքներ, գործազրկություն եւ աղքատություն, տարածաշրջանային խնդիրներ. սա «Վերսուս» ստուդիայի արտադրած ֆիլմերի թեմաների ոչ լրիվ ցանկն է:

2010 թվականից «Վերսուսը» ձեռնարկեց «Դարձ ի շրջանս յուր» նախագիծը: Դա 1946-49 թվականների Մեծ հայրենադարձությունը ներկայացնող ծավալուն մի աշխատանք էր, որի արդյունքում ստեղծվեցին փաստավավերագրական չորս ֆիլմեր:

2011-ին «Վերսուսի» թիմը ստեղծեց «Ֆակտում» հասարակական կազմակերպությունը, որը, ֆիլմերի արտադրությանը զուգահեռ, զբաղվում է Մեծ հայրենադարձության թեման այլ միջոցներով հրապարակայնացնելու գործով:

«Ֆակտումը» ստեղծեց «Հայրենադարձության թանգարան» կայքը ([www.hayrenadardz.org](http://www.hayrenadardz.org)), Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում կազմակերպեց «Մարդը բռնությանը դեմ հանդիման: Հայ հայրենադարձները ԳՈՒԼԹ-ում եւ սիբիրյան արքայապետները» վավերագրական ցուցահանդեսը, հրատարակեց հայրենադարձների արտագաղթը ներկայացնող հոդվածների «Տարանցիկ հայրենիք» ժողովածուն:

Այս` «Ցուրտ հայրենիք: Վկայություններ արքայից» գիրքը նույնպես «Վերսուս» ստուդիայի եւ «Ֆակտում» հասարակական կազմակերպության համագործակցության արդյունքն է, որն իրականություն է դարձել միջազգային կազմակերպությունների եւ հարյուրավոր նվիրյալ անձանց աջակցությամբ: